

Երիտասարդական աշխատանք
հակամարտությունների պայմաններում

Երիտասարդների հզորացման և վերականգնման համապարփակ ուղեցույց



Սույն ուղեցույցը մշակվել է «Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» ծրագրի շրջանակներում

ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Վերագրում 4:0 Միջազգային

Դուք ազատ եք՝

• **Կիսվել** — պատճենել և վերաբաշխել նյութը ցանկացած միջոցով կամ ձևաչափով:

• **Հարմարեցնել** — վերամշակել, փոխակերպել և հիմնվել նյութի վրա ցանկացած նպատակով, նույնիսկ առևտրային:

Լիցենզավորողը չի կարող չեղարկել այս ազատությունները, քանի դեռ դուք հետևում եք լիցենզիայի պայմաններին:

Հետևյալ պայմաններով՝

• **Վերագրում** — Դուք պետք է տաք համապատասխան հղում, տրամադրեք լիցենզիայի հղում և նշեք, եթե փոփոխություններ են արվել: Դուք կարող եք անել դա ցանկացած ողջամիտ եղանակով, բայց ոչ այնպես, որ թվա, թե լիցենզավորողը հավանություն է տալիս ձեզ կամ ձեր օգտագործմանը:

• **Ոչ մի լրացուցիչ սահմանափակում** — Դուք չեք կարող կիրառել իրավական պայմաններ կամ տեխնոլոգիական միջոցներ, որոնք իրավականորեն սահմանափակում են ուրիշներին անել այն, ինչ լիցենզիան թույլ է տալիս:

Ծանոթություններ՝

• Դուք չպետք է հետևեք լիցենզիային հանրային սեփականություն հանդիսացող կամ թույլատրելի օգտագործման տարրերի համար:

• Երաշխիքներ չեն տրվում: Լիցենզիան կարող է չտրամադրել բոլոր անհրաժեշտ թույլտվությունները ձեր նախատեսված օգտագործման համար: Օրինակ՝ այլ իրավունքներ, ինչպիսիք են հրապարակայնության, գաղտնիության կամ բարոյական իրավունքները, կարող են սահմանափակել, թե ինչպես եք դուք օգտագործում նյութը:



Co-funded by
the European Union

**Ծրագիրը
համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից**

համագործակցությամբ՝



**Երիտասարդների հզորացման և վերականգման
համապարփակ ուղեցույց**

ՈՇԳԼՆԿ

Ներածություն	6-9
Գործընկեր կառույցներ	10-15
Ծրագրի ուղին	16-17
Հետազոտություն	16-209
Ներածություն	18-33
Երիտասարդական աշխատանքի իրավական շրջանակ պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների վերականգնման համար	34-43
Հոգեբանական և հուզական աջակցություն երիտասարդական աշխատողների համար	44-63
Միջմշակութային զգայուն մոտեցում բազմադերային երկխոսություններում	64-89
Ներառական երիտասարդական աշխատանք	89-112
Ապահով տարածքից համարձակ տարածք	113-116
Սոցիալ-հուզական ուսուցում (SEL) երիտասարդական աշխատողների համար	117-122
Հաղորդակցման հմտություններ	123-125
ՈՉ ԲՈՆԻ հաղորդակցում և ակտիվ լսում	126-130
Արվեստի դերը երիտասարդական աշխատանքում՝ որպես պատերազմից տուժած երիտասարդների վերականգնման միջոց	131-147
Մեդիագրագիտության ուսուցում	148-151
Գնահատման գործընթաց և ռիսկի մատրիցա	152-159
Պատերազմից տուժած համատեքստում երիտասարդների շահերի պաշտպանություն պատերազմից տուժած երիտասարդների մասնակցությամբ	160-183
Ոչ բռնի բանավեճը որպես երիտասարդների մասնակցության գործիք և երիտասարդների բևեռացման ու ծայրահեղականացման դեմ պայքարի միջոց	184-191
Տեղական գործողություններ ծրագրի համատեքստում	192-212

Բարի գալուստ երիտասարդների հոգրացմանն ու վերականգնմանն ուղղված համապարփակ ուղեցույց, որտեղ կծանոթանաք հակամարտությունների ժամանակ իրականացվող երիտասարդական աշխատանքի հետ, որը մշակվել է «Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» ծրագրի արդյունքում:

«Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» ծրագիրը նախագծվել է 2022 թվականի փետրվարից մարտ ընկած ժամանակահատվածում ուկրաինական գործընկեր «Եվրոպական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության առաջարկով, որը, գտնվելով պատերազմի սրման պայմաններում, անկայունության և տեղահանման իրավիճակում, բախվել էր մինչ այդ իրականացված երիտասարդական աշխատանքի մոդելի անբավարարության հետ: Ինչպե՞ս իրականացնել երիտասարդական աշխատանք պատերազմից տուժած երիտասարդների հետ: Ինչպե՞ս միահյուսել երիտասարդական աշխատանքը արտակարգ իրավիճակների պայմաններում: Ինչպե՞ս շարունակել զբաղվել խաղաղության կրթությամբ պատերազմի ժամանակ: Ինչպե՞ս վարվել սթրեսի և առաջացած վիճակի հետ, որը կրել են իրենք՝ մանկավարժները, երբ իրենք ևս կիսում են պատերազմի վնասվածքն ու ազդեցությունը երիտասարդների հետ, ում հետ նրանք աշխատում են: Ինչպե՞ս կարող է երիտասարդների աշխատանքը մնալ համայնքի կառուցման եւ տեղական համայնքների ճկունությանն աջակցելու գործիք: Սրանք ընդամենը մի քանի հարցեր են, որոնցից առաջացել է այս նախագիծը, հարցեր, որոնք զարգացել են երիտասարդական աշխատանքի եւ պատերազմի պայմաններում:

Մենք առաջնահերթություն ենք տալիս զինված հակամարտությունների համատեքստից երիտասարդների հետ երիտասարդական աշխատանքային գործիքների ու մոտեցումների մշակման վրա աշխատելը, որի պատճառը հիմնականում ժողովրդագրական է: Ենթադրվում է, որ 408 միլիոն երիտասարդներ (կամ 15-29 տարեկան աշխարհի բնակչության 23%-ը) ապրում են զինված հակամարտությունների կամ կազմակերպված բռնության ազդեցության տակ գտնվող համատեքստում, ինչը նշանակում է, որ 4 երիտասարդներից 1-ը ամեն օր ինչ-որ կերպ ենթարկվում է պատերազմների կամ զինված հակամարտությունների ազդեցությանը: Այս երիտասարդներից 11 միլիոնը տեղահանված են հարևան մեծ երկրներ, որտեղ նրանք մնում են խոցելի: Համաշխարհային մասշտաբով վերջին երկու տասնամյակներում ավելի քան 900 խաղաղության համաձայնագիր է ստորագրվել բանակցությունների միջոցով, որոնցում երիտասարդ սերունդների ձայները հիմնականում բացակայում են[1]:

Համագործակցային նախագիծը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից Էրազմուս+ ծրագրի շրջանակներում, որի նպատակն է խթանել երիտասարդական աշխատանքի ոլորտում ակտիվ կազմակերպությունների միջև համագործակցության զարգացումը, ինչի արդյունքում ստեղծվեց 9 կազմակերպություններից բաղկացած կոնսորցիում՝ նպատակ ունենալով կառուցել փոխլրացնող տարրերի հետ համագործակցություն:

Ծրագրի որոշ տվյալներ.

90 ներգրավված երիտասարդական աշխատող

180 փորձարարական տեղական դասընթացների երիտասարդ մասնակիցներ

1-շաբաթյա սեմինար, 1-շաբաթյա վերապատրաստում, 1 աշխատարան և 1

ուղեցույց

1 միջազգային առցանց և առերես համաժողով՝ մոտավորապես 75 մասնակիցներով

9 տեղական դասընթացներ՝ ընդհանուր 180 շահառուների մասնակցությամբ:

Նախագիծը սկսել ենք հետազոտությամբ, որի միջոցով, հավանաբար, կարողացել ենք քերծել միայն այսբերգի գագաթը. իրականացնելով տարբեր փորձառությունների և մոդուլների ուսումնասիրություն՝ սկսեցինք համեմատել երիտասարդական աշխատանքի պատմություններն ու ավանդույթները, մոտեցումներն ու փորձառությունները տարբեր համատեքստերում՝ ոչ թե վերջնական բաղադրատոմսի և գործիքների, այլ որոշ աշխատանքային ուղիների որոնման և կիրառման նպատակով: Արդյունքում ավելի քան 20 մանկավարժներ և դասընթացավարներ միավորվեցին սույն ուղեցույցի մշակման աշխատանքներում, որը կազմված է դասական երիտասարդական աշխատանքի մոդելների և մոտեցումների վերանայումից ու հիմնված է կոնկրետ համատեքստի և թիրախի վրա, որի հետ մենք աշխատում ենք. մտորումներ եւ խորհուրդներ պատերազմից տուժած երիտասարդների հետ կրթական գործունեություն իրականացնողներից, առաջարկներ և պատմվածքներ, և սեփական փորձառության պատմություններ:

Դիտարկել պատերազմից տուժած երիտասարդներին մեկ ընդհանուր խմբում սխալ կլիներ, քանի որ տարբեր են նրանցից յուրաքանչյուրի անցած ճանապարհը: Մենք ունենք ուկրաինական համատեքստը, որտեղ տեսնում ենք մեծ մաշտաբով կազմակերպված բռնություն, որն ազդում է ողջ կրթական համակարգի վրա՝ ֆորմալ, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ, որտեղ գործ ունենք բռնության հետևանքով առաջացած հոգեբանական տրավմաների հետ: Մենք ունենք այնպիսի համատեքստ, ինչպիսին Լեհաստանն է, որտեղ արտակարգ իրավիճակների լայնածավալ ընկալումը առաջին հերթին հանգեցրել է հիմնական կարիքներին ստանդարտացված արձագանքի՝ անտեսելով անհատի զարգացման առաջնահերթություններից բխող որակյալ կրթության և անձնային զարգացման չափորոշիչները, մարդիկ, գտնվելով ոչ վտանգավոր պայմաններում, հակասական հույզեր են ունենում իրենց թողած երկրի նկատմամբ և մեծ դժվարությունների են բախվում իրենց կյանքում ընտրություններ անելիս: Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Իսպանիայի պարագայում՝ հիմնականում կազմված է երիտասարդ չափահասներից և առանց ուղեկցության անչափահասներից, ովքեր անցել են բարդ միգրացիոն ճանապարհ՝ խիստ խոցելի պայմաններում: Այս երիտասարդները պետք է կառուցեն ինտեգրման ուղիներ՝ հաճախ ունենալով կրթական ցածր մակարդակ և առանց որևէ սոցիոմի աջակցության, և որոնց տրավմաները կրկնվելու հավանականությունը շարունակական է: Հետո մենք ունենք Հայաստանի ու Ադրբեջանի համատեքստը, որտեղ ընթանում է պատերազմ երկու երկրների միջև. այս դեպքում երիտասարդական աշխատանքի առաջնահերթությունը ատելության արմատականացման կանխումն է: Սրանք համատեքստեր են, որտեղ երիտասարդական աշխատանքը դառնում է փոխադարձ գիտելիքների և երկխոսության կամուրջ: Եվ վերջապես, այսպես կոչված հետկոնֆլիկտային հասարակությունների համատեքստերը, ինչպիսին է Կոսովոն, որտեղ հասարակությունը խիստ բաժանված և բևեռացված է եթնիկական գծերով, իսկ երիտասարդական աշխատանքը կենտրոնանում է հանդիպումների և փոխադարձ գիտելիքների տարածքներ կառուցելու վրա:

Այս համատեքստերից յուրաքանչյուրը տարբեր տեսակետ է ներկայացնում բռնի հակամարտություններից տուժած երիտասարդների մասին, որոնցից դասեր են քաղվել, և հուսով ենք, որ վերջինիս հարուստ փորձով կկարողանանք կիսվել համաժողովի շրջանակներում:

վերականգման

Երիտասարդների դերի ուժեղացում հակամարտությունների կանխարգելման և լուծման գործում, Չեկույց 1, Եվրոպայի խորհրդի մշակույթի, գիտության, կրթության և լրատվամիջոցների խորհրդարանական վեհաժողովի հանձնաժողով, զեկուցող՝ տիկին Ինկա

Ծրագրի շրջանակներում 9 գործընկերների կողմից իրականացվել է հետազոտություն՝ երիտասարդների այս թիրախային խմբերի հետ աշխատող երիտասարդական աշխատողների կարիքների վերլուծության նպատակով: Հետազոտության առաջին փուլից հետո մշակվել են վերապատրաստման մոդուլներ, տեղական փորձարարական գործողություններ:

և

հզորացման

Նախագծի ամենակարևոր ուսուցումն արդյունքն երիտասարդների տեսլականի ձևավորումն է, որը մենք փորձում ենք զարգացնել: Երիտասարդական աշխատանքն իր բուն էության մեջ նեռառում է երիտասարդների տեսլականը.

-Երիտասարդներին որպես խոցելի դիտարկելը կարող է հանգեցնել պաշտպանողական մոտեցման՝ կենտրոնանալով նրանց թերությունների վրա:

-Երիտասարդներին որպես շեղված կամ պոտենցիալ վտանգավոր դիտարկելը կարող է հանգեցնել անվտանգության մոտեցման՝ նպատակ ունենալով կանխել հակասոցիալական վարքագիծը:

-Երիտասարդներին սպառող համարելը կարող է առաջնահերթություն տալ իմիջի վրա հիմնված նախաձեռնություններին, քան երկարաժամկետ զարգացմանը:

-Ի վերջո, երիտասարդներին ընդունելը որպես ընդունակ անհատներ և հավատալ նրանց ճկունությանն և հասարակության մեջ ունեցած ներդրմանը՝ առաջնային է:

Երիտասարդների համապարփակ ուղեցույց

Ծրագրից քաղած հիմնական դասերն են.

-Ճանաչելով երիտասարդների տրավմաներն ու փորձառությունների բարդությունը՝ չդիտարկել նրանց որպես լոկ գոհեր:

- Ընդունելով այն, որ երիտասարդները կարող են բերել հասարակության պառակտմանը՝ միաժամանակ գնահատել իրենց ներուժը որպես խաղաղարարներ:

-Բալանսավորելով կարճաժամկետ ազդեցությամբ ծրագրերը՝ ձևավորել վստահելի հարաբերություններ երիտասարդների հետ:

Երիտասարդական աշխատանքի մոտեցումը պետք է լինի դրական և նպատակաուղղված ճանաչելու երիտասարդի էությունն ու ներուժը:

Առաջ բերենք երկու գաղափարներ՝ Ուբունտուն և Խոցելիությունը:

Ուբունտուն Հարավային Աֆրիկայի տարածքի լեզուներում հայտնաբերված ու տարածված գաղափար է, որը վերաբերում է ողջույնի ծեսին, որի փոխանակումն այսպես է գործում. Ես ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ԶԵՉ, որին դիմացինը պատասխանում է՝ ԵՄ ԱՅՍԵՂ ԵՄ: Քանի դեռ Ուրիշը չի տեսնում ինձ, ես այստեղ չեմ, կամ «Ես այն եմ, ինչ կամ՝ շնորհիվ ինձ շրջապատող մարդկանց»: Այս գաղափարը խոսում է իրավունքների, միևնույն ժամանակ նաև պարտականությունների, անհատի, նաև համայնքի, բոլոր կենդանի էակների փոխհարաբերությունների մասին:

Մենք գտնում ենք, որ այս գաղափարը կարևոր և գեներացնող է հատկապես պատերազմի հետևանքով տուժված երիտասարդների հետ աշխատանք իրականացնելիս. նախ և առաջ ՏԵՍՆԵԼ նրանց, հասկանալ և ճանաչել նրանց՝ առանց հատուկ մեթոդներ կիրառելու և նրանց կողմից ճանաչվելու որպես չափահաս, նույնիսկ ստիպել ամբողջ համայնքին ճանաչել երիտասարդներին որպես առաջնահերթ սոցիալական խումբ, որտեղ ներդրումներ կատարելն անգամ պատերազմական օրերին կարևոր է, իսկ երիտասարդական աշխատանքը՝ խիստ անհրաժեշտ:

Երկրորդ գաղափարը փոխառված է հետազոտող Բրենե Բրաունի աշխատանքից, որը վերաբերվում է «**խոցելիության**» հասկացությանը: Մենք մեր խոցելիությամբ և զգայունությամբ ենք տարբերվում մյուս կենդանի էակներից և, հետեւաբար, խիզախ, կարեկցող, սխալներ թույլ տալու, պլանավորելու, գործելու և զարգանալու ունակությամբ: Մենք չենք կարող, երբ նայում ենք պատերազմից տուժած երիտասարդներին, պարզապես կենտրոնանալ նրանց խոցելիության վրա, այլ փոխարենը պետք է օգնել նրանց՝ իրենց իսկ խոցելիության մեջ ճանաչելու սեփական կարողություններն ու ներուժը:

Մի քանի հիմնարար թեմաների անդրադարձ պատերազմից տուժած երիտասարդների հետ երիտասարդական աշխատանք իրականացնելիս.

- Երիտասարդական աշխատողների ինքնախնամք (self-care) և հուզական այրման կանխարգելում
- Երիտասարդների հետ աշխատանքում սալոտոգեն մոտեցման կիրառում
- Անդրադառնալ արմատականացմանը և պատերազմի հետևանքներին
- Խաղաղության և ոչ բռնության խթանում և բռնության դեմ պայքարում երիտասարդների հզորացում
- Գեղարվեստական մեթոդների կիրառում երիտասարդների աշխատանքում
- Միջմշակութային իրավասությունների զարգացում ժամանած երիտասարդների և տեղական համայնքի միջև բացերը կամրջելու համար
- Երիտասարդների շուրջ կառուցողական սոցիալական ցանցերի ստեղծում
- Այս թեմաները միասին ապահովում են պատերազմից տուժած երիտասարդների հետ ներգրավվելու և աջակցելու համապարփակ շրջանակ:

Մաղթում ենք ձեզ լավ ընթերցանություն և խնդրում ենք ուղարկել մեզ հետադարձ կապ՝ կիսվելով ձեր փորձառությամբ, որպեսզի հետազոտությունը կարողանա առաջընթաց ունենալ, և պատերազմից տուժած համատեքստերում երիտասարդական աշխատանքի պրակտիկան հարստանա և զարգանա:

Ասոցիացիան հիմնադրվել է 1982 թվականին: Մեր առաքելությունն է տարածել խաղաղության և ոչ բռնության մշակույթը: Մեր նպատակն է անդրադառնալ բռնության բոլոր ձևերին՝ ուղղակի, կառուցվածքային և մշակութային, և մենք մեր ջանքերը կազմակերպում ենք երեք սյուների շուրջ՝ հետազոտություն, կրթություն և վերջապես ոչ բռնի գործողությանը: Ոչ բռնություն նշանակում է հասկանալ և ընդունել, որ մենք բոլորս փոխկապակցված ենք, և որ մեր գործողությունները միշտ պետք է հակադարձելի լինեն:

Մենք ունենք ներգրավվածություն տեղական, ազգային և միջազգային 6 ոլորտների մեջ.

- Պատերազմի այլընտրանքներ. մենք ուսումնասիրում ենք ոչ բռնի պայքարների պատմությունը և աջակցում ենք բռնությունից հետո հաշտեցման գործընթացներին: Մենք ուսումնասիրում ենք պատերազմի հետևանքները և ռազմական արդյունաբերության հնարավոր վերափոխումը, աջակցում ենք քաղաքացիական միջամտություններին պատերազմական գոտիներում.

- Խաղաղության կրթություն. մենք աջակցում ենք երիտասարդների բնածին կարողություններին՝ բռնության հետ վարվելու ոչ բռնի կերպով, խթանում ենք ներառական, մասնակցային, ոչ ֆորմալ կրթական մեթոդոլոգիաները և ոչ բռնի մոտեցումը թե՛ ուսուցման, թե՛ սովորելու նկատմամբ:

- Գրադարան. մենք խնամում ենք Իտալիայի ամենամեծ գրադարանը խաղաղության և ոչ բռնության հարցերով, և մենք պահպանում ենք ոչ բռնի շարժումների պատմական արխիվները:

- «Ժողովրդական իշխանություն». մենք աջակցում ենք տեղական համայնքներում և քաղաքացիական հասարակության ասոցիացիաներում մասնակցային ժողովրդավարության գործընթացներին, խթանում ենք ոչ բռնության կարևորության գիտակցումը, զանգվածային լրատվության միջոցների դերի մասին իրազեկվածությունը բռնությանն աջակցելու գործում, լրատվամիջոցների ակտիվությունն ու տարածում խաղաղության լրագրության գաղափարը:

- Շրջակա միջավայր. աջակցել «Գաիա Պարադիզմի» տարածմանը և կենտրոնանալ արտադրության ձևերի կայունության և սոցիալական վերահսկողության վրա, մենք նաև ջանքեր ենք գործադրում շրջակա միջավայրի վրա պատերազմի թողած ազդեցությունները վերհանելու համար:

- Արվեստ և ոչ բռնություն. մենք խորացնում ենք գեղարվեստական մոտեցումը՝ որպես կարողությունների և հաշտեցման, իրազեկման և հաշտեցման գործիք:

Հասարակական շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակն է աջակցել Ուկրաինայի բարեփոխմանը եվրոպական չափանիշներին համապատասխան, ներդնել ժողովրդավարական արժեքներ և զարգացնել քաղաքացիական հասարակությունը Ուկրաինայում՝ օգտագործելով կրթական և տեղեկատվական մեթոդաբանություններ: Մեր կազմակերպությունը, որը հիմնադրվել է 2008 թվականին, համալրված է միջազգային փորձ ունեցող երիտասարդական աշխատանքի ոլորտի փորձագետներով, երիտասարդ առաջնորդներով, Էստուճիաստներով և կամավորներով:

Մենք մեծ ջանքեր ենք դնում հետևյալ նպատակներին հասնելու համար.

- Ուկրաինայի քաղաքացիների համար եվրաինտեգրման խնդրին ուղղված կրթական և տեղեկատվական ծրագրերի մշակում,
- Մշակել կրթական ծրագրեր երիտասարդների համար՝ ուղղված առաջնորդությանը, հանդուրժողականությանը, մարդու իրավունքների հարգմանը և ժողովրդավարական արժեքների գիտակցմանը,
- Մշակել երիտասարդների փոխանակման ծրագրեր Ուկրաինայի և այլ երկրների երիտասարդների միջև՝ ուղղակի նպատակ ունենալով վերացնել կարծրատիպերը և զարգացնել բազմամշակութային երկխոսությունն ու համագործակցությունը,
- Մշակել միջազգային փոխանակման ծրագրեր մասնագիտական ներկայացուցիչների համար:

Երիտասարդների համապարփակ ուղեցույց և վերականգնման

- Մշակել ծրագիր՝ ուղղված երիտասարդական եվրոակումբների տեղական և ազգային ցանցի զարգացմանը,
 - Մշակել ծրագրեր՝ ուղղված տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակներում կամավորական շարժման խթանմանը,
 - Մշակել երիտասարդների մոտ ակտիվ սոցիալական դիրքի ձևավորմանն ուղղված ծրագրեր,
 - Աջակցել խաղաղության մշակույթի ձևավորմանը՝ ոչ ֆորմալ կրթության և մարդու իրավունքների կրթության միջոցով,
 - Ուկրաինայի հասարակությունում խաղաղության, ազգային միասնության, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, ժողովրդավարական արժեքների գաղափարների խթանում,
 - Մշակել Էկոլոգիական գիտակցության և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի բարձրացմանն ուղղված ծրագրեր,
- Նպատակները կյանքի են կոչվում մեր քաղաքի և տարածաշրջանի տեղական համայնքի հետ մեր շարունակական աշխատանքի և ամբողջ Եվրոպայում մեր գործընկերների օգնությամբ միջազգային նախաձեռնությունների իրականացման միջոցով:
- 2017 թվականից կազմակերպությունը Ուկրաինայում ղեկավարում է պաշտոնական Երազմուս+ երիտասարդական տեղեկատվական կենտրոնը: Կենտրոնը Երազմուս+ ծրագրի շրջանակներում տեղեկատվություն է տրամադրում երիտասարդներին և երիտասարդական կազմակերպություններին հնարավորությունների մասին և աջակցում է շահագրգիռ կողմերին իրենց նախագծերի իրականացման հարցում::

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԵՍԴԱՆՆԵՐԻ ՑԱՆՑ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ



<https://ypa.network/>

Ստեղծվել է Եվրոպայի խորհրդի 3,5-ամյա ծրագրի արդյունքում, որը մեկնարկել է 2011թ-ին: Առաքելությունն է զարգացնել խաղաղության մշակույթը՝ հզորացնելով երիտասարդներին, խթանելով մարդու իրավունքները, արժանապատվությունը, հավասարությունը և հարգանքը կրթության բազմազանության, շահերի պաշտպանության և այլ գործողությունների միջոցով: Կազմակերպության հիմնական նպատակներից է ակտիվ ներգրավվածությունը մարդու իրավունքներին ուղղված գործողություններում: Կազմակերպության գործունեությունը կենտրոնացած է 3 հիմնական ուղղությունների վրա՝ մարդու իրավունքներ, գենդերային հավասարություն և մարդու իրավունքների կրթություն: Մեր գործունեության նպատակն է բարձրացնել մարդկանց իրազեկությունը մարդու իրավունքների, հանդուրժողականության, հավասարության, ռասիզմի, խտրականության, խաղաղության մշակույթի, ազգայնականության և միջմշակութային երկխոսության վերաբերյալ, խաղաղության աշխատանքին և հակամարտությունների վերափոխմանը զուգահեռ: YPAN France-ը նոր կազմակերպություն է Երազմուս+ ոլորտում, սակայն YPAN France-ը հավաքում է անդամների և գործընկերների, ովքեր փորձառու են Երազմուս+ Էկոհամակարգում նախագծերի մշակման և իրականացման գործում:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Verein für Friedenspädagogik und gewaltfreier Konflikttransformation



Հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2020թ-ի: Երիտասարդական կազմակերպություն է, որը հավաքում է 18-35 տարեկան երիտասարդների: Կազմակերպությունը ղեկավարվում է երիտասարդների կողմից, և բոլոր միջոցառումներն իրականացվում և կազմակերպվում են երիտասարդների համար և նրանց կողմից: Մենք համագործակցում ենք երիտասարդների, երիտասարդական աշխատողների, արվեստագետների և ընդհանրապես երիտասարդների հետ, ովքեր հետաքրքրված են խաղաղության կառուցման, հակամարտությունների վերափոխման, տրավմայի բուժման, անցյալի և մարդու իրավունքների թեմաներով:

Կազմակերպության նպատակն է.

Երիտասարդների համապարփակ ուղեցույց և վերականգնման հոդոցման կերպականգման

1. Խթանել խաղաղության կրթության տեսությունն ու պրակտիկան ոչ բռնի հակամարտությունների վերափոխման և հաշտեցման համատեքստում տեղական, ազգային և միջազգային մակարդակներում:
2. Բարձրացնել հանրային իրազեկվածությունը խաղաղարար աշխատանքի և բռնության դեմ պայքարի գաղափարների վերաբերյալ: Կանոնադրության նպատակը մասնավորապես իրականացվում է.
 - խաղաղության կրթության տեսության և պրակտիկայի ոչ բռնի հակամարտությունների վերափոխման և հաշտեցմանը նվիրված սեմինարների, վերապատրաստումների, դասընթացների կազմակերպման և անցկացման ու լրացուցիչ կրթական աշխատանքների միջոցով:
 - խաղաղության կրթության ոչ բռնի հակամարտությունների վերափոխման և հաշտեցման աշխատանքների վերաբերյալ նյութեր, գիտական աշխատություններ և մշակութային արտադրանքների պատրաստման և տարածման միջոցով:
3. Միջոցառումների կազմակերպում և հասարակայնության հետ կապերի աշխատանք խաղաղության, մարդու իրավունքների, խաղաղաշինության, շրջակա միջավայրի, պառակտված հասարակություններում հաշտեցման, փոքրամասնությունների իրավունքների, միջմշակութային փոխանակման և գեներային արդարության ոլորտներում, որոնք ծառայում են հանրակրթության խթանմանը:
4. Երիտասարդական աշխատանք և մասնակցություն երիտասարդների կրթությանը վերը նշված ոլորտներում: Մշակութային միջոցառումների, գիտաժողովների, ուսումնական ճամփորդությունների, միջազգային հանդիպումների կազմակերպում, խորհրդատվություն (արտադպրոցական) ուսումնական հաստատությունների համար և վերապատրաստումներ:

ՍԻԵՐԱՅԻ ԱՉԱՏ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ (LPS)



Մշակութային կազմակերպություն է, որը ղեկավարվում է Մադրիդի շրջանի երիտասարդների կողմից: Այն ստեղծվել է 2013 թվականին ընկերական խմբի կողմից, որոնք արվեստի, կրթության և սպորտի միջոցով սոցիալական վերափոխման ոլորտում համապատասխան հաստատությունների հետ համագործակցություն սկսելու կարիք ունեին: Կազմակերպության նպատակն է նպաստել երիտասարդների ակտիվ մասնակցային գործընթացներին և մշակույթի, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական արժեքների տարածմանը: Կազմակերպության գործունեությունը սկսվել է 2013 թվականին՝ մասնակցելով ավելի քան 30 միջոցառումների, աշխատաժողովների և ակցիաների Իսպանիայում և եվրոպական այլ երկրներում (Նիդեռլանդներ, Բելգիա, Ֆրանսիա, Պորտուգալիա և Մեծ Բրիտանիա): LPS-ը Երիտասարդական խաղաղության դեսպանների ցանցի անդամ է և միացել է խաղաղության ամիսակոմիտեի և ոչ բռնի հաղորդակցության գործողություններին: Կազմակերպությունը կայուն համագործակցություն է հաստատել Մադրիդի հյուսիս-արևմտյան շրջանի տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ նպաստելով երիտասարդների մասնակցությանը որոշումների կայացման տարբեր գործընթացներին, սեմինարների, վերապատրաստման և մշակութային միջոցառումների կազմակերպմանը:

ՏԵՂԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կազմակերպություն է, որը հիմնված է Կոսովոյի Լեպոսավիչ



քաղաքում: Հիմնական նպատակն է աշխատել Կոսովոյում խաղաղության կառուցման գործընթացի վրա՝ միաժամանակ կենտրոնանալով ներքևից վերև մոտեցմամբ Կոսովոյի քաղաքացիների հետ խաղաղության կառուցման և հաշտեցման աշխատանքներ տանելու ուղղությամբ: «Local Peace» ՀԿ-ն աշխատում է հիմնականում երիտասարդների հետ և նպատակ ունի նրանց հմտացնել մարդու իրավունքների և խաղաղության կրթության ոլորտում:

Երիտասարդական կազմակերպությունը հիմնադրվել է մի խումբ երիտասարդների կողմից՝ որպես ոչ քաղաքական, շահույթ չհետապնդող, հասարակական կազմակերպություն Սոււմգայիթ քաղաքում 2006 թվականին:

Ունի ոչ ֆորմալ կրթութան համակարգում աշխատելու 15 տարվա փորձ՝ կենտրոնանալով երիտասարդական աշխատանքի, կամավորության, խաղաղության կառուցման, սոցիալական տնտեսության, ակտիվ քաղաքացիության և մասնակցության մեջ: Մենք ունենք ավելի քան 90 անդամ, ովքեր աջակցում և օգնում են մեզ մեր գործունեության մեջ:

Կազմակերպության կարևոր նպատակն է.

- ներկայացնել ոչ ֆորմալ կրթության կարևորությունը անընդմեջ ուսուցման գործընթացում,
- բարձրացնել երիտասարդների քաղաքացիական պատասխանատվությունը և ակտիվ քաղաքացիությունը,
- խթանել առողջ ապրելակերպը և ցույց տալ վատ սովորությունների հետևանքները,
- երիտասարդության շրջանում բարձրացնել բնապահպանական իրազեկությունը և շրջակա միջավայրի պահպանության նշանակությունը,
- պաշտպանել մարդու իրավունքները և հավասարությունը,
- աջակցել խաղաղության կառուցմանը և հակամարտությունների կանխմանը,
- խթանել սոցիալական ձեռներեցության հայեցակարգը,
- աջակցել տեղի դպրոցականներին և ուսանողներին իրենց ինքնագարգացման գործընթացում:

CSYO-ն աշխատում է տարբեր սոցիալական, կրթական և մշակութային ոլորտներում տարբեր թիրախային խմբերի հետ՝ երիտասարդներ, ուսանողներ, փախստականներ, ներքին տեղահանված անձինք և այլն: Կազմակերպությունը համագործակցում է Եվրոպայի տարբեր ՀԿ-ների հետ և ակտիվորեն ներգրավված է Երազմուս+ (նախկինում՝ Youth in Action) ծրագրում՝ որպես խթանող/ գործընկեր և հյուրընկալող նախագծեր Ադրբեջանում:

Կազմակերպությունը Եվրոպայում 2 խոշոր ցանցերի՝ «Երիտասարդական էքսպրես ցանց» ու «Երիտասարդությունը և Շրջակա Միջավայրը Եվրոպայում», լիիրավ անդամ է: Ընդհանուր առմամբ, CSYO-ն հաջողությամբ կազմակերպել և հյուրընկալել է միջազգային թեյնինգներ և երիտասարդական փոխանակումներ՝ մարդու իրավունքների, միգրացիայի, մշակութային բազմազանության, հանդուրժողականության, շրջակա միջավայրի և հարակից թեմաների շուրջ՝ Երիտասարդները գործելիս Երազմուս+ ծրագրի շրջանակներում: Մենք բազմաթիվ տեղական ծրագրեր ենք իրականացրել մեր առաջնահերթությունների ուղղությամբ և մեր նախագծերի շրջանակներում աշխատել ենք բազմաթիվ միջազգային կազմակերպությունների և կառավարական մարմինների հետ:

2019 թվականի հունվարից CSYO-ն ՍԱԼՏՈ Հարավային Կովկաս Ռեսուրս Կենտրոնի կողմից ընտրվել է որպես Երազմուս+ երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուսի Տեղեկատվական Կենտրոն Ադրբեջանի համար: Որպես Տեղեկատվական Կենտրոն՝ CSYO-ն խորհրդատվություն է տրամադրում երիտասարդներին և կազմակերպություններին, որոնք հետաքրքրված են Երազմուս+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուսի (ESC) հնարավորություններով, կազմակերպում է գովազդային/տեղեկատվական արշավներ Երազմուս+ երիտասարդության և Եվրոպական Համերաշխության Կորպուսի հնարավորությունների վերաբերյալ:

Երիտասարդական կազմակերպությունն ունի ավելի քան 90 մշտական ակտիվ անդամներ, որոնք հիմնականում տարբեր բուհերի ուսանողներ են: Նրանք բարձր հմտություն ունեն ծրագրերի կառավարման և յուրաքանչյուրը տիրապետում է առնվազն 2 լեզվի: Սկզբնական փուլում դուք կապ եք հաստատելու միջազգային հարցերի թիմի հետ, որը բաղկացած է 8 անդամից: Պարբերաբար մասնակցելով երիտասարդական փոխանակումներին կամ թեյնինգներին՝ թիմի այս անդամները քաճատեղյակ են Երազմուս+ և Եվրոպական Համերաշխության Կորպուսի կամավորական ծրագրերին, ինչպես նաև հմուտ են տեղական և միջազգային նախագծերի մշակման և իրականացման մեջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

www.yic.am



Հասարակական կազմակերպություն է, որը ստեղծվել է երիտասարդական աշխատանքի ոլորտում փորձառու և լավ ճանաչված մի խումբ ակտիվ երիտասարդների կողմից:

ԵՆԿ-ի առաքելությունն է նպաստել երիտասարդների կյանքի որակի բարձրացմանը երիտասարդակենտրոն մոտեցման միջոցով:

ԵՆԿ-ն ունի հետևյալ ռազմավարական նպատակներն ու խնդիրները.

- ՆՊԱՏԱԿ 1.** նպաստել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը՝
- ներգրավելով երիտասարդներին շարունակական ոչ ֆորմալ ուսուցման գործընթացներում,
 - ձևավորելով երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի մշակույթ,
 - բարձրացնելով երիտասարդների մասնակցությունը մշակութային կյանքում,
 - բարձրացնելով երիտասարդների մրցունակությունը աշխատաշուկայում:

- ՆՊԱՏԱԿ 2.** խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը՝
- բարձրացնելով սոցիալական խնդիրների լուծման գործում երիտասարդների դերը,
 - աջակցելով երիտասարդների կողմից նորարարական գաղափարների իրականացմանը,
 - աջակցելով երիտասարդների ձեռներեցությանը,
 - Չարգացնելով երիտասարդների շրջանում կամավորական մշակույթը:

- ՆՊԱՏԱԿ 3.** նպաստել հասարակության մեջ երիտասարդների դերի բարձրացմանը՝
- բարձրացնելով երիտասարդության իրավագիտակցության մակարդակը,
 - ամրապնդելով երիտասարդության և որոշում կայացնողների միջև երկխոսություն,
 - բարձրացնելով հասարակության մեջ երիտասարդության խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը,,
 - պաշտպանելով երիտասարդների իրավունքներն և շահերը:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ. ԼԵՅԱԿԱՆ ՀԿ



Միջազգային ոչ պետական կազմակերպություն է (ՀԿ), որը մասնագիտացված է արտակարգ իրավիճակների արձագանքման, պատրաստվածության, ռիսկերի նվազեցման և կանխարգելման հարցերում: Օգտագործում է աշխարհում արտակարգ իրավիճակներից առաջ, ընթացքում և հետո կիրառվող առաջադեմ տեխնոլոգիական լուծումներ և առարկայական փորձաքննություն ազգային և միջազգային աղետների արձագանքման մեխանիզմների համար: Կենտրոնանալով մասշտաբային համալիր լուծումների իրականացման վրա՝ Help.NGO-ն աշխատում է խրախուսելու կարողությունների օգտագործմանը և տեղայնացմանը հետազոտության և զարգացման, վերապատրաստման և լուծումների նախադրյալների միջոցով: Help.NGO-ն ներկայումս ՄԱԿ-ի 29 ՀԿ-ների աջակից գործընկերներից մեկն է, որն ընդգրկում է մարդասիրական և զարգացման աշխատանքների գործառնական, ռազմավարական և վարչական ոլորտները:

Help.NGO-ն հաջողությամբ տրամադրել է իր օգնությունը, համաձայնեցնելով ՄԱԿ-ի, կառավարությունների և խմբերի հետ, տասնյակ այնպիսի առաքելություններ կյանքի կոչելիս, ինչպիսին են Հայիթիի երկրաշարժը (2010թ., 2021թ.), Ճապոնիայի երկրաշարժը և միջուկային արտակարգ իրավիճակը (2011թ.), Նյու Յորք քաղաքի «Սենդի» փոթորիկը (2012թ.), Միջերկրական ծովով փրկող փախստականները (2016թ.), Պուերտո Ռիկո և ԱՄՆ-ի Վիրջինյան նահանգի փոթորիկները (2017-18թթ.), Մոզամբիկում Իդայի և Զենեթ (2019թ.) փոթորիկներից հետո (2019թ.), Բահամյան կղզիները՝ «Դորիան» փոթորիկից հետո (2019-20թթ.), Լուիզիանայում 2 փոթորիկից հետո (20թ.) և մյուսները:

Գրանցված լինելով 2020 թվականի նոյեմբերին Լեհաստանում Help.NGO-ն Եվրոպական միության մասնաճյուղներից մեկն է:

Որպես ԱՄՆ հիմնադրամի դուստր ձեռնարկություն՝ Help.NGO-ն գործում և աջակցում է ՀԿ-ների գլոբալ կառավարման և կրթական ծրագրերին, տարածում է մարդասիրական օգնության մասին գիտելիքներ՝ (i) կամավորների և աղետների արձագանքման խմբերի վերապատրաստման միջոցով, (ii) հետազոտական աշխատանք կատարելով և օգնության կարիքների, պետությունների, հակամարտությունների, ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալով, (iii) տարածելով գիտելիքները ոլորտում՝ մարդասիրական և զարգացման օգնություն, միջազգային հարաբերություններ և գլոբալ կրթություն (ներառյալ վերապատրաստումներ և դասընթացներ մասնագետների և գիտնականների համար): Help.NGO-ն նաև աջակցում է տեղական համայնքին՝ կազմակերպելով կրթական միջոցառումներ, որոնք խթանում են մարդասիրական օգնությունը՝ աջակցելով հաշմանդամություն ունեցող երեխաներին դպրոցներում:

Մեր գործունեությունն ուղղված է.

- Մարդասիրական աղետներից տուժած տեղական համայնքներ,
- Ակադեմիական. ինչպես ուսանողներ, այնպես էլ ավագ գիտաշխատողներ,
- Քաղաքականություն մշակողներ,
- Հասարակության անդամներ, որոնք հետաքրքրված են կամավորական և հումանիտար հարցերով,
- Գղանակի տեղական համայնք:

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ. Ծրագրի անցած ուղին

Երիտասարդական աշխատանքը կրիտիկական աջակցություն է տրամադրում պատերազմից տուժած երիտասարդների անհատական հզորացմանը՝ առաջարկելով ապահով տարածք և նոր հասարակության մեջ արագ ինտեգրվելու հնարավորություններ: Այն խթանում է երիտասարդի վստահությունը և դրաձևում է նրանց ավելի ճկուն՝ օգնելով կառուցել դրական հարաբերություններ, այդ թվում իրենց հասակակիցների հետ: Երիտասարդական աշխատանքը պահանջում է ճկունություն, հանդուրժողականություն երկիմաստության նկատմամբ և կենտրոնացում երիտասարդներին հասարակության մեջ ինտեգրելու համար: Այն երիտասարդներին առաջարկում է ինքնադրսևորման, հասարակական գործունեությանը մասնակցելու և իր սեփական արժեքավոր ներդրումը կարևորելու հարթակ: Երիտասարդական աշխատանքը նաև կարևոր դեր է խաղում միջոլորտային համագործակցության մեջ՝ լրացնելով այլ ծառայություններ, օրինակ՝ իրավաբանական օգնությունը, կրթությունը, կեցության խնդիրը և զբաղվածությունը:

Երազմուս+ K2 «Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» ծրագիրն անդրադարձել է 9 կազմակերպությունների և երիտասարդական աշխատողների կարիքներին, որոնք զբաղվում են պատերազմից տուժած երիտասարդներին աջակցելով: Այս նախաձեռնության նպատակը երիտասարդական աշխատանքի կարողությունների, որակի և ազդեցության բարձրացումն էր՝ խթանելով պատերազմից տուժած երիտասարդների ինտեգրումն ու ճկունությունը: Ծրագիրն ընդգծեց երիտասարդական աշխատանքի կարևորությունը, որն ընձեռում է ապահով տարածք՝ անձնական զարգացման և հասարակության մասնակցության բարձրացման համար՝ արժևորելով երիտասարդական աշխատողների կենսական դերը այս գործընթացում:

Բացի այդ, ծրագիրը նպատակ ուներ ինը գործընկեր կազմակերպությունների 30 ներկայացուցիչների համալրել երիտասարդների վերականգնման համար նախատեսված գործիքներով և մեթոդներով, աջակցել երիտասարդների վերականգնմանը ինը համայնքներում կարողությունների զարգացման և տեղական նախաձեռնությունների միջոցով և խրախուսել խաղաղության աշխատանքը երիտասարդական գործունեության միջոցով տուժածների համար: պատերազմով և զինված հակամարտությամբ:

Ծրագրի նպատակները բազմաբնույթ էին. այդ թվում՝ երիտասարդական աշխատողների փորձի փոխանակման հարթակի ստեղծումը, յուրաքանչյուր մասնակից կազմակերպության համատեքստին հարմարեցված փոփոխությունների և բարելավումների խթանումը և ինը կազմակերպությունների կարողությունների հզորացումը: Ծրագիրը նպատակ ուներ նաև ինը գործընկեր կազմակերպությունների 30 ներկայացուցիչներին զինել երիտասարդների վերականգնման մեթոդներով, աջակցել երիտասարդների վերականգնմանը կարողությունների զարգացմանը տեղական նախաձեռնությունների միջոցով և խրախուսել խաղաղության աշխատանքների իրականացմանը երիտասարդական աշխատանքի միջոցով պատերազմից տուժածների համար:

Ծրագրի ընթացքում մասնակիցները ընդլայնեցին իրենց գիտելիքները եվրոպական փորձի մասին և համապատասխանաբար հարմարեցրին դրանք իրենց առօրյա աշխատանքի մեջ: Ինը երկրներում իրականացվել է երիտասարդական աշխատողների կարիքների վերաբերյալ հետազոտություն, և գործընկեր կազմակերպությունների 30 ներկայացուցիչներ մշակել են Էական իրավասություններ պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելու համար:

Ծրագիրը նաև խթանեց ինը մասնակից կազմակերպությունների կարողությունները. առնվազն 135 երիտասարդներ ստացել են աջակցություն՝ ներգրավվելով սոցիալական և համայնքային կյանք երիտասարդական աշխատանքի միջոցով, ինը երկրներում իրականացվել է երիտասարդական աշխատանք, մշակվել և փորձարկվել են վերականգնողական աշխատանքի մեթոդներ, իսկ երիտասարդական աշխատանքի գործունեությունը վերափոխվել է՝ ելնելով տեղական համատեքստից: Ծրագիրը պատրաստեց ինը լեզուներով ուղեցույց՝ բարձրացնելով պատերազմից տուժածների երիտասարդական աշխատանքի որակը: Բացի այդ, խաղաղության աշխատանք է քարոզվել տեղական, եվրոպական և միջազգային մակարդակներում:

Ծրագիրը նպաստեց պատերազմից տուժած երիտասարդների սոցիալական ներառմանը և նպատակ ուներ աջակցել երիտասարդների հնարավորինս հեշտ ինտեգրմանը հյուրընկալող համայնքներում: Այն խրախուսեց համերաշխությունը և քաղաքացիական ներգրավվածությունը՝ տրամադրելով գործիքներ, մեթոդներ և պրակտիկա երիտասարդների վերականգնման համար և բարձրացնելով եվրոպական համատեքստի իրազեկությունը:

Անդրադառնալով և՛ կազմակերպչական կարիքներին, և՛ երիտասարդական աշխատողների կարիքներին՝ ծրագիրը կենտրոնացած էր ռեսուրսների մոբիլիզացմամբ կարողությունների ձևավորման վրա, արտակարգ իրավիճակներին արձագանքելու գործողությունները փոխելու, ճգնաժամերին արձագանքելու հստակ գործողությունների պլանի մշակման և պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելու անձնակազմի վերապատրաստման վրա: Երիտասարդական աշխատողների համար ծրագիրը նպատակ ուներ տրամադրել փորձ, գործիքներ և մեթոդաբանական պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելու համար, ինչպես նաև ստեղծել պրակտիկ հարթակ՝ փոխադարձ ուսուցման և ռազմավարությունների փոխանակման համար:

Եզրափակելով կարելի է ասել, որ [«Երիտասարդական աշխատանք պատերազմից տուժած երիտասարդների հետ»](#) նախագիծը արձագանք էր այն մարտահրավերներին, որոնց բախվում են հակամարտությունից տուժած երիտասարդները: Չարգացնելով կարողությունները, փոխանակելով լավագույն փորձը և կիրառելով գործնական գործիքներ՝ ծրագիրը ձգտել է ստեղծել աջակցող միջավայր, որտեղ երիտասարդները կկարողանան հաղթահարել իրենց դժվարությունները և հեշտությամբ ինտեգրվել իրենց համայնքներում: Միջազգային համագործակցության և նորարարական մոտեցումների միջոցով այս նախագիծը ձգտում էր ստեղծել կայուն դրական փոփոխություններ պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների համար:

Ներածություն

Երիտասարդների համապարփակ ուղեցույց
և վերականգման հզորացման

Մշտապես զարգացող գլոբալ լանդշաֆտում պատերազմի և հակամարտությունների հետևանքները խորը հետք են թողնում հասարակությունների ներսում՝ հատկապես ազդելով երիտասարդների կյանքի վրա: «Երիտասարդական աշխատանք պատերազմից տուժած երիտասարդների հետ» նախագիծը հուլիսի և համագործակցության փարոս է այս մարտահրավերների ֆոնին, որը միավորում է կազմակերպությունների ամբողջ Եվրոպայից, որոնցից յուրաքանչյուրն ունի ընդհանուր ձգտում՝ հզորացնել և վերականգնել այն երիտասարդներին, ովքեր տուժել են պատերազմից և հակամարտություններից:

Centro Studi Sereno Regis-ի ղեկավարությամբ և Իտալիայում Էրազմուս+ ազգային գործակալության աջակցությամբ հաստատված այս նախագիծը ներառում է համատեղ ջանքեր, որոնք ձգվում են սահմաններից դուրս: «Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» երկարաժամկետ Էրազմուս+ համագործակցային ծրագիրն «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է միջազգային գործընկեր կառույցների՝ Centro Studi Sereno Regis (Իտալիա), Center for Euroinitiatives (Ուկրաինա), Youth Peace Ambassadors Network (Ֆրանսիա), Peace Up (Գերմանիա), Help.NGO Polska (Լեհաստան), Sağlam Düşünce Gençler Teshkilati • SDGT (Ադրբեջան), Local Peace (Կոսովո), Libre-pensadores de la Sierra de Madrid - LPSM (Իսպանիա) հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակները ամուր արմատավորված են երիտասարդների արդյունավետ աշխատանքային պրակտիկայի փոխանակման համար անվտանգ տարածքներ ստեղծելու ցանկության մեջ: Այս նախագիծը նպատակ ունի նախաձեռնել փոխակերպող գործընթացներ, որոնք տալիս են նոր մոտեցումներ՝ հարմարեցված յուրաքանչյուր մասնակից կազմակերպության համատեքստին: Ընդլայնելով այս կազմակերպությունների կարողությունները՝ նախագիծը ձգտում է երիտասարդներին զինել անհրաժեշտ գործիքներով և մեթոդաբանությամբ՝ պատերազմի եւ բռնության վնասվածքներից սպիացած երիտասարդների վերականգնման համար: Ավելին, այս ձեռնարկումը ձգտում է խթանել խաղաղությունն ու վերականգնումը տեղական նախաձեռնությունների միջոցով՝ դրանով իսկ խթանելով տուժած երիտասարդների հզորացման եւ ճկունության զգացումը:

Ի վերջո, այս նախագիծը ձգտում է շոշափել երիտասարդ անհատների կյանքը՝ առաջարկելով նրանց ոչ միայն աջակցություն, այլ միջոցներ՝ հաղթահարելու իրենց տրավմատիկ փորձառություններն և վերաինտեգրվելու հասարակությանը՝ երիտասարդական աշխատանքի մնուցման համատեքստի միջոցով: Ծրագրի շրջանակը դուրս է գալիս պարզապես նախաձեռնությունների հավաքածուից. այն նպատակ ունի խթանել շոշափելի փոփոխություններ և ստեղծել ռեսուրսներ, որոնք հզորացնում են կազմակերպություններին գործընկերության ողջ ընթացքում, նպաստել բռնության, զինված հակամարտությունների և դրա հետևանքների համատեքստում երիտասարդների աշխատանքի բարելավմանը՝ ոչ միայն տեղական մակարդակներում, այլև ավելի լայն՝ եվրոպական և միջազգային մասշտաբով:

1.1. Հետազոտության մեթոդներ, հարցեր և էթիկա

Ներառելով բազմակողմանի մոտեցում՝ «Երիտասարդական աշխատանք պատերազմից տուժած երիտասարդների հետ» նախագիծը ներառում է նաև հետազոտական նշանակալի փուլ: Այս առանցքային բաղադրիչը նպատակ ունի խորապես ուսումնասիրել այն կարիքներն և մարտահրավերները, որոնց բախվում են երիտասարդական աշխատողները և կազմակերպությունները պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդներին աջակցելիս: Խորը հետազոտության միջոցով ինը գործընկեր երկրներում (Իտալիա, Գերմանիա, Հայաստան, Ադրբեյջան, Իսպանիա, Լեհաստան, Ֆրանսիա, Կոսովո և Ուկրաինա) նախագիծը փորձում է մատնանշել երիտասարդական աշխատողների և կազմակերպությունների բարդ կարիքները, որոնք գործում են ոլորտում բացահայտելով մարտահրավերները, բացերը և հնարավորությունները, որոնք առաջանում են յուրաքանչյուր գործընկեր համայնքի եզակի համատեքստում: Հետազոտության այս գործընթացը ընդգրկում է ինը տարբեր շրջաններ՝ ստեղծելով կոնֆլիկտներից հետո երիտասարդների աշխատանքի բազմակողմ հարթությունների համապարփակ պատկերացում:

Հետազոտության ընթացքում ինը գործընկեր երկրներում իրականացվել են տեղական հետազոտություններ՝ ուղղված

Կարիքների բացահայտմանը. համապարփակ հետազոտական ջանքերի միջոցով մանրակրկիտ կերպով բացահայտվում են երիտասարդական աշխատողների և երիտասարդական աշխատանքի գործունեության եզակի կարիքներն ու մարտահրավերները յուրաքանչյուր համայնքում:

Չարգացման ուղղությունների որոնմանը. հետազոտության արդյունքները ճանապարհային քարտեզ են տրամադրում երիտասարդական աշխատանքի գործունեության առաջընթացի և կատարելագործման համար:

Վերապատրաստման ծրագրի թեմաների ընտրությանը. հետազոտության արդյունքներն ուղղակիորեն ազդեցին վերապատրաստման ծրագրի մշակման վրա՝ թելադրելով կոնկրետ թեմաներ, մոդուլներ և մեթոդաբանություններ, որոնք կկիրառվեն բացահայտված կարիքներն ու մարտահրավերները լուծելու համար:

Ավելին, այս հետազոտությունը նպատակ ունի պատասխանել հետևյալ 3 հիմնական հարցադրումներին.

Կարիքների բացահայտում և պատասխանների որոնում.

-Որո՞նք են հակամարտություններից տուժած երիտասարդների հստակ կարիքները, և ինչպե՞ս են կազմակերպությունները արձագանքում այդ կարիքներին երիտասարդական աշխատանքի միջոցով:

-Ինչպե՞ս են երիտասարդական աշխատողներն անձամբ արձագանքում պատերազմից տուժած երիտասարդների բացահայտված կարիքներին, և ի՞նչ մարտահրավերների են հանդիպում նրանք աջակցություն ցուցաբերելիս:

Կարողությունների զարգացում և ուսուցում.

-Ի՞նչ մարտահրավերների են հանդիպում կազմակերպությունները կոնֆլիկտներից տուժած երիտասարդների հետ աշխատելու իրենց ջանքերում, և ինչպիսի՞ աջակցության կարիք ունեն նրանք՝ զարգացնելու իրենց կարողությունները:

-Ի՞նչ կոնկրետ գիտելիքների ոլորտներ, հմտություններ, գործիքներ և մեթոդներ են ձգտում ձեռք բերել երիտասարդ աշխատողները՝ հակամարտություններից տուժած երիտասարդների հետ արդյունավետ աշխատանք իրականացնելու համար:

Արդյունավետ մոտեցումների կիրառում և երիտասարդական աշխատողի դերի կարևորություն.

-Ի՞նչ դրական օրինակներ կարելի է ընդգծել երիտասարդական աշխատանքի փորձից՝ պատերազմից տուժած երիտասարդների կարիքները ճիշտ գնահատելու և աջակցելու հարցում:

Ինչպե՞ս են երիտասարդական աշխատողներն ընկալում երիտասարդական աշխատանքի դերը հակամարտություններից տուժած երիտասարդների վերականգնման գործում, և ո՞ր գործողությունները, գործիքները, մեթոդները կամ մոտեցումներն են առավել արդյունավետ:

Հետազոտության հիմքում ընկած էր մեթոդների և էթիկական նկատառումների խառնուրդը: Այս մոտեցման առանցքային նշանակությունը խորը հարցազրույցներն էին, որոնք ծառայում էին որպես երիտասարդական աշխատողների, տեղական կազմակերպությունների և կոնֆլիկտներից տուժած երիտասարդ անհատների նրբերանգ փորձառությունները և պատկերացումները հավաքելու համար: Հարցազրույցներն անցկացվել են տարբեր լեզուներով, ներառյալ անգլերենը և գործընկեր համայնքների մայրենի լեզուները, որոնք արտացոլում են բաց հաղորդակցության և փոխըմբռնման ապահովման պարտավորությունը:

Յուրաքանչյուր հարցազրույցից առաջ մասնակիցներին տրվել է հետազոտության նպատակի, հետազոտողների դերի և ակնկալվող արդյունքների հստակ բացատրություն: Մասնակիցների գաղտնիությունն ու արժանապատվությունը պահպանելու համար հարցազրույցներն անցկացվել են անանուն: Առկա ձայնագրությունը, մասնակիցների համաձայնությամբ, օգտագործվել է տվյալների հավաքագրման գործընթացում ճշգրտությունն ու հավատարմությունն ապահովելու համար՝ միաժամանակ հարգելով անհատական նախասիրություններն և հարմարավետության մակարդակը:

Այս գործընթացի ընթացքում հետազոտողները պահպանում էին հարգանքի և կարեկցանքի սկզբունքները՝ ընդունելով պատերազմից տուժած անձանց փորձառությունների շուրջ զգայունությունը, հնարավոր մշակութային և լեզվական նրբությունները՝ հարմարեցնելով իրենց մոտեցումը տարբեր ծագում ունեցող մասնակիցների հետ բովանդակային ներգրավվածություն ապահովմանը: Հետազոտության ընտրված մեթոդներն և էթիկայի այս մանրակրկիտ մոտեցումը ոչ միայն ապահովեցին հավաքագրված տվյալների հավաստիությանն ու իսկությանը, այլև ևս մեկ անգամ ընդգծեցին սույն ծրագրի մեջ ներգրավված անձանց զորակցման և աջակցության առաջնահերթությունը:

Հավելյալ տեղեկատվություն

Հետազոտությունը ծավալվում է տարբեր փորձառությունների և փորձի հիման վրա՝ ընդգրկելով համատեքստերի և մարտահրավերների լայն սպեկտր: Յուրաքանչյուր տարածաշրջան առաջարկում է յուրահատուկ պատմություն՝ բացահայտելով հակամարտություններից տուժած երիտասարդներին աջակցելու մեջ ներգրավված մարդկանց ճկունությունն ու հնարամտությունը: Այս գլուխը խորանում է մասնակիցների անցյալի և փորձառության մեջ՝ ցուցադրելով նրանց ներդրումը ոլորտում:

Լեհաստան. Սահմանների համերաշխությունն աճող լարվածության պայմաններում

Լեհաստանում 2021 թվականի անկանոն միջսահմանային խառը միգրացիայի աճը շրջադարձային հանգուցալուծում ունեցավ: Զանի որ Լուկաշենկոն կազմակերպում էր ԵՄ արևելյան սահմանները քայքայելու փորձերը, լեհական պետության ներսում հակափախստական տրամադրվածությունն աճեց: Սա խթանեց «Գրուպա Գրանսիայի» առաջացումը, որը սահմանային համերաշխության ենթակառուցվածքի օրինակ է: Նրանք խիզախորեն հակազդեցին միգրացիայի քրեականացմանը՝ շրջելով իրավական բարդություններով և քաղաքական ճնշումներով լեցուն բարդ լանդշաֆտը: Այս ակտիվիստների պատմությունը ոչ միայն արտացոլում է նրանց անսասան նվիրվածությունը, այլև լույս է սփռում այն սուր մարտահրավերների վրա, որոնց նրանք բախվում են փոփոխվող սահմաններում:

Ուկրաինա. Զարգացող դինամիկան և աննախադեպ արձագանքը պատերազմին

Ուկրաինական լանդշաֆտը կտրուկ փոխվեց 2022 թվականին Ռուսաստանի ներխուժումից հետո՝ փոխելով հակամարտությունների ներգրավման ուղվագծերը: «Երկրորդ սահմանի» ի հայտ գալը առաջացրեց միջազգային ուշադրության և ռեսուրսների աննախադեպ աճ: Ուկրաինայի դեպքի ուսումնասիրությունն ընդգծում է զարգացող հակամարտությունների և առաջացող հնարավորությունների նավարկելու նրբությունները՝ բացահայտելով պետական արձագանքների, մարդասիրական օգնության և երիտասարդության ներգրավվածության բարդ խաչմերուկները:

Ադրբեջան. Երիտասարդների հզորացում կոնֆլիկտների լուծման գործում

Ադրբեջանի երիտասարդական աշխատանքի սցենարը ներառում է երիտասարդության կենտրոնական դերը հակամարտությունների վերափոխման գործում: Ղարաբաղյան Երկրորդ պատերազմն ընդգծեց երիտասարդության հզորացման կարևորությունը խաղաղության կառուցման համար: Ակտիվ քաղաքացիությունը և ներգրավվածությունը խթանելու ջանքերը, զուգորդված գյուղական շրջաններում մասնակցության բացերի վերացման հետ մեկտեղ, ցույց են տալիս երիտասարդների աշխատանքի հարմարվողական բնույթը կոնֆլիկտների համատեքստում: Ադրբեջանական փորձն ընդգծում է, թե ինչպես են երիտասարդական աշխատողները հետկոնֆլիկտային մարտահրավերների ֆոնին ծառայում որպես վերականգնման, հաշտեցման և հզորացման կատալիզատորներ:

Հայաստան. Նավիգացիոն բուժում և վերաինտեգրում

Հայաստանի փորձը ողողված է պատմական հակամարտություններով՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի պատերազմը, հատկապես Երկրորդ Ղարաբաղյան պատերազմը: Այս տարածաշրջանի երիտասարդական աշխատողները վճռորոշ դեր են խաղացել զինված հակամարտություններից ուղղակի և անուղղակի ազդեցության ենթարկված երիտասարդներին աջակցելու գործում: Այս ջանքերն ընդգրկում են պատերազմի մասնակիցներին և հաշմանդամներին օգնելուց մինչև ընտանիքի անդամների և տեղահանվածների կարիքները հոգալը: Հայկական դեպքն ընդգծում է բուժման, վերակառուցման և վերաինտեգրման նուրբ ճանապարհը, որը ձեռնարկել են ինչպես երիտասարդները, այնպես էլ նրանց աջակցողները:

Իսպանիա : Համաշխարհային ներգրավվածություն և լայնամասշտաբ կայունություն

Իսպանիայի երիտասարդական աշխատողները լույս են սփռում իրենց ներգրավվածության աստիճանով. Պաղեստինից, Աֆղանստանից, Սերբիայից մինչև Մեքսիկա, նրանց նախաձեռնությունները ներառում են հոգեբանական և առողջապահական աջակցություն, մարդասիրական օգնություն և սահմանային վայրագությունների մասին իրազեկության բարձրացում: Այս պատմությունները ռեզոնանսավորում են որպես ժողովրդական նախաձեռնությունների ճկունության և հարմարվողականության վկայություն՝ ցույց տալով, թե ինչպես է տեղական ներգրավվածությունն արձագանքում սահմաններից այն կողմ՝ միսթարություն տալով նրանց, ովքեր տուժել են տնից հեռու հակամարտություններից:

Ֆրանսիա: Ամբողջական ինտեգրման մնուցում

Ֆրանսիայի երիտասարդական աշխատողները մարմնավորում են այն ամբողջական մոտեցումը, որն անհրաժեշտ է ապաստան հայցողներին և փախստականներին աջակցելու համար: Տրամադրելով ծառայությունների համապարփակ զանգված՝ հոգեբանական օգնությունից մինչև սպորտային գործունեություն և կրթական պարապմունքներ, նրանք ուղիներ են ստեղծում ամբողջական ինտեգրման համար: Նրանց կողմից կարիքների գնահատման, որակական մեթոդների և քանակական տվյալների հավաքագրման օգտագործումը ապահովում է հատուկ աջակցություն հակամարտությունների հետևանքով կողմնորոշվող երիտասարդներին: Նրանց նախաձեռնությունները երիտասարդներին հնարավորություն են տալիս հաղթահարելու մարտահրավերները և խթանելու ամբողջական ինտեգրումը իրենց որդեգրած համայնքներում:

Իտալիա. Առաջնային կարիքներից երկարաժամկետ ինտեգրում

Իտալիայում երիտասարդական աշխատողները առանցքային դեր ունեն առաջնային հումանիտար կարիքները երկարաժամկետ ինտեգրման ջանքերին կամիջելու հարցում: Կազմակերպությունները, ինչպիսիք են Casa dei Popoli-ն, Fondazione Comunità Solidale-ը և CISV ONG-ը, կառուցվածքային ծրագրերի օրինակ են հանդիսանում, որոնք վերաբերում են ինտեգրման բազմակողմանի ասպեկտներին՝ աշխատանքի կողմնորոշումից մինչև հոգեբանական բուժում: Իտալական Կարմիր Խաչը ավելի հեռու է գնում՝ առաջարկելով համապարփակ օգնություն՝ ներառելով կացարանը, կրթությունը, հոգեկան առողջությունը և իրավական ուղեցույցը: Իտալական գործը բացահայտում է, թե ինչպես է երիտասարդ փախստականներին ցուցաբերվող աջակցությունը անցնում հրատապ օգնությունից մինչև կայուն հզորացում:

Կոսովո: Երիտասարդության հզորացում և տրավմայի վերացում

Կոսովոյում այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Մարդու իրավունքների երիտասարդական նախաձեռնությունը (YiHR) և Կոսովոյի Խոշտանգումների գոհերի վերականգնողական կենտրոնը (KRCT) առանցքային դեր են խաղում անցյալի հակամարտություններից տուժած երիտասարդների հզորացման և վերականգնման գործում: Կենտրոնանալով հոգեբանական աջակցության, իրավական օգնության և աճի հնարավորությունների վրա՝ այս կազմակերպությունները ճանաչում են Կոսովոյում 1998-1999թթ. պատերազմի մայրուն ազդեցությունը և ձգտում են ստեղծել բուժման և ինտեգրման հարթակներ:

Գերմանիա. Տրավմայի հաղթահարում և ինտեգրում

Գերմանիայում հարցմանը մասնակցած երիտասարդական աշխատողները գործում են տարբեր ճակատներում. ուկրաինացի պատերազմի փախստականներին օգնելուց մինչև առանց ուղեկցության անչափահասների և նոր չափահասների աջակցությունը, այս երիտասարդական աշխատողները լուծում են պատերազմից տուժած անձանց հուզական և գործնական մարտահրավերները: Նրանք օգտագործում են տրավմայի վերաբերյալ իրազեկ մոտեցումներ և տրամադրում են լեզվական, հոգեբանական և իրավական աջակցություն՝ ինտեգրմանը և ապաքինմանը նպաստելու համար:

Այս հետազոտությունն առաջարկում է տարբեր մոտեցումներ և փորձառություններ պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանք իրականացնելիս, որոնք արտացոլված են նվիրվածության, հարմարվողականության և համագործակցության մեջ: Իրենց պատմությունների միջոցով հետազոտությունը լուսաբանում է երիտասարդական աշխատանքի բարդ լանդշաֆտը կոնֆլիկտային գոտիներում և այն վայրերում, որտեղ տեղափոխվել են պատերազմից տուժած մարդիկ՝ բացահայտելով ընդհանուր մարտահրավերները և եզակի լուծումները, որոնք անցնում են տարբեր աշխարհագրական համատեքստերում:

3. Հակամարտություններից տուժած երիտասարդների կարիքները

Այս ենթագլխում կխորանանք հակամարտություններից տուժած երիտասարդների բազմակողմանի կարիքների վերհանման մեջ՝ ներառելով ասպեկտների լայն շրջանակ, ինչպիսիք են հոգեբանական աջակցությունը, մշակութային զգայունությունը, կրթությունը, հաղորդակցությունը և ինտեգրումը: Այս կարիքները, ինչպես նշվեց նախկինում, ձևավորվել են Եվրոպայի տարբեր տարածաշրջաններում առկա հակամարտությունների տարբեր համատեքստերով և հավաքագրվել են հետազոտության ընթացքում:

Երիտասարդական աշխատողների ամենակարևոր կարիքներից մեկը հոգեբանական աջակցությունն էր: Հակամարտություններից տուժած երիտասարդները հաճախ պահանջում են Էմոցիոնալ և հոգեբանական աջակցություն: Տրավմայի բուժումը, խորհրդատվությունը և հոգեբանական օգնությունը կարևոր են՝ օգնելու նրանց հաղթահարել իրենց փորձառությունների զգացմունքային ծանրությունը: Նկատի ունենալով, որ երիտասարդ աշխատողները հոգեբաններ չեն, որպես այս աջակցության հիմնական գործիք առաջարկվել է օգտագործել ստեղծագործական երևակայությունը, որն օգնում է անհատներին արտահայտել իրենց հույզերը և բուժել իրենց հոգեբանական վերքերը: Հարցազրույցների մասնակիցներն ընդգծել են այս ոլորտում ռեսուրսների և գիտելիքների կարևորությունը: Արտթերապիան և ստեղծագործական երևակայությունը ապացուցվել են որպես տրավմայի և սթրեսի դեմ պայքարի հզոր մեթոդներ:

Աղյուսակը լրացնելուց հետո որպես վարժություն կարող եք պատասխանել հետևյալ հարցերին.

- **Որո՞նք են այն կոնկրետ մի քանի գործողությունները, որ կարող եք ձեռնարկել ձեր սահմանները բարելավելու համար:**
- **Ի՞նչ եք կարծում, դիմացինն ինչպե՞ս կարձագանքի այս փոփոխություններին:**
- **Ինչպե՞ս կլինի ձեր կյանքը, երբ հաստատեք այդ առողջ սահմանները:**

Երիտասարդների կյանքի վրա կայուն ազդեցություն ունենալու համար անհրաժեշտ է որակյալ աջակցություն, որին հնարավոր է հասնել հենց երիտասարդական աշխատողների հոգեկան բարեկեցության և առողջության շնորհիվ:

Երիտասարդական աշխատողների մտավոր և հուզական բարեկեցությունն ուղղակիորեն ազդում է աշխատանքի արտադրողականության և մոտիվացիայի վրա: Երիտասարդական աշխատողների համար մտավոր և էմոցիոնալ առողջություն ունենալը հիմնարար է հուզական ճկունությունը, ինքնագիտակցությունը և ընդհանուր գոհունակությունը խթանելու համար: Եվ դա համատեղվում է իրենց աշխատանքային ժամերին ավելի արդյունավետ ու մոտիվացված լինելու, խնդիրների լուծման իրենց հմտությունները բարձրացնելու և ավելի արագ կողմնորոշվելու կարողության հետ:

«Չոզեկան առողջության խնդիրները չեն սահմանում, թե ով ես դու: Նրանք ինչոր բան են, որ դուք զգում եք: Քայլում ես անձրևի տակ և զգում ես անձրևը, բայց, կարևորը, ԴՈՒ ԱՆՁՐԵՎ ԶԵՍ»:

Մեյթ Յեյզ (Հարմար Գիրքը, 2021թ.):

Չոզեկան առողջությունը ազդում է բոլորի վրա՝ սկսած երիտասարդներից, քաղաքականություն մշակողներից մինչև երիտասարդական աշխատողները: Որպես երիտասարդական աշխատողներ՝ մեր միջամտությունը հաճախ գտնվում է թերապևտիկ աշխատանքի սահմաններում: Չոզեկան առողջության խնդիրների հետ կապված որակյալ աշխատանք զարգացնելու համար, որոնք, հավանաբար, հետագայում ավելի ու ավելի շատ կհայտնվեն COVID-19-ի և պատերազմների պատճառով, երիտասարդական աշխատողները պետք է ձեռք բերեն հատուկ կարողություններ և հմտություններ, ընդլայնեն միջառարկայական թիմերում աշխատելու և տարբեր մասնագետների ու ռեսուրսների միջև համագործակցությունը, ինչի արդյունքում կկարողանան օգնել պայքարող երիտասարդներին կամ կանխել նրանց հոգեկան առողջության հետ կապված խնդիրների զարգացումը, ինչպես նաև կկարողանան հոգ տանել իրենց մասին:

Չի՞եք երիտասարդական աշխատողներ, դուք առաջին գծում եք, և ձեր աշխատանքը կարող է փոխել շատ երիտասարդների կյանքեր:

Աղբյուրներ՝

- <https://pjp-eu.coe.int/en/web/coyote-magazine/psychological-first-aid-in-youth-work>
- <https://www.nya.org.uk/wp-content/uploads/guidance-on-personal-professional-and-environmental-boundaries.pdf>
- <https://www.phf.org.uk/reader/right-promote-mental-wellbeing-youth-work-practice/youth-work-mental-wellbeing-go-hand-hand/> www.forbes.com/sites/melodywilding/2023/02/21/am-i-burned-out-how-to-recognize-the-12-stages-of-burnout/
- [https://www.talkspace.com/blog/do-i-need-therapy/10 Signs You Need a Psychologist- When to see a psychologist \(drnehamehta.com\)](https://www.talkspace.com/blog/do-i-need-therapy/10-Signs-You-Need-a-Psychologist-When-to-see-a-psychologist-(drnehamehta.com))
- <https://www.health.state.mn.us/communities/ep/behavioral/pfa.html#:~:text=What%20is%20Psychological%20First%20Aid,or%20even%20a%20personal%20crisis.>
- Prevention and early intervention in youth mental health: is it time for a multidisciplinary and trans-diagnostic model for care? | International Journal of Mental Health Systems | Full Text (biomedcentral.com)
- <https://inside.ewu.edu/calearning/psychological-skills/preventing-burnout/>
- <https://www.helpguide.org/articles/stress/burnout-prevention-and-recovery.htm>
- <https://www.thecenterforgrowth.com/tips/identifying-your-boundaries>
- <https://www.therapistaid.com/therapy-worksheet/boundaries-exploration-activity>
- <https://www.therapistaid.com/therapy-worksheet/boundaries-psychoeducation-printout>
- <https://www.nya.org.uk/wp-content/uploads/guidance-on-personal-professional-and-environmental-boundaries.pdf>
- <https://www.thecenterforgrowth.com/tips/identifying-your-boundaries>
- <https://www.therapistaid.com/therapy-worksheet/boundaries-exploration-activity>
- <https://www.therapistaid.com/therapy-worksheet/boundaries-psychoeducation-printout>
- <https://www.stpatricks.ie/media-centre/blogs-articles/2021/october/youth-worker-mental-health>

Միջմշակութային զգայուն մոտեցում բազմադերային երկխոսություններում

Հետազոտողներ՝ Կարլոս Էդուարդո Կուբիլոս Պերեզ, Անտոնիոս Հագիմ, Ամեր Կաթեհ և Էրիոն Կրասնիցի

Այս գլուխը ներկայացնում է միջմշակութային զգայունության և բազմակողմանի երկխոսության մոտեցումը որպես երիտասարդական աշխատանքի երկու գործիքներ պատերազմի համատեքստում կամ զինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ աշխատանք իրականացնելիս: Ենթագլուխը նախ ներկայացնում է միջմշակութային և բազմակողմանի երկխոսության տեսական մոտեցումը, այնուհետև ներկայացվում են գործնական մեթոդներ՝ ակտիվացնելու միջմշակութային հարաբերությունները և երկխոսությունը երիտասարդական աշխատանքի տարբեր դերակատարների միջև: Վերջապես, ծրագրում իրականացված երկու տեղական գործողություններ ցուցադրվում են այս երկու մոտեցումներով, որոնք ընդգծում են միջմշակութային զգայունության և երկխոսության մոտեցման առաջարկը՝ որպես զինված հակամարտություններից տուժած երիտասարդների վերականգնման համար օգտակար գործիքներ:

Միջմշակութային սկզբունքը ներառում է սոցիալականացման բոլոր ձևերն ու գործընթացները՝ տնտեսական, քաղաքական, էթիկական, իրավական, աշխատանքային, առողջապահական, սպորտային և այլն: Որպես սկզբունք՝ այն նպաստում է փոխանակմանը և միջանձնային ու խմբային հարաբերություններին՝ վերացնելով բոլոր տեսակի անհավասարությունները՝ չճշտելով տարբերությունները կամ մշակութային ինքնությունները: Այս համատեքստում միջմշակութայինությունն ունի շատ հստակ նպատակային սոցիալ-քաղաքական ուղղվածություն, որն արտահայտվում է մեր բազմազանության հնարավորությունների և հարստությունների ճանաչման, մեր ինքնության պահպանման և հասարակության մեջ ներդրված անհավասարությունների դեմ պայքարի գործողություններում, որոնք ուղղված են մշակույթների միջև հակամարտությունների վերափոխում և կառուցվածքային շրջանակ, որն առաջացնում է քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային անհավասարություն:

Երիտասարդական աշխատողները պետք է օգտագործեն այնպիսի գործիքներ, որոնք թույլ կտան աշխատել զինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ, ովքեր ունեն վստահության և հարաբերություններ կառուցելու դժվարություններ, սոցիալական մարզիման, դպրոցի և աշխատանքի անհասանելիություն և շատ այլ խնդիրներ: Բացի սրանից, երիտասարդական աշխատողները պետք է մշտապես երկխոսության տարածք ստեղծեն իրենց աշխատանքում սերտաճող բազմաթիվ դերակատարների միջև՝ սկսած երիտասարդ շահառուներից՝ անցնելով առաջնային խնամքի ծառայություններից, սոցիալական ծառայություններից, իրավաբանական հաստատություններից, դպրոցներից, ընտանիքներից և որոշում կայացնողների դիրքորոշումից:

Այս վերլուծությունից բխում է միջմշակութային և բազմաբնույթ դերակատարների երկխոսության մոտեցում ներառելու անհրաժեշտությունը, որը թույլ է տալիս երիտասարդական աշխատողներին հարգել տարբեր մշակութային նախադրյալները, խթանել վստահությունն ու փոխհարաբերությունները, կարեկցել երիտասարդների առջև ծառայած եզակի մարտահրավերներին և վնասվածքներին, հարմարեցնել միջամտությունները՝ մշակութային առումով զգայուն ու արդյունավետ համատեքստին, ստեղծել անվտանգ և աջակցող միջավայրեր, որտեղ երիտասարդներն իրենց հասկացված և գնահատված են զգում՝ զինված հակամարտություններից տուժած երիտասարդներին համապարփակ աջակցություն ցուցաբերելու համար:

Բազմամշակութայինությունից մինչև միջմշակութայինություն. “
«Այնուհետև միջմշակութայինությունը ձևավորվում է որպես առաջարկական հասկացություն, որը մատնանշում է տարբերությունների արտահայտումը և փոխլրացման որոնումը մշակութապես տարբեր ժողովուրդների միջև, բայց ոչ տարբերությունների վերացումը» (Լոպեզ, 2004թ.):

Մինչ դեռ բազմամշակութայինությունը խոսում է տարբեր մշակույթների առկայության մասին՝ հատուկ բովանդակությամբ, միջմշակութայինությունը շեշտը դնում է շփման կետերի վրա և հետևաբար մշակույթների միջև անհրաժեշտ երկխոսության վրա: Առաջին դիրքորոշումը հարգում է առանձնահատկությունները, իսկ երկրորդը առաջարկում է դրանց միջև կապեր ստեղծելու հնարավորությունը: Այստեղից էլ առաջանում է բարելավման կամ առաջընթացի այս դիրքորոշումը, այն իմաստով, որ բավական չէ ճանաչել տարբերությունները, այլ պետք է տեսնել, թե ինչպես կարող է լինել հարստացում մշակույթների փոխհարաբերություններից:

Բազմամշակութային դիրքորոշումները ճանաչում են տարբեր մշակույթների առկայությունը, բայց չեն նպաստում դրանց փոխանակմանը կամ փոխկապակցմանը: Որոշ հեղինակների համար, ինչպիսին է Բաումանը (2001), սա ավելի շատ բացասական էֆեկտ է, քան դրական: «Ակնհայտ է, որ բազմամշակութայինությունն առաջնորդվում է լիբերալ հանդուրժողականության պոստուլատով և համայնքների ինքնահաստատման իրավունքի և իրենց ընտրած (կամ ժառանգած) ինքնության հանրային ճանաչման իրավունքի վրա ուշադրություն դարձնելով: Այնուամենայնիվ, այն գործում է որպես էապես պահպանողական ուժ. դրա հետևանքը անհավասարությունների վերածնակերպումն է, որոնք դժվար թե հանրային հավանության արժանանան:

Սրանից մենք մի կողմից հանգում ենք բազմամշակութային մոտեցման վտանգին, որը, հարգելով տարբերությունը, առանց որևէ միջամտության հնարավորության, ընկնում է անհավասարությունների ընդունման մեջ: Մյուս կողմից, տարբերվողների միջև կապի անհնարինությունը ինչ-որ կերպ մեկուսացնում է նրանց և խանգարում փոխադարձ հարստացումից:

Մյուս կողմից, միջմշակութայինությունը ճանաչում է մշակույթների միջև եղած տարբերությունները, բայց նաև ձգտում է փոխադարձ երկխոսության՝ խուսափելով նաև միակողմանի ձուլումից: Այն ենթադրում է տարբերության իրավունքի հստակ ճանաչում, տարբեր մշակույթների ճանաչում, սակայն տարբեր մշակույթների անհատների, խմբերի և հաստատությունների միջև հարաբերությունների և փոխանակումների զարգացում: Փոխանակումն այս դիրքորոշման հիմքն է:

«Բազմամշակութայինությունը, բացի մշակույթների համադրում արտահայտելուց, առանց որևէ կապի կամ ընդհանուր նպատակ ունենալու, հաճախ ենթադրում է ինքնավար մշակույթի և մեկ այլ կամ հավելյալ մշակույթների առկայություն, որոնց վրա լավագույն դեպքում կարող են կիրառվել ինտեգրացիոն քաղաքականություններ. . . Միջմշակութայինությունը, ընդհակառակը, ենթադրում է հավասարազոր դիրքորոշում բոլոր մշակույթների միջև և ավելի քիչ միակողմանի և ավելի ակտիվ հայեցակարգային մոտեցման որդեգրում. մինչդեռ բազմամշակութայինը առաջացնում է իրավիճակ, միջմշակութայինը առաջացնում է գործողություն – հարաբերություն՝ առաջացնելով փոխադարձ հարստացման փոխհարաբերություն»

(Վիդալը 2003թ. -ին Գարին Սալլանում, 2004):

Միջմշակութայինը կապված է մշակութային պրակտիկաների և մարդկանց կյանքի հատուկ ձևերի հետ, ովքեր փոխադրում են՝ հասկանալով, որ միջմշակութային դաշտը մեզնից դուրս չէ, այլ ավելի շուտ մենք ներգրավված ենք դրանում, և սա այն տարածությունն է կամ քայլերու հնարավորությունը, որը ստեղծվում է մշակույթների երկխոսության և հաղորդակցության միջոցով: Միջմշակութայինությունը գործի դնելու մեխանիզմը, որը համարվում է մշակույթների և քաղաքակրթությունների միջև երկխոսության ամենազարգացած ձևը, միջմշակութային երկխոսությունն է:

Միջմշակութային հաղորդակցումը բխում է ընդհանուր հաղորդակցական հմտությունից, որը թույլ է տալիս մեզ բոլորիս լինել ճկուն, ոչ դոգմատիկ և բաց՝ հարմարվելու միջմշակութային փոխազդեցությունների մարտահրավերներին: Այս հաղորդակցությունը պետք է խրախուսի մեր արժեքների, մշակույթի և վերաբերմունքի քննադատական արտացոլումը՝ առանց տարբերությունների նկատմամբ նախապաշարումների, ինչի համար կարևոր է տեղեկատվություն ստանալ այլ հասարակության կամ հասարակությունների պատմության, արժեքների, ինստիտուտների և վարքագծային համակարգերի մասին: «Ուրիշի» վերաբերյալ մշակութային իրավասության ձեռքբերմամբ հնարավոր է դառնում միջմշակութային լինելը, և ոչնչացվում են բացասական կարծրատիպերն ու նախապաշարմունքները, որոնք սովորաբար արդյունք են մյուսների ապրելակերպի մասին թերի կամ տեղեկատվության բացակայության պատճառով (Բարաբաս, 2014թ.):

Միջմշակութային երկխոսություն.

Միջմշակութային երկխոսությունը հաղորդակցության և փոխանակման գործընթաց է, որը կարող է առաջանալ տարբեր ծագումների կամ մշակույթների պատկանող երկու կամ ավելի անհատների և/կամ խմբերի փոխազդեցության պարագայում, որտեղ նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է իր գաղափարները, կարծիքները, տրամադրում է տեղեկատվություն և/կամ հղումներ: Համաձայնությունների կամ տարաձայնությունների ընդունում մշակութային տարբերությունների հարգման և ճանաչման միջավայրում սիմետրիկ և փոխադարձ հարաբերությունների միջոցով: Դա գործընթաց է, որը ներառում է կարծիքների բաց և հարգալից փոխանակում տարբեր էթնիկ, մշակութային, կրոնական և լեզվական ավանդույթներ և ծագում ունեցող մարդկանց և խմբերի միջև՝ փոխըմբռնման և հարգանքի ոգով (Անեշ և Յոլմս, 2011թ.):

Համեմատական մշակութային հետազոտությունների եվրոպական ինստիտուտը ձևակերպել է տերմինի աշխատանքային սահմանումը: Միջմշակութային երկխոսությունը գործընթաց է, որը ներառում է բաց և հարգալից փոխանակում կամ փոխազդեցություն տարբեր մշակութային ծագում կամ աշխարհայացք ունեցող անհատների, խմբերի և կազմակերպությունների միջև: Դրա նպատակներից են. զարգացնել տարբեր տեսակետների և գործելակերպերի ավելի խորը պատկերացում, բարձրացնել մասնակցությունը և ընտրություն կատարելու ազատությունն ու կարողությունը, խթանել հավասարությունը և զարգացնել ստեղծագործական գործընթացները (Եվրոպայի խորհուրդ, էջ 10):

Միջմշակութային գործընթացները որպես երկխոսության բաղկացուցիչ ըմբռնում հատկապես ակնհայտ են այն ուսումնասիրություններում, որոնք տարբերությունը դիրքավորում են երկխոսության գործընթացներում բանակցային առանցքային կետերի կամ պահերի շրջանակում: Նման գիտությունը, ամենայն հավանականությամբ, բոլոր երկխոսական հանդիպումները կդիտարկի որպես էապես միջմշակութային՝ ներկառուցված ազգային, քաղաքական, տնտեսական, կրոնական և պատմական շահերի ու ինքնությունների ու համատեքստերի մեջ. նրանք ընդունում են մշակույթը որպես շարունակաբար (վեր)կառուցման և (վեր)բանակցման ենթակա, բարդ և բազմազան հարաբերությունների ցանցեր, որոնք մենք ստեղծում ենք ինչպես խմբերի ներսում, այնպես էլ խմբերի միջև (Վորեն, 2008թ.):

Միջմշակութային երկխոսություններ վարելու խորհուրդներ (Պերուի մշակույթի նախարարություն, 2015).

- Ճանաչել միջմշակութային երկխոսության մեջ ընկղմված դերակատարներին. բացահայտել բնակչության տարբեր խմբերը, իմանալ նրանց մշակույթը և սոցիալ-մշակութային համատեքստը, բնակչության նախկին փորձառությունները և նրանց ակնկալիքները:

- Ուսումնասիրել միջմշակութային երկխոսության մեջ ընկղմված բնակչության սոցիալ-մշակութային համատեքստը. բնակչության պատմությունը և աշխարհագրական շրջանակը, տեղական սոցիալ-մշակութային դինամիկան և կառուցվածքները, արտահայտման ձևերը և գերակշռող լեզուն, ամենօրյա հաղորդակցության ձևերը և տեղեկատվության աղբյուրները:
- Չարգացնել կարողություններն ու հմտություններն օժանդակող թիմում. ողջ անձնակազմը պետք է զգայուն լինի մշակութային բազմազանության և խտրականության խնդիրների նկատմամբ. ներառեք թարգմանիչների, թարգմանիչների և միջմշակութային միջնորդների, ովքեր քաջատեղյակ են գործող կարգավորող շրջանակների մասին:
- Մշակել հաղորդակցության ռազմավարություններ, որոնք ուղեկցում են միջմշակութային հանդիպմանը. հարմարեցնել հաղորդակցման ռեսուրսները՝ տեսանյութեր, պաստառներ, ռադիոտեղադրումներ, գրքույկներ կամ այլ բաներ առօրյա կյանքին, խոսակցական լեզվին և, անհրաժեշտության դեպքում, էթնիկ-մշակութային խմբի լեզվին: Ապահովել, որ հաղորդակցման ռեսուրսները գերծ լինեն կարծրատիպերից և նախապաշարումներից, ստեղծել կապի ցանցեր՝ դիմելով փոխկապակցման այլընտրանքային ձևերի, որոնք սկսված գործընթացը ժամանակի ընթացքում կայուն կդարձնեն և կամրապնդեն երկխոսության ինստիտուցիոնալացումը, մշակել համաձայնեցված օրակարգ՝ երկխոսության գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների կամ խմբերի հետ:
- Երկխոսության արդյունքների համար պատասխանատվություն ստանձնել. երկխոսության գործընթացը չպետք է ավարտվի բնակչության խմբերի հանդիպումով, գործընթացը պետք է ավարտվի բնակչության հետադարձ կապով, վավերացմամբ և օրինականությամբ:
- Ճանաչեք տարածքների կարևորությունը, ապահովեք տարածքների հոսուն հաղորդակցություն՝ դեմ առ դեմ, առանց ընդհատումների, և որտեղ երկխոսության գործընկերները երկխոսության համար հավասար պայմաններ կուենան:

Բազմաթիվ դերակատարներով երկխոսություն

Բազմաթիվ դերակատարների մասնակցությամբ երկխոսությունները կարող են օգտակար գործիք լինել պատերազմից տուժած երիտասարդների հետ սոցիալական աշխատանքին աջակցելու համար: Նման երկխոսությունները համախմբում են տարբեր դերակատարների՝ երիտասարդներ, երիտասարդական աշխատողներ և համայնքի ղեկավարներ, որպեսզի ստեղծվի բաց և հարգալից հաղորդակցման դաշտ: Ապացուցված է, որ դրանք արդյունավետ միջոց են՝ օգնելու պատերազմից տուժած երիտասարդներին վերամշակել իրենց տրավմաները, սկսել ապաքինվել և ուժ տալ նրանց ակտիվորեն վերցնել կյանքն իրենց ձեռքը:

Այս ասպեկտները մանրամասնելու համար ահա մի քանի եղանակներ, որոնցով բազմաթիվ դերակատարներով երկխոսությունը կարող է աջակցել պատերազմից տուժած երիտասարդներին.

- Խթանել բուժումը. բազմաթիվ դերակատարներով երկխոսությունները կարող են ապահով տարածք ստեղծել երիտասարդների համար՝ կիսվելու իրենց փորձառություններով և զգացմունքներով, ինչը կարող է օգնել նրանց վերամշակել իրենց տրավման և սկսել ապաքինվել:
- Կարաբերությունների կառուցում. տարբեր դերակատարների համախմբմամբ՝ բազմաթիվ դերակատարներով երկխոսությունները կարող են օգնել, որ ստեղծվեն կապեր և վստահություն երիտասարդների և իրենց համայնքի այլ անդամների միջև:
- Իզոլացնել երիտասարդներին. բազմաթիվ դերակատարներով երկխոսությունները կարող են ձայն տալ երիտասարդներին և օգնել նրանց զգալ իրենց ուժը՝ դրական փոփոխություններ կատարելու իրենց կյանքում և համայնքներում:
- Խաղաղության խթանում. տարբեր դերակատարների միջև բաց հաղորդակցության և փոխըմբռնման խթանման միջոցով երկխոսությունը կարող է նպաստել խաղաղությանը և նվազեցնել հակամարտությունները:

Այս ենթագլուխը բացատրում է, թե ինչպես բազմաթիվ դերակատարներով երկխոսությունները կարող են արժեքավոր գործիք լինել երիտասարդական աշխատողների համար՝ օգնելու պատերազմից տուժած երիտասարդներին վերամշակել իրենց վնասվածքները, մշակել հաղթահարման ռազմավարություններ և նպաստել ապաքինմանը, հզորացմանը և խաղաղությանը: Մինչ առաջին մասում կներկայացվեն այն հիմնական սկզբունքները, որոնք վրա կառուցվում են երկխոսությունները, երկրորդում կներկայացվեն մի քանի երկխոսության մեթոդներ, որոնք ներառում են երկխոսության ամենակարևոր օգտակար հմտությունները: Վերջապես, մենք կեզրափակենք երկխոսության միջնորդների հնարավոր մարտահրավերների հակիրճ քննարկմամբ:

Հիմնական սկզբունքներ

Պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանքի մեջ արմատականացման կանխարգելումը ընդհանուր մոտեցումներից մեկն է, որը հաճախ հիմնված է կառավարությունների, դոնորների և կազմակերպությունների կարիքների և շահերի վրա՝ պատերազմից տուժած երիտասարդների անվտանգության ապահովման միջոցով՝ առանց հաշվի առնելու նրանց կարիքները և շահերը: Այս մոտեցման փոխարեն մենք առաջարկում ենք հետևել մի մոտեցման, որը խթանում է ավելի իրական նպատակը՝ ուժեղացնել մասնակցությունը պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելիս: Այս տեսլականը հիմնված է մի քանի վերջին մոտեցումների և հայեցակարգերի վրա քաղաքացիական կրթության համատեքստում, մասնավորապես.

-Կողմնորոշում ըստ կարիքների. հոգեբանական զգայուն և մասնակցային մոտեցումներ, որոնք կենտրոնանում են անհատի վրա՝ անդրադառնալով ինքնության, խտրականության և բազմազանության բարդ խնդիրներին:

-Համատեքստայինացում (ոչ թե մշակութայինացում). մշակութայինացումը ներառում է մշակույթի դերի շեշտադրումը՝ որպես ստատիկ աղբյուր և փաստարկ կոնկրետ անհատների հետ աշխատելիս հատուկ մոտեցում օգտագործելու համար: Սա կարող է թվալ տրամաբանական և զգայուն մոտեցում, բայց ապացուցված է, որ այն փխրուն է, քանի որ մշակույթները ստատիկ չեն, ինչը հանգեցնում է «այլի»՝ զուգորդված կարծրատիպերի վերարտադրությանը: Համատեքստայինացումը, մյուս կողմից, փորձում է հստակ պատկերացում կազմել անհատի իրականության մասին: Դրան կարելի է հասնել՝ հաշվի առնելով անհատի բազմաբնույթ ինքնությունը, ներկա վիճակը/իրավիճակը և ներգրավելով հարակից դերակատարներին:

-Հարաբերություններ (ավելի քան հրահանգներ). Սա էական ասպեկտ է, որի վրա կառուցվում է մասնակցությունը: Այս մոտեցման կիրառման կենտրոնական միջոցը հարաբերությունների հիերարխիկ տեսակներից խուսափելն է. այդ անհատներին, ում հետ մենք աշխատում ենք, որպես լիովին անկախ անհատներ տեսնելն է: **Արժեքային դիսկուրս (արժեքային միջնորդության փոխարեն).** Երկխոսական սոցիալական աշխատանքը պետք է ուղղված լինի արժեքների քննարկմանը, այլ ոչ թե արժեքների միակողմանի միջնորդությանը: Սա առավել ճիշտ է, երբ թիրախային խումբը ունեցել է փորձառություններ, որոնք մենք չենք կարող լիովին հասկանալ, օրինակ՝ պատերազմը:

Բացի այդ, մեր աշխատանքը հիմնված է քաղաքացիական կրթության չափանիշների հայեցակարգային շրջանակի վրա, որը հայտնի է որպես «Ֆրանկֆուրտի հռչակագիր», որը ներկայացվել է 2015 թվականին:

Beutelsbach Consensus 1976	Frankfurt Declaration 2015	
Overwhelming prohibition		It is not permissible to catch the learner unprepared or unawares - by whatever means - in order to impart desired opinions and prevent them from "forming an independent judgment".
	Critique of power	Self-determined thought and action is limited by dependencies and overlapping social inequalities. These relations of power and domination must be perceived and analyzed.
	Reflexivity	Civic education is itself part of the political, learning relationships are not free of domination, civic education reveals this involvement.
Controversy	Controversy	Make conflicts and disagreements visible and discuss alternatives.
	Crises	Consider the upheavals and multiple crises of our time.
Interests-oriented		Learners must be able to analyze a political situation and assess how their personal interests are affected, as well as seek ways and means to influence the political situation they have identified according to their personal interests.
	Encouragement	Civic education creates an empowering learning environment where experiences of power and powerlessness are addressed and challenged.
	Change	The goal is to create opportunities for social change through individual and collective action.

Ամփոփելով այս ներածությունը՝ մենք առանձնացրել ենք պատերազմից տուժած երիտասարդների հետ սոցիալական աշխատանքում երկխոսության ինտեգրման հնարավոր գործառնությունները, ներկայացրել և պարզաբանել առողջ երկխոսության հաստատման հիմնական մոտեցումները և պարզաբանել նման քննադատական մոտեցման հիմնական սկզբունքները: Հաջորդ քայլում մենք կքննարկենք տարբեր հավելվածները և դրանց մեթոդական իրականացումը:


Տեսակետից արդյունավետ երկխոսությունը որպես սոցիալական աշխատանքի ձևաչափ հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է գործում հաղորդակցությունը և ինչպես ստեղծել միջավայր, որտեղ դերակատարները կարող են ազատ շփվել:

Ինչպես նշում է վարքագծային գիտնական Կառլ Լորենցը՝

*«Ասել միշտ չէ, որ նշանակում է ասել, ասել՝
միշտ չէ, որ լսել է,
լսելը միշտ չէ, որ նշանակում է հասկանալ,
հասկանալը միշտ չէ, որ նշանակում է
համաձայնվել, համաձայնվելը միշտ չէ, որ
նշանակում է կիրառել, կիրառելը միշտ չէ, որ
նշանակում է մտապահել»:*

Մենք անընդհատ շփվում ենք տարբեր ձևերով՝ մարմնի լեզվով, դեմքի արտահայտություններով, խոսքի կամ գրավորի միջոցով: Բացի այդ, կան հաղորդակցության տարբեր տեսակներ՝ բանավոր, գրավոր և թվային: Ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես է աշխատում հաղորդակցությունը, մենք օգտագործում ենք Շուլցի և Թունի «հաղորդակցման քառակուսի» մոդելը, որը նաև հայտնի է որպես «չորս ականջի մոդել», որն առանձնացնում է հաղորդագրությունների չորս տարբեր չափումներ:

- **Փաստացի տեղեկատվություն (ԻՆՆ)**. սա վերաբերում է հաղորդագրության փաստացի բովանդակությանը, ինչպիսիք են տեղեկատվություն, տվյալներ կամ փաստերի հայտարարություններ:



• **Ինքնաբացահայտում (ՈՎ)**. սա վերաբերում է անձնական տեղեկատվությանը, որը ուղարկողը բացահայտում է իր մասին հաղորդագրության միջոցով:

• **Հարաբերություն (Ինչպես)**. սա վերաբերում է ուղարկողի և ստացողի հարաբերություններին և թե ինչպես է հաղորդագրությունն ազդում այդ հարաբերությունների վրա:

• **Բողոքարկում (Ինչու)**. սա վերաբերում է այն գործողությանը, որը ուղարկողը ցանկանում է, որ ստացողը կատարի հաղորդագրության արդյունքում:

Պատերազմից տուժած երիտասարդների հետ շփվելիս մենք՝ որպես երիտասարդական աշխատողներ, պետք է շատ զգույշ լինենք հաղորդակցության փոխհարաբերությունների հարցում: Ինչպես արդեն բացատրվեց, մենք պետք է փորձենք հարաբերություններ հաստատել երիտասարդների հետ՝ նրանց խրատելու փոխարեն (Հարաբերություններ՝ հրահանգելու փոխարեն), ուստի շատ կարևոր է, որ խուսափենք որևէ հիերարխիկ հարաբերություններ ակնարկելուց, բայց շփվենք անկախ անհատ դիտարկելով: Ավելին, ինչ վերաբերում է գրավչության մակարդակին, մենք կարող ենք նաև փորձել ավելի զգայուն լինել հնարավոր թյուրիմացությունների նկատմամբ՝ հիմնված տարբեր համատեքստերի և փորձի վրա (համատեքստայինացում մշակութայինացման փոխարեն):

Չզայուն համատեքստերում, ինչպիսին է պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելը, հեշտ է անգիտակցաբար և ականա մտնել արգելված տարածքներ և շոշափել վիճելի թեմաներ, որոնք կարող են կամ բարդացնել ապաքինման գործընթացը կամ վնասել ցանկացած տեսակի հարաբերություն, որը հաստատվել է: Այդ իսկ պատճառով, կարող է շատ օգտակար լինել հետևել որոշակի ուղեցույցներին (6,7,8)՝ ավելի լավ հեշտացնելու նման զգայուն երկխոսությունները:

- Միշտ լրացուցիչ ժամանակ տրամադրեք այս ձևաչափերին:
- Ժամանակ տվեք միմյանց ճանաչելու համար:
- Սահմանեք և հստակեցրեք, թե որն է երկխոսության հանդիպման նպատակը:
- Ներկայացրեք որոշ գիտական փաստեր/հետազոտություններ/սահմանումներ՝ քննարկվող թեմայի շուրջ թյուրիմացություններից խուսափելու համար:
- Մշակել կոնկրետ հարցեր և պատրաստել հստակ (գրավոր) հարցեր և առաջադրանքներ՝ թյուրիմացություններից խուսափելու համար:
- Համոզվեք, որ բոլորն ունեն քննարկմանը մասնակցելու հնարավորություն (օրինակ՝ անհատական և խմբային մասնակցության այլընտրանքային տարբերակ):
- Քննարկեք և բարձրաձայնեք խնդիրները՝ առանց որևէ մեկին ամաչեցնելու կամ բացառելու:
- Ընդգծեք հարգանքն ու գաղտնիությունը՝ չանձնավորելով թեման և խուսափելով ուղիղ, անձնական հարցեր տալուց:

- Ընդգծեք լսելու և կարծիքներով կիսվելու կարևորությունը:
- Ներկայացրե՛ք բազմաթիվ հեռանկարներ:
- Եղե՛ք ճկուն և հնարավորինս համբերատար:
- Ժամանակ տրամադրե՛ք քննարկման համար, բայց անհրաժեշտության դեպքում վերադարձրե՛ք երկխոսությունը՝ կենտրոնանալու համար:
- Չետևե՛ք ժամանակին և մասնակիցներին ևս ժամանակ առ ժամանակ հիշեցրե՛ք :
- Անհրաժեշտության դեպքում հաստատուն եղե՛ք (օրինակ՝ անհրաժեշտության դեպքում ընդմիջե՛ք):
- Պատրաստ եղե՛ք անսպասելի իրավիճակներին:

Եվ հատկապես կառուցվածքային երկխոսությունների համար.

- Յստակեցրե՛ք ձեր դերը որպես միջնորդ և հաստատե՛ք հաղորդակցության հիմնական կանոնները:
- Ուշադիր եղե՛ք ուժերի հարաբերակցությանը:
- Ընդգծե՛ք կանոնները և ըստ անհրաժեշտության ստեղծե՛ք նորերը, եթե հնարավոր է, մասնակիցներին ևս ներգրավվելով ընթացքի մեջ:

Երկխոսությունները կառավարելու և մեկ քայլ առաջ գնալու համար կարևոր է հասկանալ քննարկումների/բանավեճերի և երկխոսությունների միջև եղած տարբերությունը, որոնք հաճախ օգտագործվում են փոխադարձաբար, բայց ունեն որոշ հիմնարար տարբերություններ (6,7,8,9):

	Երկխոսություն	Քննարկում
Նպատակ	<ul style="list-style-type: none"> • Փնտրել ընդհանուր կապ և խմբային հեռանկար • Առաջնային նպատակն է ընդլայնել գաղափարները, ոչ թե նվազեցնել դրանք: • Ստեղծել նոր ըմբռնում • Չմտահոգվել հաղթելու կամ պարտվելու մասին: 	<ul style="list-style-type: none"> • Հարցի քննարկում բաց և սովորաբար ոչ պաշտոնական քննարկման ժամանակ • Ուսումնասիրվում են տարբեր տեսակետներ • Սեփական տեսակետներն առաջ տանելու հետաքրքրություն և ուրիշների տեսակետներին մարտահրավեր նետելու փորձեր • Էզոն, վերահսկողությունը և ուրիշների նկատմամբ իշխանությունը հաճախ այս ոճի զրույցի առաջնագծում են • Քննարկումների մեծ մասը հիմնված է որոշում կայացնելուն • Հաղթող գաղափարի առաջ տանում:
Մասնակիցներ	<ul style="list-style-type: none"> • Մասնակիցները ուշադիր լսում են և փորձում են հասկանալ միմյանց տեսակետները: • Տալիս են բաց հարցեր և կիսվում են իրենց սեփական փորձով և զգացմունքներով: • Ուշադրության կենտրոնում են գտնվում հարցերը, տարբերակները և գաղափարները ազատ և ստեղծագործաբար ուսումնասիրելով: • Դադարեցնում են իրենց սեփական հայացքները՝ նոր բան փնտրելով: • Սա իմաստային հոսք է ստեղծում բոլոր մասնակիցների համար: • Ապահովում է գիտելիքների ավելի մեծ պաշարի հասանելիություն: 	<ul style="list-style-type: none"> • Մասնակիցները կիսվում են տեղեկություններով, փորձով և համոզմունքներով և մարտահրավեր նետում միմյանց տեսակետներին: • Նրանք փակ հարցեր են տալիս և փորձում են ուրիշներին համոզել իրենց տեսակետի մեջ: • Ուշադրության կենտրոնում են լուծումներ գտնելը կամ որոշում կայացնելը: • Գաղափարների հոսքը հաճախ խաթարվում է, քանի որ մարդիկ փորձում են ապացուցել իրենց գաղափարի վավերականությունը: • Առողջ քննարկման ժամանակ մարդիկ բաց են ուրիշների գաղափարների համար:
Հույզեր	<ul style="list-style-type: none"> • Մասնակիցները ուշադիր լսում են միմյանց տեսակետները: • Տալիս են բաց հարցեր և կիսվում են իրենց սեփական փորձով և զգացմունքներով: • Ուշադրության կենտրոնում են գտնվում հարցերը, տարբերակները, գաղափարները. . . • Դադարեցնում են իրենց սեփական հայացքները՝ նոր բան փնտրելով: • Սա իմաստային հոսք է ստեղծում բոլոր մասնակիցների համար: • Ապահովում է ավելի մեծ պաշարի հասանելիություն: 	<ul style="list-style-type: none"> • Քննարկումը կենտրոնանում է «ճիշտն» ասելու նպատակի վրա, և մասնակիցները կարող են ճշում զգալ ելույթ ունենալու և ուրիշներին տպավորելու համար: • Քննարկման ընթացքում կարող են լինել սոցիալական անհավասարություններ և ինդրահարույց ուժային հարաբերություններ:

Ամփոփելով վերևում ասվածը, մենք՝ որպես երիտասարդական աշխատողներ, կարևոր է հասկանանք, որ հաղորդակցությունը տեղի է ունենում մի քանի մակարդակներով, և որ ուղարկված հաղորդագրությունը ներառում է շատ ավելին, քան փաստացի բովանդակությունը: Մասնավորապես, մենք պետք է տեղյակ լինենք փոխհարաբերությունների և կոչերի մասին, որոնք հաղորդվում են, որոնք կարող են տարբեր հետևանքներ ունենալ պատերազմից տուժած երիտասարդների հետ մեր աշխատանքի վրա:

Բացի այդ, զգայուն երկխոսության պահպանումը օգնում է մեզ լավ հիմք ստեղծել անհատական և խմբային երկխոսություններում: Այս համատեքստում մենք պետք է հստակ հասկանանք, թե ինչն է տարբերում երկխոսությունը ոչ պաշտոնական քննարկումներից, և որ մեր դերն այս համատեքստում պետք է կենտրոնանա այն բանի վրա, որ օգնենք պատերազմից տուժած երիտասարդներին կիսվել իրենց գաղափարներով և զգացմունքներով, ազատ զգալ հարցերը բարձրաձայնելիս (10):


Մեթոդներ

Գործիքներ/ գործողություններ

Ինքնության Ծաղիկ

Հիմնվելով Գարդենսվարցի և Ռոուլի ինքնության մոդելի վրա (13)՝ կան ինքնության տարբեր շերտեր, որոնց հիման վրա կարելի է բացահայտել բազմազանության տարբեր բնութագրերը: Այս տարբերակումը մեզ թույլ է տալիս կիրառել տարբեր կարգավորումներ ինքնաճանաչման գործունեության համար:

Մեկը, որը մենք կցանկանայինք ներկայացնել՝ «Ինքնության ծաղիկն» է: Այն նպատակ ունի բարձրացնելու իրազեկությունը ինքնության տարբեր կողմերի, սոցիալական խտրականության և հզորացման ներուժի մասին:




Քանի որ մեր թիրախային խումբը երիտասարդներն են, տրամաբանական է նվազեցնել վերը նշված մոդելի բարդությունը, ուստի մենք կրճատել ենք բարդությունը և չափերի քանակը՝ մինչև 12, ինչը մարդկանց մեծ մասի համար ավելի նկարագրական և հասկանալի է:

Մեր վարժության ընդհանուր քայլերը.

-Ներկայացնել նպատակը և բացատրել գործընթացը՝ շեշտելով, որ սա մի միջոց է խորհելու, թե ովքեր ենք մենք և ինչ ինքնություններ ենք օգտագործում կյանքում առաջ շարժվելու համար: Սրանք հիմնականում ճկուն են և ժամանակի ընթացքում փոփոխվող:

-Կախված մասնակիցների տարիքից, ցանկալի խորությունից և մեր աշխատանքի ուղղվածությունից, ներկայացված մոդելը կարող է ներառել 6-ից 12 ինքնություններ: Խնդրեք յուրաքանչյուր մասնակցին մեկնաբանել միայն իր սեփական ինքնությունները:



-Այժմ խնդրեք յուրաքանչյուր անձի նկարել մի քանի մեծ թերթիկներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում են այս ինքնություններից մեկը:

-Երբ մասնակիցները նկարել են իրենց ինքնության ծաղիկները, նրանք կարող են լրացնել այն թերթիկները, որոնք համարվում են դրական համայնքում: Այս առաջին քայլը պետք է օգնի յուրաքանչյուր մասնակցի՝ ուսումնասիրել մարդկանց ինքնությունների բարդությունները և փոփոխատումները:

Երկրորդ քայլում մասնակիցները բաժանվում են երկու հոգանոց խմբերի, առաջարկեք քննարկել կոնկրետ նախընտրելի ինքնությունները: Կախված գործողության համար հատկացված ժամանակից և ինքնությունների քանակից՝ 2-ից 5 փուլ, յուրաքանչյուրը մոտ 5-10 րոպե:

Հնարավոր կոնկրետ ինքնություններ քննարկման համար.

- Ձեր մեկ ինքնությունը, որը հասարակության մեջ ընկալվում է որպես ամենադրականը: -Ձեր մեկ ինքնությունը, որը հասարակության մեջ ընկալվում է որպես ամենաբացասականը: -Ձեր մեկ ինքնությունը, որի սեփական ընկալման և հասարակության ընկալման միջև կա ամենամեծ անհամապատասխանությունը (օրինակ՝ հասարակությունն այն ընկալում է որպես բացասական, բայց դուք այն ընկալում եք որպես դրական):
- Այն ինքնությունը, որն ամենաշատն է նշանակում ձեզ համար:
- Այն մեկ ինքնությունը, որը կցանկանայիք փոխել:

Այս երկրորդ քայլը նախատեսված է օգնելու մասնակիցներին տեսնել, թե ինչպես կարող են իրենց տարբերություններն ու նմանությունները ծառայել դաշինքների ամրապնդմանը և ինչպես պետք է խուսափել հասարակության մեջ որոշակի նորմերից կամ տեսակետներից:

Հնարավոր են այլ տարբերակներ՝ ավելի մեծ խմբերով և երկար քննարկման ժամանակով, սակայն դրանք կարող են փոխել վարժության գործառույթը՝ ինքնությունների բացահայտումից դեպի դիսկուրսիվ քննարկում անհատների և հասարակության փոխազդեցությունների մասին: Սա, անշուշտ, օգտակար է շարժման կառուցման համար (14), բայց շատ չի նպաստում մեր հիմնական նպատակին՝ երիտասարդների ինքնագիտակցության հզորացմանը:

Սիմուլյացիոն խաղեր

Հաճախ սիմուլյացիոն խաղերն օգտագործվում են որպես մեթոդ՝ որոշ հարցեր ինտերակտիվ և անուղղակի կերպով քննարկելու համար՝ ստեղծելով տարածք հարցերն ավելի օբյեկտիվորեն ուսումնասիրելու համար: Բացի այդ, և ավելի կարևոր է, այն թույլ է տալիս մասնակիցներին փոխել տեսակետները և խուսափել սև-սպիտակ երկկողմանի կարծիքներից: Սա բարձրացնում է ժողովրդավարական արժեքների մասին իրազեկվածությունը: Կախված քննարկվող թեմայի բարդությունից և մասնակիցների թվից՝ սիմուլյացիոն խաղերը կարող են տևել մի քանի ժամ:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով երիտասարդների հետ սովորաբար ունեցած սահմանափակ ժամանակը, նրանց հետաքրքրությունն ու դիմացկունությունը դերախաղերի մեջ՝ մասնակցելով ավելի երկար քննարկումների, մենք կարող ենք սկսել 45 րոպեից: Սիմուլյացիոն խաղը կարող է տեղի ունենալ նաև մի քանի հաջորդական սեսիաներում: Բարեբախտաբար, սիմուլյացիոն խաղը պլանավորելիս մենք կարող ենք ընտրել բազմաթիվ սցենարներից մեկը, որոնք ազատորեն տրամադրվում են տարբեր քաղաքացիական կրթության կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են CRISP-ը («Ճգնաժամի սիմուլյացիան հանուն խաղաղության» կազմակերպություն) կամ planopolitik-ը («Ծրագրային քաղաքականություն» ընկերություն) (15,16): Սիմուլյացիոն խաղի ամենահայտնի տարբերակներից մեկը «Անապատ կղզու սիմուլյացիան» է, որտեղ մասնակիցները ստանձնում են անմարդաբնակ կղզում խրված խմբի դերը, որտեղ նրանք պետք է կարգավորեն իրենց կյանքը և միասին հասարակություն կառուցեն: Կան հսկայական թվով տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը տարբեր բարդության և նպատակի են (17,18,19,20):

Կենդանի Գրադարան.

Գրադարան, որտեղ ընթերցողները կարող են ծանոթանալ այն մարդկանց պատմություններին, ովքեր պատկանում են ավելի կամ պակաս մարզինալացված կատեգորիաների կամ տառապում են որևէ տեսակի խտրականությունից՝ հաղթահարելու իրենց հնարավոր նախապաշարմունքները դրանց հանդեպ: Այս Կենդանի Գրադարանը բաց տարածք է, որտեղ յուրաքանչյուր ընթերցող հրավիրվում է բաց երկխոսություն հաստատելու մարդ-գրքերի հետ, այսինքն՝ մարդու հետ, ով կամավոր հիմունքներով պատրաստ է պատմել իր պատմությունը և պատասխանել լսողների հարցերին:

Համաձայն «Մարդկային Գրադարան» կազմակերպության փորձառության՝ Մարդկային Գրադարանը ստեղծում է դրական շրջանակ երկխոսությունների համար, որոնք կարող են մարտահրավեր նետել կարծրատիպերին և նախապաշարմունքներին երկխոսության միջոցով: Մարդկային Գրադարանը մի վայր է, որտեղ իրական մարդիկ փոխառության են տրվում ընթերցողներին: Մի վայր, որտեղ դժվար հարցերը ակնկալվում են, գնահատվում և պատասխանվում» (Մարդկային գրադարան կազմակերպություն):

Կենդանի Գրադարանը արժեքավոր գործիք է պատերազմից տուժած երիտասարդների մեջ կարեկցանք և փոխըմբռնում խթանելու համար: Այն թույլ է տալիս նրանց մտնել իմաստալից զրույցների մեջ տարբեր միջավայրերից եկած անհատների հետ՝ խրախուսելով երկխոսությունը և քննդելով կարծրատիպերը: Այնուամենայնիվ, կան վերատրավմատիզացիայի, կարծրատիպավորման և սահմանների խախտման ռիսկեր: Անհրաժեշտ են այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են իրազեկված համաձայնությունը, վերապատրաստումը և հստակ ուղեցույցները՝ այս ռիսկերը մեղմելու և բոլոր ներգրավվածների համար դրական փորձառությունն ապահովելու համար:

(Կենդանի Գրադարան,
Երիտասարդական
աշխատանք պատերազմից
և հակամարտություններից
տուժած երիտասարդների
հետ, Թորինո, Իտալիա–
06/04/2023)



Կենդանի Գրադարանը բազմազանության, հավասարության և ներառման տարածք է, որը ներառում է սոցիալական ըմբռնումը, ինչպես նաև մշակութային իրազեկության աճը: Կենդանի գրադարանը աշխատում է անձնական զրույցների համար անվտանգ շրջանակ ստեղծելու համար, որը կարող է օգնել մարտահրավեր նետել նախապաշարմունքներին՝ նպատակ ունենալով օգնել ազատվելու խտրականությունից, կանխել հակամարտությունները և նպաստել սոցիալական, կրոնական և էթնիկական բաժանումների միջև մարդկային ավելի մեծ համախմբմանը:

Պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ կապված այս մեթոդի վերաբերյալ որոշ հնարավորություններ.

- Զգորացում. Պատերազմից տուժած երիտասարդներին հնարավորություն տալ կիսավել իրենց սեփական պատմություններով, ինչի արդյունքում նրանք կարող են իրենց ավելի ուժեղ և վստահ զգալ:
- Ուսուցում. Կենդանի Գրադարանը պատերազմից տուժած վայրում կազմակերպելը կարող է օգնել ներկաներին ավելի լավ հասկանալ, թե պատերազմն ինչ է անում երիտասարդների հետ:
- Բուժում. Կենդանի Գրադարանի մաս լինելը կարող է օգնել երիտասարդներին ավելի լավ և ուժեղ զգալ՝ թույլ տալով նրանց խոսել իրենց զգացմունքների մասին և կապ հաստատել միմյանց հետ:

Մյուս կողմից, կան որոշ մարտահրավերներ.

- Զգացմունքներ. Կարևոր է զգույշ լինել պատերազմից տուժած երիտասարդների զգացմունքների նկատմամբ: Նրանք կարող են վիրավորվել, ուստի մենք պետք է մեղմ լինենք:
- Անվտանգություն. Եթե մենք դա անում ենք պատերազմից տուժած վայրում, կարող է վտանգ լինել: Մենք պետք է համոզվենք, որ բոլորն ապահով են և խոսենք այն մարդկանց հետ, ովքեր տեղյակ են տարածքի մասին:
- Զարգալից լինել. մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի հարգանքով վերաբերվենք երիտասարդների պատմություններին և նրանց համար խնդիրներ չառաջացնենք՝ չափազանց շատ կիսվելով:
- Պարզ ասած՝ պատերազմից տուժած երիտասարդներով մարդկային գրադարան կազմակերպելը կարող է օգնել նրանց զգալ ավելի ուժեղ և սովորեցնել ուրիշներին իրենց փորձառությունների մասին, բայց մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի նրանց չվնասենք կամ որևէ մեկին վտանգի տակ չդնենք:

Միջմշակութային փոխանակումներ

Ստեղծել մշակութային և այլ տարբերությունների միջև իմաստալից և կառուցողական առօրյա հանդիպումների համար: Նախապաշարմունքներն ու խտրականությունը կարող են զարգանալ այնտեղ, որտեղ կա տարանջատում կամ մարդկանց միջև շփման և երկխոսության բացակայություն, նույնիսկ այնտեղ, որտեղ կան պաշտպանիչ օրենքներ:

Միջմշակութային փոխանակումները օգնում են հասկանալ, որ բազմազանությունը և դրական փոխազդեցությունը տարբեր մշակույթների միջև կարող են առավելություն լինել: Տարբեր մշակույթներն ընդունելուց այն կողմ՝ թե՛ տարբերությունները, թե՛ նմանությունները, համայնքներն ավելի ուժեղ կարող են դառնալ: Սա, իհարկե, չի նշանակում, որ խոսքը միայն նոր կամ օտար մշակույթները գովաբանելու մասին է, այլ նաև մշակույթի ավանդական և տեղական կողմերը պատվելու և դրանց միջև հարաբերությունները գնահատելու մասին: Խոսքը համայնքը կազմող բազմաթիվ ասպեկտները հասկանալու մասին է, օրինակ՝ ազգությունը, էթնիկ ծագումը, լեզուն, գենդերային ինքնությունն ու սեռական կողմնորոշումը, կրոնական հավատալիքները (Եվրոպայի Խորհուրդ, Միջմշակութային քաղաքների ծրագիր):

Միջմշակութային փոխանակումները հնարավորություններ են տալիս սովորելու և ընկերներ ձեռք բերելու, բայց դրանք կարող են նաև ներառել թյուրըմբռնումներ և միմյանց նկատմամբ հարգանքի պահպանման անհրաժեշտություն: Հնարավորություններ, որոնք կստեղծվեն այս գործողությունները իրականացնելու դեպքում.

-Միասին սովորելը. տարբեր մշակույթների մարդկանց հետ շփումը կարող է օգնել բոլորին նոր բաներ սովորել և միմյանց ավելի լավ հասկանալ:

-Ընկերներ ձեռք բերելը. միջմշակութային փոխանակումները մեզ հնարավորություն են տալիս հանդիպել նոր մարդկանց և ընկերներ ձեռք բերել աշխարհի տարբեր ծայրերից: -Գաղափարներ կիսելը. մենք կարող ենք փոխանակել գաղափարներ և ավանդույթներ, ինչը օգնում է մեզ գնահատել և հարգել տարբեր մշակույթները:

Մյուս կողմից, որոշ մարտահրավերներ, որոնք կարող են առաջանալ միջմշակութային փոխանակումների իրականացման ժամանակ՝

-Թյուրըմբռնումներ. երբեմն մենք կարող ենք միմյանց չհասկանալ լեզվական կամ մշակութային տարբերությունների պատճառով: Մենք պետք է համբերատար և հստակ լինենք մեր հաղորդակցության մեջ:

-Կարծրատիպեր. մենք պետք է զգույշ լինենք մարդկանց չդատելու համար՝ հիմնվելով նրանց մշակույթի մասին կարծրատիպերի կամ ենթադրությունների վրա:

-Հարգանք. կարևոր է հարգել միմյանց սովորույթները և հավատալիքները, նույնիսկ եթե դրանք տարբերվում են մեր սեփականից: Մենք պետք է խուսափենք անելուց կամ ասելուց որևէ բան, որը կարող է վիրավորել մեկ այլ մշակույթից եկած մարդուն:

Միջմշակութային ստուգաթերթ – Եվրոպայի Խորհուրդ:

Եվրոպայի Խորհրդի Միջմշակութային քաղաքների ծրագիրն առաջարկում է երեք հեշտ օգտագործվող միջմշակութային ստուգաթերթեր և ամբողջական ուղեցույց՝ ստուգելու համար, թե արդյոք իրենց պլանավորված կամ առաջարկվող նախագիծը, քաղաքականությունները կամ գործողությունները միջմշակութային են՝ համեմատած միջմշակութային ինտեգրման երեք սկզբունքների՝ իրական հավասարություն, բազմազանության առավելություն և իմաստալից փոխազդեցություն. [https://www.coe.int/en/w eb/interculturalcities/intercultural-heck- klist#\(%22123377040%22:\[0\]\)](https://www.coe.int/en/w eb/interculturalcities/intercultural-heck- klist#(%22123377040%22:[0]))

Այլընտրանքային պատումներ

Միջմշակութային մոտեցումը նպատակ ունի փոխակերպել պատումի և գործողությունների վերաբերյալ ընկալումը՝ թե՛ հանրային ոլորտում, թե՛ հենց հաստատություններում: Հետևաբար, միջմշակութային ռազմավարությունը պետք է ձգտի փոխել իշխանությունների, հաստատությունների, անհատների և խմբերի միջև հարաբերությունները:

Այլընտրանքային պատումները նպատակ ունեն ուղղակիորեն քանդել և ապաստինականացնել բացասական պատումները կամ աստելության խոսքը: Այլընտրանքային պատումներն առաջարկում են այլընտրանքային ուղերձներ և գաղափարներ՝ կառուցողական և առաջարկվող տեսանկյունից: Խնդիրն այն է, որ փորձենք ապահովել, որ բացասական և նախապաշարմունքների վրա հիմնված դիսկուրսները չընդլայնվեն, և փոխարենը ստեղծենք և հաղորդակցենք ավելի ներառական և առաջարկվող շրջանակ, որը կարող է կապվել լայն սոցիալական մեծամասնության մտահոգությունների և կարիքների հետ: Դրանք դրական, բազմակարծիք կամ առաջադեմ պատումներ են, որոնք հիմնված են միջմշակութային սկզբունքների և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա: Դրանք սահմանվում են ի հակադրություն մեդիայի և քաղաքականության (հաճախ) գերիշխող պատումների, որոնք հակված են մեղադրել կամ վարկաբեկել միգրանտներին և փախստականներին՝ նկարագրելով նրանց որպես սպառնալիք կամ բեռ (Եվրոպայի Խորհուրդ, 2021):

Պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելիս՝ հատկապես փոքրամասնությունների կամ ապամարդկայնացնող պատումների ենթարկված անձանց հետ, այլընտրանքային պատումների օգտագործումը դառնում է կարևոր: Ահա տարբերությունն և գործունեության օրինակը:

Տարբերությունը.

--Ապամարդկայնացնող պատում. պատերազմից տուժած անհատները կարող են ներկայացվել միայն որպես զոհեր կամ հանցագործներ՝ զրկելով նրանց իրենց գործունակությունից, արժանապատվությունից և անհատականությունից: Այս պատումը կարող է հավերժացնել կարծրատիպերը, ամրապնդել ուժերի անհավասարակշռությունը և խոչընդոտել երիտասարդների բուժմանն ու հզորացմանը:

--Այլընտրանքային պատում. ձգտում է հակազդել ապամարդկայնացմանը՝ ընդգծելով պատերազմից տուժած երիտասարդների բազմազան փորձառությունները, ուժեղ կողմերը և դիմացկունությունը: Այն ընդունում է նրանց գործունակությունը, բարդությունները և ներդրումը իրենց համայնքներում՝ առաջարկելով ավելի նրբերանգ և հզորացնող հեռանկար:

Գործունեության օրինակ.

--Ֆոտո-Ձայն նախագիծ. հզորացնում է երիտասարդներին՝ վերատիրելու իրենց պատումներին լուսանկարչության և պատմություններ պատմելու միջոցով: Երիտասարդական աշխատողները տրամադրում են տեսախցիկներ մասնակիցներին և խրախուսում են նրանց լուսանկարել պատկերներ, որոնք ներկայացնում են իրենց փորձառությունները, զգացմունքները և ձգտումները՝ կապված պատերազմի և զինված հակամարտության հետ:

-Օրինակ՝ երիտասարդը կարող է լուսանկարել հույսի խորհրդանիշներ ավերածությունների մեջ, դիմացկունության պահեր իրենց համայնքում կամ մշակութային ինքնության արտահայտություններ: Այնուհետև մասնակիցները կիսվում են իրենց լուսանկարներով խմբի հետ և պատմում դրանց հետևում թաքնված պատմությունները՝ քննարկելով, թե ինչպես են այս պատկերները մարտահրավեր նետում կարծրատիպերին և ուժեղացնում իրենց ձայները:

-Այս գործունեության միջոցով երիտասարդները ձեռք են բերում իրենց պատումները ձևակերպելու հնարավորություն, խթանում են հզորացման զգացումը և նպաստում են հասակակիցների և համայնքի անդամների միջև փոխըմբռնումը: Այն նաև ծառայում է որպես հարթակ խմբային բուժման և պաշտպանության համար՝ ուժեղացնելով նրանց ձայները, ովքեր հաճախ մարգինալացված են հիմնական դիսկուրսում:

Սթորիթելինգ

Վերջապես, մենք ցանկանում ենք ուշադրությունը կենտրոնացնել երիտասարդների արտահայտչականության աջակցման վրա՝ ներկայացնելով ստորիթելինգը, որը հայտնի է նաև որպես պատմողականություն: Ստորիթելինգի հիմնական օգտակար հատկանիշները ներառում են ընդհանուր ընկալման բարձրացումը և պատմությունների հետ մարդկային, անձնական հարաբերությունների ստեղծումը:

Ստորիթելինգը հետզհետե ավելի շատ է օգտագործվում մարկետինգում և լրագրության մեջ՝ իր ներգրավելու ուժի շնորհիվ: Եվ հենց դրա համար էլ այն սկսել է դառնալ քաղաքացիական կրթության և սոցիալական աշխատանքի ոլորտում կիրառվող մեթոդներից մեկը:

Ստորիթելինգը կարող է և օգտագործում է տարբեր միջոցներ և ձևաչափեր (օրինակ՝ կարճ տեսանյութեր, փողքասթներ): Ստորիթելինգի հիմնական կառուցվածքային տարրերը ներառում են (21).

-Մեկ կամ մի քանի գլխավոր հերոսներ

-Խնդիր կամ իրադարձություն

-Խնդրի լուծում՝ հաջողված կամ անհաջող:

Դրան ավելացվում է պատմողական օրինաչափությունների մի հավաքածու, հայտնի որպես «Յոթ հիմնական սյուժե», որը ընդգրկում է գրողների կողմից օգտագործվող օրինաչափությունների մեծ մասը (22): Դրանք են.

-**Յոթ հաղթահարում.** գլխավոր հերոսը պետք է հաղթի հակառակորդին, որը սպառնում է իրեն և ավելի լայն աշխարհին, օրինակ՝ «Օտարը», «Բերքմենը»:

-**Աղքատից հարուստ.** գլխավոր հերոսը ձեռք է բերում մի բան, որի պակասը նա ուներ, կորցնում է ձեռք բերածը, այնուհետև նորից հետ է ստանում այն, օրինակ՝ «Մոխրոտը», «Ալադինը»:

-**Որոնում.** գլխավոր հերոսը ճանապարհ է ընկնում ինչ-որ բան գտնելու կամ ձեռք բերելու համար՝ ճանապարհին հանդիպելով խոչընդոտների և մարտահրավերների, օրինակ՝ «Մատանիների տիրակալը», «Ինդիանա Ջոնս»:

-**Ճանապարհորդություն և վերադարձ.** գլխավոր հերոսը գնում է մի տարօրինակ երկիր, ապրում է մի շարք արկածներ, այնուհետև վերադառնում է տուն, օրինակ՝ «Ալիսը հրաշքների աշխարհում», «Օզի կախարդը»:

-**Կատակերգություն.** պատմությունը հումորային է և հաճախ ներառում է սխալ ինքնությունների, թյուրըմբռնումների և այլ կատակերգական տարրեր, օրինակ՝ «Ընկերները», «Յենգովերը»:

-**Ուրբերգություն.** գլխավոր հերոսը շարժվում է ընդհանուր առմամբ դրական կամ հաջողված կետից դեպի ճախողման կամ կորստի կետ՝ տառապելով աճող դժվարություններից իր ընտրությունների պատճառով և հասնելով մինչև վերջնական կործանման, օրինակ՝ «Ռոմեո և Ջուլիետ», «Մեր աստղերի մեղքը»:

-**Վերածնունդ.** պատմությունը կենտրոնանում է կերպարի զարգացման և հետագա փոխակերպման վրա, օրինակ՝ «Առյուծ արքան», «Ջոկերը»:

Բացի այդ, արդյունավետ պատմությունները ունեն մի շարք ընդհանուր բնութագրեր (21).

Խթանում. խրախուսում են ստացողին լսել և ներգրավվել թեմայի հետ:

Զգացմունքայնություն. փոխանցում են հուզական արձագանք ստացողից:

Ոգեշնչում. գաղափարի, գործընթացի, պատճառի կամ արտադրանքի հանդեպ ոգևորություն առաջացնելը կամ նույնիսկ լինել այնքան մոտիվացնող, որ ստացողը շարունակում է իր կամքով տարածել պատմությունը:

Գրավում. ստեղծում է ավելի երկարաժամկետ կապ ստացողի հետ:

Որպես առաջին քայլ՝ մենք ներկայացնում ենք հեշտությամբ ընկալվող և լավ կառուցվածք ունեցող պատմություններ՝ խրախուսելու մասնակիցներին ստեղծել և պատմել իրենց սեփական պատմությունները: Կարևոր է նշել, որ թեև մենք ազատ ենք ցանկացած թեմայով պատմություններ ստեղծելու հարցում, թեմա ընտրելիս պետք է հաշվի առնենք երիտասարդների պատրաստակամությունը բացվելու և գործընթացին մասնակցելու համար:

Այսպիսով, պատմվածքի սեմինարը կարող է ունենալ տարբեր ձևաչափ՝ կախված առկա ժամանակից, մասնակիցների թվից և նրանք բաց լինելուց (23): «Story-Comp»-ը (24) ապահովում է մի շարք ուղեցույցներ, որոնք օգնում են պատմություններ պատմելու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել՝ սկսած պատմությունների համար տարածքի բացահայտումից մինչև ունկնդիրներ ներգրավելը:

Հնարավոր է նաև համատեղել պատմությունը սիմուլյացիոն խաղի հետ, որը նման է Քաղաքացիական Հայելուն (20)՝ ավելի երկար սեսիաների միջոցով մասնակիցները ստեղծում են նոր կերպարներ, շփվում են մասնակիցների հետ և պատմում իրենց պատմությունները: Միջմշակութային մոտեցմամբ տեղական գործունեության երկու օրինակ, որը կգտնեք ստորև:

Միջմշակութային փոխանակում ՍիվիկոՉերոյի առանց ուղեկցության անչափահասների համար

ՍիվիկոՉերոն (CivicoZero) «Փրկենք երեխաներին» ծրագրի կենտրոնակայանն է, որը գտնվում է Թուրինի պատմական և հանրաճանաչ Բորգո Դորա թաղամասում: CivicoZero-ն հավաքատեղի էմիգրանտ անչափահասների և երիտասարդների համար, որն առաջարկում է առաջին ընդունելության հիմնական ծառայություններ, առողջապահական և իրավաբանական խորհրդատվություն, սոցիալական ներառման և ինտեգրման միջոցառումներ ու լեզվի ուսուցում, աշխատանքային կողմնորոշում և ուղեկցում՝ նպատակ ունենալով կանխել փողոցային կյանքի վտանգներից:

Այս առաջարկը կարող է օգտագործվել որպես տարբեր համատեքստերում պոտենցիալ կրկնվող գործողությունների նախատիպ: Դրա պատրաստման ժամանակ միշտ հաշվի է առնվել «Վնաս մի պատճառի» մոտեցումը: Նախ, տեղի ունեցավ հանդիպում Սենտրո Ստուդիո և ՍիվիկոՉերոյի անձնակազմերի միջև՝ համատեքստը վերլուծելու և շահառուների մասին անհրաժեշտ տեղեկությունները հավաքելու համար: Իրականում, ներգրավված մասնակիցներն արդեն ընդգրկված էին ՍիվիկոՉերոյի կրթական շափոյի մեջ (լեզվի ուսուցում և դպրոցական ու աշխատանքային կողմնորոշում): Խումբը բաղկացած էր չուղեկցվող անչափահասներից և երիտասարդներից (14-19 տարեկան), ովքեր ունեին միգրացիոն պատմություն, գտնվում էին խոցելի վիճակում և մարզինալացման վտանգի տակ, վերջերս էին ժամանել նոր երկիր ու սովորում էին հյուրընկալ երկրի լեզուն: Բացի այդ, գործողությունների ծրագիրը համատեղ կառուցվել է բոլոր ներգրավված դերակատարների հետ՝ դաստիարակներ, լեզվական միջնորդներ և շահառուներ: Մասնակիցները առաջարկությամբ ներկայացվեցին ավանդական բաղադրատոմսեր և խոհարարի օգնությամբ մասնակցեցին ճաշի պատրաստմանը: Ներգրավված դերակատարների թվում էին նաև տեղի բնակիչները, որոնց խումբը հանդիպեց միջոցառումների ընթացքում՝ քաղաքի կենտրոնական շուկայի վաճառողները, սրճարանի աշխատակիցները: Գործողությունները անցկացվեցին Թուրինի տարածքի տարբեր վայրերում՝ նպատակ ունենալով մասնակիցներին հաղորդել հանրային տարածքի բնակեցման և օգտագործման իրենց իրավունքի մասին: Հանրային տարածքը հասանելի է ողջ բնակչությանը, բայց միայն տեսականորեն: Գործնականում այն հաճախ տարբեր կերպ է օգտագործվում՝ հիմնվելով ֆիզիկական, տնտեսական, մշակութային և սոցիալական գործոնների վրա: Արդյունքում՝ առավել խոցելի և մարզինալացված մարդիկ հաճախ ընկալում են, որ իրենք «իրենց տեղում չեն» որոշակի տարածքներում և, միևնույն ժամանակ՝ մեկուսացված և պոտենցիալ գետտոյացված են քաղաքի այլ վայրերում: Սա հատկապես ակնհայտ է Թուրինում այլ երկրներից տեղահանված երիտասարդների նկատմամբ, քանի որ ստեղծվել են գոտիներ, թաղամասեր հատկապես կառուցվածքային առումով մարզինալացված մարդկանց համար: Այս վայրերը առանձին են, կարծրատիպային և համակարգային կերպով բացառված:

ՍիվիկոՉերոյի աշխատակիցների հետ նախնական հանդիպումը նվիրված էր պլանավորված թիրախային խմբի վրա գործողությունների ազդեցությունը սահմանելուն՝ ըստ բացահայտված կարիքների: Գործողությունը պլանավորվել և իրականացվել է հետևյալ նպատակներով:

- Մասնակիցներին հնարավորություն տալ իրենց զգալ կարևոր ապահով վայրում և ամրապնդել վստահության զգացումը;
- Վերականգնել խաղի և զվարճանքի նկատմամբ հետաքրքրությունը վաղաժամ հասունացած դեռահասների և երիտասարդների մոտ:
- Հնարավորություն տալ ճանաչելու և տեսնելու գեղագիտորեն հուզիչ տարածքներ՝ գեղեցկությունը զգալու համար:
- Աջակցել պատկանելիության և ինքնության զգացումի վերականգնման գործընթացին, որը կորել է ծագման երկրից բաժանման պատճառով՝ բարձրացնելով նրանց ծագման մշակույթը (օրինակ՝ իրենց տիպիկ խաղերի և սննդի բաղադրատոմսերի միջոցով): Այս դեռահասներին հնարավորություն տալով ազատորեն ներկայացնել իրենց մշակույթը՝ մի կողմից թույլ է տալիս նրանց թեթևացնել կողմնորոշման կորստի զգացումը, մյուս կողմից թույլ է տալիս նրանց ինքնության և պատկանելիության կարիքը ուղղորդել դեպի կիսման զգացում՝ փակվածության, անվստահության և այլույթի նկատմամբ թշնամանքի փոխարեն:

Գործողությունների նկարագրություն

Օր 1-ին. Մասնակիցների ծանոթացում

Վարժություն 1. Անուններով Պար

Ժամանակ՝ 10 րոպե

Անհրաժեշտ նյութեր /

Նպատակ. Սովորեք և հիշեք մասնակիցների անունները՝ բարձրացնելով միմյանց զննելու ունակությունն և օգնեք ինքնարտահայտվել զվարճալի շարժումների միջոցով:

Ջրահանգներ. Մասնակիցները կազմում են շրջանակ: Յուրաքանչյուր մարդ ասում է իր անունը և այն կապում շարժման հետ: Յուրաքանչյուր մասնակից կրկնում է իրենից առաջ գտնվող անձի անունը և շարժումը և իր հերթին ասում է իր անունը՝ հորինելով շարժում: Ի վերջո, ամբողջ խումբը միաժամանակ կրկնում է բոլորի անունն ու շարժումը՝ ստեղծելով «պար»:

Վարժություն 2. Դիմանկարներ

Ժամանակ՝ 40 րոպե

Անհրաժեշտ նյութեր՝ թղթեր և գունավոր մարկերներ

Նպատակ. Բարձրացնել միմյանց զննելու ունակությունը. թողեք որ ձեզ զննեն, ուշադրություն դարձրեք, թե ինչպես եք զգում, երբ դուք եք ուշադիր նայում եմ ինչ-որ մեկին և ինչպես եք զգում, երբ ինչ-որ մեկն է զննում ձեզ:

Ջրահանգներ. Մասնակիցները ստեղծում են երկու շրջանակներ՝ արտաքին ու ներքին: Արտաքին շրջանը շարժվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ, մինչդեռ ներքին շրջանը անշարժ է: Նրանք, ովքեր նստած են արտաքին շրջանակում, նկարում են իրենց դիմացի մարդուն: Յուրաքանչյուր 20 վայրկյանը մեկ արտաքին շրջանը պտտվում է մեկ քայլ ժամացույցի սլաքի ուղղությամբ: Երբ արտաքին շրջանը շարժվում է, նկարը մնում է անշարժ և շարունակվում է հաջորդ անձի կողմից: Այսպիսով, դիմանկարն ամբողջացվում է մի քանի ձեռքերով: Երբ ամբողջ շրջանն ավարտվում է, դիմանկարները պահվում են, շրջանակները շրջվում են: Այն մարդը, ով նախկինում մողել էր, այժմ նկարում է և հակառակը: Նոր թերթիկներ են բաժանվում և գործողությունը կրկնվում է:

Բացահայտող հարցեր. Ինչպիսի՞ն էր մողել լինելը: Ինչպե՞ս էիք զգում՝ պատկերելով ձեր առջև գտնվող մարդուն: Չգացի՞ք արդյոք դիմանկարի ուժը: Գո՞հ եք Ձեր դիմանկարից:

Երբ յուրաքանչյուր մասնակից ունի իր դիմանկարը, խնդրեք արտահայտել իր գնահատականը: Այնուհետև առաջարկեք թղթի վրա գրել ածականները, որոնք հետագայում կկարողանան կիրառել իրենց բառապաշարում: Հնարավորություն է միմյանց նմանությունների մասին ևս խոսելու համար:

Վարժություն 3. Մոլեկուլներ

Ժամանակ՝ 10 րոպե,

Անհրաժեշտ նյութեր՝ մարմնի մասերով ֆլիպչարտ

Նպատակ. Խմբի նկատմամբ վստահության ձևավորում, փոխադարձ հարգանքով կապ հաստատելը (սերառյալ ֆիզիկական շփումը) միմյանց հետ, բարձրացնել նոր մարդկանց վստահելու կարողությունը՝ միաժամանակ համատեղելով լավ ժամանցը: Այս նպատակը հատկապես կարևոր է գինված հակամարտություններից տուժած երիտասարդների համար: Պատերազմի հետևանքներից մեկը սոցիալական հյուսվածքի, մարդկային հարաբերությունների, տեսլականի խզումն է: Հետևաբար, հարաբերությունների վերականգնման, վստահության և նոր աջակցության ցանցեր ստեղծելը շատ կարևոր է: Սույն համատեքստում երկրորդական նպատակը նաև մարմնի մասերի բառապաշարի ավելացումն է բառապաշարում. փոխազդել և շփվել մյուսների հետ:

Հրահանգներ. մասնակիցները ատոմներ են և ազատ տեղաշարժվում են տիեզերքում: Խաղավարն ասում է մարմնի մի մասի անուն (ձեռք, ոտք, արմուկ, ուս) և թիվ: Մարմնի մասի անունը ցույց է տալիս, որ մարդիկ պետք է խմբավորվեն միասին՝ ստեղծելով մոլեկուլ՝ բոլորը միավորվելով մարմնի նշված մասի միջոցով: Թիվը ցույց է տալիս, թե քանի հոգուց պետք է բաղկացած լինի մոլեկուլը: Դրանից հետո մոլեկուլները լուծվում են և նորից սկսում:

Վարժություն 4. Փուչիկ

Ժամանակ՝ 20 րոպե

Անհրաժեշտ նյութեր՝ Կտոր՝ աչքերը կապելու համար

Նպատակ Բարձրացնել վստահությունը մարդկանց նկատմամբ և հաղորդակցության հմտությունները: Խնամք տանել նախ ինքդ քո մասին, բայց նաև ուրիշների մասին հոգալ, վստահել, նոր խնամակալների և նոր մարդկանց վրա հույս դնել:

Հրահանգներ. Բաժանել խմբերի, ձեռքերը բռնած կանգնեն շրջանաձև, յուրաքանչյուր խմբի կենտրոնում մեկական աչք կապած մարդ է կանգնում և ազատ շարժվում: Խմբի մնացած մասը պետք է «պաշտպանի» միջուկը՝ հետևելով դրան և թույլ չտալով, որ այն ինչ-որ տեղի բախվի:

Տեղեկատվական հարցեր. Մտածեք վստահության մասին: Հաջողվե՞լ է վստահել ուրիշներին: Ի՞նչ էի զգում ես, երբ աչքերս կապված էին և ստիպված էի ամբողջովին ապավինել ինձ շրջապատող մարդկանց: Որքանո՞վ եմ ես ինձ ապահով զգում, երբ վստահում եմ ուրիշներին:

Փակում.

Ժամանակ՝ 10 րոպե

Ստեղծվում է շրջան: Յուրաքանչյուր մասնակից իր հերթին մեկ բառով նկարագրում է, թե ինչ է զգում: Կատարվում է օրվա ձեռքբերումների համառոտ ամփոփում և բացատրվում է, թե ինչ կլինի հաջորդ հանդիպմանը

Օր 2-րդ. Փորձի փոխանակում, նմանությունների որոնում

Վարժություն 1. Կազմեք շարք

Ժամանակ՝ 5 րոպե
Անհրաժեշտ պարագաներ/

Նպատակ. ոչ բանավոր հաղորդակցության փորձ, նպատակին հասնելու համար գտնել ստեղծագործ լուծումներ:

Ջրահանգներ. մասնակիցները պետք է շարվեն իրար կողքի՝ ըստ իրենց ծննդյան օրվա և ամսվա հերթականության՝ առանց խոսելու:

Վարժություն 2. Քամին փչում է.

Ժամանակ՝ 20 րոպե
Անհրաժեշտ պայմաններ՝ աթոռներ (մասնակիցների թվով հասած 1):

Նպատակ. ընդհանրապես խոսքը միմյանց ճանաչելու և ընդհանուր տարրեր գտնելու միջոցով խումբ ստեղծելու մասին է: Մասնավորապես, այս գործունեության միջոցով մասնակիցները կարող են գիտակցել, որ կարելի է ընդհանուր բաներ ունենալ, չնայած տարբեր ծագման և փորձի, բացահայտել այն ամենը, ինչը միավորում է, այլ ոչ թե բաժանում:

Ջրահանգներ. մասնակիցները շրջանի մեջ են՝ նստած աթոռների վրա: Մեկը կանգնած է կենտրոնում և արտասանում «Քամին փչում է բոլոր նրանց համար, ովքեր...» արտահայտությունը, ինչպես ինքն է նախընտրում՝ լրացնելով իր մասին ինչ-որ բան (այն ինչ անում է, մտածում, ունի, փորձ ունի...): Երբ նախադասությունն ավարտվում է, բոլորը, ովքեր համաձայն են ասվածի հետ, այլ աթոռ են փնտրում, իսկ նրանք, ովքեր կանգնած են, փորձում են նստել: Առանց աթոռի մնացածները գնում են կենտրոն: Նպատակն է բացահայտել այն ամենը, ինչը միավորում է, այլ ոչ թե բաժանում է:

Տեղեկատվական հարցեր. կա՞ մեկը, ով երբեք ոտքի չի կանգնել: Գտե՞լ եք ընդհանուր բաներ: Շրջանակի ներսում կանգնելիս շփոթվե՞լ էիք:

Վարժություն 3. Ականադաշտ

Ժամանակ՝ 30 րոպե
Անհրաժեշտ պարագաներ՝ ծաղիկներ նկարած թղթեր; աչքերը կապելու կտորներ

Նպատակ. առաջարկելով մասնակիցներին ապահով տարածքում սպասված զգալու և ուրիշների հանդեպ նրանց վստահության զգացումն ամրապնդելու հնարավորություն: Կառուցել հաղորդակցություն ըստ կարիքի: Չգալ հոգատարությունը և խնամված լինելը:

Ջրահանգներ. հատակի վրա շարք բազմաթիվ թղթեր, որոնց վրա նկարված են ծաղիկներ, որը կկազմի «ականադաշտ»: Մասնակիցները աշխատում են զույգերով, որոնցում մեկ անդամի աչքերը կապում են, և նրա գործընկերը տարածքից դուրս ուղղորդում է նրան ընթացքի մի ծայրից մյուսը՝ օգնելով, որ «կույրը» չդիպչի ծաղիկներից որևէ մեկին:

Ուղեկցողը կարող է խոսել, բայց չի կարող դիպչել գործընկերոջը: Այնուհետև զույգի դերերը փոխվում են:

Տեղեկատվական հարցեր. այս գործողությունը կարող է արտացոլել այն դերը, որը մենք հավանաբար ստանձնել ուրիշների հետ մեր հարաբերություններում:

Ձեզ համար ավելի գերադասելի էր լինել ուղեկցողի թե՛ առաջնորդի դերում: Դժվա՞ր էր վստահել զուգընկերոջը, երբ ձեր աչքերը կապված էին:

Վարժություն 4. Սեփական մշակույթին բնորոշ խաղեր

Ժամանակ՝ 45 րոպե

Անհրաժեշտ նյութեր՝ թղթեր և գրիչներ

Նպատակ. վերականգնել խաղի և զվարճանքի չափերը դեռահասների և վաղաժամ հասունացած երիտասարդների մոտ, կիսվել ծագման երկրի մասին փորձով և հիշողություններով, գտնել նմանություններ մշակույթների միջև՝ հարստացնելով նոր լեզվի բառապաշարը:

Ջրահանգներ. մասնակիցները բաժանվում են լեզվական խմբերի. Յուրաքանչյուր խմբում կա խաղավար: Մասնակիցները կիսվում են իրենց հայրենիքին բնորոշ մանկության որոշ խաղերի կանոններով: Հետո ընտրում են մեկը, թղթի վրա գրում կանոնները՝ հյուրընկալող երկրի լեզվով: Հաջորդ հանդիպմանը նրանք կիսում են դրանք խմբի մնացած անդամների հետ և միասին խաղում իրենց խաղերը:

Օր 3-րդ. Եկեք խաղաղանք միջմշակութային

Ժամանակ՝ հանդիպման ամբողջ ընթացքում

Անհրաժեշտ նյութեր՝ *The materials that participants require to play their games.*

Նպատակ. ինքնաարտահայտվել՝ կիսվելով յուրաքանչյուր մասնակցի մանկության տարբեր խաղերով. հարգալից ողջունել մյուս մասնակիցներին, ներգրավվել և զվարճանալ, անմիջականորեն զգալ վարողի դերի դժվարությունները (արդյունքում, երբ հերթը հասնի մյուսներին, դուք ավելի հավանական է, որ լսեք առանց նրանց խոչընդոտելու): Ուսումնական հղման մեթոդը Լուդո-մանկավարժությունն է (ավելին՝

<https://docs.google.com/document/d/1ZndXVtG0qP-t7Tg4zR01fOqXNnR9IssqqdCISeiAgAzo/edit#heading=h.2is7lpm1dgcr>):

Ջրահանգներ. կազմել շրջան: Իր հերթին, յուրաքանչյուր խումբ իր խաղի կանոնները կիսում է խմբի մնացած անդամների հետ հյուրընկալող երկրի լեզվով վարողների օգնությամբ: Դուք փորձում եք խաղալ խաղը:

Օր 4-րդ. Եկեք ուստեք միջմշակութային

Ժամանակ՝ հանդիպման ամբողջ ընթացքում

Նպատակ. մտուցել ու սնվելով միջոցով սեփական մշակույթով կիսվել, օգտագործել սննդի փոխանակումը որպես ուրիշների հետ շփման և հարաբերությունների ուղի, իրականացնել համեմատություն, հետաքրքրասիրություն ցուցաբերել այլ մշակույթների նկատմամբ, վերստեղծել ծանոթ միջավայր հյուրընկալող երկրում:

Պատրաստություն. մասնակիցները բաժանվեցին միևնույն երկրի խմբերի և ընտրեցին բաղադրատոմս՝ խմբի մնացած անդամներին առաջարկելու համար, այնուհետև թղթի վրա գրեցին պատրաստման եղանակը և բաղադրիչների ցանկը հյուրընկալող երկրի լեզվով:

Բաղադրատոմսերի հավաքածուն նախատեսված կլինեք երրորդ հանդիպման համար, սակայն մեր դեպքում ժամանակի սղության պատճառով մասնակիցները մտածեցին և ուսուցչի օգնությամբ դասարանում գրեցին բաղադրատոմսերը:



(Տեղական դասընթաց, Սենտրո Սիդդիկ Սերեն
Ռեջիս և ՍիվիկոՉերո – 11/28/08/2023):

Օրվա կառուցվածքը.

- Յուրաքանչյուր խումբ, վարողի ուղեցույթամբ, գևեց իրեց անիրաժեշտ բաղադրիչները քաղաքի ամենամեծ շուկայում՝ օգտագործելով հյուրընկալող երկրի լեզուն:
- Յուրաքանչյուր խումբ պատրաստեց իր սեփական բաղադրատոմսերը՝ կիսելով տարածքը և խոհանոցը:
- Բոլորս միասին կերանք նույն սեղանի շուրջ, և բոլորը փորձեցին միմյանց բաղադրատոմսերը:
- Բոլորս միասին գնացինք քաղաքի պատմական բար, որտեղ յուրաքանչյուր մարդ պատվիրեց այն, ինչ ուզում է՝ օգտագործելով հյուրընկալող երկրի լեզուն:

Միջմշակութային ճանաչման գործընթաց առանց ուղեցույթային անչափահասների հետ իտալական Կարմիր խաչի Սենտրո Տեոբալդո Ֆենոջիոյում

Սենտրո Տեոբալդո Ֆենոջիոն ընդունելության կենտրոն է Սետտիմո Տորինեզում, որը ղեկավարվում է իտալական Կարմիր խաչի կողմից: 2008թ.-ից կենտրոնը իրականացնում է ապաստան հայցողների ընդունելության ծրագրեր, ինչպես նաև այլ համերաշխության ծրագրեր, օրինակ՝ սոցիալական ճաշարանը, չվաճառված թարմ արտադրանքի հավաքումը սուպերմարկետներից և բնակարանային արտակարգ իրավիճակներից:

2023 թվականի նոյեմբերին Սենտրո Ֆենոջիոն ընդունեց 16 առանց ուղեցույթային անչափահասների Բենինից, ԿամբուՆից, Գամբիայից, Նիգերից և Նիգերիայից:

Կարմիր խաչի օպերատորների և անչափահասների հետ տարբեր հանդիպումներից հետո նրանց կարիքներն ու ակնկալիքները պարզելուց հետո, փետրվարին մենք նախագծեցինք ոչ ֆորմալ կրթության գործընթաց՝ ներառելով անչափահասներին կենտրոնի կյանքի և քաղաքի կյանքի մեջ, լրացնելով իտալերեն լեզվի ուսուցման բացերը, որը նրանք արդեն սովորում էին դպրոցում:

Սկզբում աշխատեք թիրախային խմբի ինքնաճանաչման, սեփական որակների, կարողությունների և հետաքրքրությունների բացահայտման վրա: Այնուհետև, անչափահասների միջև փոխհարաբերություններն ամրապնդելու և վստահություն առաջացնող գործողությունների միջոցով անդրադարձեք մեկը մյուսի ճանաչմանը: Այս միջավայրային ճանաչմանը՝ ծագման երկրի ավանդույթների, ուսելիքի, հուշերի ու խաղերի արժևորմամբ: Վերջապես, ներկա համատեքստի ճանաչմանը՝ քայլելով Սետտիմո Տորինեզե քաղաքով, յուրացնելով հանրային տարածքը և առաջարկներ գրելով տեղական վարչակազմի համար, թե ինչպես հասնել քաղաք:

Գործողությունների նկարագրություն.

Օր 1-ին. Ինքնաճանաչում

Վարժություն 1. Անունների ծիածան

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակ. բացահայտել և սովորել հիմնական խմբի անդամների անունները, բարձրացնել միմյանց զննելու ունակությունը:

Ջրահանգներ. շրջանում մասնակիցները հերթով տալիս են իրենց անունները: Այնուհետև կենտրոնում գտնվող անձը պետք է պատահականության սկզբունքով մատնանշի մասնակիցներին, որպեսզի նրանք կարողանան իմանալ իրենց դասընկերների անունները, հետևյալ կերպ.

- Դեղին՝ անուն ազգանուն
- Կապույտ՝ աջ կողմում գտնվող անձի անունը
- Կարմիր՝ ձախ կողմում գտնվող անձի անունը:

Վարժություն 2. Խմբային դիմանկար

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակ. ճանաչել անդամներից յուրաքանչյուրին և ստեղծել հարաբերություններ միմյանց միջև, բարձրացնել միմյանց զննելու ունակությունը:

Ջրահանգներ. Երկու սահմանափակ շրջաններում մասնակիցները միասին կնկարեն դիմացի մարդու դիմանկարը: Ներքին շրջանի մարդիկ մնում են անշարժ, մինչդեռ արտաքին շրջանում գտնվողները շարժվելու են յուրաքանչյուր 30 վայրկյանը մեկ մինչև դիմանկարները ավարտվեն բոլորի մասնակցությամբ:

Վարժություն 3. Ինքնության դիմանկարը

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակ. ճանաչել սեփական ուժերը, հետաքրքրությունները և ներդրումը:

Ջրահանգներ. Յուրաքանչյուր մասնակից լրացնում է նախորդ գործունեության ընթացքում հավաքականորեն պատրաստված դիմանկարը՝ ճանաչելով խաղարկության իրենց սեփական ուժերը, կրթերը, հետաքրքրությունները, մշակութային կողմերը և իրենց ներդրումը խմբում:

Օր 2-րդ. Ուրիշների ճանաչում և սոցիալական կապերի ամրապնդում

Վարժություն 1. Խոչընդոտների մրցավազ

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակ. Ստեղծել վստահելի հարաբերություններ սոցիալական խմբի անդամների միջև՝ առաջարկելով մասնակիցներին ապահով վայրում զգալ ողջունելի և ուրիշների հանդեպ նրանց վստահության զգացումն ամրապնդելու հնարավորություն:

Կառուցել հաղորդակցություն ըստ կարիքների:

Չգալ հոգատարություն և ինսամբ:

Յրահանգներ. մոտավորապես 4-5 հոգուց բաղկացած խմբերում առաջնորդը կանգնած է խոչընդոտներով լի ճանապարհի վերջնագծին: Փոքր խմբերի մյուս անդամները կապած կլինեն ճանապարհի մյուս կողմում:
Առաջնորդը պետք է մեկ առ մեկ հրահանգներ տա իր ուղեկիցներին՝ անցնելու ճանապարհը՝ առանց խոչընդոտներին դիպչելու: Իտալերեն գրված բառերը բաշխված կլինի ճանապարհի երկայնքով, որոնք յուրաքանչյուր անդամ պետք է հավաքի առաջնորդի հրահանգներով:

Վարժություն 2. Գործող բառը

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակ. ստեղծել վստահելի հարաբերություններ սոցիալական խմբի անդամների միջև և խթանել լեզուների ուսուցումը համագործակցային վարժությունների միջոցով:

Յրահանգներ. բառերը հավաքելուց և խոչընդոտներով ճանապարհն անցնելուց հետո յուրաքանչյուր խումբ հերթով կարտացույցի իր խոսքերը, որպեսզի մյուս խմբերը կարողանան գուշակել դրանք:

Անչափահասների սոցիալական ներառման գործընթացի համար կարևոր են այնպիսի բառերի յուրացումը, ինչպիսիք են՝ դպրոց, աշխատանք, բազմազանություն, աղոթել, ընկերություն, օգնություն:

Վարժություն 3. Խմբի կարգախոսը

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակներ. Ամրապնդել կապերը մասնակիցների միջև և ստեղծել սոցիալական խմբին պատկանելու զգացում:

Յրահանգներ. Նախորդ գործունեության մեջ գտնված բառերով նրանք կստեղծեն իրենց ներկայացնող կարգախոս: Սա գրված կլինի մեծ պաստառի վրա՝ զարդարված բոլոր այն նյութերով, որոնք կցանկան մասնակիցները:

Օր 3-րդ. Միջմշակութային ճանաչում

Վարժություն 1. Մարմարներ աշխարհով մեկ

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակը. ճանաչել և արժևորել սեփական մշակույթը:

Յրահանգներ. աշխարհի քարտեզի վրա մասնակիցները մարմարը կնետեն իրենց ծագման երկրում: Երբ գտնվեն իրենց ծագման երկրներում, նրանք կպատմեն իրենց երկրի ավանդույթների, սնունդի և փառատոների մասին:

Վարժություն 2. Խաղալ միջմշակութայնություն

Ժամանակ՝ 1 ժամ

Նպատակ. արտահայտվել յուրաքանչյուր մասնակցի մանկության տարբեր խաղերի միջոցով, հարգալից ողջունել այլ մասնակիցներին, փոխհարաբերվել և զվարճանալ, անմիջականորեն զգալ վարողի դերի դժվարությունները (արդյունքում, երբ մյուսների հերթն է, դուք ավելի հավանական է, որ լսեք առանց նրանց խոչընդոտելու). գտնել նմանություններ մշակույթների միջև:

Յրահանգներ. մասնակիցները խմբեր են կազմում՝ ելնելով իրենց ծագման երկրներից: Նրանք միասին խոսում են իրենց մանկության ավանդական խաղերի մասին: Այնուհետև նրանք կհեշտացնեն ավանդական խաղը, որն ընտրվում է մասնակիցների ողջ խմբի կողմից:

Վարժություն 1. Վերադարձ ներկայիս համատեքստ

Ժամանակ՝ 10 րոպե

Նպատակ. Ճանաչել ներկայիս համատեքստը, որում նրանք գտնվում են, արժևորել մինչ այժմ ստացած ուսումնառության և կառուցած հարաբերությունները, բարձրացնել ներկա համատեքստի ընկալումը:

Ջրահանգներ. Քարտեզի վրա նրանք մարմար են նետում այն քաղաքի վրա, որտեղ գտնվում են՝ Սետտիմո Տորինեզե, Իտալիա: Այս պահին նրանք կիսվում են այն ամենով, ինչ գիտեն, սովորել, վայելել են, ինչ հարաբերություններ են ստեղծել Սետտիմո քաղաքում:

Վարժություն 2. Բնակեցում Սետտիմո Տորինեզեյում

Ժամանակ՝ 2 ժամ

Նպատակ. Ճանաչել ներկայիս համատեքստը, որում նրանք հայտնվել են, ակտիվացնել ներկա համատեքստի ընկալումը, տիրապետել ընթացիկ համատեքստին, ծանոթանալ ասոցիացիաներին, տարածքի կողմից առաջարկվող խմբերին, հնարավորություններին և ծառայություններին:

Ջրահանգներ.

Ջրահանգներ. նախորդ երկխոսությունից հետո մենք մեկնում ենք շրջելու քաղաքով: Նրանց տանում են այցելելու իրենց համար հետաքրքիր վայրեր՝ քաղաքի կենտրոն, քաղաքային գրադարան, քաղաքապետարան, սպորտային վայրեր և այլ այն:

Յուրաքանչյուր վայրում մենք գտանք պատասխանատու մարդկանց, ովքեր մեզ պատմեցին այն ծառայությունների և հնարավորությունների մասին, որոնք առաջարկում են և որոնք հասանելի են անչափահասներին:

Այս զբոսանքը պետք է կազմակերպել փոքր խմբերով, մասնակիցները պետք է լուսանկարեն յուրաքանչյուր վայր և խոսեն ակտիվացնող հարցերի մասին՝ ի՞նչ չգիտեի, ի՞նչ տեսա, որ հավանեցի:

Օր 5-իդ. Ներկայիս համատեքստը փոխակերպված

Վարժություն 1. Սետտիմոյի բացահայտման պաստառ

Ժամանակ՝ 20 րոպե

Նպատակ. ճանաչել և գնահատել այն իրական համատեքստը, որում գտնվում են, փորձարկել երիտասարդների մասնակցության մեխանիզմները՝ հնարավորություն տալով քաղաքը վերափոխելու առաջարկություններով հանդես գալ:

Ջրահանգներ. մասնակիցների կողմից արված լուսանկարները կտպվեն և կբերվեն այս հանդիպմանը: Մասնակիցները կտեղադրեն լուսանկարներ Սետտիմոյի քարտեզի վրա և կպատմեն, թե ինչն է իրենց զարմացրել, ինչ հնարավորություններ է տալիս իրենց այդ վայրը և ինչպես կարող են օգտվել/ լինել այդ վայրից/վայրում:

Վարժություն 2. Վերափոխենք Սետտիմո Տորինեզեն իմ առաջարկներով

Ժամանակ՝ 30 րոպե

Նպատակ. փորձել երիտասարդների մասնակցության մեխանիզմները՝ որոշում կայացնողների համար առաջարկություններ ձևակերպելու միջոցով; փորձել ակտիվ մասնակցության և քաղաքական շահերի պաշտպանության մեխանիզմները:

Ջրահանգներ. Երբ բոլոր այցելած վայրերը ճանաչվել և հիշվել են, մասնակիցներն հրավիրվում են առաջարկություններ գրելու՝ Սետտիմոն իրենց համար անվտանգ վայր դարձնելու համար, կառուցելու Սետտիմո, որը ներառական է և հարգում է բազմազանությունը, այն փոփոխությունները, որոնք նրանք ցանկանում են տեսնել քաղաքում, ինչի շնորհիվ այն կզգան իրենցը: Այս առաջարկությունները կներկայացվեն տեղական կառավարման որոշում կայացնողներին:

Երիտասարդական աշխատանքում միջմշակութային գործունեության վերլուծումը հակամարտությունների զգայուն տեսանկյունից

Հակամարտություններից տուժած երիտասարդներին աջակցելու մեր հավաքական ջանքերում միջմշակութային գործունեությունն նախագծելիս կարևոր է որդեգրել հակամարտությունների նկատմամբ զգայուն մոտեցում: Այս ենթագլուխը խորանում է այս կարևոր ասպեկտի վրա՝ օգտվելով տարբեր աղբյուրներից և լավագույն փորձից:

Հնարավոր թակարդների բացահայտում.

Հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշ գործողություններ, ինչպիսին է «Մեկ քայլ առաջ»-ը, կարող են անզգուշորեն հուզական սթրես առաջացնել կամ սրել մասնակիցների միջև առկա տարաձայնությունները (Սթիվենսոն և Բրուսարդ, 2019թ.): Ուժային դինամիկայի նրբությունները և հակամարտությունների հետևանքները ճանաչելը կարևոր է այս ռիսկերը մեղմելու համար:

Շտկող միջոցառումներ.

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի միջազգային ֆեդերացիայի կողմից երիտասարդական աշխատողների համար նախատեսված գործիքակազմում նշված լավագույն փորձը շեշտադրում է գործողությունների կատարելագործման կարևորությունը՝ բոլոր մասնակիցների բարեկեցությունն ու արժանապատվությունն ապահովելու համար (ԿԻԿՄՄՖ, 2020թ.): Սա կարող է ներառել արտահայտությունների վերաձևակերպում՝ չեզոքություն ապահովելու նպատակով, և գործողությանը հաջորդող քննարկումների անցկացում՝ ցանկացած անհարմարություն կամ թյուրըմբռնում հասցեագրելու համար:

Հակամարտությունները վերափոխել կառուցողական դիսկուսի.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջմշակութային կոմպետենցիայի վերաբերյալ ուղեցույցները ընդգծում են գործողությունները որպես ավելի խորը ուսումնասիրության և ըմբռնման հարթակներ օգտագործելու կարևորությունը (ՅՈՒՆԵՍԿՕ, 2018թ.): Խրախուսելով արտահայտությունների հուզական ազդեցության շուրջ երկխոսությունը և փնտրելով ընդհանուր հիմք՝ մենք խթանում ենք փոխադարձ հարգանքն ու համագործակցությունը բազմազանության պայմաններում:

Միջմշակութային զգայունություն, հակամարտության մասին իրազեկություն և «Մի՛ վնասիր» սկզբունքներ.

Ինտեգրելով Սմիթի հակամարտության պայմաններում երիտասարդական աշխատանքի պրակտիկայի ուսումնասիրության մեջ առկա գաղափարները՝ մենք ընդունում ենք երիտասարդ մասնակիցների տարբեր ծագումները հարգելու անհրաժեշտությունը՝ միաժամանակ ընդունելով անցյալում հակամարտությունների ազդեցությունը նրանց կենսափորձի վրա (Սմիթ, 2018թ.): Հետևելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի հակամարտությունից տուժած տարածաշրջաններում երիտասարդների ներգրավման վերաբերյալ ուղեցույցում նշված ոչ վնասակար միջամտության սկզբունքներին՝ մենք պարտավորվում ենք ստեղծել անվտանգ և ներառական տարածքներ մեր երիտասարդների համար (ՅՈՒՆԵՍԿՕ, 2017թ.):

Ըստ Էռնայան, հակամարտության նկատմամբ զգայուն տեսանկյունից միջմշակութային գործողությունները մանրակրկիտ ուսումնասիրելով և հիմնվելով հաստատված լավագույն փորձի վրա՝ մենք ստեղծում ենք միջավայրեր, որոնք նպաստում են հակամարտությունից տուժած երիտասարդ անհատների աճին և հզորացմանը:



(Տեղական դասընթաց, Սենտրո Ադուդիո Սերենո Ռեջիս և ՍիվիկոՉերո – 11/28/08/2023):

Քղումներ.

- Anesh, S., & Holmes, P. (2011). Positioning intercultural dialoguetheories, pragmatics, and an agenda. *Journal of international and intercultural communication.*, 4 (2). pp. 81-86.
- Barabas, A. M. (2014). *Multiculturalism, Cultural Pluralism and Interculturalism in the context of Latin America: the presence of Indigenous Peoples.*
- Council of Europe. (2021). *MIGRATION AND INTEGRATION Which alternative narratives work and why.* Obtenido de <https://rm.coe.int/policy-brief-migration-and-integration-which-narratives-work-and-why-o/1680a20cfc>
- Hans-Georg Wehling (1977): *Konsens à la Beutelsbach? Nachlese zu einem Expertengespräch.* In: Siegfried Schiele / Herbert Schneider (Hrsg.): *Das Konsensproblem in der politischen Bildung.* Stuttgart, S. 173 - 184, hier S. 179f. or - <https://www.lpb-bw.de/beutelsbacher-konsens>
- Human Library Organisation. (s.f.).
- International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC). (2020). "Toolkit for Youth Workers: Promoting Conflict Sensitivity in Intercultural Activities."
- International Youth Foundation. (2016). "Youth Work in Conflict-Affected Settings: A Handbook for Practitioners."
- Levy et al. (2022). "Dialogue intervention for youth amidst intractable conflict attenuates neural prejudice response and promotes adults' peacemaking". *PNAS Nexus*, Volume 1, Issue 5. <https://academic.oup.com/pnasnexus/article/1/5/pgac236/6761418>
- Ministry of Culture of Peru. (2015). *Diálogo Intercultural. Pautas para un mejor diálogo en contextos de diversidad intercultural.* Obtenido de <https://centroderecursos.cultura.pe/sites/default/files/rb/pdf/DIALOGO%20INTERCULTURAL%20-%20A5.pdf>
- United Nations Children's Fund (UNICEF). (2017). "Youth Engagement in Conflict-Affected Regions: Best Practices and Considerations."
- United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO). (2018). "Intercultural Competence in Youth Work: Guidelines for Practitioners."
- Smith, L. (2018). "Youth Work Practice in the Time of War: A Conflict-Sensitive Approach." *Journal of Youth Studies*, 21(3), 325-340.
- Stevenson, A., & Broussard, M. (2019). "Understanding Conflict Sensitivity in Youth Work: A Practical Guide for Practitioners." *Peacebuilding & Development*, 14(2), 169-185.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՐԱԿԱՆ ԱՃԻԱՏԱՆՔ

Սոցիալական ներառման և առանց խոչընդոտների միջավայրն և դրանց առնչությունը պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանքում:

1.1. Սոցիալական ներառման հայեցակարգ

Խոսելով սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում բնակչության տարբեր սոցիալական խմբերի ընդգրկվածության կամ բացառման մակարդակի մասին՝ հաճախ օգտագործվում է 4 մոտեցումների սխեման, որն արտացոլում է տարբեր գործընթացներ, որոնք կարելի է դիտարկել հասարակության մեջ սոցիալական տարբեր խմբերի առնչությամբ՝ տարանջատում, ինտեգրում, ընդգրկում:


Բացառումը (կամ Սոցիալական Բացառումը) գործընթաց է, որը թույլ չի տալիս անհատներին, խմբերին կամ համայնքներին օգտվել այն իրավունքներից, հնարավորություններից և ռեսուրսներից, որոնք սովորաբար հասանելի են հասարակության անդամներին և որոնք առանցքային են սոցիալական ինտեգրման համար: Նույնիսկ եթե բացառումը սովորաբար կապված է աղքատության և ֆինանսական ռեսուրսների բացակայության հետ, այն նաև պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ սեռ, հաշմանդամություն, սեռական կողմնորոշում, Էթնիկ պատկանելություն, կրոն և այլն:

Տարանջատումը խտրականության տեսակ է, որը բաղկացած է մեկ հասարակության մեջ այն սոցիալական խմբերի փաստացի կամ օրինական տարանջատումից, որոնք տարբերվում են ռասայական, սեռային, սոցիալական, կրոնական, լեզվական կամ այլ հատկանիշներով, որն առավել հաճախ տեղի է ունենում միտումնավոր:

Ինտեգրումը հասարակության նախկինում բացառված մասի կամ սոցիալական խմբի ներգրավման առաջնային գործընթացն է, որը դեռ չի ավարտվել, բայց ունի հավասար պայմաններով և իրավունքների համակեցության հեռանկարներ:

Ներառումը (սոցիալական ներառումը) սոցիալական և կրթական քաղաքականության մեջ լայնորեն օգտագործվող տերմին է՝ արտահայտելու այն գաղափարը, որ տվյալ հասարակությունում ապրող բոլոր մարդիկ պետք է ունենան հասանելիության և մասնակցության իրավունքների հավասար պայմաններ: Սա նշանակում է, որ մի կողմից, հաստատությունները, կառույցները և գործունեությունը պետք է նախագծված լինեն հանգամանքների, ինքնությունների և կենսակերպի բազմազանությանը դրականորեն համապատասխանեցնելու համար: Մյուս կողմից, դա նշանակում է, որ հնարավորություններն ու ռեսուրսները պետք է բաշխվեն այնպես, որ նվազագույնի հասցվի անբարենպաստությունն ու մարգինալացումը:

Երիտասարդության տեսանկյունից սոցիալական ներառումը հասարակության ներսում անհատի ինքնիրացման գործընթացն է, սոցիալական ինստիտուտների կողմից սեփական ներուժի ընդունումն ու ճանաչումը, համայնքի սոցիալական հարաբերությունների ցանցում ինտեգրումը (կրթության, աշխատանքի, կամավորական աշխատանքի կամ մասնակցության այլ ճևերի միջոցով):



Նկար. 4 Մոտեցումների սխեման

Ներկայիս եվրոպական հասարակություններում հայեցակարգը վերաբերում է բոլոր երիտասարդներին, քանի որ երիտասարդությունը կյանքի այն փուլն է, երբ երիտասարդներն արագ զարգացող հանգամանքներում անցնում են ընտանեկան կախվածությունից դեպի ինքնավարություն ավելի մեծ հասարակության ներսում: Այն առանձնահատուկ նշանակություն ունի այն երիտասարդների համար, ովքեր գալիս են անբարենպաստ միջավայրից և ապրում են անապահով պայմաններում, սա կարող է վերաբերել նաև փախստականների և տեղահանվածների ծագում ունեցող երիտասարդներին, ինչպես նաև պատերազմի և զինված հակամարտությունների հետևանքների միջով անցնող երիտասարդներին: Նրանց համար սոցիալական ներառումը նշանակում է տարբեր արգելքների հաղթահարում նախքան իրենց սոցիալական իրավունքները որպես հասարակության լիարժեք անդամներ ձեռք բերելը:

Եվրոպական երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության ոլորտում ներառումը դիտվում է որպես համապարփակ ռազմավարություն և պրակտիկա՝ ապահովելու ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդներին հասանելի դառնան առաջարկվող կառույցներն ու ծրագրերը, ինչպես նաև հավասար իրավունքներ և հնարավորություններ համայնքային կյանքի տարբեր ոլորտներում:

Երիտասարդների իրավունքների հասանելիությունը ժամանակակից Եվրոպայում և նրա սահմաններից դուրս մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մշակույթի ձևավորման կարևոր բաղադրիչ է: Երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական աշխատանքը կարևոր դեր են խաղում երիտասարդների իրավունքների հասանելիության ապահովման և երիտասարդների ակտիվ քաղաքացիությանն աջակցելու գործում: Իրավունքների հասանելիությունը պահանջում է, որ երիտասարդները, երիտասարդական կազմակերպությունները և երիտասարդական աշխատողները տեղեկացված լինեն և կրթվեն այն իրավունքների մասին, որոնք երիտասարդները պետք է օգտագործեն և ինչպես վարվեն, եթե այդ իրավունքները խախտվեն:

Պատերազմի և հետպատերազմյան պայմաններում երիտասարդների սոցիալական ներառման խնդիրը հատուկ ուշադրություն է պահանջում, քանի որ երիտասարդների հսկայական զանգված զգում է պատերազմի և ռազմական գործողությունների բացասական հետևանքները: Ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդների թիվը արագորեն աճում է: Պատերազմի հետևանքների պատճառով խոցելի սոցիալական խմբերը դառնում են ավելի խոցելի անբարենպաստ պայմանների նկատմամբ և պահանջում են արձագանք ինչպես պետության, այնպես էլ նրա ներկայացուցիչների, ինչպես նաև ոչ կառավարական հաստատությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից՝ նվազեցնելու անհավասարության դրսևորումները և ապահովելու իրավունքների հասանելիությունը: Հետևաբար, այս ռիսկերը նվազագույնի հասցնելու և պատերազմի բացասական հետևանքները նվազեցնելու համար ներառական երիտասարդական աշխատանքը պետք է դառնա երիտասարդական հատվածի գործունեության առանցքային ոլորտ ինչպես պատերազմից տուժած տարածքներում, այնպես էլ այն շրջաններում, որտեղ կան պատերազմից տուժած երիտասարդներ:

1.2. Սակավ հնարավորություններով երիտասարդներ

Պատերազմի և զինված հակամարտությունների ժամանակ ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդները դառնում են ավելի խոցելի, նրանց իրավունքների հասանելիությունն էլ ավելի սահմանափակ է, և նույնիսկ այն երիտասարդները, ովքեր լիարժեք օգտվել են իրենց իրավունքներից, կարող են բախվել տարբեր խոչընդոտների պատերազմի կամ զինված բախումների ժամանակ:

2014 և 2023 թվականների լայնամասշտաբ պատերազմների սկսվելուց հետո Ուկրաինայում ի հայտ են եկել ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդական համայնքներ, ինչպիսիք են՝ տեղահանված երիտասարդները, երիտասարդ կին և տղամարդ վետերանները, հաշմանդամություն ունեցող երիտասարդների անընդհատ աճող թիվը զինվորականների և քաղաքացիական անձանց շրջանում, արդյունքում մեծ թվով երիտասարդներ, որոնց կարիքները պետք է հոգալ և երիտասարդների այլ համայնքներ (Էթնիկ փոքրամասնություններ, ԼԳԲՏԲ+ երիտասարդներ), որոնց ընդգրկումը դառնում է ոչ արդիական մի շարք խնդիրների պատճառով:

Ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդներ. մշակութային, աշխարհագրական կամ սոցիալ-տնտեսական ծագումից ելնելով ավելի քիչ արտոնություն ունեցող երիտասարդներ կամ հաշմանդամություն ունեցող երիտասարդներ:

Պատճառները կարող են լինել տարբեր.

Սոցիալական խոչընդոտներ. սեռի, տարիքի, էթնիկական պատկանելության, կրոնի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության և այլնի պատճառով խտրականության ենթարկված մարդիկ, սահմանափակ սոցիալական հմտություններ կամ հակասոցիալական կամ ռիսկային սեռական վարք ունեցող մարդիկ, անորոշ իրավիճակում գտնվող մարդիկ (նախկին) իրավախախտներ, (նախկին) թմրամիջոցներ կամ ալկոհոլ օգտագործողներ, երիտասարդ և/կամ միայնակ ծնողներ, որբեր, ոչ լիարժեք ընտանիքների երիտասարդներ և այլն:

Մշակութային տարբերություններ. ներգաղթյալներ կամ փախստականներ կամ ներգաղթյալ կամ փախստական ընտանիքների ժառանգներ, ազգային կամ էթնիկ փոքրամասնության պատկանող մարդիկ, լեզվական հարմարվողականության և մշակութային ներառման խնդիրներ ունեցող մարդիկ և այլն:

Տնտեսական խոչընդոտներ. ցածր կենսամակարդակ ունեցող մարդիկ, ցածր եկամուտներ, սոցիալական ապահովության համակարգից կախվածություն, երկարաժամկետ գործազրկության կամ աղքատության մեջ գտնվող մարդիկ, պարտքերի տակ կամ ֆինանսական խնդիրներ ունեցող մարդիկ և այլն:

Կրթական դժվարություններ. սովորելու դժվարություններ ունեցող մարդիկ, դպրոցը վաղաժամ թողած, ցածր որակավորում ունեցող անձինք, դպրոցում վատ արդյունքներ ունեցող մարդիկ և այլն:

Հաշմանդամություն. մտավոր (ինտելեկտուալ, ճանաչողական, ուսումնական), ֆիզիկական, զգայական կամ այլ հաշմանդամություն ունեցող անձինք:

Առողջական խնդիրներ. քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող մարդիկ, ծանր հիվանդություններ կամ հոգեբուժական խնդիրներ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երիտասարդներ և այլն:

Աշխարհագրական խոչընդոտներ. մարդիկ հեռավոր կամ գյուղական վայրերից, փոքր կղզիներում կամ ծայրամասային շրջաններում ապրող մարդիկ, քաղաքային խնդրահարույց գոտիներում բնակվող մարդիկ, քիչ սպասարկվող տարածքների մարդիկ (սահմանափակ հասարակական տրանսպորտ, վատ հարմարություններ, լքված գյուղեր...) և այլն:

1.3. Առանց խոչընդոտների միջավայր՝ որպես երիտասարդների ընդգրկման գործիք, Ուկրաինայում առանց խոչընդոտների շրջակա միջավայրի ազգային ռազմավարություն մինչև 2030թ.

Առանց խոչընդոտների միջավայրի պետական քաղաքականությունն նշանակում է մշակել այնպիսի մոտեցում, որը մեր երկրում յուրաքանչյուր մարդու հնարավորությունն կտա ազատ մուտք ունենալ կյանքի բոլոր ոլորտներ՝ կրթություն, կարիերայի աճ, անխոչընդոտ ճանապարհորդություն և այլն: 2021 թվականի ապրիլին Ուկրաինան հավանություն է տվել «Առանց խոչընդոտների շրջակա միջավայրի» ազգային ռազմավարությանը, որը մշակվել է որպես Ուկրաինայի առաջին տիկին Օլենա Չելենսկայի «Առանց խոչընդոտների» նախաձեռնության մաս և համաձայն Ուկրաինայի նախագահի հրամանագրի: Ռազմավարությունը երկարաժամկետ գործողությունների ծրագիր է, որը կիրականացվի մինչև 2030 թվականը, և դրա նպատակն է ստեղծել 6 հիմնական ուղղություններով առանց խոչընդոտների հասարակություն:

Առաջին ասպեկտը վերաբերում է ֆիզիկական խոչընդոտներին, որոնք կհաղթահարվեն նոր, ներառական ճարտարապետական չափանիշների օգնությամբ: Սա նշանակում է, որ մեզ շրջապատող ամեն ինչ (շենքերը, մայթերը, փողոցները և հասարակական տրանսպորտը) հեշտությամբ հասանելի կդառնա շարժունակություն ունեցող մարդկանց համար (սա ներառում է հաշմանդամություն ունեցող մարդիկ, տարեցներ, երեխաներ և փոքր երեխաների խնամակալներ և այլն): Երկրորդ ասպեկտը վերաբերում է քաղաքացիական հասարակության հավասար հնարավորություններին, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան մասնակցել քաղաքական և հասարակական կյանքին: Այս մոտեցումը նշանակում է, որ յուրաքանչյուր մարդ ազատ է զգում արտահայտելու իր մտքերը և չի վախենում, որ իրեն դատեն որոշակի տարբերությունների պատճառով: Ընդհակառակը, մեր տարբերությունները կօգնեն ստեղծել ավելի բազմազան և կենսունակ հասարակություն:

Երրորդ կողմը տնտեսական է. մեր նպատակն է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան հավասար մուտք գործել աշխատաշուկա և պաշտպանել մարդկանց աշխատավայրում ցանկացած տեսակի խտրականությունից: Այս ուղղությամբ մեր աշխատանքը կներառի նաև տարբեր ծագում ունեցող մարդկանց համար ֆինանսական օգնություն և այլ աջակցություն ստանալու հավելյալ հնարավորությունների ստեղծում, որը կօգնի նրանց սկսել իրենց սեփական բիզնեսը:

Չորրորդ ասպեկտը վերաբերում է կրթությանը. թեև մենք այն կարող էինք նշել որպես մեր աշխատանքի առաջին ուղղություն: Ի վերջո, ամեն ինչ սկսվում է մեր կրթությունից: Եվ բոլորը պետք է ունենան կրթություն ստանալու հավասար հնարավորություն՝ իրենց ողջ կյանքի ընթացքում, ինչպես նաև մանկության տարիներին: Եվ սա այն է, ինչ ապահովելու է մեր պետությունը:

Հինգերորդ ասպեկտը վերաբերում է թվային աշխարհին. մի բան, առանց որի մենք չենք կարող պատկերացնել մեր կյանքը XXI դարում: Առանց խոչընդոտների թվային տարածքը նշանակում է, որ բոլոր սոցիալական խմբերը հասանելի կլինեն բոլոր տեսակի առցանց ծառայություններին և ռեսուրսներին, ինչպես նաև հենց ինտերնետին:

Վեցերորդ ասպեկտը վերաբերում է տեղեկատվությանը. սա նշանակում է պայմանների ստեղծում, որոնց դեպքում մարդիկ, անկախ իրենց շարժումակությունից, ֆունկցիոնալ հաշմանդամությունից կամ հաղորդակցման հնարավորություններից, կկարողանան օգտվել տեղեկատվությունից և օգտագործել բոլոր անհրաժեշտ տեխնոլոգիաները:

Խոչընդոտներից զերծ հասարակության ստեղծումը նաև պահանջում է աշխատել տարբեր սոցիալական խմբերի վերաբերյալ թյուր պատկերացումների և կարծրատիպերի կոտրման ու դրությամբ:

2. Առաջարկություններ, թե ինչպես խթանել սոցիալական ներառումը և ստեղծել առանց խոչընդոտների միջավայր պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատելիս:

1. Ընդհանուր առաջարկություններ՝ երիտասարդական աշխատանքում առանց խոչընդոտների միջավայր ստեղծելու համար.

Առանց խոչընդոտների միջավայրի ստեղծումը պատերազմից տուժած երիտասարդների սոցիալական ներառման խթանման հիմնական գործիքներից մեկն է, հետևաբար կարևոր է, որ երիտասարդական աշխատողներն իրենց աշխատանքում հաշվի առնեն մատչելիության տարբեր ոլորտները և պայմաններ ստեղծեն երիտասարդների իրավունքների և իրավունքների հասանելիության համար, ներառյալ՝ երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները:

Ֆիզիկական հասանելիություն.

Առաջին հերթին ֆիզիկական մատչելիությունը ներառում է ֆիզիկական միջավայրի բոլոր օբյեկտների հասանելիությունը սոցիալական բոլոր խմբերի համար՝ անկախ առողջությունից, հաշմանդամությունից, գույքային կարգավիճակից, սեռից, բնակության վայրից և այլ բնութագրերից: Երիտասարդական աշխատանքի համատեքստում մատչելիության այս ուղղությունը ներառում է երիտասարդների ֆիզիկական հասանելիությունը երիտասարդական աշխատանքին, ոչ ֆորմալ կրթությանը և խորհրդատվական ծառայություններին, նախագծերին և միջոցառումներին, որոնք իրականացվում են երիտասարդների հետ և նրանց համար: Սա նշանակում է ոչ միայն հարմարեցնել ֆիզիկական տարածքները տարբեր երիտասարդների կարիքներին, այլ նաև երիտասարդական աշխատանքը հասանելի դարձնել այն երիտասարդներին, ովքեր այս կամ այն պատճառով չեն այցելում կամ չեն կարող այցելել երիտասարդական կենտրոններ կամ տարածքներ: Ֆիզիկական մատչելիության առումով խորհուրդ է տրվում հաշվի առնել հետևյալ ասպեկտները.

- Երիտասարդական ենթակառուցվածքների հասանելի լինելը, ներառյալ՝ երիտասարդական կենտրոնները, երիտասարդական տարածքները կամ երիտասարդական ակումբները, որտեղ սովորաբար իրականացվում է երիտասարդական աշխատանք և մատչելի տրանսպորտային հանգույց, որը հնարավորություն է տալիս հեշտությամբ հասնել երիտասարդական ենթակառուցվածքների վայրեր:

- Շենքերի և ֆիզիկական առարկաների հարմարեցում տարբեր երիտասարդների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների կարիքներին (թեքահարթակների, վերելակների, զուգարանների և այլնի առկայություն):
- Երիտասարդական աշխատանքի տարբեր տեսակների կիրառումը (փողոցային երիտասարդական աշխատանք, շարժական, արտագնա և առանձին երիտասարդական աշխատանք, առցանց երիտասարդական աշխատանք) այն երիտասարդների հետ, ովքեր տարբեր խոչընդոտների պատճառով հնարավորություն չունեն այցելելու երիտասարդական կենտրոններ, երիտասարդական տարածքներ կամ երիտասարդական ակումբներ, օրինակ՝ անբարենպաստ վայրերից կամ հեռավոր շրջաններից, գյուղական վայրերից, տարբեր մշակութային ծագում ունեցող երիտասարդներից և այլն:

Տեղեկատվական հասանելիություն

Տեղեկատվական հասանելիություն նշանակում է, որ մարդուն, անկախ իր գտնվելու վայրից կամ հաղորդակցման ունակություններից, հասանելի են տեղեկատվության տարբեր ձևաչափերը և տեխնոլոգիաները, այդ թվում՝ Բրայլյան, աուդիո նկարագրություն, ժեստերի լեզվով թարգմանություն, ենթագրեր, Էկրանին ընթեռնելի ձևաչափեր, այլընտրանքային հաղորդակցության միջոցներ, լեզու (հատկապես հաշվի առնելով փախստական երիտասարդները, լեզվական փոքրամասնությունների խմբերը): Երիտասարդական աշխատանքի համատեքստում մատչելիության այս ուղղությունը նշանակում է տարբեր երիտասարդների, այդ թվում՝ ավելի քիչ հնարավորություններ ունեցող և պատերազմից տուժած երիտասարդների հասանելիություն երիտասարդական աշխատանքին և ոչ ֆորմալ կրթությանը վերաբերող բոլոր տեսակի տեղեկատվությանը, ինչպես նաև տարբեր խորհրդատվություններ և սոցիալական ծառայություններ:

Համայնքի բոլոր երիտասարդների համար տեղեկատվական հասանելիությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել հետևյալ ասպեկտները.

- Տարբեր ձևաչափերով տեղեկատվության առկայություն, ներառյալ տեսողական նյութերում համապատասխան տառատեսակներ և գույներ, երիտասարդական ենթակառուցվածքի օբյեկտներում և շենքերում Բրայլի տառատեսակը և այլն:

- Երիտասարդության համար հարմար լեզվի և բովանդակության (ներառյալ տեսողական և տեսանյութերի) օգտագործումը, որը կարող է հեշտ հասկանալի լինել տարբեր երիտասարդների համար:

- Տարբեր հաղորդակցման ուղիների օգտագործումը երիտասարդության հնարավորությունների և ծառայությունների մասին տեղեկատվության տարածման համար, որոնք երիտասարդներն օգտագործում են և հասանելի են նրանց, ներառյալ ոչ միայն ինտերնետային էջերը և սոցիալական ցանցերը, այլ նաև տեղեկատվության տարածման օֆլայն միջոցներն ու ուղիները, այդ թվում՝ փողոցային, շարժական, արտագնա երիտասարդական աշխատանք:

Երիտասարդների համար երիտասարդական աշխատողներից մասնագիտացված ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալու հնարավորություն՝ հոգեբանական, սոցիալական և այլն՝ անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ մասնագետներին ուղղորդելու հնարավորությամբ:

Թվային հասանելիություն

Թվային հասանելիությունը նշանակում է, որ բոլոր սոցիալական խմբերն ունեն մուտք դեպի գերարագ ինտերնետ, հանրային ծառայություններ և հանրային թվային տեղեկատվություն: Երիտասարդական աշխատանքի համատեքստում այս հասանելիության ոլորտն ապահովելու համար պետք է հաշվի առնել հետևյալ ասպեկտները.

- Երիտասարդների համար ինտերնետից և համապատասխան տեխնիկական սարքավորումներից (համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ և այլն) օգտագործելու հնարավորությունը երիտասարդական կենտրոններում և երիտասարդական տարածքներում՝ հաղորդակցության, հանգստի և կրթության նպատակով:

- Երիտասարդների համար ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության առկայություն տարբեր վեբ ռեսուրսներում՝ հաշվի առնելով նրանց հնարավորություններն ու կարիքները:

- Թվային կրթության հասանելիության ապահովում տարբեր մարդկանց համար երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության միջոցով թվային կարողությունները զարգացնելու հնարավորություններ ստեղծելով:

Սոցիալական և քաղաքացիական հասանելիություն

Սոցիալական և քաղաքացիական հասանելիությունը նշանակում է հավասար հնարավորություններ բոլոր մարդկանց, նրանց ասոցիացիաների և որոշակի սոցիալական խմբերի մասնակցության համար համայնքների և պետության կյանքում, հավասար հասանելիություն հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին, ֆիզիկական զարգացման համար բարենպաստ միջավայր և ինքնաիրացում, ինչպես նաև ներառական միջավայր՝ որպես սոցիալական կյանքի և հասարակական գործունեության բոլոր ձևերին մասնակցելու նախապայման: Երիտասարդական աշխատանքի համատեքստում սա նշանակում է հավասար հասանելիություն բոլոր երիտասարդների համար.

- համայնքային կյանքի տարբեր ոլորտներին մասնակցելու հնարավորություններ,
- քաղաքացիական մասնակցության և երիտասարդների վրա ազդող որոշումների կայացման գործընթացների վրա ազդեցության հնարավորություններ,
- մասնակցություն համայնքի զարգացմանն ուղղված տարբեր նախագծերին և միջոցառումներին,
- համայնքի զարգացման գործում սեփական ներդրումն ունենալու հնարավորություններ,
- Կրթության և կրթությունն հանուն ժողովրդավարական քաղաքացիության իրավունք: Երիտասարդական աշխատանքում հասանելիության այս ոլորտն ապահովելու համար խորհուրդ ենք տալիս հաշվի առնել հետևյալ ասպեկտները.
 - Երիտասարդների կարիքների մշտական մոնիտորինգ և դրանց արձագանքում,
 - տարբեր երիտասարդների կարիքների հիման վրա գործողությունների պլանավորում,
 - Երիտասարդների մասնակցության համար ապահով տարածքի ստեղծում, որը ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հուզական անվտանգություն, որտեղ երիտասարդները կարող են իրենց ազատ զգալ և որտեղ նրանց ձայնը լսելի կլինի և որտեղ նրանց աջակցություն կտրվի,
 - գործունեության մեջ մասնակիցը մասնակցին մոտեցման կիրառում ինչպես երիտասարդները միմյանց հետ շփվելու, այնպես էլ երիտասարդական աշխատողների հետ շփվելու ընթացքում,
 - Երիտասարդների ներգրավումը տարբեր մակարդակներում երիտասարդական աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում՝ ըստ նրանց կարողությունների և պատրաստակամության, օրինակ՝ երիտասարդական կենտրոնների և տարածքների կազմակերպման, համատեղ գործունեության պլանավորման և այլն,
 - հաշվի առնելով երիտասարդների՝ առերես և առցանց երիտասարդական աշխատանքին մասնակցելու տարբեր հնարավորությունները (օրինակ՝ ինտերնետ հասանելիություն, գաջեթների առկայությունը կամ բացակայությունը, թվային կարողությունների մակարդակը, ֆիզիկական հնարավորությունները և այլն),
 - նպաստել երիտասարդների տարբեր խմբերի ներկայացվածությանը երիտասարդական խորհուրդներում, խորհրդարաններում և այլ խորհրդատվական մարմիններում՝ պաշտպանելու նրանց կարիքներն ու մտահոգությունները տեղական, տարածաշրջանային, ազգային և եվրոպական մակարդակներում,
 - կամավոր մասնակցության սկզբունքի դիտարկում,
 - կրթության մատչելիություն:

Մատչելիության այս ոլորտը նշանակում է կրթության հավասար հնարավորություններ և ազատ հասանելիություն, ներառյալ ցմահ կրթությունը, ինչպես նաև այլ մասնագիտության ձեռքբերում, որակավորումների բարձրացում և լրացուցիչ իրավասությունների ձեռքբերում: Պատերազմից տուժած երիտասարդների համար դա նշանակում է կրթության բոլոր տեսակներն ու ձևերն օգտագործելու հնարավորություն՝ բավարարելով նրանց հատուկ կրթական կարիքները և ստեղծելով ներառական կրթական միջավայր՝ նվազագույնի հասցնելով հնարավոր ռիսկերն ու մարտահրավերները: Երիտասարդական աշխատանքի դերն այս գործընթացում չափազանց կարևոր է, քանի որ այն ապահովում է երիտասարդների մուտքը հիմնականում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության, ինչպես նաև համագործակցում է ֆորմալ կրթության ոլորտի հետ:

Երիտասարդական աշխատանքում կրթական հասանելիությունն ապահովելու համար խորհուրդ ենք տալիս հաշվի առնել հետևյալ ասպեկտները.

- Կրթական գործունեության հիմքում տարբեր երիտասարդների կարիքներն ու մտահոգությունները,
- Երիտասարդներին հասանելի ոչ ֆորմալ կրթության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում՝ ըստ նրանց հնարավորությունների՝ հաշվի առնելով առերես և առցանց ձևաչափերը,
- Տարբեր երիտասարդների իրազեկում ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների մասին օգտագործելով տարբեր տեղեկատվական ուղիները և երիտասարդական աշխատանքի տարբեր տեսակները, ներառյալ՝ իրազեկման, առանձին և շարժական երիտասարդական աշխատանքը,
- Հաշվի առնել երիտասարդների ֆիզիկական տարբեր հնարավորություններն և առողջական պայմանները կրթական գործունեությունն պլանավորելիս,
- Օգտագործել տրավմայի վերաբերյալ տեղեկացված երիտասարդական աշխատանքի սկզբունքներն ու մոտեցումները՝ ներառյալ «Մի վնասիր» սկզբունքը՝ հաշվի առնելով երիտասարդների համատեքստը, նախապատմությունը և փորձը.
- Ուսումնական գործունեության ընթացքում հանդուրժողականության, տարբերությունների հարգման և բազմազանության գնահատման մթնոլորտի ձևավորում:


Տնտեսական հասանելիություն

Ընդհանուր իմաստով դա նշանակում է, որ բոլոր մարդիկ՝ անկախ տարիքից, սեռից, ամուսնական կարգավիճակից կամ առողջական վիճակից, ունեն աշխատանքի պայմաններ և հնարավորություններ՝ ձեռք բերելու ֆինանսական և այլ ռեսուրսներ ձեռնարկատիրության կամ ինքնազբաղվածության համար: Պատերազմից տուժած երիտասարդների համար դա արտահայտվում է երիտասարդների զբաղվածության պայմանների ապահովմամբ, ձեռնարկատիրական գործունեության և ինքնազբաղվածության հասանելիության և աշխատաշուկայում առավել խոցելի խմբերի զբաղվածության մակարդակի բարձրացմամբ: Թեև երիտասարդական աշխատանքը հաճախ ուղղակիորեն չի ապահովում երիտասարդներին աշխատանքով, այն կարող է Էապես նպաստել դրան՝ շնորհիվ այն կարողությունների ողջ շրջանակի, որը ձևավորում և զարգացնում է երիտասարդների մոտ, և այն փորձը, որը նրանք ձեռք են բերում՝ մասնակցելով երիտասարդական աշխատողների կողմից առաջարկվող տարբեր ծրագրերին:

Տնտեսական մատչելիության ապահովման գործում երիտասարդական աշխատանքի դերն ուժեղացնելու համար խորհուրդ ենք տալիս հաշվի առնել հետևյալ ասպեկտները.


Տարբեր երիտասարդների կարիքներին և մտահոգություններին համապատասխան կարիերայի ուղղորդման միջոցառումների և նախագծերի անցկացում, Գործատուների և երիտասարդների միջև միջնորդություն, որը կարող է լինել երիտասարդական կենտրոնների/տարածքների կամ անհատ երիտասարդական աշխատողների գործունեության ուղղություններից մեկը, Համագործակցություն բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտական տեխնիկական կրթության և զբաղվածության կենտրոնների հետ, Երիտասարդների փափուկ հմտությունների և տարբեր կարողությունների զարգացում՝ ըստ նրանց կարիքների և մտահոգությունների՝ բարձրացնելու նրանց մրցունակությունը աշխատաշուկայում:

Թեև մենք դիտարկել ենք մատչելիության ոլորտները միմյանցից առանձին, այնուամենայնիվ հարկ է նշել, որ դրանք բոլորն իրար փոխկապակցված ու փոխլրացնող են, և հնարավոր է հասնել երիտասարդների իրական և համապարփակ ներառմանը միայն մատչելիության բոլոր ոլորտների ապահովման դեպքում:



Նկար. արգելքներից զերծ միջավայրեր

Picture. Areas of barrier-free environment



2.2. Առաջարկներ պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատող երիտասարդական աշխատողների համար

Երիտասարդական աշխատանքը մեծ դեր ունի պատերազմից տուժած երիտասարդների վերականգնման, հոգեբանական ճկունության և վերամիավորման հարցում: Կարևոր է նշել, որ տրավմայից տուժածների զգալի մեծամասնությունը (75-80%) կարող է հասնել ինքնավերականգնման, որը ներառում է՝ ֆունկցիոնալության աստիճանական վերականգնում և հարմարվողական կարողությունների բարձրացում:

Երիտասարդներն ավելի դիմակայուն են դառնում երիտասարդական աշխատանքում ներգրավվելու շնորհիվ: Այս հմտությունը զարգացնելու համար կարևոր են երիտասարդական աշխատողներին աջակցող հարաբերությունները: Անվտանգ և հյուրընկալ տարածքը, որը ապահովում է երիտասարդական աշխատանքը, հնարավորություն է տալիս երիտասարդներին դուրս գալ իրենց հարմարավետության գոտուց, փորձել նոր հնարավորություններ, սխալներ թույլ տալ և սովորել դրանցից՝ առանց քննադատվելու վախի: Երիտասարդական աշխատանքի միջոցով երիտասարդներին խրախուսվում է մշակել ծրագրեր և նպատակներ, որոնք կօգնեն նրանց կառավարել կամ հաղթահարել իրենց առջև ծառայած մարտահրավերները:

Տրավմատիկ իրադարձությունը ժամանակավորապես բաժանում է մարդու կյանքը «նախքան» և «հետո»-ի, ինչն առաջացնում է ընդհատված կյանքի զգացողություն: Վերամիավորման ավելի ուժեղ զգացումը պահպանվում է սովորական ապրելակերպի վերսկսմամբ, և երիտասարդական աշխատանքը կարող է մեծապես աջակցել ճանաչողական, ֆունկցիոնալ, սոցիալական, էմոցիոնալ և հոգեֆիզիոլոգիական վերամիավորման այս գործընթացին՝ առողջ միջոցառումների, ոչ ֆորմալ կրթական գործունեության տրամադրման միջոցով, ներգրավվելով կամավորական ծրագրերում և այլն:

Պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ աշխատելիս երիտասարդական աշխատողների համար շատ կարևոր է հաշվի առնել համատեքստը: Նույնիսկ եթե երիտասարդական աշխատողները ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդների հետ աշխատելու մեծ փորձ ունեն, նրանք պետք է ուշադրություն դարձնեն և օգտագործեն տրավմայի մասին տեղեկացված մոտեցում:

Երիտասարդական աշխատանքում տրավմայի վերաբերյալ իրազեկ մոտեցումները հիմնված են տրավմայի ճանաչման և կանխարգելման միջոցների վրա, որոնք չորսն են՝ գիտակցել տրավմայի խորությունը, հասկանալ վերականգնման հնարավոր ուղիները և դրական արդյունքների հասնելու հնարավոր խոչընդոտները՝ գիտակցելով, թե ինչպես է տրավման ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում անհատների, ընտանիքների, համայնքների, ծառայությունների, համակարգերի և աշխատակիցների վրա, արձագանքել՝ ներդնելով գիտելիքները գործնականում:

Ահա այն հիմնական կետերը տրավմայի մասին տեղեկացված մոտեցման վերաբերյալ, որ երիտասարդական աշխատողը պետք է ունենա.

- Զասկանալ կրթական նպատակների սահմանման և ինքնասնդրադարձի մեթոդները
- Գիտելիքներ տրավմայի մասին տեղեկացված երիտասարդական աշխատանքի սկզբունքների մասին
- Զասկանալ, թե ինչ է սթրեսը, տրավմատիկ դեպքը և տրավմատիկ սթրեսը
- Գիտելիքներ տրավմա ապրած անձանց հետ փոխազդեցության սալուտոռոգեն (ուժերի վրա հիմնված) մոտեցման մասին
- Զասկանալ սթրեսի արձագանքները և դրանց ծագումը
- Ճանաչել տրավմայի դրսևորումները ժամանակի ընթացքում մարդու վարքագծում
- Գիտելիքներ տրավմա ապրած անձանց հետ հաղորդակցության լեզվաբանական և նորմալացման սկզբունքների մասին
- Զասկանալ ինքնաշխատանքի և ինքնավերականգման տեխնիկաները սթրեսային իրավիճակներում
- Գիտելիքներ հոգեբանական առաջին օգնության և դրա տրամադրման չափանիշների մասին
- Գիտելիքներ հուզական այրման ու հոգնածության և դրանց կանխարգելման ուղիների մասին
- Իրազեկ լինել ապրումակցման և "պատկերացնելու" երկրորդային տրավմատիկ սթրեսի գործոնների մասին
- Գիտելիքներ փոխարկման ռազմավարությունների և ռեսուրսային այլքների, դրանց կիրառման մասին ճզնաժամային իրավիճակներում
- Զասկանալ "չվնասել" սկզբունքը երիտասարդների հետ աշխատելիս, ովքեր տրավմա են ապրել
- Գիտելիքներ երիտասարդական աշխատողի և հոգեբանի տարբեր աշխատանքային գործառույթների մասին
- Տրամադրել կանոնավոր աջակցություն՝ առանց կախվածություն ստեղծելու
- Ձգտել դառնալ "ավելորդ" երիտասարդների անկախությունը խթանելու միջոցով
- Առաջարկել տարբեր հնարավորություններ՝ երիտասարդների զորացումը և մասնակցությունը խթանելու համար
- Զաշվի առնել մատչելի, երիտասարդներին հարմարեցված լեզուն (օրինակ՝ Կոմպասի բառարանը օգտագործելով):

Արդյունավետ երիտասարդական աշխատանքի բանային ունենալն է տրավմայի մասին տեղեկացված գործելակերպերի և զորացման, ոչ թե կախվածություն ստեղծելու վրա ուղղված մոտեցման համապարփակ իմացություն:

2.3. Ինչպե՞ս ապահովել անապահով տարածք և պահպանել Մի Վնասիր սկզբունքը պատերազմից տուժած երիտասարդների հետ երիտասարդական աշխատանք իրականացնելիս

- **Արվեստի կրթություն.** դպրոցական ուսումնական ծրագիր է, որն ակտիվորեն ներառում է տեսողական, գրական, կատարողական և շարժողական արվեստի ձևերը դասարանային միջավայրում:

Ցանկը երկար է, և յուրաքանչյուր երիտասարդական աշխատող կարող է ընտրել, թե արվեստի որ ձևն է առավել համապատասխան իրենց միջավայրի համար: Որոշ արվեստի ձևեր, ոչ համընդհանուր կերպով, ունեն առանց բառերի ուղերձներ փոխանցելու յուրահատուկ ունակություն, ինչը արժեքավոր է խաղաղաշինության ոլորտում: Մինչ անհատները փոխանակում են բանավոր ուղերձներ խոսակցական լեզվի միջոցով, նրանք հաղորդակցվում են ոչ խոսքային ձևով՝ մարմնի լեզվի, աչքերի կոնտակտի, ձայնի տոնայնության և դիմախաղի միջոցով: Կարևոր է դառնում ուշադրություն դարձնել դիմախաղի, մարմնի դիրքերի և աչքերի շարժումների սիմվոլիկ ուղիներին, քանի որ այս ուղիները կրում են կարևոր տեղեկատվություն հույզերի, էներգիայի և մտքերի մասին: Արվեստի ձևերը, ինչպիսիք են երաժշտությունը, պարը, թատրոնը և տեսողական արվեստները, օգտագործում են սիմվոլիկ հղումներ՝ իրական աշխարհի մասին ոչ խոսքային ձևով հաղորդակցվելու համար՝ գերազանցելով բառերի ուղղակի տրամաբանությունը: Արվեստն ունի հույզեր, գաղափարներ կամ զգացմունքներ արտահայտելու կարողություն, որոնք միայն բառերը չեն կարող ընդգրկել:

Բարձր համատեքստային համայնքներում աշխատող երիտասարդական աշխատողները կարող են գտնել, որ մասնակիցներն ավելի արձագանքող են անուղղակի, ոչ ֆորմալ, հարաբերական, դեմքը պահպանող և կոլեկտիվիստական հաղորդակցությանը: Ի հակադրություն դրա, ցածր համատեքստային համայնքներում աշխատող մասնագետները կարող են գտնել, որ մասնակիցներն ավելի արձագանքող են ուղղակի, ֆորմալ, ռացիոնալ, բացահայտ և անհատապաշտական հաղորդակցությանը:

Ռիսկերի ցանկ արվեստն օգտագործելու պարագայում

Երիտասարդական աշխատողները պետք է շատ զգույշ լինեն այս մեթոդները կիրառելիս: Նրանք կարող են փոքր հարցում անցկացնել՝ ստուգելու իրենց թիրախային խմբերի կարիքները, վախերը և նախապատմությունները՝ ծանոթանալու նրանց անցած փորձառություններին: Հիմնական նպատակն այստեղ նրանց տրավման չխթանելն է: Երիտասարդական աշխատողները պետք է համոզվեն, որ չեն օգտագործում բռնության և տրավմայի վրա հիմնված որևէ իրական պատմություն և որևէ գործիք, որը կարող է խորհրդանշել բռնի գործողություններ:

Օգտագործել արվեստը որպես վերականգնման միջոց երիտասարդական աշխատողի կողմից մասնագիտացված արվեստագետի փոխարեն կարող է որոշակի հոգեբանական ռիսկերի առաջ կանգնեցնել թեև ազդեցությունը կարող է տարբեր լինել՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են գործողության բնույթը, ներգրավված մասնակիցները և երիտասարդական աշխատողի հմտություններն ու վերապատրաստումը: Ահա մի քանի պոտենցիալ հոգեբանական ռիսկեր, որոնք պետք է հաշվի առնել.

Փորձագիտության պակաս. ոչ մասնագետը կարող է չունենալ մասնագիտացված գիտելիքներ և հմտություններ արվեստի թերապիայի կամ կոնկրետ արվեստի տեխնիկաների մեջ: Սա կարող է հանգեցնել գործողությունների, որոնք հարմար չեն մասնակիցների հոգեբանական կարիքները բավարարելու համար:

Արվեստի գործի սխալ մեկնաբանություն. առանց պատշաճ վերապատրաստման երիտասարդական աշխատողը կարող է դժվարանալ ճշգրիտ մեկնաբանել մասնակիցների ստեղծած արվեստի գործերը: Սխալ մեկնաբանությունները կարող են հանգեցնել թյուրըմբռումների կամ անհամապատասխան միջամտությունների՝ պոտենցիալ կերպով առաջացնելով ցավ:

Անբավարար հուզական աջակցություն. արվեստի գործողությունները կարող են առաջ բերել խորը հույզեր և անձնական խնդիրներ: Եթե երիտասարդական աշխատողը բավարար չափով վերապատրաստված չէ հուզական աջակցություն տրամադրելու հարցում, մասնակիցները կարող են չստանալ այն օգնությունը, որի կարիքը նրանք ունեն իրենց զգացմունքները մշակելու և կառավարելու հարցում:

Ոչ միտումնավոր խթանում. որոշ գործողություններ կարող են ոչ միտումնավոր կերպով խթանել բացասական հույզեր կամ տրավմատիկ հիշողություններ: Առանց պատշաճ վերապատրաստման երիտասարդական աշխատողը կարող է չճանաչել պոտենցիալ խթանիչները կամ չիմանալ, թե ինչպես պատշաճ կերպով վարվել դրանց հետ:

Գաղտնիության մտահոգություններ. արվեստի գործողությունները հաճախ ներառում են ինքնարտահայտում, և մասնակիցները կարող են բացահայտել անձնական և զգայուն տեղեկատվություն իրենց արվեստի գործերի միջոցով: Առանց գաղտնիության և անձնական կյանքի գաղտնիության հստակ ըմբռնման, կարող են լինել անհամապատասխան բացահայտման կամ վստահության խախտման ռիսկեր:

Միջամտությունների սահմանափակ շրջանակ. արվեստի թերապիայի մեջ վերապատրաստված մասնագիտական արվեստագետները կարող են տրամադրել թերապևտիկ միջամտությունների ավելի լայն շրջանակ: Երիտասարդական աշխատողը կարող է ունենալ սահմանափակ գործիքներ և տեխնիկաներ՝ արվեստի գործողությունների ընթացքում առաջացող տարբեր հոգեբանական կարիքները բավարարելու համար:

Կառուցվածքային շրջանակի բացակայություն. մասնագիտական արվեստագետները հաճախ աշխատում են կառուցվածքային թերապևտիկ շրջանակում: Առանց այս կառուցվածքի, երիտասարդական աշխատողի կողմից ոլորացված արվեստի գործողությունները կարող են չունենալ հստակ թերապևտիկ ուշադրություն՝ պոտենցիալ կերպով նվազեցնելով դրանց արդյունավետությունը:

Կարևոր է, որ երիտասարդական աշխատողները տեղյակ լինեն այս պոտենցիալ ռիսկերին և, եթե նրանք կիրառում են արվեստը որպես վերականգնման միջոց, փնտրեն ուղղորդում, վերապատրաստում կամ համագործակցություն հոգեկան առողջության և արվեստի թերապիայի ոլորտների մասնագետների հետ: Բացի այդ, պետք է սահմանվեն հստակ ուղեցույցներ և արձանագրություններ՝ ապահովելու մասնակիցների բարեկեցությունն ու անվտանգությունը արվեստի վրա հիմնված ցանկացած միջամտությունների ժամանակ:

Կցանկանայի կիսվել մարդկանց հետ իմ աշխատելու փորձով: 2023 թվականի փետրվարի 6-ին 7.8 մագնիտուդով երկրաշարժ տեղի ունեցավ Թուրքիայի հարավային և կենտրոնական, ինչպես նաև Սիրիայի հյուսիսային և արևմտյան հատվածներում: 2023 թվականի օգոստոսին ես պետք է Իսպարտայի Սուլեյման Դեմիրել համալսարանում հատուկ թատերական վերապատրաստում անցկացնեի: Ընթացիկ գործընթացում մեր կերպարի ստեղծման գործընթացը օրգանական կերպով վերածվեց պատմություններ պատմելու: Սկսեցի օգտագործել մեդիտացիայի տեխնիկաներ, որոնք օգնեցին մասնակիցներին ստեղծել իրենց կերպարները իրենց մտքում և փոխակերպել դրանք իրենց մարմիններում: Հաջորդ քայլում սկսեցի մեկ առ մեկ հարցեր տալ մասնակիցներին և հաշվի առնել նրանց պատասխանները՝ թույլ տալով նրանց ընտրել մեկ կոնկրետ նախադասություն և ստեղծել երգչախումբ: Ամբողջ տարածքը վերածվեց մեկ այլ վայրի, որտեղ սկսեցինք լսել մեր կերպարներին և չտեսնել ինքներս մեզ: Հաջորդ մասնակցին, ում հարցրի, թե որտեղ է նա հիմա և ինչ է անում, պատասխանեց, որ իրենց տանն է և փորձում է գտնել փոքր սեղանը, որը հայրը պատրաստել էր իր համար, երբ նա երեխա էր: Մենք սկսեցինք մեր մեդիտացիան, ապա իմ հարցին հետևելով՝ ես առաջնորդեցի նրան փնտրել սեղանը իր երևակայական աշխարհում: Նա գտավ այն, բայց այն շատ հեռու էր իրենից: Մենք սկսեցինք երկխոսություն նրա և սեղանի միջև, որտեղ սեղանի ձայնը ես էի: Եվ ընթացիկ գործընթացում հարցրեցի նրան, թե ինչ է ուզում ասել սեղանին (ինձ): Նա պատմեց որոշ լավ հիշողություններ, և ապա խնդրեցի նրան, որ ժամանակն է հրաժեշտ տալ սեղանին: Նա արեց այնպես, ինչպես ես առաջնորդեցի նրան՝ հրաժեշտ տալով նրան. «Ցտեսություն, փոքրիկ սեղան: Շատ հաճելի էր ժամանակ անցկացնել քեզ հետ իմ մանկության տարիներին»: Վերջում, երբ ավարտեցինք գործողությունը, խնդրեցի բոլորին նստել շրջանով: Մասնակիցը, ով հրաժեշտ տվեց սեղանին, ասաց, որ հիմա իրեն ավելի լավ է զգում:

Կրթական գործունեության և արտ-թերապիայի միջև սահմանը կարող է նրբին լինել և կարող է տարբերվել՝ կախված դասընթացավարի նպատակներից, մեթոդներից և մտադրություններից: Ահա մի քանի հիմնական տարբերություններ.

Նպատակ և խնդիրներ.

- **Կրթական գործունեություն.** կրթական գործունեության հիմնական նպատակն է գիտելիքներ փոխանցել, հմտություններ սովորեցնել կամ խթանել ճանաչողական զարգացումը: Շեշտը դրվում է կոնկրետ բովանդակություն սովորելու կամ առարկային վերաբերող հատուկ հմտություններ ձեռք բերելու վրա:

- **Արտ-թերապիա.** արվեստի թերապիայի հիմնական նպատակը թերապևտիկ է՝ կենտրոնանալով հուզական արտահայտման, ինքնաբացահայտման և հոգեբանական բարեկեցության վրա: Շեշտը դրվում է արվեստ ստեղծելու գործընթացի, այլ ոչ թե վերջնական արդյունքի վրա:

Դասընթացավարի դերը.

- **Կրթական գործունեություն.** կրթական միջավայրում դասընթացավարները, օրինակ՝ ուսուցիչները, նպատակ ունեն տեղեկատվություն փոխանցել, ուղղորդել ուսումնառությունը և գնահատել ընկալումը: Նրանց դերը ուսուցողական է, և շեշտը դրվում է նախապես սահմանված ուսումնական արդյունքների ձեռքբերման վրա:

Կառուցվածք և մոտեցում.

- **Կրթական գործունեություն.** կրթական գործունեությունը հաճախ հետևում է կառուցվածքային ուսումնական ծրագրի՝ հատուկ դասի պլաններով և գնահատումներով: Շեշտը դրվում է հմտությունների ձեռքբերման, գիտելիքների փոխանցման և կրթական չափանիշներին համապատասխանելու վրա:

•**Արտ-թերապիա.** ավելի շատ գործընթացին է ուղղված և պակաս կառուցվածքային է: Շեշտը դրվում է անհատի յուրօրինակ ստեղծագործական արտահայտման վրա, և կարող է չլինել նախապես սահմանված ուսումնական ծրագիր: Թերապևտիկ գործընթացը զարգանում է՝ հիմնվելով հաճախորդի կարիքների վրա:

Արդյունքների ուղղվածություն.

•**Կրթական գործունեություն.** հաջողությունը հաճախ չափվում է գիտելիքների կամ հմտությունների ձեռքբերմամբ, ակադեմիական առաջադիմությամբ կամ առաջադրանքների և գնահատումների ավարտով:

•**Արտ-թերապիա.** հաջողությունն ավելի շատ կենտրոնացած է թերապևտիկ օգուտների վրա, ինչպիսիք են ինքնաճանաչման բարձրացումը, հուզական արտահայտումը և հոգեկան բարեկեցության բարելավումը: Շեշտը դրվում է անձնական աճի, այլ ոչ թե արտաքին չափանիշների վրա:

Իրազեկված համաձայնություն և գաղտնիություն.

•**Կրթական գործունեություն.** շեշտը դրվում է խմբին բովանդակություն մատուցելու վրա, և կարող է պակաս շեշտադրվել իրազեկված համաձայնության կամ անձնական բացահայտումների հետ կապված գաղտնիության անհրաժեշտությունը:

•**Արտ-թերապիա.** գաղտնիությունը կարևոր է, և մասնակիցները տեղեկացվում են գործընթացի թերապևտիկ բնույթի մասին: Թերապևտը ապահովում է անվտանգ տարածք անհատների համար՝ անձնական զգացմունքները և փորձառությունները հետազոտելու համար:

Թեև այս տարբերությունները օգնում են ընդգծել կրթական գործունեության և արտ-թերապիայի միջև տարբերությունները, կարևոր է նշել, որ կարող է լինել վերածածկում, հատկապես ոչ ֆորմալ կրթական միջավայրերում կամ համայնքային ծրագրերում: Որոշ գործողություններ կարող են ունենալ և՛ կրթական, և՛ թերապևտիկ տարրեր: Բացի այդ, տարբեր վերապատրաստման ֆոն ունեցող անհատները կարող են թերապևտիկ սկզբունքներ ներառել կրթական պրակտիկայում: Դասընթացավարի նպատակների և մտադրությունների մասին հստակ հաղորդակցությունը կարևոր է սպասելիքները կառավարելու և մասնակիցների համար դրական փորձառությունն ապահովելու համար:

Չինված հակամարտություններից կամ պատերազմներից տուժած երիտասարդների հետ աշխատելը պահանջում է մտածված մոտեցում, և կրթական գործունեության ու արտ-թերապիայի միջև սահմանը կարող է հստակ չլինել՝ հաշվի առնելով բնակչության յուրահատուկ կարիքները: Ահա մի քանի նկատառումներ այդպիսի համատեքստերում արվեստի մասնագետների հետ համագործակցող երիտասարդական աշխատողների համար.

Սահմանել նպատակները և մտադրությունները.

•**Հստակ ուրվագծեք ծրագրի կամ միջամտության նպատակները:** Դուք հիմնականում նպատակ ունեք կրթական բովանդակություն տրամադրել, թե՞ կա նաև թերապևտիկ ասպեկտ: Նպատակների ըմբռնումը կուղղորդի ընդհանուր մոտեցմանը:

Գնահատել անհատական կարիքները.

•**Ճանաչեք երիտասարդ մասնակիցների բազմազան կարիքները:** Ոմանք կարող են օգուտ քաղել կրթական աջակցությունից, մինչդեռ մյուսները կարող են թերապևտիկ միջամտությունների կարիք ունենալ: Իրականացրեք գնահատումներ՝ բացահայտելու անհատական ուժեղ կողմերը, մարտահրավերները և նախապատվությունները:

Համագործակցել հոգեկան առողջության մասնագետների հետ

Տրավմայի հետ կապված իրավիճակներում համագործակցեք հոգեկան առողջության մասնագետների հետ, օրինակ՝ հոգեբանների կամ արտ-թերապևտների հետ: Նրանց փորձագիտությունը կարող է օգնել ներառել թերապևտիկ տարբեր ծրագրերում և անհրաժեշտ աջակցություն տրամադրել տրավմայի հետ գործ ունեցող մասնակիցներին:

Ապահով տարածքների ստեղծում. ստեղծել ապահով և աջակցող միջավայր, որտեղ երիտասարդները հարմարավետ կզգան իրենց արտահայտվելիս: Սա ներառում է վստահության ձևավորում, գաղտնիության ապահովում և բաց հաղորդակցության խթանում:

Կրթության և արտահայտման հավասարակշռում. ընդունել, որ կրթության և թերապիայի միջև սահմանը կարող է աղոտ լինել: Կրթական գործողությունները կարող են ներառել արտահայտման տարրեր՝ թույլ տալով երիտասարդներին մշակել զգացմունքները ստեղծագործական ուղիներով: Ճկուն լինել մոտեցումը հարմարեցնելիս՝ հիմնվելով մասնակիցների զարգացող կարիքների վրա:

Տրավմայի նկատմամբ զգայունություն. արվեստի մասնագետները և երիտասարդական աշխատողները պետք է վերապատրաստվեն տրավմայի մասին իրազեկված պրակտիկաների վերաբերյալ: Հասկանալ բռնության և տրավմայի հետ կապված հնարավոր խթանիչները և զգայուն մոտեցում ցուցաբերել այս թեմաներին վերաբերող քննարկումների կամ գործողությունների նկատմամբ:

Կառուցողական ինքնաանդրադարձ և հուզական մշակում. ծրագրում ներառել կառուցողական ինքնաանդրադարձը և հուզական մշակումը: Այս սեսիաները, որոնք անցկացվում են վերապատրաստված դասընթացավարի կողմից, կարող են օգնել մասնակիցներին իմաստավորել իրենց փորձառություններն և զգացմունքները աջակցող միջավայրում:

Իրազեկված համաձայնություն և սահմաններ. հստակ հաղորդակցել ծրագրի նպատակը և ստանալ իրազեկված համաձայնություն մասնակիցներից՝ հատկապես զգայուն թեմաները քննարկելիս: Սահմանել հստակ սահմաններ՝ ապահովելու մասնակիցների բարեկեցությունը և պահպանելու էթիկական չափանիշները:

Շարունակական մասնագիտական զարգացում. թե՛ երիտասարդական աշխատողները, թե՛ արվեստի մասնագետները պետք է զբաղվեն շարունակական մասնագիտական զարգացմամբ՝ տեղեկացված մնալով տրավմայի մասին իրազեկված մոտեցումների, մշակութային զգայունության և գինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ աշխատելու լավագույն փորձի մասին:

Մշակութային իրազեկություն. հասկանալ այն համայնքների մշակութային համատեքստը և նրբությունները, որոնց հետ աշխատում եք: Մշակութային իրազեկությունը կարևոր է վստահություն ձևավորելու և միջամտությունների հարգալից ու պատշաճ լինելն ապահովելու համար:

Օգտակար վարժություններ

Մկանները տաքացնող վարժություններ.

Տարիքը՝ 7+ (Կարող է հարմարեցվել բոլոր տարիքների և ֆիզիկական հնարավորությունների համար)
Մասնակիցների թիվ՝ 2-ից ավելի

Աշխատեք ձեր պարանոցի վրա: Պտտեք այն առաջ, թեքեք դեպի աջ ու ձախ, այնուհետև տարեք հետ: Պտտեք այն նախ մեկ ուղղությամբ, ապա մյուսով:

Ուսեր. բարձրացրեք ձեր ուսերը վերև, իջեցրեք ներքև, ապա պտտեք դրանք առաջ-հետ: Շրջանաձև շարժեք ձեր ձեռքերը: Ճոճեք ձեր ձեռքերը շրջանաձև մեկ ուղղությամբ, ապա մյուսով, ապա հակառակ ուղղություններով:

Ձգեք ձեր կողոսկրերը՝ բարձրացնելով ձեր ձեռքերը գլխավերևում, ապա թեքվելով մի կողմի վրա՝ զգացեք լարվածության թուլացումը ձեր կրծքավանդակում: Պահեք մի պահ, ապա վերադարձեք ելման դիրքի և թեքվեք մյուս կողմ:

Շնչառական վարժանք. ընդունեք ուղիղ կեցվածք և խորն ու դանդաղ ներշնչեք ձեր քթով: Դանդաղ և մտադրված արտաշնչեք բերանով: Կրկնեք մի քանի անգամ՝ ձեր սրտի զարկերը դանդաղեցնելու և հանգստանալու համար:

Թեքվեք գոտկատեղից առաջ՝ իջեցնելով ձեր գլուխը, ձեռքերը ձգված ներքև, մնացեք այդ դիրքում 10 վայրկյան: Ապա վերադարձեք ամբողջությամբ ելման դիրք, հետո թեթև հետ թեքում արեք՝ պահելով ևս 10 վայրկյան: Կրկնեք մի քանի անգամ, մինչև զգաք, որ ձեր կեցվածքը բարելավվել է:

Սկսեք թափահարել ձեր ձեռքերը, ապա ձեր բազուկները, ապա ձեր ամբողջ մարմինը՝ ազատվելու համար մնացած լարվածությունից:

Դերասանական խաղեր և տաքացման տեխնիկաներ՝ մասնակիցների հույզերը, զգացմունքները և մարմինը տաքացնելու համար:

Մարմնի տաքացում

Տարիք՝: առանց սահմանափակման
Մասնակիցների թիվ՝ ավելի քան 2 մարդ

Նպատակ. այս խաղը կկենտրոնացնի ձեր էներգիան՝ միաժամանակ ստիպելով ձեզ շարժվել:

Նկարագրություն. Էներգիայի գնդակ: Կանգնեք դեմքով դեպի պատը: Պատկերացրեք, որ երկու ձեռքով պահում եք անտեսանելի գնդակ ձեր առջև: Այժմ պատկերացրեք, որ հավաքում եք էներգիան գնդակի մեջ, փորձեք զգալ, թե ինչպես է այն թրթռում և խփում, երբ էներգիան աճում է: Էներգիան այնքան ինտենսիվ է դառնում, որ ստիպված եք գնդակը նետել պատին: Երբ գնդակը հետ է թռչում, թեքվեք առաջ՝ այն բռնելու համար: Նետեք այն հետ ավելի ուժեղ:

Անհրաժեշտ նյութեր. չկան

Աղբյուր. © MasterClass

Անդրադարձ

Տարիք՝ առանց սահմանափակման
Մասնակիցների թիվ՝ ավելի քան 2 մարդ

Նպատակ. այս խաղը նախատեսված է կենտրոնացումը ուժեղացնելու վրա :

Նկարագրություն. կանգնեք ձեր զուգընկերոջ դիմաց և փորձեք կռահել նրա մտքերը: Ուշադիր հետևեք նրա շարժումներին: Երբ նա շարժվում է, հնարավորինս ճշգրտորեն ու միաժամանակ արտացոլեք նրա շարժումները և կրկնօրինակեք նրա դիմախաղը:

Անհրաժեշտ նյութեր. չկան

Աղբյուր. © *MasterClass*

Թեմատիկ երգ

Տարիք՝ առանց սահմանափակման
Մասնակիցների թիվ՝ 2 մարդ

Նպատակ. կերպարարանափոխվել

Նկարագրություն. Եթե պատրաստվում եք որոշակի կերպարի համար, մտածեք թեմատիկ երգի կամ երաժշտության մասին, որը արտահայտում է նրա էությունը: Միացրեք այն մինչ պատրաստվում եք՝ կրկնելով նույն երգը նորից ու նորից, որպեսզի մտնենք կերպարի հուզական դաշտ:

Անհրաժեշտ նյութեր. չկան

Աղբյուր. © *MasterClass*

Ստացիր և փոխանցիր

Տարիք՝ առանց սահմանափակման
Մասնակիցների թիվ՝ ավելի քան 2 մարդ

Նպատակ. ձայնալարերի տաքացում

Նկարագրություն. բոլորը շարժվում են տարածության մեջ: Դուք հանում եք չիկոցի ձայն կամ արտասանում մեկ բառ՝ ուղղված ձեր գործընկերներից մեկին: Նրանք պետք է «բռնեն» այն, այնուհետև լսելի կերպով փոխանցեն մեկ այլ անձի՝ շարունակելով շարժվել: Ավելացրեք արագությունը, որով չիկոցները անցնում են մեկից մյուսին:

Անհրաժեշտ նյութեր. չկան

Աղբյուր. © *MasterClass*

Շրջանաձև աշխատանք

Տարիք՝ առանց սահմանափակման
Մասնակիցների թիվ՝ թիմային աշխատանք

Նպատակ. իմպրովիզ

Նկարագրություն. այս վարժությունը լավ նախավարժանք է որոշակի ներկայացման վրա աշխատող խմբի համար: Մեկը կանգնում է շրջանի մեջ: Սկսում է բանաստեղծության կամ ինքնաբուխ երկխոսության մեջտեղից, որը պարունակում է ակնարկ ուղղված մասնակիցներից մեկին: Այդ մասնակիցը պետք է շարունակի տեսարանը շրջանի կենտրոնից: Եթե տեսարանը պարունակում է ակնարկ մեկ այլ անձի համար, այդ անձը մտնում է շրջան: Եթե ոչ, մեկ ուրիշ անձ պետք է հորինի նոր տող նոր ակնարկով, և այդպես գործընթացը շարունակվում է:

Անհրաժեշտ նյութեր. չկան

Աղբյուր. © *MasterClass*

Հորինիր պատմություն

Տարիք՝ 10+

Մասնակիցների թիվ՝ ցանկալի է թիմ լինի

Նպատակ. իմպրովիզացիա

Նկարագրություն. Մասնակիցները նստում են շրջանով: Վարորդ նրանց տալիս է պատմության վերնագիր, օրինակ՝ «Իմ երազանքը»: Պատմությունը պատմվում է մեկ բառով: Հիշեցրեք նրանց, որ պատմությունը պետք է իմաստ ունենա: Բոլորը պետք է միասին աշխատեն՝ հիշելով խմբի կողմից ամբողջ ընթացքում արտաբերված բառերը և դրանցով փորձեն ստեղծել միասնական պատմվածք:

Անհրաժեշտ նյութեր. չկան

Աղբյուր. © Theatre Folk

Ընտանեկան դիմանկար

Տարիք՝ 10+

Մասնակիցների թիվ՝ ցանկալի է թիմ լինի

Նպատակ. իմպրովիզացիա

Նկարագրություն. Բաժանեք մասնակիցներին խմբերի: Յուրաքանչյուր խումբ հերթով առաջ է գալիս և ստանում է նկարի վերնագիրը, որը պատմվում է ընտանիքի թեմայի շուրջ՝ ատամնաբույժների ընտանիք, կորած գրադարանավարների ընտանիք: Դուք կարող եք նույնիսկ ավելի կոնկրետ լինել: Խմբերն ունեն տասը վայրկյան՝ վերնագրի հիման վրա դիմանկար կազմելու համար: Հիշեցրեք մասնակիցներին, որ պետք է մտածեն նկարում ներգրավված կերպարների մասին և խոսեն միմյանց հետ, որպեսզի կերպարները չկրկնվեն: Նրանք պետք է պատմություն պատմեն, չնայած որ սառած են լինելու տեղում: Ժամանակ դրեք. ժամանակի սահմանափակումը ստիպում է մասնակիցներին արագ աշխատել: Հաշվեք բարձրաձայն և 10 վայրկյան անց բղավեք՝ ՍԱՌԵԸ: Վերջնական արդյունքը պետք է լինի միասնական նկար:**Անհրաժեշտ նյութեր.** չկան

Աղբյուր. © Theatre Folk

Նույն շրջանը

Տարիք՝ առանց սահմանափակման

Մասնակիցների թիվ՝ ցանկալի է թիմ լինի

Նպատակ. իմպրովիզացիա

Նկարագրություն. Բոլորը շրջանի մեջ են: Ա անձը կատարում է մի փոքր ժեստ: Նրա կողքի անձը կրկնում է ժեստը և այդպես շարունակ: Վարժության նպատակն է ժեստը պահպանել ճիշտ նույնը: Բոլորը պետք է կենտրոնանան և ուշադրություն դարձնեն ժեստին: Այն չպետք է մեծանա, կամ փոխի ձեռքերը, կամ ոլորվի: Այն պետք է կրկնվի ճշգրտորեն: Ավելի դժվար է անել, քան կարծում եք: Կարող եք նույն վարժությունը կատարել ձայներով:**Անհրաժեշտ նյութեր.** չկան

Աղբյուր. © Theatre Folk

Սադակո – 1000 կռունկների պատմությունը

Դասընթացի ծրագիր

Մշակված Այնուր Չարինթացի կողմից

Տարիք՝ 7+

Մասնակիցների թիվ՝ ցանկալի է թիվ լինի

Նկարագրություն. դասընթացը սկսվում է տաքացման վարժություններով: Այնուհետև խումբը լսում է փոքրիկ Սադակոյի՝ ճապոնացի աղջկա կարճ պատմությունը, ով դարձավ 1945 թվականի Հիրոսիմայի և Նագասակիի ատոմային ռմբակոծության զոհ:

«Նա երկու տարեկան էր, երբ ռումբերը զգվեցին և ծանր ճառագայթահարվեց: Նա ապրեց ևս տասը տարի՝ դառնալով ամենահայտնի հիբակուշաներից մեկը՝ ճապոներեն տերմին, որը նշանակում է «ռումբից տուժած անձ»: Նա հիշվում է իր մահից առաջ ծալած ավելի քան մեկ հազար օրիգամի կռունկների պատմության միջոցով: Նա մահացավ 12 տարեկան հասակում 1955 թվականի հոկտեմբերի 25-ին Հիրոսիմայի Կարմիր խաչի հիվանդանոցում»: Ի՞նչ է նշանակում 1000 օրիգամի կռունկ պատրաստել:

Այն խորհրդանշում է պատիվ, բարեբախտություն, հավատարմություն և երկարակյացություն: Այս հզոր բնութագրերը կռունկին տալիս են այնպիսի հատուկ իմաստ, և դրա համար ճապոնացիները հավատում էին, որ ցանկացած մեկը, ով ունի համբերություն և նվիրվածություն՝ ծալելու 1000 օրիգամի կռունկ, կստանա բարեբախտություն և կիրականացնի մեկ ցանկություն:

Այնուհետև սկսվում է խմբային քննարկում երեխաների հետ.

• Ի՞նչ է խաղաղությունը:

• Ինչպե՞ս ենք մենք հասնում դրան:

• Ի՞նչ գույն ունի խաղաղությունը:

• Որտե՞ղ ենք մենք տեսնում այն: Հարցերը կարող են փոխվել և հարմարեցվել հարակից թեմաներին:

Սրանից հետո երիտասարդական աշխատողը կարող է օգտագործել արվեստի տարբեր տեսակներ՝ կապված Սադակոյի և խաղաղության թեմայի շուրջ:

Մեթոդ 1. Պատրաստեք օրիգամի կռունկներ (Տարիք՝ 13)

Խնդրեք երեխաներին ընտրել իրենց ամենահավանած գույնի թուղթը: Օգտագործելով քառակուսի թղթի կտոր, ծալեք թուղթը կիսով չափ՝ եռանկյունի ստանալու համար: Եթե օգտագործում եք միայն մեկ կողմից գունավոր թուղթ, սկսեք գունավոր կողմը վերև դարձրած: Բացեք թուղթը և կրկնեք՝ վերևի պատկերում երևացող ծալքերը ստանալու համար:

Շրջեք թուղթը, որպեսզի գունավոր կողմը դեպի ներքև լինի և ծալեք թուղթը կիսով չափ՝ ձևավորելով ուղղանկյուն: Բացեք թուղթը և կրկնեք՝ վերևի պատկերում երևացող ծալքերը ստանալու համար:

Այժմ ծալեք բոլոր չորս ծալքերի երկայնքով միաժամանակ՝ ձևավորելով քառակուսի, որի բաց ծայրը դեպի ձեզ է նայում:

Ծալեք երկու եզրերը ներս՝ վերևում օղապարուկի ձև ստանալու համար: Կրկնեք մյուս կողմում:

Ծալեք ծայրը ներքև և մյուս երկու ծալքերը՝ վերև: Շրջեք թուղթը և կրկնեք ծալքը: Բացեք 4-րդ և 5-րդ քայլերում արած ծալքերը:

Քաշեք ներքևի անկյունը (միայն վերին շերտը): Ծալեք 4-րդ և 5-րդ քայլերում արած ծալքերի երկայնքով: Կրկնեք մյուս կողմում:

Ծալեք երկու եզրերը ներս՝ օղապարուկի ձև ստանալու համար: Կրկնեք մյուս կողմում:

Ծալեք վերին շերտը (աջ կողմը)՝ ձախ կողմի վրա դնելու համար, ինչպես գրքի էջը շրջելիս: Շրջեք և կրկնեք մյուս կողմում:

Ծալեք վերին շերտը որքան հնարավոր է վեր յուրաքանչյուր կողմում:

Ծալեք վերին շերտը (աջ կողմը)՝ ձախ կողմի վրա դնելու համար, ինչպես գրքի էջը շրջելիս: Շրջեք և կրկնեք մյուս կողմում:

Ծալեք թևերը ներքև:

Ծռեք գլուխը ներքև՝ կռունկին երկար կտուց տալու համար: Քաշեք թևերը մարմնից դուրս, որպեսզի մարմինը փքվի:

1© <https://savingcranes.org/learn/origami-cranes/>

Մեթոդ 2. Պատմասացություն (Storytelling)

Անշուշտ, պատմասացության վարժությունները կարող են հզոր գործիքներ լինել գինված հակամարտություններից կամ տեղահանությունից տուժած երիտասարդների համար: Այս վարժությունները կարող են ապահով և ստեղծագործական միջավայր ապահովել նրանց մտքերն ու զգացմունքները արտահայտելու համար: Ահա պատմասացության վարժություն՝ նախատեսված պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանք իրականացնելու համար:

«Ուժ պատմությունների մեջ»

Նպատակը. խրախուսել ինքնարտահայտումը, դիմացկունությունը և համայնքի կարևորության զգացումը երիտասարդների շրջանում:

Անհրաժեշտ նյութեր.

- թուղթ
- Նկարչական/գունավորման պարագաներ
- գրելու պարագաներ (գրիչներ, մատիտներ)
- այլընտրանք. թվային ձայնագրման սարքեր նրանց համար, ովքեր նախընտրում են ձայնային պատմություններ:

Յրահանգներ.

- Ներածություն (15 րոպե).
- Ստեղծեք ապահով և աջակցող միջավայր: Շեշտեք, որ պատմություն պատմելու ճիշտ կամ սխալ ձև չկա:
- Կիսվեք անձնական կարճ պատմությամբ կամ օրինակով այն մասին, թե ինչպես պատմություն պատմելը կարող է հզոր գործիք լինել բուժման և կապի ստեղծման համար:
 - Բացատրեք, որ վարժությունը հնարավորություն է յուրաքանչյուր անձի համար՝ կիսվելու իրենց յուրահատուկ փորձառություններով և տեսակետներով:
- Պատմասացության նախավարժանք (15 րոպե).
 - Սկսեք պարզ սառույցկոտրուկ վարժությամբ: Խնդրեք յուրաքանչյուր մասնակցին կիսվել դրական կամ չեզոք պատմությամբ իրենց կյանքից՝ մինչև հակամարտությունը կամ տեղահանությունը:
 - Սա օգնում է հեշտությամբ անցնել պատմություն պատմելուն և ստեղծում է դրական տրամադրություն:
- Ուղղորդված խորհրդածություն (20 րոպե).
 - Տրամադրեք հուշումներ խորհրդածության համար: Տվեք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝
 - Որո՞նք են այն ուժեղ կողմերը և հատկանիշները, որոնք օգնել են ձեզ դժվար ժամանակներում:
 - Կա՞ն արդյոք դիմացկունության կամ քաջության պահեր, որոնք առանձնանում են ձեր հիշողության մեջ:
 - Ինչպե՞ս եք դուք կամ ձեր համայնքը աջակցել միմյանց դժվար ժամանակներում:
- Պատմության ստեղծում (30 րոպե).
 - Խրախուսեք մասնակիցներին ստեղծել կարճ պատմություն կամ պատում, որն արտացոլում է իրենց փորձառությունները: Սա կարող է լինել հորինված կամ հիմնված իրական դեպքերի վրա:
 - Մասնակիցները կարող են ընտրել գրել, նկարել կամ օգտագործել երկուսի համադրությունը՝ իրենց պատմությունները պատմելու համար:

- Շեշտեք զգացմունքները արտահայտելու և իրենց պատմություններում ուժ գտնելու կարևորությունը:

- Կիսվելու շրջան (30 րոպե).

-Ստեղծեք ապահով և հարգալից միջավայր մասնակիցների համար՝ իրենց պատմություններով կիսվելու համար: Սա կարող է արվել փոքր խմբերով կամ ամբողջ խմբով՝ կախված մասնակիցների քանակից և հարմարավետության մակարդակից:

- Խրախուսեք ակտիվ լսելը և տրամադրեք դրական արձագանք յուրաքանչյուր պատմության ավարտից հետո:

- Խորհրդածություն և աջակցություն (15 րոպե).

- Նպաստեք քննարկման փորձառության մասին: Հարցրեք մասնակիցներին, թե ինչպես էին իրենց զգում կիսվելով իրենց պատմություններով և լսելով մյուսներին:

- Առաջարկեք լրացուցիչ աջակցության վերաբերյալ ռեսուրսներ կամ տեղեկատվություն, օրինակ՝ խորհրդատվական ծառայությունների կամ համայնքային ծրագրերի մասին:

Հիշեք, որ այս վարժությանը պետք է մոտենալ զգայունությամբ և ճկունությամբ: Մասնակիցները կարող են ընտրել չկիսվել իրենց պատմություններով, և այդ ընտրությունը պետք է հարգվի: Նպատակն է հզորացնել և տրամադրել արտահայտման հարթակ՝ միաժամանակ խթանելով համայնքի միասնության և աջակցության զգացումը:

Մեթոդ 3. Ստվերային թատրոն

Խումբը սկսում է հետևել երիտասարդական աշխատողին և նկարել այն կերպարի պատկերը, որը նրանք ստեղծել են: Կերպարը կտրելուց հետո բոլոր պատկերները ամրացվում են փայտիկների վրա:

Ստվերային թատրոնի Եկրան պատրաստելու համար դրեք թղթե տուփը ներքևից վերև: Կտրեք մեծ ուղղանկյուն բացվածք: Օգտագործեք բարակ սպիտակ թղթե թերթ կամ մագաղաթ թուղթ Եկրանի համար՝ այն կպցնելով բացվածքի ներսի մասում ժապավենով:

Շրջեք և ամրացրեք կափարիչի անկյունները ժապավենով: Լույսը դրեք տուփի մեջ և ուղղեք այն դեպի Եկրանը:

Բաժանվելով երկու կամ երեք խմբերի՝ նրանք հանդիպում են իրենց կերպարներին և ստեղծում են մեկ կարճ պիես՝ օգտագործելով իմպրովիզացիան: Կարճ փորձից հետո նրանք կանգնում են Եկրանի հետևում և սկսում են կատարել ստվերային ներկայացում:

Անհրաժեշտ իրերի ցանկ.

Տուփ Եկրանի համար՝

- Ստվարաթղթե տուփ

- Բարակ սպիտակ թուղթ կամ մագաղաթյա թուղթ (թխելու թուղթ)

- Մկրատ կամ թղթի կտրիչ

- Լույսի աղբյուր (գլխի լապտեր, սեղանի լամպ, հեռախոսի լապտեր)

- ժապավեն

Ստվերային տիկնիկի համար՝

- Ստվարաթուղթ կամ հաստ թուղթ

- Արհեստական փայտիկներ կամ ծղոտներ

- Մկրատ

- ժապավեն

Չինված հակամարտություններից կամ պատերազմից տուժած երիտասարդների համար ստվերային թատրոնի վարժություն ստեղծելը կարող է ապահովել ինքնարտահայտման յուրահատուկ միջավայր և ստեղծագործական միջոց: Ստվերային թատրոնը կարող է լինել պատմություններ պատմելու հզոր ձև, որը թույլ է տալիս մասնակիցներին կիսվել իրենց փորձառություններով խորհրդանշական և ավելի քիչ ուղղակի ձևով: Ահա մի վարժություն, որը կարող էք փորձել:

«Դիմացկունության ստվերները»

Նպատակը. օգտագործել ստվերային թատրոնը որպես երիտասարդների զգացմունքները, փորձառությունները և հույսերը արտահայտելու միջոց զինված հակամարտության համատեքստում:

Անհրաժեշտ նյութեր.

- Ամուր թղթի կամ սովարաթղթի դատարկ թերթեր
- Մկրատ
- Մատիտներ, մարկերներ կամ այլ նկարչական պարագաներ
- Փոքր ձեռքի լույսեր կամ լապտերներ
- Դատարկ պատ կամ մեծ սավան՝ որպես պրոյեկցիայի մակերես

Հրահանգներ.

- Ներածություն (15 րոպե).

- Սկսեք քննարկումը ստվերային թատրոնի հասկացության շուրջ և դրա օգտագործումը որպես պատմություններ պատմելու միջոց: Բացատրեք, որ մասնակիցները կստեղծեն ստվերային տեսարաններ, որոնք ներկայացնում են իրենց փորձառությունների և դիմացկունության ասպեկտները:

- Խորհրդածություն և մտքերի փոխանակում (20 րոպե).

- Առաջնորդեք ուղղորդված խորհրդածություն դիմացկունության, ուժի և հույսի թեմաների շուրջ: Խնդրեք մասնակիցներին մտածել կոնկրետ պահերի կամ խորհրդանիշների մասին, որոնք իրենց համար ներկայացնում են այս հասկացությունները:

- Խրախուսեք նրանց գրի առնել կամ էսքիզ անել այս գաղափարները թղթի վրա:

- Տեսարանի ստեղծում (40 րոպե).

- Բաժանեք դատարկ թղթի կամ սովարաթղթի թերթերը յուրաքանչյուր մասնակցի:

- Հրահանգեք նրանց ստեղծել կտրված տեսարաններ կամ պատկերներ, որոնք ներկայացնում են իրենց ընտրած թեմաները: Սրանք կարող են ներառել խորհրդանիշներ, կերպարներ կամ բնապատկերներ:

- Շեշտեք, որ պարզությունը կարող է արդյունավետ լինել ստվերային թատրոնում, և մանրամասները կարող են փոխանցվել լույսի և ստվերի խաղի միջոցով:

- Տեսարանների հավաքում (20 րոպե).

- Թող մասնակիցները դասավորեն իրենց կտրված տեսարանները թղթի կամ սովարաթղթի թերթերի վրա:

- Հրահանգեք նրանց հաշվի առնել տեսարանների դիրքավորումը՝ տեսողական առումով գրավիչ ստվերային պատմություն ստեղծելու համար:

- Փորձ (30 րոպե).

- Տրամադրեք մասնակիցներին ձեռքի լույսեր կամ լապտերներ:

- Տվեք նրանց ժամանակ՝ պատի կամ մեծ սավանի վրա ստվերներ զցելու փորձ անելու համար, փորձարկելու լույսերի և տեսարանների տեղադրությունը՝ իրենց պատմությունները արդյունավետ պատմելու համար:

- Ստվերային ներկայացում (45 րոպե).

- Կազմակերպեք ներկայացման տարածքը դատարկ պատով կամ մեծ սավանով՝ որպես պրոյեկտորի էկրան:

- Հրավիրեք մասնակիցներին հերթով ներկայացնել իրենց ստվերային ներկայացումները խմբին:

- Խրախուսեք նրանց համառոտ բացատրել իրենց տեսարանների խորհրդանիշը՝ նախքան ներկայացումը կամ դրանից հետո:

- Խմբային խորհրդածություն (20 րոպե)

- Նպաստեք փորձառության մասին խմբային քննարկման: Հարցրեք մասնակիցներին, թե ինչպես էին իրենց զգում՝ ստեղծելով և կիսվելով իրենց ստվերային տեսարաններով:

- Քննարկեք թեմաները և խորհրդանիշը, որոնք ի հայտ եկան ներկայացումների ընթացքում:

- Այլընտրանքային. փաստագրում և ցուցադրում (30 րոպե).

- Թույլ տվեք մասնակիցներին փաստագրել իրենց ստվերային տեսարանները լուսանկարների կամ տեսանյութերի միջոցով:

- Ստեղծեք ստվերային տեսարանների ցուցադրություն, կամ ֆիզիկապես, կամ թվայնորեն՝ ծառայելու որպես մասնակիցների ստեղծարարության և դիմացկունության մնայուն ներկայացում:

Այս վարժությունը նպատակ ունի մասնակիցներին տրամադրել ստեղծագործական ելք՝ իրենց պատմությունները խորհրդանշական և ոչ հակամարտային ձևով կիսելու համար: Այն թույլ է տալիս ինքնարտահայտվել՝ միաժամանակ խթանելով համայնքի զգացումը ստվերային թատրոնի ընդհանուր փորձառության միջոցով:

Մեթոդ 4. Մեդիտացիա

Մեդիտացիայի ուղեցույցի կարճ կառուցվածքը՝ հետևելով 'ուղղորդված մեդիտացիայի շրջանակին

- Սկսեք կարճ քննարկումով՝ մասնակիցների ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով:

- Երբ բոլորը հարմարավետ են զգում իրենց, սկսեք ուղղորդել մասնակիցներին դեպի մեդիտատիվ վիճակ: Առաջարկեք կենտրոնանալ շնչառության վրա: Սկզբում հաստատեք ներշնչման և արտաշնչման ռիթմը մասնակիցների համար՝ լուռ հաշվելով. 4 վայրկյան ներշնչման համար, 2 վայրկյան՝ շունչը պահելու համար, 4 վայրկյան արտաշնչման համար և 2 վայրկյան՝ շունչը պահելու: Այնուհետև օգնեք մասնակիցներին թուլացնել լարվածությունը իրենց մարմնում, հատկապես այն հատվածներում, որտեղ նրանք պահում են սթրեսը և ձեռքագատվեն ավելորդ այլ զգացմունքներից/հույզերից: Փորձեք շարունակել ուղղորդել պարզ եղանակներով:

- Երբ բոլորի միտքն ու մարմինը հանգստացած են, նրանք կարող են սկսել օգտագործել իրենց երևակայությունը: Ուղղորդեք նրանց հետագոտել իրենց մտքերն ու զգացմունքները՝ օգտագործելու մտքի այս բեղմնավոր վիճակը՝ խորհրդածելու և ինքնախորհրդածելու համար:

- Մասնակիցների համար մեդիտացիայի դասի ամենաազդեցիկ պահերը միշտ տեղի կունենան այն պահերին, երբ դուք չեք խոսում, երբ ձեր մասնակիցները կարող են հետագոտել իրենց սեփական մտքերը, զգացմունքները և հույզերը առանց ընդհատման կամ առաջարկության:

- Երևակայությունը ներգրավելուց հետո ոգեշնչեք նրանց մտքեր արթնացնող հարցերով կամ ուղղորդված պատկերներով՝ ժամանակ տալով լուռ ինքնախորհրդածության համար: Նախքան լռելը, ասեք ինչ-որ բան, օրինակ՝ «Իմ ձայնը մի քիչ լուռ կլինի...»: Կարևոր է, որ դուք սա ասեք՝ ձեր մասնակիցներին տեղյակ պահելու համար, որ դուք դիտավորյալ ստեղծում եք տարածություն նրանց համար՝ իրենց երևակայությունը խթանելու համար: Հակառակ դեպքում, նրանք կարող են սպասել ձեր հաջորդ հրահանգին՝ փոխարենը երևակայությունն օգտագործելով խորհրդածելու և հետագոտելու համար:

- Բավարար չափով լուռ խորհրդածության ժամանակ տալուց հետո, մեղմ ձայնով ասեք ինչ-որ բան, օրինակ՝ «Եվ դանդաղ, վերադառնալով իմ ձայնի հնչյունին»: Սա հիանալի ժամանակ է խնդրելու մասնակիցներին իրենց հետ վերցնել ինչ-որ բան փորձառությունից: Դա կարող է լինել գիտակցման կամ զգացմունքի պարզ ճանաչման ձևով:

- Այնուհետև, ձեր մասնակիցներին տարեք աստիճանական վերաներգրավման միջով իրենց մարմնի հետ: Սկսելով ոտքերից՝ խնդրեք նրանց շարժել իրենց ոտնաթաթերը և պտտել կոճերը, դանդաղ ձգելով դեպի վեր՝ իրենց մարմնի և իրանի վրայով՝ հնարավորինս ձգվելով դեպի վերև: Գաղափարն այն է, որ դուք ցանկանում եք դանդաղ վերադարձնել նրանց իրենց մարմնին և անցում կատարել մեդիտատիվ վիճակից դեպի արթուն գիտակցության վիճակ, որպեսզի մեդիտացիայի ավարտը կտրուկ չլինի, ինչը իրականում կարող է վնասակար լինել:

- Վերջապես, խնդրեք մասնակիցներին բացել իրենց աչքերը: Առաջարկեք նրանց ընդունել իրենց ունեցած փորձառությունը և ամրապնդել ցանկացած ներըմբռնում իրենց հիշողության մեջ: Եթե հնարավոր է, թող նրանք մի քանի րոպե գրեն օրագրում ցանկացած բանի մասին:

Ուժի ճանապարհը

Նպատակը. իրականացնել դրամատիկական վարժություն, որը խրախուսում է համագործակցությունը, Էմպատիան և անձնական ու կոլեկտիվ ուժերի հետազոտումը: Անհրաժեշտ կյուբեր.

- Բաց տարածք շարժման համար
- Մարկերներ և մեծ թղթեր
- Փոքր ռեկվիզիտներ կամ հագուստի պարագաներ (ընտրովի)

Չրահանգներ.

- Նախավարժանք (15 րոպե).

- Սկսեք նախավարժանքով՝ օգնելու մասնակիցներին հանգստանալ և կենտրոնանալ: Ներառեք ձգումներ, շնչառական վարժություններ և պարզ շարժողական գործողություններ:

- Խրախուսեք մասնակիցներին արտահայտվել ֆիզիկապես՝ ազատվելով լարվածությունից:

- Թեմայի ներածություն (15 րոպե).

- Քննարկեք անձնական և խմբային ուժի հասկացությունը: Խնդրեք մասնակիցներին խորհել այն ժամանակների մասին, երբ իրենց ուժեղ, դիմացկուն են զգացել կամ աջակցություն են ստացել ուրիշներից:

- Կիսվեք դիմացկունության հետ կապված կարճ ոգեշնչող պատմությամբ՝ դրական տրամադրություն ստեղծելու համար:

- Պատմության շրջան (20 րոպե).

- Ձևավորեք շրջան և հրավիրեք յուրաքանչյուր մասնակցի կիսվել ուժի կամ դիմացկունության անձնական կարճ պատմությամբ: Շեշտեք, որ նրանք կարող են մանրամասնել այնքան, որքան կուզենան:

- Խրախուսեք ակտիվ լսելը և աջակցող արձագանքները խմբից:

- Խմբային պատմության քանդակ (40 րոպե).

- Բացատրեք, որ խումբը միասնական կերպով սպետք է ստեղծի «կենդանի քանդակ», որը ներկայացնում է ուժի ճանապարհը: Յուրաքանչյուր մասնակից կավելացնի սառեցված դիրք կամ շարժում, որը խորհրդանշում է դիմացկունության կամ անձնական ուժի որևէ ասպեկտ:

- Սկսեք մեկ մասնակցով կենտրոնում, ով կներկայացնի ճանապարհորդության սկիզբը: Մյուսները աստիճանաբար միանում են՝ ավելացնելով իրենց դիրքերը՝ ստեղծելով դինամիկ և փոփոկապակցված քանդակ:

- Խրախուսեք մասնակիցներին օգտագործել իրենց մարմինները, դիմային արտահայտությունները և ժեստերը՝ հույզեր և փորձառություններ փոխանցելու համար:

- Իմպրովիզացիոն տեսարաններ (30 րոպե).

- Բաժանեք խումբը ավելի փոքր թիմերի և տրամադրեք յուրաքանչյուր թիմին դիմացկունության կամ ուժի հետ կապված հուշում:

- Թիմերը ունեն կարճ ժամանակ՝ ստեղծելու և կատարելու կարճ իմպրովիզացիոն տեսարան՝ հիմնված իրենց հուշման վրա: Խրախուսեք ստեղծարարությունը և համագործակցությունը:

- Խորհրդածություն և քննարկում (20 րոպե).

- Ներկայացումներից հետո հավաքեք մասնակիցներին փորձառության վերաբերյալ խորհրդածության համար:

- Քննարկեք ի հայտ եկած ընդհանուր թեմաները և թե ինչպես վարժությունը ստիպեց մասնակիցներին զգալ:

- Չարցրեք, թե արդյո՞ք զգացին իրենց սեփական ուժը կամ խմբի ուժը:

- Խորհրդանշական արվեստի ստեղծում (30 րոպե).

- Տրամադրեք մասնակիցներին մարկերներ և մեծ թղթեր:

- Խնդրեք նրանց անհատապես կամ համագործակցաբար ստեղծել խորհրդանշական արվեստի գործեր, որոնք ներկայացնում են դրամատիկական վարժության մեջ պատկերված խմբային ուժը կամ դիմացկունությունը:

- Խմբային ցուցադրություն (15 րոպե). թույլ տվեք մասնակիցներին ցուցադրել իրենց արվեստի գործերը և համառոտ բացատրել խորհուրդը խմբին: Սա կարող է լինել

ընդհանուր ձեռքբերման և խորհրդածության կարևոր պահ:

Մտտեցեք այս գործողություններին զգայունությամբ՝ թույլ տալով մասնակիցներին ընտրել իրենց ներգրավվածության աստիճանը և հարգելով նրանց հուզական արձագանքները: Նպատակն է տրամադրել աջակցող տարածք արտահայտման, համագործակցության և անձնական ու խմբային ուժերի հետազոտման համար:

Մարմնի քարտեզագրման վարժությունը կարող է լինել թերապևտիկ և արտահայտիչ գործունեություն զինված հակամարտություններից և պատերազմից տուժած երիտասարդների համար: Այս վարժությունը թույլ է տալիս մասնակիցներին տեսողականորեն ներկայացնել և հետազոտել իրենց հույզերը, հիշողությունները և փորձառությունները իրենց մարմնի բնական չափի ուրվագծի վրա: Ահա քայլ առ քայլ ուղեցույց.

Դիմացկունության քարտեզագրում

Նպատակը. իրականացնել մարմնի քարտեզագրման վարժություն՝ օգնելու մասնակիցներին արտահայտել և խորհրդածել իրենց փորձառությունների մասին տեսողական և խորհրդանշական ձևով:

Անհրաժեշտ կյուբեր.

- Մեծ թղթեր
- Մարկերներ, գունավոր մատիտներ կամ կավիճներ
- Սկոչ կամ սոսինձ՝ թերթերը պատին ամրացնելու համար
- Մկրատ
- Ամսագրեր կամ տպված պատկերներ (ընտրովի)
- Սոսինձ (ընտրովի)

Յրահանգներ.

- Ներածություն (15 րոպե).

- Ստեղծեք ապահով և աջակցող միջավայր: Շեշտեք, որ այս գործունեությունը անձնական և արտահայտիչ ճանապարհորդություն է, և մասնակիցները կարող են ընտրել այն խորությունը, որով նրանք պատրաստ են կիսվելու իրենց փորձառություններով:

- Նախավարժանք և հանգստացում (15 րոպե).

- Առաջնորդեք կարճ հանգստացման վարժության՝ օգնելու մասնակիցներին ավելի ճանաչել իրենց մարմինները և զգացմունքները: Ներառեք խորը շնչառություն և մեղմ ձգումներ:

- Մարմնի քարտեզագրման բացատրություն (15 րոպե).

- Ըննարկեք մարմնի քարտեզագրման վարժության նպատակը: Բացատրեք, որ մասնակիցները կստեղծեն իրենց փորձառությունների, հույզերի և ուժերի տեսողական ներկայացում՝ նկարելով կամ գրելով իրենց մարմնի բնական չափի ուրվագծի վրա:

- Մարմնի ուրվագծի ստեղծում (40 րոպե).

- Տրամադրեք յուրաքանչյուր մասնակցի մեծ թուղթ:

- Յրահանգեք նրանց պառնել թղթի վրա, մինչև համակարգողը կամ հասակակիցը գծում է նրանց ուրվագիծը:

- Խրախուսեք մասնակիցներին լինել ստեղծագործ այն հարցում, թե ինչպես են նրանք դիրքավորում իրենց մարմինները թղթի վրա, և հավաստիացրեք նրանց, որ կարող են ընտրել միայն որոշակի մասեր կամ ամբողջ մարմինը ներկայացնելու համար:

- Խորհրդանշական ներկայացում (30 րոպե).

- Երբ մարմնի ուրվագծերը ստեղծված են, մասնակիցները կարող են օգտագործել մարկերներ, գունավոր մատիտներ կամ կավիճներ՝ խորհրդանշական կերպով ներկայացնելու իրենց հույզերը, հիշողությունները և փորձառությունները իրենց մարմնի քարտեզների վրա:

- Նրանք կարող են օգտագործել գույներ, ձևեր և խորհրդանիշներ՝ փոխանցելու իրենց ճանապարհորդության տարբեր ասպեկտները, ինչպիսիք են՝ մարտահրավերները, ուժեղ կողմերը, աջակցության համակարգերը և ձգտումները:

- Կոլաժի ընտրովի տարր (20 րոպե).

- Տրամադրեք ամսագրեր կամ տպված պատկերներ՝ կապված դրական թեմաների, դիմացկունության և հույսի հետ:

- Մասնակիցները կարող են կտրել պատկերներ, որոնք արձագանք են գտնում իրենց մեջ և ներառել դրանք իրենց մարմնի քարտեզների մեջ՝ օգտագործելով սոսինձ:
- Խորհել և կիսվել (30 րոպե).
 - Իրենց մարմնի քարտեզները ավարտելուց հետո, մասնակիցներին հնարավորություն տվեք խորհրդածել իրենց ստեղծագործությունների մասին:
 - Խրախուսեք կամավոր կիսվելը, որտեղ մասնակիցները կարող են քննարկել իրենց արվեստի գործերը և իրենց ընտրությունների հետևում եղած խորհուրդը: Սակայն շեշտեք, որ կիսվելը ըստ ցանկության է:

- Ցուցադրություն և փակում (15 րոպե).
 - Սկզբով կամ ամրացրեք ավարտված մարմնի քարտեզները պատին՝ պատկերասրահի ոճով ցուցադրության համար:
 - Անցկացրեք փակման քննարկում փորձառության մասին՝ կենտրոնանալով ձեռք բերված ներըմբռնումների և ստեղծագործական գործընթացի միջոցով ցուցադրված ուժի վրա:

Մարմնի քարտեզագրման այս վարժությունը տրամադրում է ոչ վերբալ և խորհրդանշական ելք մասնակիցների համար՝ արտահայտելու իրենց մտքերն ու հույզերը՝ կապված զինված հակամարտությունների և պատերազմի հետ իրենց փորձառությունների հետ: Այն նաև թույլ է տալիս անհատականացված արտահայտություններ դիմացկունության և ուժի վերաբերյալ՝ խթանելով հզորացման և կապի զգացում խմբի ներսում:

Աղբյուրներ.

Masterclass
<https://www.masterclass.com/articles/7-acting-warmups-games-and-techniques-for-actors#sK89k81XBIKq3zVMINrtn>

Theatre Folk: <https://www.theatrefolk.com/blog/improv-games-for-collaboration/>
 0.<https://kids.frontiersin.org/articles/10.3389/frym.2017.00006>

1.<https://www.canada.ca/en/health-canada/services/home-garden-safety/use-arts-crafts-materials-safely.html>

2.<https://www.shamimasworkshop.com/art-and-craft-safety>

3.Shelley Klammer: 100 Art Therapy Exercises
<https://intuitivecreativity.typepad.com/expressiveartinspirations/100-art-therapy-exercises.html>

Positive Psychology: <https://positivepsychology.com/expressive-arts-therapy/>

Drama games: <https://dramaresource.com/drama-games/>

1.<https://guidedmeditationframework.com/blog/how-to-guide-a-meditation-class>

2.<https://www.michaelshank.tv/strategic-arts-based-peacebuilding/>

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հետազոտող՝ Վերոնիկա Կնոպսկա

Պատերազմից և զինված հակամարտություններից տուժած շրջաններում երիտասարդությունը հաճախ հայտնվում է արմատականացման և բևեռացման ցանցում: Կողմնակալ պատմությունների և քարոզչության փոխկապակցումը, որը տարածվում է ինչպես ներսում գտնվողների մոտ, այնպես էլ մեդիա ալիքների միջոցով, ավելի է բորբոքում ատելությունն և արմատական կողմնակալությունը: Սոցիալական մեդիայի համատարած ազդեցությունը՝ զուգորդված հիբրիդային պատերազմի մեթոդների հետ փոխկապակցված լուրերի հետ, ստեղծում է տեղեկատվության մեծ հոսք, որը երիտասարդությանը բանտարկում է անխուսափելի «մենք ընդդեմ նրանց» պատմությի մեջ: Այսպիսի մարտահրավերային հանգամանքներում ակնհայտ է դառնում մեդիագրագիտության և առցանց քննադատական մտածողության կրթության անհրաժեշտությունը: Երիտասարդ անհատներին աղավաղված պատմությունների միջով նավարկելու, աղբյուրները հարցականի տակ դնելու և տեղեկատվության նրբերանգները զանազանելու հմտություններով զինելը կարևոր է բևեռացման կապանքներից ազատվելու և հակամարտության դեմ հանդիման ավելի տեղեկացված, դիմացկուն երիտասարդությունն ձևավորելու համար: Հետևյալ ենթաբաժինում մենք կուսումնասիրենք պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ աշխատանքի համատեքստում մեդիագրագիտության ուսուցման տարբեր մասերը:

Ի՞նչ է մեդիագրագիտությունը:

Ամերիկյան ասոցիացիան սահմանում է մեդիագրագիտությունը որպես **հաղորդակցության բոլոր տեսակներով հասանելիությունն ստանալու, վերլուծելու, գնահատելու, ստեղծելու և գործելու կարողություն:**

Ինչպե՞ս կարող ենք բացատրել դա այն երիտասարդներին, որոնց հետ աշխատում ենք:

Պատկերացրեք, որ դուք թերթում եք ձեր սոցիալական մեդիայի լրահոսը և հանդիպում եք ընթացիկ իրադարձության մասին մի հոդվածի կամ գրառման: Մեդիագրագիտությունը, մի խոսքով, նման է գերուժի, որն օգնում է ձեզ հասկանալ այն, ինչ տեսնում և կարդում եք:

Ահա թե ինչ է ասում Մեդիա գրագիտության ամերիկյան ասոցիացիան.

Հասանելիություն. դա վերաբերում է տեղեկատվություն գտնելու և ստանալու կարողությանը:

Վերլուծություն. սա նշանակում է մանրամասն ուսումնասիրել տեղեկատվությունը. արդյո՞ք այն գալիս է վստահելի աղբյուրից: Արդյո՞ք այն հավասարակշռված է թվում, թե՞ կա որոշակի տեսակետ կամ կողմնակալություն:

Գնահատում. տեղեկատվությունը վերլուծելուց հետո դուք որոշում եք՝ արդյոք այն վստահելի է, թե ոչ: Դուք նման եք քննիչի, որը ստուգում է հուշումները՝ տեսնելու, թե արդյոք ամեն բան ճշգրիտ է և արդար:

Ստեղծում. այս մասը ձեր մասին է: Մեդիագրագիտությունը նաև վերաբերում է հաղորդակցության տարբեր ձևերով ինքնարտահայտվելուն: Դա կարող է լինել բլոգ գրելը, տեսանյութեր ստեղծելը կամ նույնիսկ պարզապես առցանց ձեր մտքերով կիսվելը:

Գործողություն. միայն մեդիան հասկանալու մասին չէ, դա այդ գիտելիքն օգտագործելու մասին է՝ տեղեկացված որոշումներ կայացնելու կամ գործողությունն ձեռնարկելու համար: Դա կարող է լինել վստահելի տեղեկատվություն տարածելը, ապատեղեկատվության դեմ պայքարելը կամ նույնիսկ պարզապես ուշադիր լինելը, թե ինչպես է մեդիան ազդում ձեր տեսակետների վրա:

Այսպիսով, մեդիագրագետ լինելը նման է գործիքակազմ ունենալուն՝ տեղեկատվության ընդարձակ աշխարհում նավարկելու, այն հասկանալու և այդ ըմբռնումն օգտագործելու համար՝ այսօրվա մեդիայով առաջնորդվող հասարակության մեջ տեղեկացված և ակտիվ մասնակից լինելու համար:

Արդյո՞ք բոլոր ապակողմնորոշող տեղեկատվությունները նույնն են և պարտադիր վատը:

Մենք առանձնացնում ենք ապակողմնորոշող տեղեկատվության 3 հիմնական տեսակ.

- Սխալ տեղեկատվություն. տեղեկատվություն, որը կեղծ է կամ ապակողմնորոշող, բայց ստեղծված չէ վնաս պատճառելու մտադրությամբ:
- Ապատեղեկատվություն. տեղեկատվություն, որը կեղծ է և դիտավորյալ ստեղծված է անձին, սոցիալական խմբին, կազմակերպությանը կամ երկրին վնաս պատճառելու համար:
- Չարամիտ տեղեկատվություն. տեղեկատվություն, որը հիմնված է իրականության վրա, օգտագործվում է անձին, կազմակերպությանը կամ երկրին վնաս պատճառելու համար:

Ինչպե՞ս կարող ենք բացատրել դա այն երիտասարդներին, որոնց հետ աշխատում ենք:

Օգտագործեք իրական կյանքի օրինակներ.

- Սխալ տեղեկատվությունը կարող է լինել պատահաբար տարածված տեղեկատվություն, կատակ կամ երգիծանք. ստեղծված չէ որևէ վնաս պատճառելու կամ ատելություն հրահրելու համար: Դրա լավ օրինակ կարելի է գտնել երգիծական կայքերում, ինչպիսին է The Onion-ը, կամ հանրային գործիչներին ծաղրող տեսարաններում, ինչպիսիք են SNL-ի պատրաստածները:
- Ապատեղեկատվությունը տեղեկատվություն է, որը կեղծ է և դիտավորյալ ստեղծված է անձին վնասելու համար: Ապատեղեկատվության բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել առցանց՝ փաստերի ստուգման կայքերում: Ահա փաստերի ստուգման կայքերի Վիքիպեդիայի ցանկը տարբեր տարածաշրջանների և երկրների համար՝ https://en.wikipedia.org/wiki/List_of_fact-checking_websites

Չարամիտ տեղեկատվությունը, հավանաբար, երեքից ամենաբարդն է բացատրելու, քանի որ դա տեղեկատվություն է, որը հիմնված է իրականության վրա, օգտագործվում է անձին, խմբին կամ ազգին վնասելու համար: Սովորաբար նախկին միջադեպը նկար կամ տեսանյութ է օգտագործվում վնասելու և ատելություն հրահրելու որոշակի համայնքների հանդեպ: Դա կարող է լինել նաև պատմականորեն մանիպուլյացված վիճակագրություն: Այս օրինակները կարելի է գտնել փաստերի ստուգման կայքերում: Պարզապես համոզվեք, որ ուսումնասիրում եք պատկերի կամ թվի բնօրինակ աղբյուրը՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող է չարամիտ տեղեկատվության օգտագործումը փոխել նույն տեղեկատվության համատեքստը կամ ընկալումը:

Երիտասարդներին տվեք մանիպուլյացված տեղեկատվության յուրաքանչյուր տեսակի օրինակներ, այնուհետև տվեք ավելի շատ օրինակներ, մինչ նրանք խաղում են «Գուշակիր մանիպուլյացված տեղեկատվության տեսակը» խաղը: Սա թույլ կտա նրանց գործնականում կիրառել իրենց սովորած գիտելիքները՝ օգտագործելով իրական աշխարհի օրինակներ, և դուք կարող եք որոշել, թե արդյոք նրանք հասկանում են մանիպուլյացված տեղեկատվության տարբեր տեսակները:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑԱԿԱՐՆԵՐԻ ՀԱՍԱՐ. պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների հետ աշխատանքում մեդիագրագիտության ուսուցումը ներառելու նպատակը դատելը չէ նրանց տեսակետները կոնկրետ իրավիճակների կամ խմբերի վերաբերյալ, ոչ էլ նպատակ ունի ընդգծել կողմնակալությունը կամ առավել ևս՝ նրանց ենթարկել տրավմատիկ տեղեկատվության իրենց ապրած իրադարձությունների մասին: Փոխարենը, հիմնական նպատակն է նրանց զինել էական գործիքներով՝ մանիպուլյացված տեղեկատվությունը բացահայտելու և քննադատական մտածողության հմտություններ կիրառելու համար՝ տարբեր լրատվական և տեղեկատվական աղբյուրներում նավարկելիս: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ դասընթացավարների համար կարևոր է ուշադիր լինել մեդիագրագիտության հասկացությունները ներկայացնելու համար օգտագործվող օրինակները: Անվտանգ և չեզոք ուսումնական միջավայր ստեղծելու համար օրինակները պետք է խուսափեն կենտրոնանալ զինված հակամարտությունների, միգրանտների կամ փախստականների վրա: Տրամադրված օրինակներում չեզոք դիրքորոշում պահպանելով՝ դասընթացավարները կարող են արդյունավետորեն հզորացնել երիտասարդ անհատներին՝ զարգացնելով անհրաժեշտ հմտությունները՝ տեղեկատվությունը գնահատելու և քննադատաբար վերլուծելու համար՝ առանց հրահրելու հնարավոր ցավալի հիշողություններ կամ զգացմունքներ, որոնք կապված են իրենց անձնական փորձառության հետ:

Ապակողմնորոշող տեղեկատվության հայտնաբերման ESC կանոնը

ESC (Emotions, Source, Claim- Չգացմունքներ, Աղբյուր, Պնդում) կանոնը շատ պարզ, բայց արդյունավետ մեթոդ է, որը հզորացնում է անհատներին՝ կիրառելու իրենց քննադատական մտածողության հմտությունները մանիպուլյացված տեղեկատվությունը գանազանելու համար: ESC կանոնը ծառայում է որպես արժեքավոր ուղեցույց մեդիա բովանդակության բարդ լանդշաֆտում նավարկելիս՝ տրամադրելով գնահատման կառուցվածքային մոտեցում:

Ինչպե՞ս կարող ենք բացատրել դա երիտասարդներին, որոնց հետ աշխատում ենք:

Չգացմունքներ. մտածեք, թե ինչպես եք ձեզ զգում այն, ինչ տեսնում կամ կարդում եք: Արդյո՞ք նրանք փորձում են ձեզ դիտավորյալ շատ ուրախացնել, բարկացնել կամ վախեցնել: Դա մեծ կարմիր դրոշ է: Երբեմն մարդիկ օգտագործում են ուժեղ զգացմունքներ՝ արձագանք ստանալու համար, այնպես որ կարևոր է նկատել, եթե ինչ-որ բան փորձում է խաղալ ձեր զգացմունքների հետ:

Աղբյուր. մտածեք, թե որտեղից է գալիս տեղեկատվությունը: Պատկերացրեք, որ դա նման է ստուգելուն, թե արդյոք ձեր սիրած առցանց խանութը օրինական է, նախքան ինչ-որ բան գնելը: Արդյո՞ք տվյալ աղբյուրը վստահելի է, ինչպես օրինակ՝ վստահելի լրատվական կայք կամ հայտնի կազմակերպություն: Եթե այն անհայտ կամ կասկածելի աղբյուրից է, հնարավոր է՝ վստահելի չլինի:

Պնդում. նայեք հիմնական կետին կամ գաղափարին, որը նրանք հաղորդում են ձեզ: Արդյո՞ք դա իմաստ ունի, թե՞ ինչում է չափազանց խենթ՝ ճշմարիտ լինելու համար: Դա նման է ձեր ընկերոջ խենթ պատմությունը ստուգելուն՝ նախքան դրան հավատալուն: Եթե առանցքային գաղափարը չի համապատասխանում նրան, ինչ դուք գիտեք, հնարավոր է՝ ինչ-որ կասկածելի բան է կատարվում:

Այսպիսով, ESC կանոնը նման է մեր մտքում ստուգաթերթ ունենալուն՝ պարզելու համար, թե արդյոք այն, ինչ տեսնում կամ լսում եք, վստահելի է: Դա ամբողջությամբ վերաբերում է խորամանկ զգացմունքներին հետևելուն, ստուգելուն, թե արդյոք աղբյուրը վստահելի է, և համոզվելուն, որ հիմնական գաղափարն իրականում իմաստ ունի: Այս կերպ դուք կարող եք լինել խելացի մեդիա քննիչ և չխաբվել ապակողմնորոշող տեղեկատվությունից:

Ինչպե՞ս կարող ենք դա գործնականում կիրառել:

Երիտասարդներին տվեք տարբեր լուրերի օրինակներ՝ թե՛ մանիպուլյացված, թե՛ վստահելի, և այնուհետև տվեք ավելի շատ օրինակներ, մինչև նրանք խաղում են «արդյո՞ք կեղծ է» խաղը: Սա թույլ կտա նրանց գործնականում կիրառել իրենց սովորած գիտելիքները՝ օգտագործելով իրական աշխարհի օրինակներ, և դուք կարող եք որոշել, թե արդյոք նրանք կարող են օգտագործել ESC կանոնը:

Ջետազա հարցեր՝ մեդիայի նպատակի և ներկայացման մասին հարցնելու համար

ESC կանոնը շատ օգտակար է լուրերի առաջին գնահատման համար, բայց այն բավականին սահմանափակ է: Ահա մի քանի այլ հարցեր, որոնք պետք է ինքներդ ձեզ տաք՝ ավելի շատ մտածելու համար այն տեղեկատվության նպատակի և ներկայացման մասին, որը ձեզ վրա ազդում է.

- Ո՞րն է հիմնական ուղերձը:
- Ո՞վ է ստեղծել ուղերձը:
- Ինչո՞ւ է ստեղծվել այս ուղերձը: Ո՞վ է վճարել (կամ վճարում) այս ուղերձի համար:
- Ինչպե՞ս է ուղերձը փորձում գրավել ձեր ուշադրությունը:
- Ո՞վ է ներկայացված ուղերձում: Եվ ո՞վ է բացակայում:

Ինչպե՞ս կարող ենք դա գործնականում կիրառել:

Պատրաստեք լրատվական հաղորդագրությունների «գործնական ուսումնասիրության» օրինակներ, գտեք առցանց հոդվածներ (սախընտրելի է մանիպուլյացիայի բովանդակությամբ), բաժանեք երիտասարդներին 3-4 հոգանոց խմբերի, տվեք նրանց մեկ օրինակ՝ աշխատելու համար, և թույլ տվեք նրանց պատասխանել հարցերին՝ հիմնվելով այդ հոդվածի վրա: Այնուհետև թույլ տվեք մասնակիցներին ներկայացնել իրենց աշխատանքի արդյունքները և քննարկել դրանք խմբի հետ պլենար-լիագումարի ընթացքում:

Ինչո՞ւ պետք է խոսենք մեդիագրագիտության մասին հակամարտությունների համատեքստում:

Դուք կարող եք ավարտել մեդիագրագիտության դասընթացները երիտասարդների հետ բաց քննարկումով այն թեմայի շուրջ, թե ինչու պետք է խոսենք մեդիագրագիտության մասին հակամարտությունների համատեքստում:

Ինչո՞ւ պետք է դա անենք:

Հակամարտությունների համատեքստում մեդիագրագիտության մասին խոսելը կարևոր է մի քանի պատճառներով.

-Կողմնորոշվել տեղեկատվական լաբիրինթոսում. հակամարտությունների ժամանակ շրջանառվում է շատ տեղեկատվություն, և ոչ բոլորն են ճշգրիտ: Մեդիագրագիտությունը օգնում է ձեզ դառնալ խելացի հետազոտող այս տեղեկատվական ջունգլիում: Դա նման է գանձերի քարտեզի, որն ուղղորդում է ձեզ դեպի վստահելի աղբյուրներ և հեռու՝ ապակողմնորոշող կամ կողմնակալ տեղեկատվությունից:

-Պաշտպանել ինքներդ ձեզ մանիպուլյացիայից. երբեմն մարդիկ փորձում են մանիպուլյացիայի ենթարկել տեղեկատվությունը՝ ստիպելով ձեզ մտածել որոշակի կերպով կամ զգալ որոշակի էմոցիա: Մեդիագրագիտությունը ձեր սուպերհերոսի ուժն է՝ հասկանալու, երբ ինչ-որ մեկը փորձում է խաղեր խաղալ տեղեկատվության հետ: Այն օգնում է ձեզ տեսնել ծխի և հայելիների միջով:

-Հասկանալ տարբեր տեսակետներ. հակամարտությունները հաճախ ներառում են տարբեր կողմեր՝ իրենց սեփական պատմություններով: Մեդիագրագիտությունը նման է հատուկ ակնոցների, որոնք թույլ են տալիս ձեզ տեսնել առարկաները տարբեր տեսանկյուններից: Այն օգնում է ձեզ հասկանալ տարբեր տեսակետներ՝ խթանելով էմպատիան և կանխելով ձեզ իրավիճակի միակողմանի տեսակետը դիտարկելը:

-Լինել ակտիվ, տեղեկացված քաղաքացի. հակամարտությունների ժամանակ կարևոր է լինել ակտիվ և տեղեկացված քաղաքացի: Մեդիագրագիտությունը հզորացնում է ձեզ՝ քննադատորեն ներգրավվելու աշխարհի հետ: Դուք կարող եք կիսվել ճշգրիտ տեղեկատվությամբ, տալ կարևոր հարցեր և նշանակալի ձևով մասնակցել քննարկումներին: Խոսքը գնում է լուծման մաս լինելու, այլ ոչ թե պասիվ դիտորդ լինելու մասին:

-Պաշտպանել ձեր հոգեկան բարեկեցությունը. հակամարտությունները կարող են էմոցիոնալ լիցքեր պարունակել, և մեդիագրագիտությունը գործում է որպես վահան ձեր հոգեկան բարեկեցության համար: Այն օգնում է ձեզ զտել բովանդակությունը, որը կարող է վշտացնող կամ վնասակար լինել՝ թույլ տալով ձեզ աշխատել տեղեկատվության հետ այնպես, որ բացասաբար չազդի ձեր հոգեկան առողջության վրա:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՏՐԻՑԱՆ

Հետազոտողներ՝ Վերոնիկա Կնոպկա և Ջուլիա Ստեֆանելլի

Չինված հակամարտությունների համատեքստում երիտասարդները, հատկապես անչափահասները, կազմում են խոցելի խումբ, որի համար կազմակերպությունները պետք է իրենց զինեն ռիսկերի գնահատման գործիքներով: Երբ պլանավորվում է կամ պետք է վերանայվի երեխաների պաշտպանության տեսանկյունից որևէ ծրագիր կամ նախագծային գործունեություն, պետք է իրականացվի Ռիսկերի գնահատում՝ կապված երեխաներին չարաշահումից կամ շահագործումից պաշտպանելու հետ, որպեսզի բացահայտվեն ամենահամապատասխան միջոցները՝ մեղմելու և կառավարելու բացահայտված ռիսկերը:

Ստորև բերված է հիմնական Ռիսկերի գնահատման օրինակ: Այն ներառում է նախագծի գործունեության վերլուծություն՝ ըստ մի քանի հիմնական կետերի/հարցերի, որոնք թույլ են տալիս կազմել Ռիսկերի մատրիցա՝ ներառյալ կառավարման գործողությունները և պատասխանատվության ցուցումները՝ բացահայտված ռիսկերը կառավարելու և մոնիթորինգի ենթարկելու համար:

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Քայլ 1- Բացահայտել երեխաների պաշտպանության ռիսկերը:

Ռիսկերը բացահայտելու համար սովորաբար օգտագործվող տարբեր մոտեցումներ են՝ ստուգման ենթակա ցուցակները, փորձի, ինտուիցիայի վրա հիմնված գնահատումներն ու դատողությունները, ինչպես նաև համակարգերի և իրավիճակի վերլուծությունը:

Հիմնական հարցերը, որոնց պետք է պատասխանել այս առաջին և ամենաընդհանուր Ռիսկերի գնահատման մեջ մտնելու համար, հետևյալն են.

-Որո՞նք են նախագծի գործնական մանրամասները (օրինակ՝ տարբեր քաղաքներում դիզայնի գործողությունների) հիմնական ռիսկային գործոնների լույսի ներքո:

-Ի՞նչ կարող է սխալ գնալ/սխալ պատահել:

-Որքա՞ն հավանական է դա:

-Ի՞նչ հետևանքներ կարող են լինել:

-Ի՞նչ պետք է արվի ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Ո՞վ պետք է դա անի:

-Ինչպե՞ս ենք մենք վերահսկում այս գործընթացը:

Երբ մենք գնահատում ենք ծրագրերը համոզվելու համար, որ դրանք անվտանգ են թիրախավորված աղջիկների, երեխաների և դեռահասների համար, և որպեսզի երեխաները, որոնց համար մենք աշխատում ենք, պաշտպանված լինեն ցանկացած տեսակի չարաշահումից կամ շահագործումից, ինչպես սահմանված է Երեխաների պաշտպանության քաղաքականությամբ (ԵՊՔ), մենք հաշվի ենք առնում «առնվազն» յոթ հատուկ ռիսկային գործոններ, որոնք ձևակերպված են ըստ որոշակի ասպեկտների, որոնց օրինակները տրված են:

Մոդելը փոխառված է <https://www.keeping-childrensafe.global/international-child-safeguarding-standards/> կայքից առաջարկում: Առաջարկում ենք ձեզ ուսումնասիրել՝ ավելի մանրամասն տեղեկությունների համար:

Երիտասարդների հզորացման և վերականգնման
համապարփակ ուղեցույց

ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ	ՌԻՍԿԻ ԱՍՊԵԿՏՆԵՐ, ՕՐԻՆԱԿՆԵՐ
ԵՐԵՒԱՅԻ ՏԱՐԻՔ/ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ	<ul style="list-style-type: none"> - շատ փոքր երեխաներ - կրթության ցածր մակարդակ - ծնողագուրկ կամ լքված երեխաներ - հաշմանդամություն ունեցող երեխաներ - երեխաներ, ովքեր արդեն ենթարկվել են սեռական բռնության կամ շահագործման - ծնողական հսկողության բացակայություն - երեխաներ, ովքեր տեղահանվել են իրենց համայնքից/միջավայրից
ՎԱՅՐ/ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<ul style="list-style-type: none"> - մեկուսացված տարածքներ - պատերազմի կամ քաղաքացիական անկարգությունների հետևանքով աղետի ենթարկված տարածքներ - գերբնակեցված տարածքներ - փախստականների ճամբարներ - համայնքից հեռու կամ մեկուսացված վայրերում տեղակայված ծրագրեր - խնամակալներ, ովքեր այցելում են երեխաների տները - շրջակա միջավայրում առկա ֆիզիկական վտանգներ (օրինակ՝ ջրի պակաս, երթևեկություն և այլն)
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	<ul style="list-style-type: none"> - երեխաների հետ անմիջական շփման մեջ աշխատելը, «մեկ առ մեկ» իրականացվող գործողություններ - ակնկալվող ֆիզիկական շփում - անձնական հիգիենայի ապահովման խնդիրներ - կամավորների օգտագործում
ԱՆՁՆԱԿԱԶՄ	<ul style="list-style-type: none"> - արագ հավաքագրում՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար - մենեջերի կողմից անբավարար վերահսկողություն - օպերատորները տեղյակ չեն և վերապատրաստված չեն երեխաների պաշտպանության քաղաքականության (ԵՊԶ) վերաբերյալ - վարքագծի կանոնադրքին ծանոթ չեն
ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ (ՊԱՏԱՍԽԱՆԱԼԱՏՈՒ ԿՈՂՄԻՑ)	<ul style="list-style-type: none"> - օպերատորներն աշխատում են առանց վերադասի վերահսկողության-կամավորները չեն վերահսկվում օպերատորների (անձնակազմի) կողմից- պաշտոնական վերահսկողության բացակայություն- գործելակերպի մեջ հաշվետվողականության կամ թափանցիկության պակաս-գոյություն չունեցող կամ ոչ պաշտոնական վերահսկողություն (օրինակ՝ այցելուներ, ովքեր կարող են ներկա գտնվել ծրագրում երեխաների հետ գործողությունների ընթացքում, որոնք չեն վերահսկվում անձնակազմի կողմից)
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱԼ ՄՇԱԿՈՒՅԹ	<ul style="list-style-type: none"> - փակ կազմակերպություն կամ երեխաների պաշտպանության իրավունքների մասին անտեղյակություն - մենեջերների կամ անձնակազմի կողմից երեխաների պաշտպանության հարցերի նկատմամբ հետաքրքրվածության ցածր մակարդակ - պաշտպանության միջոցառումների կամ հիմնական ուղերձների խթանման բացակայություն - «մտահոգություններ չբարձրաձայնելու» կամ «անձնակազմի անպատշաճ վարքագծի մասին չզեկուցելու» մշակույթի առկայություն

ՏԵՂԱԿԱՆ
ՌԻՍԿԻ
ԳՈՐԾՈՆՆԵՐ

- երեխաների պաշտպանության կամ երեխաների նկատմամբ բռնության պատժի օրենքների կիրառման թերություններ
- երեխաների բարեկեցությանն ուղղված ծառայությունների թերություններ
- տարածք, որտեղ կան հանցավոր կազմակերպություններ, որոնք ազդում են երեխաների և համայնքի վրա
- սեռական շահագործման նպատակով թափափոխված

Այս գործոններից մեկի կամ մի քանիսի առկայությունը կամ հայտնաբերումը պետք է հանգեցնի յուրաքանչյուր առանձին նախագծային գործողության ստուգելուն՝ հասկանալու համար, թե որքանով է հավանական, որ երեխաները կարող են չարաշահվել ու ում կողմից, և բացահայտել գործողություններ՝ այդ ռիսկը մեղմելու կամ չեզոքացնելու համար:

Քայլ 2- ԴԻՏԱՐԿԵԼ ՌԻՍԿԻ ԻՐԱԿԱՆԱՆԱԼՈՒ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Մատրիցայի ներսում թիվ (5-ից 1) կհատկացվի՝ ցույց տալու համար, թե որքանով ենք մենք հավանական համարում, որ բացահայտված ռիսկի ոլորտը կառաջանա՝ ըստ հետևյալ սանդղակի.

- 5- գործնականում հաստատ (ակնկալվում է, որ տեղի կունենա գրեթե բոլոր հանգամանքներում)
 - 4- հավանական (հավանաբար տեղի կունենա շատ հանգամանքներում)
 - 3- հնարավոր (կարող է երբեմն տեղի ունենալ)
 - 2- անհավանական (չի ակնկալվում, որ տեղի կունենա)
 - 1- հազվադեպ (ակնկալվում է, որ տեղի կունենա միայն բացառիկ հանգամանքներում):
- Միավոր հատկացնելը օգտակար է առաջնահերթությունները կամ գործողությունների հրատապությունը սահմանելու համար. ռիսկերը նվազեցնելու/չեզոքացնելու միջոցառումները կազմակերպելիս մենք կսկսենք նրանցից, որոնք ամենայն հավանականությամբ կիրականանան (4 կամ 5), բայց մենք նաև կդիտարկենք նրանք, որոնք հնարավոր հետևանքները ծանր են:

Այնուհետև դիտարկեք ռիսկի հետևանքները:

Դրանք նույնքան կարևոր են, որքան այդ ռիսկային գործոնի առկայության/տեղի ունենալու հավանականությունը: Դրանք սահմանվում են ըստ հետևյալ սանդղակի՝

5-լուրջ, 4-մեծ, 3-չափավոր, 2-փոքր, 1-գրեթե չկա:

Օրինակ՝ քիչ հավանական է, որ կարող է (2) պոտենցիալ օպերատորն ունենա անչափահասների նկատմամբ կասկածելի կամ չարաշահող վարքի պատմություն, այնուամենայնիվ, խոցելի անհատների համայնքում աշխատելու համար անձ վարձելը կօգնի զերծ մնալ տհաճ հետևանքներից:

Քայլ 3- ՌԻՍԿԵՐԸ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՈՎԱՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Այնուհետև մենք կփորձենք ուրվագծել, թե ինչ ռազմավարություններ կամ գործողություններ կարող ենք իրականացնել՝ բացահայտված ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Ռիսկերը մեղմելու հնարավոր միջամտությունների որոշ օրինակներ են.

- Մոնիթորինգ և գնահատում (երբ ռիսկը ցածր է)
- Գործողություններից խուսափում (երբ ռիսկը չափազանց բարձր է)
- Քաղաքականությունների կամ ընթացակարգերի կամ պլանների փոփոխում՝ վնասի հավանականությունը նվազեցնելու համար
- Գործունեության փոխանցում մեկ այլ կազմակերպության կամ գործընկերությունների ձևավորում
- Նախագծի շարունակում և ինչ-որ բան տեղի ունենալու ռիսկի ընդունում
- Եվ այլն. . .

Ռիսկերը մեղմելու ռազմավարություններ սահմանելիս անհրաժեշտ է նաև նշել՝ ինչպես դա կարվի, ով կանի դա, ինչպես կվերահսկվի:

Քայլ 4- ՌԻՍԿԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Երեխաների պաշտպանությանը բնորոշ ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացը պետք է լինի շարունակական անընդմեջ գործընթաց: Ռիսկերի մոնիթորինգը նույնպես կարևոր է Պաշտպանության քաղաքականության և ուղեցույցների վերանայման համար: Ստորև բերված Ռիսկերի մատրիցան լրացնելիս անհրաժեշտ է նշել, թե ինչպես, երբ և ինչ պատասխանատվություններ/դերեր կան մոնիթորինգի մեջ:

Գնահատման գործընթաց և ռիսկերի մատրիցան

- Արդյո՞ք նախկինում նույնականացված ռիսկերը դեռ առկա են:
- Արդյո՞ք դրանք նվազել են, վերահսկվել, կառավարվել ներդրված ռազմավարությունների միջոցով:
- Կա՞ն արդյոք ռիսկերի նոր տեսակներ:
- Ի՞նչ նոր ռազմավարություններ են անհրաժեշտ առաջացող ռիսկերը նվազեցնելու, վերացնելու կամ վերահսկելու համար:

ՌԻՍԿԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ

Ռիսկերի գնահատման գործընթացը հեշտացնելու համար մենք օգտագործում ենք նկարագրական մատրիցա, որը պետք է կազմվի՝ հաշվի առնելով վերոնշյալ կետերը: Մատրիցան ծառայում է անմիջապես նշելու և ամփոփելու առանձին համատեքստերում/վայրերում հայտնաբերված կոնկրետ ծրագրային ռիսկերը: Մատրիցան կպահանջի, որ այն լրացնող անձը ամփոփի համատեքստը, առանձին ռիսկի վերլուծությունը, դրա տեղի ունենալու հավանականությունը և գործողությունները, որոնք պետք է ներդրվեն այդ ռիսկը մեղմելու համար: Սա վերաբերում է յուրաքանչյուր ծրագրային գործողությանը, որի համար առկա է անչափահասների պաշտպանությանը բնորոշ ռիսկի հավանականություն: Ստորև բերված է ծրագրային գործողությունների տարեկան վերանայման համար կազմված մատրիցայի օրինակ (Save the Children Australia, 2010):

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՍ ՆԱԽԱՁԵՆՈՒՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՏՐԻՑԱ

Հիմնական գործողություն | Ռիսկի ոլորտներ | Իրականանալու հավանականություն (մակարդակ)

Նախագիծ	Անուն	Միգրացիայի ռիսկ
---------	-------	-----------------

Չինված հակամարտության համատեքստները պատերազմի ժամանակ կարող են բերի լինել մարդկանց թրաֆիքինգի երևույթներով, և թեև երիտասարդական աշխատողները սոցիալական աշխատողներ չեն, կարևոր է ակտիվացնել առնվազն առաջնային սքրինինգի որոշ ձևեր՝ նույնականացնելու ռիսկային իրավիճակները, որոնք այնուհետև պետք է հաղորդվեն մասնագետներին և իրավասու մարմիններին: Ահա մի քանի տարրեր, որոնք կարող են ուղղորդել դիտարկումը:

Թրաֆիքինգի վերաբերյալ լրացուցիչ արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է թրաֆիքինգը հետևյալ կերպ. «**Մարդկանց թրաֆիքինգ**» նշանակում է անձանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, թաքցնում՝ ուժի կիրառման սպառնալիքի կամ ուժի կամ հարկադրանքի այլ ձևերի՝ առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության չարաշահման կամ խոցելի վիճակի չարաշահման միջոցով, կամ գումարներ կամ շահեր տալու կամ ստանալու միջոցով՝ շահագործման ենթարկել: Շահագործումը ներառում է, նվազագույնը, մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը՝ հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ կախվածության մեջ պահելը կամ օրգանների հեռացումը:

Թրաֆիքինգի ենթարկված անձանց նույնականացումը հիմնված է ընդհանուր տարրերի ըմբռնման վրա, որոնք կարող են ի հայտ գալ սոցիալական աշխատողի հետ հարցազրույցի ընթացքում կամ հետագա հանգամանքներում:

Թրաֆիքինգի ենթարկված անձի նույնականացումը վճռորոշ է՝ գոհին համապատասխան պաշտպանություն և օգնություն ապահովելու համար, քանի որ այն առաջին քայլն է հանդիսանում անձին հնարավորություն տալու դուրս գալ ենթակայության այն դիրքից, որում նա գտնվում է:

Նախնական նույնականացումից հետո, իհարկե, հետևում է պաշտոնական նույնականացում, որն իրականացվում է որակավորված և լիազորված անձանց կողմից՝ սոցիալական կազմակերպության, օպերատորի և այլ անձի ուղղորդումից հետո:

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՔՐԻՆԻՆԳ (ՆԱԽՆԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

- Առաջին հանդիպում (անձի պրոֆիլ, սեռ, տարիք, ծագում, ֆիզիկական նշաններ, անձի վերաբերմունք, սեռական կողմնորոշում)
- Նախապատմություն (ընտանիք, սոցիալ-տնտեսական իրավիճակ)
- Միայնակ ճանապարհորդող կին կամ անչափահաս
- Խոցելի անձ, ուղեկցված մեկի կողմից, ում չի ճանաչում կամ ում հետ հստակ հարաբերություններ չունի
- Մեկնման պահին բարերարի առկայություն
- Երթուղի, որն ունի հանցավոր կազմակերպությունների կողմից օգտագործվող երթուղիներին բնորոշ հատկանիշներ
- Ճանապարհորդության վերաբերյալ թույլ գիտելիքներ
- Անցում «հյուրընկալողից» «հյուրընկալվողի»
- Շահագործման փորձառություններ
- Ճանապարհորդության համար չվճարելը
- Ինքնության փաստաթղթերի առգրավում տարանցման ժամանակ կամ նպատակակետ երկրում
- Բազմաթիվ նախկին աբորտներ
- Փակվածություն օպերատորի նկատմամբ
- Անօթևանի կարգավիճակ
- Անվտանգություն և բժշկական օգնությունից հրաժարում
- Մշտական բնակության վայրի բացակայություն, հյուրընկալություն ծանոթների մոտ
- Երկարատև անկանոն ներկայություն հյուրընկալող երկրում
- Տեղական լեզվի չիմացություն
- Ֆիզիկական նշաններ
- Չափազանց հոգնածություն և ֆիզիկական անհարմարություն
- Անսովոր օրվա ռեժիմ (դուրս է գալիս շատ ուշ գիշերը)
- Անհանգիստ վերաբերմունք
- Չայտարարում է, որ իր հեռախոսում քարտ չունի կամ հեռախոս չունի
- Տարածքում տեղաշարժման սահմանափակ ազատություն
- Ցայտուն, նոր հագուստ և արքեսուևարներ՝ չնայած պնդում է, որ չի աշխատում

Երիտասարդական աշխատողի դերը նախնական ենթադրական նույնականացման ընթացքում գործոնների դիտարկումն է. վերը նշվածներից բացի, կան նաև շատ օգտակար մանրամասներ հնարավոր զոհերի ճանաչման համար, օրինակ՝

- Վախ, անհանգստություն, վստահության պակաս, ուստիկանությունից վախ
 - Անհատականություն թե՛ ճանապարհորդության պատմության, թե՛ անձնական տեղեկությունների մեջ
 - Չոհր թույլ է տալիս, որ ուրիշները խոսեն իր փոխարեն
 - Շատ ժամանակ է անցկացնում հեռախոսի մեջ
 - Ունի դաջվածքներ, խարաններ կամ այլ խորհրդանիշներ, որոնք խորքում ունեն «պատկանելության» գաղափար
- Օպերատորի հատուկ ուշադրությունը սկզբնապես պետք է դարձվի ոչ խոսքային հաղորդակցությանը, ֆիզիկական նշաններին և անձի վերաբերմունքին: Թրաֆիքինգի ենթարկված անձը կարող է ֆիզիկապես շատ փակ լինել, հաճախ պահում է հայացքը ցածր, երբեք չի նայում զրուցակցի դեմքին, մեկուսանում է խմբից:

Յուրաքանչյուր իրավիճակ տարբեր է, բայց երիտասարդական աշխատողի դերը երևակայությունը վերահսկելն է, որը «կարող է բազմաթիվ խաբկանքներ ստեղծել»: Երբեմն մենք տեղեկանում ենք, ուսումնասիրում ենք որոշակի խնդիրներ և ռիսկի գործոններ՝ կապված մեր աշխատանքի ոլորտի երևույթների հետ, և այնքան ենք կենտրոնանում դրանց վրա, որ այլևս չենք տեսնում իրավիճակները այնպես, ինչպես դրանք իրականում են:

Երբեմն որոշ մարդիկ, ուրբեր կարող են թվալ զոհեր, իրականում այդպիսին չեն:

Հետևաբար, օպերատորը պետք է գտնի իրավիճակի օբյեկտիվությունը՝ առանց ենթադրյալ զոհին ստիպելու և առանց ռիսկի կամ նույնականացման գործոնների ստեղծելու, որոնք գոյություն ունեն:

Հնարավոր զոհի դեպքում կարևոր է նրան հեռացնել (նույնիսկ պատրվակով), եթե ներկա է ուղեկցող անձից, ով մեծ հավանականությամբ կարող է լինել շահագործողը: (Հաճախ նրանք կարող են ներկայանալ որպես ընտանիքի անդամ, ամուսին, ընտանիքի մտերիմ ընկեր):

ԻՆՉՊԵՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՉՈՐՀԻ ԿՈՂՔԻՆ ԳՏՆՎՈՂ «ԱՆՎՍՏԱՅԵԼԻ» ԱՆՁԻՆ:
(Եթե ներկա է)

- խոսում է զոհի փոխարեն
- տիրապետում է զոհի նյութական ունեցվածքին (գումար, հեռախոս, փաստաթղթեր)
- չգիտի զոհի անձնական մանրամասները (ծննդյան թիվ, հետաքրքրություններ, մանկության մանրամասներ, հավակնություններ)
- եթե մոտենում է զոհին, վերջինս ունենում է «վախի» վերաբերմունք, հեռանում է:

Անհրաժեշտ է հեռացնել այս անձին՝ հնարավոր զոհի հետ հարցազրույց անցկացնելու համար համապատասխան և անվտանգ տարածք գտնելու նպատակով:

Համապատասխան տարածքն ապահովում է գաղտնիությունը:

Թրաֆիքինգի որոշ զոհեր՝ հատկապես երիտասարդ կանայք, կարող են չկարողանալ ճանաչել իրենց վրա եկած տրավմատիկ փորձառությունները: Բացի այդ, նրանք կարող են չվստահել զրուցավարին, քանի որ նրան տեսնում են որպես իշխանական ուժ:

Ապահով տարածք ստեղծելու մի եղանակ է կին աշխատող և միջնորդ տրամադրելը կին զոհի դեպքում և հետաքրքրվելը ծագման երկրի մշակույթով, կրոնով:

ՀԱՆԳԻՍ ՄԻՋԱՎԱՅՐ

- հանդուրժող վերաբերմունք
 - չդատել
 - հարգանք անձի տառապանքի և ժամանակի նկատմամբ
 - չկենտրոնացնել ամեն ինչ մեկ հարցազրույցում:
- Ամեն ինչ մեկ հարցազրույցում չկենտրոնացնելը թույլ է տալիս մասնագետին դիտարկել զոհին նույնիսկ առօրյա պահերին:

Շատ կարևոր է գոհին օգտակար տեղեկություններ տալ, նույնիսկ եթե չկա գոհի հաստատում: Տեղեկացնել հնարավոր գոհին այն հնարավորությունների մասին, որոնք նա կարող է ունենալ, ծառայությունների, մասնագետների մասին, ովքեր կարող են միջամտել:

Մենք երկար քննարկել ենք ռիսկերի կանխարգելման և արձագանքման գլխում մեր ծրագրի թիրախային խմբի վերաբերյալ, բայց մենք կարող ենք նաև կառուցել ռիսկերի վերլուծության մատրիցա ծրագրային գործողությունների և օպերատորների համար:

Այստեղ մենք առաջարկում ենք Փրկենք երեխաներին (Save the Children) կողմից մշակված Ռիսկերի գնահատման և կառավարման գործիքը: Մենք ընտրեցինք այս գործիքը, քանի որ գտանք, որ այն ունի երիտասարդական աշխատանքի հետ նմանության տարրեր, և քանի որ Սիվիկո Չերոն՝ Փրկենք երեխաներին ծրագիրը Թուրինում (Իտալիա) այն համատեքստերից մեկն էր, որտեղ մենք մշակեցինք ծրագրի բովանդակության տեղական փորձարկումը:

Անվտանգության և ռիսկերի կառավարման (SRM) գործիքն օգտագործվում է ռիսկերը նույնականացնելու (B-ից J տառերով նշված բաժիններում), մեղմացման միջոցառումները նույնականացնելու (K-ից O տառերով նշված բաժիններում), պատահական միջոցառումները նույնականացնելու համար, այսինքն հասկանալ որ ռազմավարություններն ակտիվացնել, երբ ռիսկային իրավիճակ է տեղի ունենում (P տառով նշված բաժնում):

Ձևանմուշը բաղկացած է 6 դաշտերից և պետք է լրացվի հնարավորության դեպքում թիմային քննարկումների համատեքստում յուրաքանչյուր 3 ամիսը մեկ կամ եթե աշխատանքային միջավայրում էական կան փոփոխություններ:

1) Ռիսկերի գնահատում, որտեղ որակապես նկարագրվում են ռիսկը և համատեքստը:

Ռիսկերի գնահատում

<i>Ռիսկի տեսակ</i>	<i>Իրավիճակի վերլուծություն</i>
<i>Օրինակ՝ Հարձակումներ, սպառնալիք</i>	

2) Առանձին ծրագրերի հատուկ գնահատում՝ ելնելով կոնկրետ ռիսկից: Որո՞նք են առանձին ծրագրի խոցելի կողմերը կոնկրետ ռիսկի նկատմամբ, և որո՞նք են ծրագրի կողմից ներկայացված ռիսկի ուժեղ կողմերը և հնարավոր մեղմացումները:

Խոցելիության վերլուծություն

Խոցելիությունն Ուժեղ կողմեր/մեղմացումներ

<i>Ծրագրի գնահատում</i>	

3) Ռիսկի վերլուծության նպատակն է տալ քանակական և թվային արժեք՝ 1-ից 5 սանդղակով, ռիսկի ազդեցությունը ծրագրի վրա հասկանալու համար, եթե այն իրականանա, և դրա իրականացման հավանականությանը: Ռիսկը տրվում է այս երկու տարրերի հարաբերակցությամբ:

Ռիսկերի վերլուծություն

Ազդեցություն	Հավանականություններ	Ռիսկ
3	3	

4) Ռիսկի մեղմացման ռազմավարությունների սյունակը պահանջում է ռիսկի առաջացումը կանխելու ռազմավարությունների որակական նկարագրություն:

Մեղմացման ծրագրեր

Առաջարկվող
ռազմավարություններ

5) Մնացորդային ռիսկի գնահատումը պահանջվում է կրկին քանակապես գնահատել ռիսկը, այս պահին՝ մնացորդային, մեղմացման ռազմավարությունների կիրառումից հետո:

Մնացորդային ռիսկ

Ազդեցություն	Հավանականություններ	Ռիսկ
3		

6) Արտակարգ իրավիճակների ռազմավարություններն այն ռազմավարություններն են, որոնք կիրառվում են ռիսկի առաջացման դեպքում՝ ծրագրի վրա դրա բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով:

Պատահականություն

*Առաջարկվող
ռազմավարություններ*

Չդումներ.

“Identificazione delle vittime di tratta tra i richiedenti protezione internazionale e procedure di referral”

“Manuale formativo sulla tratta di esseri umani per operatori e operatrici di centri di accoglienza per persone migranti, richiedenti asilo e rifugiate”

“Piano nazionale d’azione contro la tratta e il grave sfruttamento 2022-2025”

Security Risk Assessment & Management (SRM) tool, Simona Mortolini, Operations Quality, Innovation and Support Lead, Safety and Security focal point, Save the Children Italia

Պատերազմից տուժած համատեքստում երիտասարդների շահերի պաշտպանությունն պատերազմից տուժած երիտասարդների մասնակցությամբ

Հետազոտող՝ Էրիկոն Կրասնիկի

Ներածություն

Շահերի պաշտպանությունը գործողության մարմնավորումն է, որը բխում է աջակցելու, առաջարկելու կամ իրականացնելու նվիրումից: Դա մեր կյանքի վրա ազդող որոշումներում ձայն ունենալու մեր իրավունքի հաստատումն է՝ անկախ տարիքից կամ կարգավիճակից: Երբ մենք պաշտպանում ենք որևէ գործ, մենք կանգնում ենք որպես մեր իրավունքների զգոն պահպաններ՝ իշխանություն ունեցողներին պատասխանատվության ենթարկելով՝ ապահովելու մեր հիմնարար իրավունքների պահպանումն ու իրականացումը:

Կարևոր է ընդունել, որ շահերի պաշտպանությունը հովանավորություն կամ նվերներ փնտրելու մասին չէ. այն մեր ձայները լսելի դարձնելու մասին է, հատկապես հասարակության առավել խոցելի հատվածների անունից: Շահերի պաշտպանության միջոցով մենք օգտագործում ենք երիտասարդության խմբային ուժը՝ իրավունքները պաշտպանելու, նախաձեռնություններ առաջ մղելու և փոփոխություններ խթանելու համար: Դա հզոր գործիք է, որը կարող է ձևավորել քաղաքականություններ, ծրագրեր, վարքագծեր, հաստատություններ և ներդրումներ՝ հասարակության մեջ առաջացնելով փոխակերպող տեղաշարժեր:

Թեև ուշադրության կենտրոնում հաճախ հայտնվում են լայնամասշտաբ շահերի պաշտպանության շարժումները, ինչպիսիք են #FeesMustFall-ը, #FridaysForFuture-ը և #BlackLivesMatter-ը, կարևոր է հասկանալ, որ շահերի պաշտպանությունն ընդգրկում է գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ թե՛ մեծ, թե՛ նուրբ: Համաշխարհային շարժումների ընդգրկուն թափից մինչև անհատական ժեստերի հանգիստ վճռականությունը, շահերի պաշտպանությունը դրսևորվում է բազմաթիվ ձևերով: Այն կարող է լինել այնքան պարզ, որքան բուլինգը կանխելու միջամտությունը, առողջության մասին տեղեկատվության տարածումը բարեկեցությունը խթանելու համար կամ գաղափարների արտահայտումը բլոգների և անձնական պատմությունների միջոցով: Բացի այդ, շահերի պաշտպանությունը տարածվում է նաև օրենսդրական փոփոխությունների վրա՝ կազմակերպված ցույցերի և հանրահավաքների միջոցով՝ ուժեղացնելով ձայները՝ հասարակական առաջընթացը խթանելու համար:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի երիտասարդների շահերի պաշտպանության ուղեցույց

Մենք սկսում ենք այն գիտելիքից, որ բոլոր սոցիալական, քաղաքական, մշակութային փոփոխությունները առաջ են մղվել հասարակության մեջ երիտասարդների կողմից: Կոնֆլիկտների վերլուծության իր տեքստերում Լեդերախը խոսում է երիտասարդների մասին որպես խաղաղության պոտենցիալներ: Պոտենցիալ, որովհետև նրանք սոցիալական խումբ են, որը կարող է դրական փոփոխություններ առաջացնել և ունի ավելի մեծ մոտիվացիա՝ դրանք փնտրելու և հետապնդելու համար, նաև որովհետև հենց երիտասարդներն են խաղաղության հիմնական զոհերը: Որովհետև հենց երիտասարդներն են ուղղակի, մշակութային և համակարգային բռնության հիմնական զոհերը: Պոտենցիալ լինելը նշանակում է, որ հասարակությունը և նրանք, ովքեր աշխատում են երիտասարդների հետ, պետք է ակտիվացնեն ուղիներ, որոնք թույլ կտան այս պոտենցիալն արտահայտվել: Հիմնական է չօգտագործել հովանավորչական ոսպնյակ և մեծահասակներին տեսակետ, որը կենտրոնանում է ենթադրյալ թերությունների վրա՝ մեծահասակների տեսանկյունից, երիտասարդների, և ոչ թե նրանց ունակությունների վրա:

2021 թվականին Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի միջև երիտասարդության ոլորտում գործընկերության կողմից հրապարակված ուսումնասիրության մեջ, որը կոչվում է «Երիտասարդների իմաստալից քաղաքական մասնակցություն», վերլուծվել են երիտասարդների քաղաքական մասնակցության նոր միտումները: Մասնավորապես խոսվում է «անհատականացված քաղաքական մասնակցության» մասին. մասնակցության ձև, որը զարգացել է ձեռք ձեռքի տված, ըստ Բենեթի (2012), սոցիալական մասնատման և խմբային անդամակցությունների անկման հետ՝ տեղ տալով մասնակցության ձևի, որը հիմնված է անհատական արտահայտությունների և ընտրությունների վրա, որոնք հանգեցնում են խմբային գործողությունների, որոնք ի վիճակի են նպաստել քաղաքական գործերին: Սա կարելի է սահմանել որպես «անհատական ընտրությունների քաղաքականացում»:

Այսօրվա պատերազմները և զինված հակամարտությունները հասնում են ծայրահեղության. որոշ երիտասարդներ որոշում են միանալ բանակին կամ զինված խմբավորումներին՝ նույնիսկ անկանոն, ոմանք փախչում են երկրի ներս կամ երկրից դուրս, ոմանք ներգրավվում են քաղաքացիական հասարակության մեջ, ոմանք փորձում են գոյատևել և պահպանել իրենց սեփական ստանդարտը և կենցաղը՝ գրեթե անտեսելով պատերազմը, ոմանք ուժեղ դիրքորոշում են ընդունում պատերազմի դեմ կամ դնում են սեփական ինքնությունը հարցականի տակ: Շատերն ապրում են ուժեղ հոգեբանական տրավմաներ, որոնք դրսևորվում են սոցիալական մեկուսացման, անտարբերության, դեպրեսիայի և որոշ դեպքերում՝ իրական հոգեբուժական հիվանդությունների տեսքով: Այս համատեքստում շատ դժվար է խթանել և աջակցել երիտասարդական շարժումների կառուցմանը, որոնք կենտրոնում են դնում երիտասարդների իրավունքներն և որոնք երիտասարդներին տեսնում են որպես կազմակերպված բռնության նկատմամբ դիմակայուն հասարակությունների կառուցման գլխավոր դերակատարներ:

Բայց ինչո՞ւ խթանել երիտասարդների մասնակցությունը:

1. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան առաջին հերթին սահմանում է իրենց վրա անմիջականորեն ազդող հարցերին մասնակցելու իրավունքը, քանի որ մասնակցության իրավունքը կարևոր է այլ իրավունքների իրականացման համար:
2. Մասնակցությունը հնարավորություն է տալիս երիտասարդներին խթանել փոփոխություններ իրենց շուրջ, իշխանության բաշխում և երիտասարդների ներգրավում որոշումների կայացման գործընթացներում:
3. Երիտասարդներն ամենափորձառուն են իրենց անձնապես վերաբերող մարտահրավերների առումով, նրանց ներգրավվածությունը հնարավորություն է տալիս կարիքների վերլուծության և ավելի արդյունավետ լուծումների կառուցվածքավորման համար:
4. Քանի որ այն տրամադրում է կոնկրետ փորձառություն, որում կարելի է զարգացնել անձնական և մասնագիտական հմտություններ:

Լանդիի մասնակցության մոդելը նկարագրում է 4 կենտրոնական կարիք երիտասարդների համար՝ մասնակցության գործընթացներում ներգրավվելու համար:

- **Տարածքի կարիք.** երիտասարդներին անհրաժեշտ են ապահով տարածքներ և ներառական հնարավորություններ:
- **Չայնը լսելի դարձնելու կարիք.** աջակցել սեփական կարծիքներն արտահայտելու և դրանք պաշտպանելու կարողությանը, արժևորել երիտասարդների կարծիքները և ապահովել, որ դրանք կարողանան ուղեկցվել կարիքների վերլուծություններով:
- **Լսարանի կարիք.** երիտասարդների կարծիքները պետք է հաղորդվեն արդյունավետ և հորիզոնական ուղիներով նրանց, ովքեր պատասխանատվություն և պարտականություն ունեն դրանք լսելու, բայց նաև հասարակական կարծիքին, որպեսզի երիտասարդները այլևս չհարանվեն որպես սոցիալական խումբ:
- **Ազդեցություն ունենալու կարիք.** նախ սեփական կյանքի վրա, ապա՝ մեզ շրջապատող իրականության վրա՝ անմիջականորեն ազդելով որոշումների կայացման գործընթացների վրա կամ օգնելով կառուցել լուծումներ՝ ի պատասխան այն խնդիրների, որոնք երիտասարդներն իրենք են նույնականացնում:

Երիտասարդների մասնակցության ձևերի միջև հիերարխիա չկա, բոլորը կարող են լինել կառուցողական և նպատակային, քանի դեռ հաշվի են առնվում ա) անհատականացված քաղաքական մասնակցության միտումը, բ) կոնկրետ նպատակը, որի համար այն պետք է խթանվի, գ) քաղաքական մասնակցության միջավայրը, որը մտադիր են զարգացնել, դ) որ երիտասարդներին է նախատեսվում ներգրավել մասնակցային գործընթացներում:

- Երիտասարդների մասնակցությունն ուղիղ համեմատական է գործընթացների մատչելիությանը, կապված պահանջվող պարտավորության մակարդակի և իրականացված գործողությունների ընկալվող արդյունավետության հետ:

Այս տարրերի լույսի ներքո, հետևաբար, առաջին մեծ հարցն է՝ ինչպե՞ս կարելի է մասնակցության գործընթացները մատչելի դարձնել երիտասարդների համար:

Կարո՞ղ ենք ակտիվացնել ուղիներ, որոնք հատվում են՝ հաշվի առնելով տարածքի երիտասարդների բազմակի ինքնությունները, որոնք տալիս են շարժումներ և մասնակցության ուղիներ, որոնք գիտակցում են բնապահպանական արդարության, սոցիալական, գենդերային հավասարության և խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի միջև հատումները և պահպանում են այս թեմաները որպես առաջնահերթություններ նաև ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ և պատերազմի համատեքստերից եկող երիտասարդների համար: Ինտերսեկցիոնալությունը պետք է ուղղորդի մեր գործողությունները՝ սկսած աշխատանքի վայրերի ընտրությունից, օգտագործվող լեզուներից և գործիքներից: Միևնույն ժամանակ, մենք պետք է ձգտենք նոր համերաշխություն ստեղծել՝ հիմնվելով երիտասարդների հավասարության գաղափարի վրա:

Բայց կրկին, ինչո՞ւ խթանել երիտասարդների ակտիվ մասնակցությունը պատերազմի, զինված հակամարտության և հետկոնֆլիկտային համատեքստերում և ինչո՞ւ խթանել այս տիպի համատեքստերից եկող երիտասարդների ակտիվ մասնակցությունը:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը 2012 թվականի «Խաղաղաշինությունը հակամարտությունից հետո» գեկույցում ընդգծել է.

-Յաջողված խաղաղաշինական գործընթացը պետք է լինի փոխակերպող և տարածք ստեղծի ավելի լայն շրջանակի դերակատարների մասնակցության համար: Այս դերակատարները ներառում են կանանց, երիտասարդների, զոհերի և մարզինալացված համայնքների ներկայացուցիչներին, համայնքային և կրոնական առաջնորդներին, քաղաքացիական հասարակության գործիչներին, փախստականներին և ներքին տեղահանված անձանց: Նրանք պետք է հնարավորություն ունենան մասնակցելու հետկոնֆլիկտային կառավարման և վերականգնման բոլոր ասպեկտներին վերաբերող հանրային որոշումների կայացմանը:

Երիտասարդների ներգրավվածությունը, հետևաբար, կենտրոնական տարր է հաջողված խաղաղաշինության գործընթացում: Վերջին 20 տարիների գրականության մեջ կան առնվազն 4 մոտեցումներ քաղաքականությունների առումով, որոնք խթանվել են՝ խաղաղաշինության գործընթացներում երիտասարդների մասնակցությունը խթանելու համար.

1) Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում, որը հիմնված է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) և Երիտասարդության վերաբերյալ գործողությունների համաշխարհային ծրագրի վրա:

2) Տնտեսական մոտեցում, որը երիտասարդներին նույնականացնում է որպես իրենց երկրի տնտեսական զարգացման կենտրոնական դերակատարներ և խթանում է նրանց մուտքը տնտեսական մրցակցության՝ հնարավորություններ տալով սեփական զարգացմանը:

3) Սոցիալ-քաղաքական մոտեցում, որը երիտասարդներին կապում է քաղաքացիական հասարակության և քաղաքական ասպարեզի հետ և նրանց տրամադրում է հնարավորություններ, վերապատրաստում և աջակցություն հանրային կյանքում իրենց ակտիվ ներգրավվածության և մասնակցության համար:

4) Սոցիալ-մշակութային մոտեցում, որը վերլուծում է երիտասարդների դերերը գոյություն ունեցող կառույցներում և աջակցում է երկխոսությանը, ներառյալ միջսերնդային երկխոսությանը այդ կառույցների միջև:

Բոլոր այս 4 մոտեցումները պետք է փոխկապակցված լինեն և ներկայացվեն փոխլրացնող ձևով և խիստ կապված լինեն տեղական համատեքստի հետ: Հետևաբար, առաջնահերթություն է դառնում այս չորս ոլորտներում քաղաքականություններ մշակելը երիտասարդների հետ միասին, նրա ուժեղ և ակտիվ ներգրավմամբ, որպեսզի առաջարկվող քաղաքականությունները լինեն արդյունավետ և համապատասխանեն տեղական կարիքներին:

Կան մի քանի պատճառներ, թե ինչու պետք է առաջնահերթություն տալ երիտասարդների մասնակցությանը խաղաղաշինական գործընթացներում.

- Առաջինը ժողովրդագրական է. Հաշվարկվում է, որ 408 միլիոն երիտասարդ (կամ 15-29 տարեկան համաշխարհային բնակչության 23%-ը) ապրում է զինված հակամարտությունից կամ կազմակերպված բռնությունից տուժած համատեքստում, ինչը նշանակում է, որ 4 երիտասարդից 1-ը ամեն օր ինչ-որ կերպ ազդվում է պատերազմներից կամ զինված հակամարտություններից: Այս երիտասարդների միլիոնավորները տեղահանված են, նրանցից շատերը՝ հարևան երկրներում, որտեղ նրանք մտնում են խոցելի: Եվ վերջին երկու տասնամյակում համաշխարհային մակարդակով ստորագրվել է ավելի քան 900 խաղաղության համաձայնագիր՝ բնակչությունների միջոցով, որոնցում երիտասարդ սերունդների ձայները մեծապես բացակայել են:

- Երկրորդը կապված է նոր սերունդների շուրջ առկա նախապաշարմունքների հետ, որոնք դիտվում են որպես բռնության իրագործողներ, զոհեր կամ ապագայի քաղաքացիներ, բայց ոչ իսկապես որպես հասարակության ներկայի ակտիվ մասնակիցներ:

- Երրորդը կապված է ներկայացուցչական հաստատություններում երիտասարդների թերներկայացվածության հետ. աշխարհի ընտրված ներկայացուցիչների շուրջ 2%-ը 30 տարեկանից ցածր է, այնպես որ առաջնահերթություն է դառնում քաղաքացիական հասարակության մեջ մասնակցության այլընտրանքային ուղիների կառուցումը, և երիտասարդական աշխատանքը կարող է կենտրոնական դեր խաղալ այս հզորացման գործընթացներում:

Հասկանալ շահերի Պաշտպանությունը

Երիտասարդների մասնակցությունը ծառայում է որպես մեծ հովանոց՝ ընդգրկելով ներգրավման բազմազան ուղիներ: Մինչդեռ երիտասարդների կողմից իրականացվող շահերի պաշտպանության բոլոր ձևերը ընկնում են երիտասարդների մասնակցության հովանու տակ, երիտասարդների մասնակցության ոչ բոլոր դեպքերն են որակավորվում որպես շահերի պաշտպանություն: Այս տարբերությունը պարզաբանելու համար եկեք ավելի խորը ուսումնասիրենք:

Երիտասարդների մասնակցությունը կարող է դրսևորվել երկու հիմնական ձևով՝ ակտիվ և պասիվ ներգրավվածություն: Ակտիվ մասնակցությունը նշանակում է պրոակտիվ դիրքորոշում, որտեղ անհատները ակտիվորեն ներգրավված են կամ պատրաստ են ներգրավվելու: Ի հակադրություն՝ պասիվ մասնակցությունը ենթադրում է հանդիսատեսի դերում մնալու պատրաստակամություն՝ ընդունելով իրադարձությունները առանց միջամտության կամ ազդեցության:

Օրինակ՝ պասիվ մասնակցությունը կարող է ենթադրել պարզապես լսել խոսնակին միջոցառման ժամանակ՝ առանց գործողություն ձեռնարկելու կամ փոփոխություն առաջացնելու մտադրության: Մյուս կողմից, ակտիվ մասնակցությունը ներառում է հետազոտություն անցկացնելը, գործողության ենթակա քայլերի բացահայտելը և իրագրվածություն բարձրացնելը՝ նպատակ ունենալով խթանել վարքագծի փոփոխություն ուրիշների մոտ:

Մասնակցության երկու ռեժիմներն էլ կարևորություն ունեն տարբեր համատեքստերում: Կան դեպքեր, երբ պասիվ ներգրավվածությունը կարող է տեղին լինել, մինչդեռ այլ սցենարներում ակտիվ ներգրավվածությունը դառնում է անհրաժեշտ: Երկուսի միջև տարբերությունը ճանաչելը և դրանց կիրառելիությունը անհատական հանգամանքներին ընկալելը էական է արդյունավետ շահերի պաշտպանության համար: Այն հնարավորություն է տալիս շահերի պաշտպաններին մշակել իրենց մոտեցումը, ներգրավել ուրիշներին և հմտորեն բնակցել որոշում կայացնողների հետ:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի երիտասարդների շահերի պաշտպանության ուղեցույց

Այժմ ավելի մանրամասն բացատրենք շահերի պաշտպանություն, լոբբինգ և քարոզարշավ հասկացությունները, որոնք, թեև փոխկապակցված են, ներկայացնում են շահերի պաշտպանության տարբեր կողմեր:

Շահերի պաշտպանությունը ներառում է գործողությունների և նախաձեռնությունների լայն շրջանակ, որոնք իրականացվում են քաղաքացիական հասարակության, բիզնեսի կամ այլ շահագրգիռ կողմերի կողմից՝ ազդելու որոշում կայացնողների վրա քաղաքականությունների մշակման, փոփոխման և իրականացման հարցերում: Այս որոշումները ներառում են քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտները՝ բյուջեի հատկացումներից մինչև օրենսդրական փոփոխություններ կամ քաղաքականության նախաձեռնություններ:

Լոբբինգը, որը հաճախ օգտագործվում է շահերի պաշտպանության հետ փոխարինաբար, ունի հատուկ իմաստ՝ կապված մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ, օրինակ՝ բիզնեսների կամ առևտրային ասոցիացիաների կողմից իրականացվող գործողությունների հետ: Լոբբինգը ներառում է կոնկրետ շահերի պաշտպանություն, ինչպես նաև քաղաքականության արդյունքների վրա ազդելու նպատակով քաղաքական գործիչների և որոշում կայացնողների հետ ուղղակի շփում:

Քարոզարշավը տարբերվում է շահերի պաշտպանությունից և լոբբինգից: Այն կենտրոնանում է հանրային աջակցության մոբիլիզացման, իրազեկության բարձրացման և փոփոխությունների համար համայնքների կազմակերպման վրա: Այն ներառում է համակարգված գործողություններ՝ ուղղված լայնածավալ մասնակցության խթանմանը և ընդհանուր նպատակի շուրջ հանրային մոբիլիզացմանը:

Այս տերմինների նրբությունները հասկանալը շահերի պաշտպաններին տալիս է անհրաժեշտ գիտելիքներ շահերի պաշտպանության դաշտում արդյունավետ կողմնորոշվելու համար: Այն հնարավորություն է տալիս ռազմավարական պլանավորման, նպաստում է համագործակցությանը տարբեր ոլորտների միջև և հեշտացնում է նշանակալի շփումը որոշում կայացնողների և շահագրգիռ կողմերի հետ:

(Շահերի պաշտպանության ձեռնարկ)

Շահերի պաշտպանության կարևորությունը

Երիտասարդների համար շահերի պաշտպանությունը ոչ միայն փոփոխության գործիք է, այլև ձևափոխող ուժ, որը հնարավորություն է տալիս նրանց ձևավորել իրենց ապագան, ազդել որոշումների կայացման գործընթացների վրա և պաշտպանել իրենց արժեքներին ու ձգտումներին համապատասխանող գաղափարները: Ահա թե ինչու է շահերի պաշտպանությունը հատկապես կարևոր երիտասարդների համար:

- Զգորացում. շահերի պաշտպանությունը հնարավորություն է տալիս երիտասարդներին վերագտնել իրենց գործունակությունը և հաստատել իրենց ձայնը իրենց իսկ կյանքին անմիջականորեն վերաբերող հարցերում: Շահերի պաշտպանության գործում ներգրավվելով՝ երիտասարդները ձեռք են բերում վստահություն, հմտություններ և գիտելիքներ՝ հաղթահարելու հասարակական բարդ մարտահրավերները, ձևավորում են սեփականության և պատասխանատվության զգացում իրենց համայնքների և ապագայի նկատմամբ:

- Կրթություն և իրազեկություն. շահերի պաշտպանության միջոցով երիտասարդները ավելի խորը պատկերացում են կազմում հրատապ սոցիալական, բնապահպանական և քաղաքական խնդիրների մասին, զարգացնում են քննադատական մտածողություն, կարեկցանք և քաղաքացիական ակտիվություն: Բարձրացնելով իրազեկությունը և նախաձեռնելով երկխոսություն այս հարցերի շուրջ՝ երիտասարդ շահերի պաշտպանները դառնում են սոցիալական փոփոխությունների խթան՝ հրահրելով քննարկումներ և մոբիլիզացնելով հասակակիցներին գործողությունների:

- Ներկայացվածություն և ներառում. շահերի պաշտպանությունը ուժեղացնում է երիտասարդների ձայնը՝ ապահովելով, որ նրանց տեսակետները, մտահոգությունները և փորձառությունը լսելի և գնահատելի լինեն որոշումների կայացման գործընթացներում: Պաշտպանելով երիտասարդակենտրոն քաղաքականությունները և նախաձեռնությունները՝ երիտասարդները նպաստում են ավելի ներառական և արդար հասարակությունների կառուցմանը, որտեղ յուրաքանչյուր ձայն ճանաչվում և հարգվում է:

- Առաջնորդության զարգացում. շահերի պաշտպանության մեջ ներգրավվելը զարգացնում է առաջնորդության հմտություններ, ճկունություն և հարմարվողականություն երիտասարդների շրջանում՝ նախապատրաստելով նրանց դառնալու փոփոխության արդյունավետ գործակալներ իրենց համայնքներում և դրանից դուրս:

- Սոցիալական ազդեցություն. երիտասարդների առաջնորդած շահերի պաշտպանության նախաձեռնությունները կարող են նշանակալի սոցիալական փոփոխությունների հանգեցնել և լուծել համակարգային անհավասարությունները՝ սկսած կրթական բարեփոխումներից մինչև կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի դեմ պայքարը: Մոբիլիզացնելով հասակակիցներին, դաշնակիցներին և շահագրգիռ կողմերին՝ երիտասարդ շահերի պաշտպանները կարող են շոշափելի բարելավումներ մտցնել իրենց համայնքներում՝ թողնելով դրական փոփոխությունների տևական ժառանգություն:

- Միջսերնդային երկխոսություն. շահերի պաշտպանությունը ստեղծում է միջսերնդային երկխոսության և համագործակցության հնարավորություններ՝ խթանելով մենթորությունը, փոխադարձ ուսուցումը և համերաշխությունը երիտասարդների և ավագ սերունդների միջև: Հաղթահարելով սերունդների միջև եղած խզումը և օգտագործելով տարեցների իմաստությունն ու փորձը՝ երիտասարդ շահերի պաշտպանները կարող են ստեղծել կոալիցիաներ և դաշինքներ, որոնք ուժեղացնում են իրենց ազդեցությունը և խթանում կայուն փոփոխությունները:

- Ավելի լավ ապագայի կառուցում. ի վերջո, շահերի պաշտպանությունը երիտասարդներին զինում է գործիքներով, ռեսուրսներով և դիմակայունությամբ՝ իրենց և ապագա սերունդների համար ավելի լավ ապագա կառուցելու համար: Պաշտպանելով առաջադեմ քաղաքականություն, սոցիալական արդարություն և կայուն զարգացում՝ երիտասարդները նպաստում են այնպիսի աշխարհի ստեղծմանը, որն ավելի արդար, հավասար և ներառական է բոլորի համար:

Ամփոփելով շահերի պաշտպանությունը՝ խորը կարևորություն ունի երիտասարդների համար՝ առաջարկելով նրանց հզորացման, կրթության, ներկայացվածության և սոցիալական ազդեցության ուղի: Օգտագործելով շահերի պաշտպանության ուժը՝ երիտասարդները կարող են դառնալ դրական փոփոխությունների խթան՝ առաջացնելով փոխակերպող տեղաշարժեր հասարակության մեջ և ձևավորելով ավելի պայծառ ապագա իրենց և գալիք սերունդների համար:

Շահերի պաշտպանության պլանավորման քայլ առ քայլ գործընթաց

Նախքան շահերի պաշտպանության որևէ գործընթաց սկսելը, դուք պետք է սկսեք ինքներդ ձեզնից: Մի փոքր մտածեք, թե ինչ եք ուզում անել և ինչու: Նաև մտածեք, թե ինչ եք բերում քննարկմանը և որտեղ կարող եք տարբերություն մտցնել: Հիշեք, որ շահերի պաշտպանությունը միշտ չէ, որ անմիջական է, և երբեմն ձեր ջանքերը պետք է շարունակվեն երկարաժամկետ հեռանկարում: Կարևոր է նաև բացահայտել այն ոլորտները, որոնք անհրաժեշտ են զարգացնել: Շահերի պաշտպանությունը սովորելու և հասկանալու մշտական գործընթաց է: Այս ոլորտների մասին խորհելը նաև կօգնի ձեզ բացահայտել այլ մարդկանց, որոնց հետ պետք է աշխատեք: Շահերի պաշտպանության գործընթացում ներգրավված մարդկանց հիմնական դերերից են հետազոտողները, բանախոսները, գրողները կամ իրականացնողները:

Հետազոտող. հետազոտությունը վերաբերում է ուսումնասիրությանը, պարզելուն, թե ինչու են բաները որոշակի կերպ, ինչպես են դարձել այդպիսին և ինչպես կարող են փոխվել:

Բանախոս. մարդկանց հետ խոսելը գաղափարներ կիսելու հզոր միջոց է: Լավ բանախոսները կապ են հաստատում իրենց լսարանի հետ և կարող են ոգեշնչել մարդկանց տարբեր ձևերով գործողություններ ձեռնարկել:

Գրող. լավ գրելը կապում է գաղափարները, հասկացությունները, իրականությունը, և օգնում է պատմել մի պատմություն, որին մարդիկ կարող են կապվել:

Իրականացնող. իրականացնողը սիրում է իրագործել, ներգրավված լինել գործունեության մեջ և «ձեռքերը կեղտոտել»: Նրանք կարևոր դեր ունեն շահերի պաշտպանության ողջ գործընթացում՝ օգնելով համակարգված ձևով առաջ տանել գործողությունները:

Շահերի պաշտպանությունը տեղ ունի բոլորի համար: Յուրաքանչյուր անհատ բերում է հմտությունների և կարողությունների յուրահատուկ հավաքածու, որը կարևոր դեր է խաղում այս գործընթացում: Ահա թե ինչու է թիմային աշխատանքն այդքան կարևոր: Դուք կարող եք հավաքել մարդկանց մի խումբ, որոնք միասին ապահովում են բոլոր հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են ձեր շահերի պաշտպանության նպատակներին արդյունավետ հասնելու համար: Շահերի պաշտպանության գործընթացը ներառում է փաստերի հավաքում, պլանավորում, քաղաքականության հետ աշխատանք, թափ հավաքելը և անհատական կենսակերպի ընտրություններ կատարելը: Որոշ առումներով այս բաղադրիչները գծային են՝ դուք հավաքում եք տեղեկություններ և գիտելիքներ ձեռք բերում նախքան պլան մշակելը: Մյուս կողմից դրանք շրջանաձև են՝ որքան շատ եք ներգրավվում քաղաքականության մեջ, այնքան ավելի շատ կարող եք բացահայտել գործողություններ, որոնք պետք է ներառել ձեր պլանում կամ հարցեր, որոնք պետք է հետազայում ուսումնասիրել:

Շահերի պաշտպանության պլանավորման քայլ առ քայլ գործընթաց

«Բավական է: Ինչ-որ բան պետք է փոխվի»: Որպես երիտասարդական կազմակերպության ակտիվիստ՝ դուք հավանաբար ամեն օր հանդիպում եք այս զգացողությանը: Դա անհրաժեշտ է: Հենց այդ զգացողությունն է, որ ձեր էներգիան ուղղորդում է դեպի փոփոխություն և վառ է պահում ձեր գործի համար պայքարում: Այս զգացողությունը բոլոր շահերի պաշտպանության գործընթացների հիմքում է: Բայց երբ անցնում է անարդար իրավիճակի կամ խախտված իրավունքի, հարցեր են սկսում առաջանալ:

Ինչպե՞ս ապացուցեմ, որ ներկայիս իրավիճակը վատ է:

Ինչպե՞ս կարող եմ փոխել այս իրավիճակը:

Ինչպիսի՞ն է իդեալական իրավիճակը:

Ո՞րն է ներկայիս իրավիճակը:

Ի՞նչ լուծումներ կարող եմ առաջարկել:

Միայն ե՞ս եմ մտածում, որ խնդիր կա:

Ո՞վ ունի իրավիճակը փոխելու իշխանություն:

Ի՞նչ անեմ նրանց ուշադրությունը գրավելու և համոզելու համար:

Ինչպե՞ս հասնեմ նրան, որ հասարակության մեջ լսեն իմ տեսակետը:

Ինչպե՞ս կարող եմ տեսնել, թե արդյոք իրականում փոփոխություն եմ առաջացրել:

Շահերի պաշտպանության ամբողջական գործընթացը բաղկացած է այս բոլոր հարցերին կառուցվածքային ձևով պատասխանելուց: Դա արվում է, որպեսզի դուք և ձեր կազմակերպությունը կարողանաք պլանավորել և իրականացնել գործողությունների շարք, որոնք կհանգեցնեն դրական փոփոխության երիտասարդների համար քաղաքական և հասարակական մակարդակներում:

1. Սահմանեք ձեր տեսլականն ու նպատակները. ի՞նչ պետք է փոխվի:
2. Խնդիրներից դեպի լուծումներ. մոդելներ, մոդելներ և էլի մոդելներ:
3. Կատարեք ձեր հետազոտությունը. փաստեր և տվյալներ:
4. Զարտեզագրեք ձեր էկոհամակարգը. շահագրգիռ կողմերի ուժերի քարտեզագրում:
5. Կազմեք ձեր ուղերձը. պատմություններ և պատումներ:
6. Տարածեք ձեր ուղերձը. աշխատանք լրատվամիջոցների հետ:
7. Կառուցեք, ներգրավեք և ակտիվացրեք ձեր համայնքը. հզորացրեք մարդկանց:
8. Պլանավորեք ձեր գործողությունները:
9. Մոնիթորինգ և գնահատում. չափեք ձեր ստեղծած փոփոխությունը:
10. Բարելավեք ձեր հմտությունները:


Սահմանեք ձեր տեսլականն ու նպատակները. ի՞նչ պետք է փոխվի:

Ձեր կազմակերպությունը կարող է ունենալ շատ հստակ տեսլական և առաքելություն, գուցե դուք պայքարում եք մի փոփոխության համար, որը շատ կոնկրետ է և հստակ սահմանված: Եթե դա այդպես է, դուք բախտավոր եք և հավանաբար կարող եք բաց թողնել առաջին քայլը: Բայց հաճախ դժվար է ճշգրիտ նշել, թե ինչն է սխալ, ինչը պետք է փոխվի:

Սկզբում դա կարող է լինել անորոշ զգացողություն, որ ինչ-որ բան սխալ է, կամ կարող է լինել անընդունելի անհատական իրավիճակների կուտակում: Այս առաջին քայլը շատ կարևոր է ձեր մտքերը կառուցվածքային ձևով ի մի բերելու համար՝ կապված տվյալ խնդրի հետ: Որոշ ստանդարտ հարցերի պատասխանելը կարող է շատ օգտակար լինել:

- Ո՞րն է այն խնդիրը, որը ցանկանում եք լուծել:
- Ինչո՞ւ է դա խնդիր:
- Արդյո՞ք այն, ինչ ես տեսնում եմ, իրական խնդիրն է, թե՞ մեկ այլ հիմքում ընկած խնդրի ախտանիշ:
- Ի՞նչն է պատճառ հանդիսանում խնդրի համար: Որո՞նք են այն հիմքում ընկած կառուցվածքները և համոզմունքների համակարգերը, որոնք աջակցում են այս դիսֆունկցիոնալ վիճակին:
- Ովքե՞ր են այն անհատները կամ խմբերը, որոնք տուժում են խնդրից:
- Ինչպիսի՞ն կլինեն իդեալական իրավիճակը այս անհատների կամ խմբերի համար: Անդրադարձման այս առաջին շերտից դուք արդեն կարող եք նկարագրել այն փոփոխության մեծ պատկերը, որին ցանկանում եք հասնել: Փորձեք մեկ նախադասությամբ նկարագրել այն փոփոխությունը, որին պետք է հանգեցնեն ձեր շահերի պաշտպանության գործողությունները: Մեծ պատկերի մակարդակում մնալու, բայց նաև ձեր մտքերն ավելի կառուցվածքային դարձնելու համար, կարող եք օգտագործել այսբերգի մոդելը:

Խնդիրներից դեպի լուծումներ՝ մոդելներ, մոդելներ և ավելի շատ մոդելներ:



Պատերազմից տուժած համատեքստում երիտասարդների շահերի պաշտպանություն և պատերազմից տուժած երիտասարդների մասնակցություն

Դուք ինքներդ ձեզ մի շարք լայն հարցեր եք տվել, և դա շատ լավ սկիզբ է: Այնուամենայնիվ, դեռևս ամեն ինչ մի փոքր անորոշ և անհստակ է: ձեր պատասխաններից շատերը հիմնված են լինելու ենթադրությունների վրա, որոնք դուք դեռ չեք պարզաբանել: Սա է այն, ինչի մասին է այս երկրորդ փուլը՝ կառուցել ձեր մտքերը՝ ուղղված տվյալ խնդրի ավելի համակարգված մոտեցմանը: Շահերի պաշտպանության դասագրքերը, ձեռնարկները և գործիքակազմերը լի են մոդելներով, որոնք կարող եք օգտագործել այս քայլում ձեզ օգնելու համար: Ահա երեքը, որոնք մենք կարծում ենք, որ հատկապես տեղին են և հեշտ օգտագործման համար:

PEST վերլուծություն

PEST-ն փաստերի հավաքագրման լայն գործունեություն է՝ ուղղված ձեր խնդրի վրա ազդող արտաքին գործոնները պարզելուն: Հապավումը բացվում է հետևյալ կերպ՝ Քաղաքական (Political), Տնտեսական (Economic), Սոցիոլոգիական (Sociological), Տեխնոլոգիական (Technological): PEST վերլուծության արդյունքները շատ արժեքավոր են խնդրի տարբեր հնարավոր պատճառները բացահայտելու համար:

Political	Economic	Sociological	Technological
Stability of government	Economic growth	Demographic influences	International influences
Potential changes to legislation	Employment rates	Lifestyle factors	Changes in information technology
Global influences		Culture changes	

Problem and Objectives Tree



Խնդրի ծառը

Խնդրի ծառը արդյունավետ անդրադարձման և վիզուալիզացիայի գործիք է՝ վերլուծելու ձեր բացահայտած հիմնական խնդրի (խնդիրների) պատճառներն ու հետևանքները: Ծառի կենտրոնում ներկայացված է ձեր հիմնական խնդիրը, որը դուք պետք է արդեն բացահայտած լինեք: Բնի տակ արմատները ներկայացնում են ձեր խնդրի պատճառները: Իհարկե, կարող են լինել մի քանի պատճառներ, և դրանք կարող են ունենալ մի քանի շերտեր: Դրանք պատասխանում են հարցին՝ ինչո՞ւ է ձեր խնդիրը տեղի ունենում: Բնի վերևում կանգնած են ճյուղերն ու տերևները, դրանք ներկայացնում են ձեր խնդրի հետագա հետևանքները: Դրանք պատասխանում են հարցին՝ ի՞նչ ազդեցություն ունի խնդիրը մարդկանց և խմբերի վրա: Սկսեք գրել խնդիրը բնի վրա: Այնուհետև օգտագործեք քարտեր կամ կաշուն թղթիկներ՝ բացահայտելու և ձևակերպելու այն պատճառները, որոնք կարող են նույնականացնել: Շարունակեք՝ գրի առնելով խնդրի կոնկրետ հետևանքներն ու ազդեցությունները անհատների և թիրախային խմբերի վրա: Այս փուլում ձեր ծառը լի կլինի բացասական հայտարարություններով: Վերջին փուլը բաղկացած է բոլոր բացասական հետևանքներն և ազդեցությունները դրական հայտարարությունների վերածելուց՝ հաճախ օգտագործելով այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ ավելացնել, բարելավել, նվազեցնել և այլն:

SMART նպատակներ

Այս մեծ պատկերի մտածողությունից կարող եք անցնել կոնկրետ քայլերի և փորձեք սահմանել ճշգրիտ նպատակներ ձեր շահերի պաշտպանության գործընթացի համար: Փորձեք ձևակերպել ցանկալի փոփոխությունը հայտնի SMART նպատակների տեսքով:

- Կոնկրետ (Specific). ի՞նչ պետք է փոխվի և ում համար:
- Չափելի (Measurable). ինչպե՞ս կարելի է չափել փոփոխությունը: Օրինակ՝ քանի՞ մարդու վրա կազդի և ինչպե՞ս:
- Հասանելի (Achievable). արդյո՞ք փոփոխությունը իրատեսական է՝ հաշվի առնելով համատեքստը և ձեր կարողությունները:
- Արդյունքի վրա հիմնված (Result-oriented). որո՞նք են այն կոնկրետ քայլերը, որոնք կարող են և կհանգեցնեն փոփոխության:
- Ժամանակով սահմանափակված (Time-bound). արդյո՞ք դուք արդեն ունեք լայն և իրատեսական ժամանակային շրջանակ, թե երբ պետք է տեղի ունենա փոփոխությունը:

Հետազոտություն և շահակիցների քարտեզագրում շահերի պաշտպանության մեջ

Նախքան շահերի պաշտպանության որևէ գործողություն ձեռնարկելը, հիմնավոր հետազոտությունն էական է՝ շահերի պաշտպաններին զինելու այն գիտելիքներով և ըմբռնմամբ, որոնք անհրաժեշտ են առկա խնդիրները արդյունավետ լուծելու համար: Խորանալով խնդրի և դրա հնարավոր լուծումների բարդությունների մեջ՝ շահերի պաշտպանները կարող են ձևավորել իրենց առաջարկությունները և գործողությունները՝ նպատակաուղղված և տեղին ձևով: Ահա թե ինչու է հետազոտությունը կարևոր շահերի պաշտպանության մեջ:

-Փորձագիտության ձևավորում. հետազոտության մեջ ներգրավվելը ոչ միայն բարելավում է շահերի պաշտպանների պատկերացումը խնդրի մասին, այլ նաև ձևավորում է նրանց փորձագիտությունը, ինչն անգնահատելի է շահերի պաշտպանության հետագա փուլերում: Խնդրի նրբերանգներին քաջատեղյակ լինելով՝ շահերի պաշտպանները կարող են արդյունավետորեն տեղեկատվություն փոխանակել գործընկերների և շահակիցների հետ՝ բարձրացնելով իրենց շահերի պաշտպանության ջանքերի հավաստիությունն ու օրինականությունը:

-Տեղեկատվության հավաքագրում. հետազոտությունը ներառում է տեղեկատվության լայն շրջանակի հավաքագրում՝ ներառյալ գոյություն ունեցող նախաձեռնությունները, հիմնական վիճակագրությունը, փոփոխության կողմ և դեմ փաստարկները, և խնդրի շրջանակավորումը տարբեր շահակիցների կողմից: Այս համապարփակ ըմբռնումը ծառայում է որպես հիմք տեղեկացված շահերի պաշտպանության ռազմավարությունների և գործողությունների համար:

-Ռեսուրսատար տեղեկատվության հավաքագրում. նույնիսկ սահմանափակ ռեսուրսներով, շահերի պաշտպանները կարող են հավաքագրել արժեքավոր տեղեկատվություն տարբեր միջոցներով: Գոյություն ունեցող քաղաքականությունները, գիտական հոդվածները և այլ կազմակերպությունների շահերի պաշտպանության ջանքերը կարող են արժեքավոր պատկերացումներ տալ:

Չետագոտության գործընթացի ամփոփում.

-**Քայլ 1.** մանրակրկիտ հետազոտեք ձեր խնդիրը՝ հավաքելով տեղեկատվություն տարբեր աղբյուրներից՝ պաշտոնական փաստաթղթերից, գիտական հոդվածներից, լրատվամիջոցներից և հասարակական կազմակերպություններից:

-**Քայլ 2.** պատրաստեք փաստաթերթիկ՝ նշելով հիմնական խնդիրները, վիճակագրությունը, վկայությունները և փաստարկները խնդրի երկու կողմերից:

-**Քայլ 3.** ստեղծեք համապարփակ գիտելիքների թղթապանակ՝ անդամների և շահակիցների ներքին օգտագործման համար:


-**Քայլ 4.** կիսվեք այս գիտելիքներով անդամների հետ և կազմակերպեք ուսումնական հանդիպումներ՝ համոզվելու, որ բոլորը տեղեկացված են և պատրաստված:

Բացի հետազոտությունից, շահագրգիռ կողմերի քարտեզագրումը Էական է արդյունավետ շահերի պաշտպանության համար: Խնդրի նկատմամբ հետաքրքրություն կամ շահ ունեցող անհատների և խմբերի բազմազան շրջանակը հասկանալը կարևոր է համագործակցության, հաղորդակցման և հակադրման համար: Ահա թե ինչպես անցկացնել շահակիցների քարտեզագրում.

-**Նույնականացրեք շահակիցներին.** կազմեք խնդրին առնչվող բոլոր շահակիցների համապարփակ ցուցակ՝ ներառյալ երիտասարդական կազմակերպությունները, որոշում կայացնողները, թիրախային խմբերը, շահառուները և այլ համապատասխան դերակատարները:

-**Վերլուծեք շահագրգիռ կողմերին.** վերլուծեք յուրաքանչյուր շահակցի հետաքրքրվածության մակարդակը, ռեսուրսները, ուժը և ձեր շահերի պաշտպանության նպատակների հետ հնարավոր համապատասխանությունը: Այս վերլուծությունը օգնում է որոշել ներգրավման առավել համապատասխան ռազմավարությունները:

-**Սահմանեք հարաբերությունները.** վերլուծության հիման վրա սահմանեք ձեր հարաբերությունների բնույթը յուրաքանչյուր շահակցի հետ՝ բացահայտելով դաշնակիցներին, հակառակորդներին և հնարավոր ազդեցություն ունեցողներին: Այս հստակությունը հնարավորություն է տալիս շահերի պաշտպաններին համապատասխանաբար հարմարեցնել իրենց մոտեցումները և ուղերձները:



Երբ դուք արդեն գծել եք ձեր մատրիցան, հաջորդ քայլը այն լրացնելն է.

- Յուրաքանչյուր շահակցի համար, ով նույնականացվել է որպես բարձր առաջնահերթություն, դուք պետք է փորձեք սահմանել, թե ինչպես կարելի է նրանց վրա ազդել:

- Այն շահակիցների համար, ովքեր նույնականացվել են որպես ցածր ազդեցություն և ցածր հետաքրքրություն ունեցողներ, դուք, իհարկե, պետք է ավելի քիչ ժամանակ և ռեսուրսներ հատկացնեք նրանց ներգրավելու փորձերի վրա:

Ձեր ուղերձի մշակումը շահերի պաշտպանության համատեքստում

Յուրաքանչյուր քարոզչության հիմքում ընկած է հաղորդակցությունը՝ արդյունավետ ուղերձների միջոցով իշխանության մեջ գտնվող անհատներին և խմբերին քաղաքականության փոփոխություն ընդունելու համոզելու արվեստը: Կարևոր շահագրգիռ կողմերին հասնող և նրանց համոզմունքներն ու վարքագիծը փոխող ուղերձների ստեղծումը շատ կարևոր է հաջողված քարոզչության համար: Թեև չկա համոզիչ ուղերձ կազմելու մեկ ունիվերսալ բանաձև, որոշ ռազմավարություններ կարող են բարձրացնել դրա ազդեցությունն ու արձագանքը: Ահա թե ինչպես կարելի է ձևավորել արդիական և ազդեցիկ ուղերձ.

-Ձևակերպեք ձեր հիմնական ուղերձը. ձեր հիմնական ուղերձների կամ կարգախոսների համար խոսքերը զգուշորեն ընտրելը կարևոր է ձեր քարոզարշավի պատմությունը ձևավորելու համար: Ճիշտ բառերի ընտրությունը ստեղծում է ուժեղ հիմք ձեր գործի համար: Օրինակ՝ աբորտի վերաբերյալ քննարկումներում օգտագործվում են «ընտրության կողմնակից» և «կյանքի կողմնակից» արտահայտությունները:

-Խոսեք ի սրտե (սիրտ, գլուխ, ձեռք). հուզականորեն ներգրավեք ձեր լսարանին (սիրտ)՝ առաջացնելով հույսի, գայրույթի կամ վախի նման հույզեր: Դիմեք բանականությանը (գլուխ)՝ ներկայացնելով ցնցող փաստեր և գործնական լուծումներ: Վերջապես, մոտիվացրեք գործողության (ձեռք)՝ ձեր ուղերձում ներառելով գործողության հստակ կոչ:

-Հասկացեք ձեր լսարաններին. հարմարեցրեք ձեր ուղերձները տարբեր լսարանների հատվածներին՝ հիմնվելով նրանց հետաքրքրությունների, գիտելիքների և հասանելիության վրա: Այն ուղերձը, որը արձագանք է գտնում նոր ակտիվիստի մոտ, կարող է չգրավել փորձառու քաղաքական գործչին: Հարմարեցրեք ձեր տոնը, բովանդակությունը և մատուցումը՝ յուրաքանչյուր լսարանի նախապատվություններին և առաջնահերթություններին համապատասխան:

-Փորձարկեք ձեր ուղերձը. իրական աշխարհում փորձարկեք ձեր ուղերձը՝ դրա արդյունավետությունը գնահատելու համար: Հետադարձ կապ հայցեք անդամներից և փորձարկեք տարբեր ուղերձների հանդեպ ռեակցիաները ձեր արշավի շրջանակներում: Բացի այդ, փորձարկեք ձեր ուղերձները ձեր աշխատանքի հետ կապ չունեցող լսարանների առաջ՝ հստակությունն ու արձագանքը ապահովելու համար:

-Տեքստից այն կողմ. հիշեք, որ ձեր ուղերձը ընդգրկում է ավելին, քան պարզապես տեքստը: Մտածեք պատկերներ, տեսանյութեր և ձայներ ներառելու մասին՝ դրա ազդեցությունն ու հիշվելը մեծացնելու համար: Ոչ տեքստային տարրերը կարող են առաջացնել հզոր հույզեր և ավելի արդյունավետ փոխանցել բարդ գաղափարները, քան միայն բառերը:

Ձեր ուղերձը տարածելը. Աշխատանք լրատվամիջոցների հետ.

տեղեկատվության տարածման մշտապես զարգացող լանդշաֆտում ավանդական լրատվամիջոցների հարթակները, ինչպիսիք են հեռուստատեսությունը, մամուլը և ռադիոն, դեռևս զգալի ազդեցություն ունեն հասարակական կարծիքի ձևավորման վրա: Թեև վերջին տարիներին նրանց ուժը կարող է նվազել, նրանք մնում են կենսական ուղիներ՝ ձեր շահերի պաշտպանության ուղերձը ուժեղացնելու և քաղաքականություն մշակողների ուշադրությունը գրավելու համար: Ահա թե ինչպես կարող եք օգտագործել ավանդական լրատվամիջոցները՝ արդյունավետորեն հաղորդելու ձեր շահերի պաշտպանության արշավը:

-ընդունեք նորությունը. լրատվամիջոցների ուշադրությունը գրավելու բանալին ձեր ուղերձի նորությունն է: Լրագրողները գրավվում են այն պատմություններով, որոնք առաջարկում են թարմ տեսանկյուն կամ բացահայտում են գոյություն ունեցող խնդիրների նոր կողմերը: Փնտրեք շոկի, զարմանքի կամ սկանդալի տարրեր, որոնք կարող են ձեր ուղերձը առանձնացնել: Բացի այդ, ձեր թեման ավելի լայն հասարակական միտումների հետ համապատասխանեցնելը մեծացնում է դրա լրատվական արժեքը:

-մատչելիություն և գրավչություն. համոզվեք, որ ձեր ուղերձը մատչելի է և հեշտ հասկանալի տարբեր լսարանների համար: Մշակեք ուղերձներ, որոնք ոչ միայն հեշտ են ընկալման համար, այլև արձագանք են գտնում մարդկանց լայն շրջանակի մոտ՝ մեծացնելով ձեր հնարավորությունները հիմնական լրատվամիջոցների ուշադրությունը գրավելու համար: Օգտագործեք սոցիալական մեդիայի հարթակները, օրինակ՝ Թվիթերը՝ լրագրողների հետ շփվելու և տեսանելիությունը մեծացնելու համար:

- **Օգտագործեք** ավանդական մեթոդներ լրատվամիջոցների հետ աշխատելու համար, գրեք և ուղարկեք մամուլի հաղորդագրություններ, կազմակերպեք հարցազրույցներ թերթերի, ռադիոյի կամ հեռուստատեսության համար, գրեք կարծիքի հոդվածներ հրապարակման համար, մամուլի հաղորդագրությունները պետք է լինեն հակիրճ, դրանք պետք է պարունակեն լրատվական տարրեր, մեջբերումներ, պատկերներ և գրավիչ վերնագրեր: Հետևեք թիրախային լրագրողներին հեռախոսազանգերով:

- **Պատրաստվեք հարցազրույցների.** հարցազրույցները արժեքավոր հնարավորություններ են ձեր ուղերձը ավելի լայն լսարանին հասցնելու համար: Ապահովեք հիմնավոր պատրաստություն, ներառեք կարևոր խոսելու կետերը, տվյալներն և պատմությունները: Լրագրողներին տրամադրեք անհրաժեշտ նախնական տեղեկություններ, ուղեկցեք նրանց միջոցառման ընթացքում:

- **Օգտագործեք** նոր մեդիա հարթակներ. դիտարկեք YouTube-ի, բլոգների և փոդքասթների օգտագործումը, դրանք օգնում են հասնել փոքր, բայց ակտիվ լսարաններին և հնարավորություն են տալիս կապ հաստատել տեղեկացված աջակիցների հետ:

- **Գրեք կարծիքի հոդվածներ.** շատ թերթեր ընդունում են արտաքին հեղինակների կարծիքի հոդվածներ: Ուսումնասիրեք կարծիքի հոդվածներ գրելու հնարավորությունը, դա կօգնի ձեր ուղերձը տարածել ավելի լայն լսարանին և կիսթանի հասարակական քննարկումը:

- **Կառուցեք հարաբերություններ.** լրատվամիջոցների հետ հարաբերությունները դիտարկեք որպես երկարաժամկետ ջանք: Փորձեք կապեր հաստատել լրագրողների հետ, նույնիսկ երբ կարևոր լուր չունեք: Փոխըմբռնման կառուցումը կարող է մեծացնել ապագայում լուսաբանման ձեր հնարավորությունները: Ավանդական և նոր մեդիա հարթակների հետ ռազմավարական աշխատանքի միջոցով դուք կարող եք ուժեղացնել ձեր քարոզչության ուղերձը: Դուք կարող եք հասնել ավելի լայն լսարանի: Դուք կարող եք ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի և քաղաքականության մշակման վրա: Արդյունավետ մեդիայի ներգրավումը կարևոր է ձեր քարոզարշավը բարձրացնելու և հասարակության մեջ իմաստալից փոփոխություններ առաջ բերելու համար:

- **Ձեր համայնքի կառուցում, ներգրավում և ակտիվացում.** այսօրվա քարոզչության ոլորտում համայնքի կառավարումը, թվային մոբիլիզացիան և կազմակերպումը կարևորություն են ստանում: Դրանք կարևոր են հաջողված քարոզարշավների համար: Այս մոտեցումները ընդունում են, որ հաղորդակցությունն այլևս միակողմանի չէ: Հասարակ քաղաքացիները մեծ ազդեցություն ունեն և կարևոր դեր են խաղում քարոզչության ջանքերում: Ձեր համայնքի մոբիլիզացումը և ներգրավումը կարող է բերել բազմաթիվ օգուտներ:

Մոբիլիզացրեք ավելի շատ մարդկանց. ակտիվ համայնքները կարող են ուժեղացնել մասնակցությունը բարձր պրոֆիլ գործողություններում: Դա կմեծացնի ձեր ազդեցությունը և տեսանելիությունը:

Բազմապատկեք ռեսուրսները. կամավորների ներգրավումը բազմազանեցնում է ձեր հմտությունները, այն ընդլայնում է ձեր ռեսուրսները և թույլ է տալիս ձեզ զբաղվել ավելի լայն շրջանակի առաջադրանքներով և նախաձեռնություններով:

Հասեք նոր լսարանների. համայնքային ցանցերի օգտագործումը թույլ է տալիս հասնել ավելի հեռու լսարանների: Դա ընդլայնում է ձեր քարոզչության շրջանակը և ազդեցությունը:

Մեծացրեք ճնշումը որոշում կայացնողների վրա. միասնական և ակտիվ համայնքն ավելի մեծ ճնշում է գործադրում որոշում կայացնողների վրա: Դա ուժեղացնում է ձեր քարոզչության ազդեցությունը և արդյունավետությունը:

Համայնքի ներգրավման ամբողջ ներուժն օգտագործելու համար կարևոր է հասկանալ ավանդական ներգրավման աստիճանները: Այս մոդելը ցույց է տալիս, թե ինչպես են մարդիկ ավելի շատ ներգրավվում ձեր համայնքում: Այն օգնում է ձեզ ամրապնդել կապերը, խրախուսել մասնակցությունը և ուժեղացնել ձեր աջակիցներին քարոզչության բոլոր փուլերում: Համայնքի կառուցումը, ներգրավումը և ակտիվացումը կարևորելով՝ դուք մարդկանց օգնում եք դառնալ փոփոխության գործիչներ: Սա նպաստում է համատեղ գործողություններին և օգնում է հասնել ձեր քարոզչության նպատակներին:

Պլանավորեք ձեր գործողությունները

Քարոզչությունը ներառում է գործողությունների բազմազան շարք: Դրանք կարող են լինել հաղորդակցության վրա հիմնված ռազմավարություններ, ինչպես լրատվամիջոցների հետ հարաբերությունները: Դրանք կարող են լինել նաև միջոցառումների վրա հիմնված նախաձեռնություններ, ինչպես բողոքի ցույցերի և հանրահավաքների կազմակերպումը: Հաջողված քարոզարշավ անցկացնելու համար անհրաժեշտ է ուշադիր պլանավորում և ռեսուրսների կառավարում: Ահա թե ինչպես արդյունավետ պլանավորել ձեր գործողությունները:

Որոշեք ձեր գործողությունները. որոշեք, թե որ գործողություններն են լավագույնս համապատասխանում ձեր քարոզչության նպատակներին և ռեսուրսներին, պլանավորեք դրանք նախապես, արդյունավետ կազմակերպեք ֆինանսական և մարդկային ռեսուրսները, կանխատեսեք հնարավոր մարտահրավերները, մշակեք արտակարգ իրավիճակների պլաններ:

Ծրագրերի կառավարման հիմունքներ. քարոզչության պլանավորմանը վերաբերվեք ինչպես ծրագրի կառավարմանը: Ստեղծեք մանրամասն առաջադրանքների ցուցակներ, խելացի օրացույցներ, իրատեսական բյուջեներ: Բաշխեք պարտականությունները, կանխատեսեք ձեր թիմին անհրաժեշտ հմտությունները, որոշեք ռեսուրսների, ժամանակի և ֆինանսական պահանջները:

Ժամանակն առանցքային է. ձեր գործողությունները պլանավորելիս հաշվի առեք և՛ ծրագրի, և՛ ժամանակի կառավարումը, համապատասխանեցրեք քաղաքական օրացույցին, քարոզչության հաջողությունը հաճախ կախված է ժամանակավորումից: Օրինակ՝ քաղաքականության մշակման կարևոր փուլերը կամ նշանակալի քաղաքական իրադարձությունները, ինչպիսիք են ընտրությունները:

Բյուջետավորում և ռիսկերի կառավարում. մշակեք լավ պլանավորված, ռիսկերը ներառող բյուջեներ: Պարբերաբար թարմացրեք և վերահսկեք բյուջեները, պահպանեք հավասարակշռված բյուջեները, հաշվի առեք և՛ լավատեսական, և՛ հոռետեսական սցենարները: Բյուջեի կառավարման պատասխանատվությունը բաշխեք թիմի անդամների միջև, դա արդյունավետորեն կնվազեցնի ռիսկերը:

Ծրագրերի կառավարման սկզբունքների, ռազմավարական ժամանակավորման նկատառումների և ամուր բյուջետավորման պրակտիկայի կիրառմամբ դուք կարող եք օպտիմալացնել ձեր քարոզչության գործողությունների արդյունավետությունը: Դա կմեծացնի ձեր ցանկալի արդյունքների հասնելու հավանականությունը:

Մոնիթորինգ և գնահատում. կարևոր գործընթացներ են ձեր քարոզչության գործողությունների արդյունավետությունը գնահատելու և բարելավումը խթանելու համար: Ահա թե ինչպես են դրանք աշխատում:

Մոնիթորինգ. սա շարունակական գործընթաց է: Այն ներառում է ձեր գործողությունների հետևումը, երբ դուք իրականացնում եք դրանք, ապահովում է, որ դրանք համապատասխանեն որակի և արդյունավետության չափանիշներին: Մոնիթորինգը թույլ է տալիս ճկունություն և ռազմավարությունների ճշգրտում դիտարկել միջավայրերում:

Գնահատում. Սա գնահատում է ձեր գործողությունների վերջնական հաջողությունը: Այն չափում է, թե արդյո՞ք ձեր նպատակներին հասել եք, չափում է, թե արդյո՞ք ցանկալի քաղաքական և հասարակական փոփոխություններ են տեղի ունեցել որպես արդյունք: Չնայած ռեսուրսների սահմանափակումներին, մոնիթորինգը և գնահատումը կարևոր են կազմակերպական ուսուցման համար: Դրանք ապահովում են ազդեցիկ քարոզչություն:

Հիմնական չափումներ. քարոզչության մեջ մոնիթորինգը և գնահատումը կենտրոնանում են հետևյալի վրա՝

- Արդյո՞ք գործողությունները տեղի են ունեցել ըստ պլանի:
- Արդյո՞ք ուղղակի նպատակները ձեռք են բերվել:
- Արդյո՞ք ցանկալի փոփոխությունները տեղի են ունեցել:

Հաջողության ցուցանիշների սահմանումն օգնում է արդյունավետ չափել արդյունքները:

Բարելավեք ձեր հմտությունները. քարոզչության մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ է շարունակաբար զարգացնել հմտությունները: Դիտարկեք հետևյալ կարողությունները՝

- Հաղորդակցման հմտություններ. մամուլի հաղորդագրություններ գրելը, սոցիալական մեդիայում ներգրավվելը, գրաֆիկական դիզայնը, վիդեո մոնտաժը, հանրային խոսքը, ցանցային աշխատանքը, շրջանակումը և պատմություններ պատմելը:

- Զաղաքական հմտություններ. բանակցություն, վերլուծական և իրավական հմտություններ, քաղաքականության փաստաթղթեր գրելը, հետազոտություն և հաստատությունների ու շահագրգիռ կողմերի իմացություն:

- Ծրագրերի կառավարման հմտություններ. միջոցառումների կառավարում, բյուջեի պլանավորում և ժամանակի կառավարում:

- Առաջնորդության և մարդկային հմտություններ. կամավորների կառավարում, վերապատրաստում և արդյունավետ լսումը::

Այս հմտությունների կանոնավոր գնահատումը և բարելավումը ձեր թիմին հնարավորություն է տալիս հաջողությամբ իրականացնել քարոզարշավներ և հարմարվել փոփոխվող մարտահրավերներին:

Ընտրեք ձեր գործողությունները. քարոզչության մեջ ճիշտ գործողությունների ընտրությունը կարևոր է առավելագույն ազդեցության և ցանկալի արդյունքների հասնելու համար: Յուրաքանչյուր գործողություն ունի իր առավելությունները, պահանջները, դժվարությունները և ռիսկերը: Այս բաժինը ուսումնասիրում է տարբեր քարոզչական գործողություններ՝ առցանց արշավներից մինչև բողոքի ցույցեր: Դա օգնում է ռազմավարական ընտրություն կատարել իրենց նպատակի համար ամենաարդյունավետ մեթոդների միջև:

Կազմակերպեք առցանց արշավ. թվային դարաշրջանում առցանց արշավները դարձել են քարոզչության անփոխարինելի գործիքներ: Դրանք առաջարկում են աննախադեպ հասանելիություն և ներգրավման հնարավորություններ: Սոցիալական մեդիայի շարժումներից մինչև էլեկտրոնային փոստի խնդրագրեր: Առցանց արշավները հնարավորություն են տալիս մոբիլիզացնել աջակիցներին, բարձրացնել իրազեկությունը և ազդել որոշում կայացնողների վրա:

Առավելությունները՝

- լայն հասանելիություն
- ծախսարդյունավետություն
- հեշտ կիսվելու հնարավորություն
- վիրուսային ազդեցության պոտենցիալ
- ներգրավման տարբեր ռազմավարությունների հնարավորություն (օրինակ՝ խնդրագրեր, սոցիալական մեդիայի հեշթեգեր, էլ. փոստի արշավներ):

Պահանջները՝

- համացանցի և թվային հարթակների հասանելիություն
- հաղորդակցման և թվային մարքեթինգի ուժեղ հմտություններ
- Արշավի հստակ նպատակներ և ուղերձներ:

Դժվարությունը՝ միջին: Պահանջում է թվային գրագիտություն և ռազմավարական պլանավորում, բայց ընդհանուր առմամբ հասանելի է:

Ռիսկերը՝

- սահմանափակ ներգրավվածություն կամ ազդեցություն, եթե լավ չի առաջխաղացվում կամ եթե ուղերձները հստակ չեն
- սոցիալական մեդիա հարթակներում հակազդեցության կամ բացասական ուշադրության հավանականություն:

Բողոքի ցույց կազմակերպել. հզոր միջոց է մարդկանց անհամաձայնությունը և փոփոխության պահանջները արտահայտելու համար: Դրանք գրավում են հանրության ուշադրությունը և ոգևորում շարժումները: Ցույցերը կարող են լինել փողոցներում կամ առցանց:

Առավելություններ. ցույց է տալիս հանրային աջակցությունը, գրավում է լրատվամիջոցների ուշադրությունը, ամրապնդում է համայնքի միասնությունը, ճնշում է գործադրում որոշում կայացնողների վրա:

Պահանջներ. թույլտվություններ, պլանավորում (վայր, պաստառներ, խոսնակներ), ամբոխի վերահսկում, օրենքների իմացություն:

Դժվարություն՝ միջինից բարձր: Պահանջում է կազմակերպում և մասնակիցների անվտանգության ապահովում:

Ռիսկեր. հնարավոր բախումներ իշխանությունների կամ հակառակորդների հետ, օրենքի խախտման հետևանքներ, բացասական լուսաբանում, եթե խաղաղ չանցնի

Համաժողով կամ հանդիպում կազմակերպել. համաժողովները և հանդիպումները հնարավորություն են տալիս քննարկումների, համագործակցության և գիտելիքների փոխանակման համար:

Առավելություններ. նպաստում է երկխոսությանը, հնարավորություն է տալիս կրթել մասնակիցներին, կարող է նոր կապերի հանգեցնել:

Պահանջներ՝ վայր, խոսնակներ, օրակարգ, գովազդ, կազմակերպչական աշխատանք:

Դժվարություն՝ միջին: Պահանջում է պլանավորում, բայց կարող է հարմարեցվել տարբեր բյուջեների:

Ռիսկեր. քիչ մասնակցություն, թիրախային խմբի հետաքրքրության պակաս, կազմակերպչական խնդիրներ:

Խնդրագիր կազմակերպել. օգնում են հավաքել աջակցություն, բարձրացնել ձայները և ճնշում գործադրել որոշում կայացնողների վրա: Դրանք կարող են լինել առցանց կամ թղթային:

Առավելություններ. հեշտ է մասնակցել, ցույց է տալիս հանրային աջակցությունը, կարող է լայն տարածվել:

Պահանջներ. հստակ նպատակ, առցանց հարթակ, գովազդ:

Դժվարություն՝ ցածրից միջին: Պահանջում է հստակ ուղերձներ, բայց համեմատաբար հեշտ է կազմակերպել:

Ռիսկեր. ցածր ազդեցությունը, եթե լավ չխրախուսվի, կեղծ ստորագրությունների հավանականությունը, չի կարող հանգեցնել շոշափելի արդյունքների, եթե չաջակցվի այլ շահերի պաշտպանության ջանքերով:

Կազմակերպել միջոցառում՝ ներգրավելով լրատվամիջոցներին և օգտագործելով առցանց հարթակները

Լրատվամիջոցների և առցանց հարթակների հետ համագործակցությունը պաշտպաններին ուղղակի հնարավորություն են տալիս ուժեղացնել իրենց ուղերձը, հասնել ավելի լայն լսարանի և ձևավորել հանրային խոսույթը: Լինի դա մամուլի ասուլիսներ, հարցազրույցների թե սոցիալական մեդիայի արշավներ, լրատվամիջոցների հետ համագործակցությունը թույլ է տալիս պաշտպաններին ուշադրություն գրավել, վստահություն ձեռք բերել և ազդել հասարակական կարծիքի վրա: Այս բաժինը խորանում է լրատվամիջոցների և առցանց հարթակների հետ համագործակցելու և միջոցառումների կազմակերպման նրբությունների վրա՝ ուսումնասիրելով առավելությունները, պահանջները, դժվարությունները և ռիսկերը, որոնք կապված են այս ուղիները պաշտպանության համար օգտագործելու հետ:

-Առավելություններ. ուղղակի շփում լրագրողների կամ առցանց ազդեցիկ անձանց հետ, լրատվամիջոցների լուսաբանման հնարավորություն, ուղերձի տարածում ավելի լայն լսարանին:

-Պահանջներ. լրատվամիջոցների կոնտակտներ կամ հարաբերություններ, հետաքրքիր պատմություն կամ տեսանկյուն, միջոցառման պլանավորում և կազմակերպում:

-Դժվարություն՝ միջին: Պահանջում է ցանցային հմտություններ, արդյունավետ պատմելու կարողություն և միջոցառման համակարգում:

-Ռիսկեր. լրատվամիջոցների սահմանափակ հետաքրքրություն կամ լուսաբանում, պաշտպանության ուղերձի սխալ ներկայացում լրատվամիջոցների կողմից, բացասական հակազդեցություն կամ քննադատություն:

Պաշտպանի հոգեկան առողջության պահպանում

Փաստաբանական աշխատանքը խորապես պարզևատրոդ է, սակայն այն կարող է նաև հուզականորեն ծանր լինել, հատկապես երիտասարդ ակտիվիստների համար, ովքեր նավարկում են բարդ խնդիրների և մարտահրավերներով լի միջավայրերով: Սկսած սթրեսից և ծանրաբեռնվածությունից մինչև մեղքի զգացում և հուսահատություն, պաշտպանության հուզական ազդեցությունն իրական է և վավեր: Այս մարտահրավերները ճանաչելն ու դրանց անդրադառնալը կարևոր է թե՛ անձնական բարեկեցությունը, թե՛ պաշտպանության արդյունավետ ջանքերը պահպանելու համար:

Որպես երիտասարդ պաշտպաններ՝ դուք հաճախ առաջնորդվում եք կարեկցանքով և աշխարհում տարբերություն մտցնելու անկեղծ ցանկությամբ: Թեև ձեր նվիրումը սոցիալական փոփոխությունների հանդեպ գովելի է, սակայն կարևոր է առաջնահերթություն տալ ինքնախնամքին և հոգեկան առողջությանը՝ հոգնածությունից խուսափելու և դժվարությունների դեմ դիմակայունություն պահպանելու համար: Այս բաժինը ուսումնասիրում է զգացմունքները կառավարելու, աջակցություն փնտրելու և ինքնախնամքը առաջնահերթություն դարձնելու գործնական ռազմավարություններին՝ հնարավորություն տալով երիտասարդ ակտիվիստներին նավարկել պաշտպանության վերելքներն ու վայրէջքները՝ միևնույն ժամանակ պահպանելով հոգեկան առողջությունը և դիմակայունությունը:

Յոգ տանել ձեր զգացմունքների մասին

Յուզական կարգավորումը կարևոր է թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջությունը պահպանելու համար: Ահա մի քանի ռազմավարություններ, որոնք կօգնեն ձեզ ճանաչել և կառավարել ձեր զգացմունքները.

•կանոնավոր կերպով ստուգեք ինքներդ ձեզ: Ամեն օր ժամանակ հատկացրեք ձեր զգացմունքների վերաբերյալ խորհրդածելու համար: Ինքներդ ձեզ հարցեր տվեք, օրինակ՝ ի՞նչ զգացմունքներ եմ ապրել այսօր: Որո՞նք են այս շաբաթ իմ ապրած երեք ամենատարածված զգացմունքները: Ձեր զգացմունքների մեջ օրինաչափություններ բացահայտելը կարող է օգնել ճանաչել դրդապատճառները և ավելի լավ հասկանալ, թե ինչպես եք արձագանքում տարբեր իրավիճակներին:

•հիշեցրեք ինքներդ ձեզ, որ բոլոր զգացմունքներ ունենալը բնական երևույթ է: Կարևոր է հաստատել ձեր զգացմունքները և ընդունել, որ նորմալ է զգացմունքների լայն սպեկտր ապրելը: Խուսափեք ձեր զգացմունքները մերժելուց կամ ճնշելուց, քանի որ դա կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Փոխարենը՝ փորձեք ընդունել և ինքնակարեկցանք ցուցաբերել դժվար զգացմունքներ ապրելիս:

•վերաձևակերպեք բացասական մտածողությունը: Բացասական զգացմունքները երբեմն կարող են հանգեցնել բացասական մտքերի՝ ազդելով ձեր վարքի և հաղթահարման մեխանիզմների վրա: Փորձեք վերաձևակերպել այս մտքերը՝ մարտահրավեր նետելով բացասական համոզմունքներին և կենտրոնանալով ավելի դրական տեսանկյունների վրա: Օրինակ՝ «Ես բավականաչափ լավը չեմ» մտքի փոխարեն վերաձևակերպեք այն որպես «Ես ունակ եմ և արժանի եմ հաջողության»:

Կանոնավոր կերպով ինքներդ ձեզ ստուգելով, ձեր զգացմունքները հաստատելով և բացասական մտածողությունը վերաձևակերպելով՝ դուք կարող եք զարգացնել հուզական կարգավորման ավելի առողջ հմտություններ և ավելի լավ կառավարել պաշտպանության աշխատանքի վերելքներն ու վայրէջքները:

Գտեք հաղթահարման դրական եղանակներ

Երբ բացասական կամ դժվար զգացմունքներ եք ապրում, կարևոր է գտնել դրական և անվտանգ եղանակներ դրանք հաղթահարելու համար: Մի քանի գաղափարներ.

- Երաժշտություն լսելը
- Սիրելի ֆիլմը կամ հեռուստաշոուն դիտելը
- Առողջ սնունդ ուտելը
- Ընկերոջ հետ զրուցելը
- Վստահելի մարդուց գրկախառնություն ստանալը
- Վստահելի մեծահասակից խորհուրդ հարցնելը
- Մարմնամարզությամբ զբաղվելը
- Առցանց Էկրանի Ժամանակը կրճատելը:

Մեկ այլ գործողություն. գրի առեք երեք բան, որոնք ձեզ համար զվարճալի և հաճելի են, և երեք մարդ՝ ձեր կյանքում, ովքեր միշտ օգնում են ձեզ լավ զգալ: Պահեք սրանք որպես ձեր դիմելու տարբերակներ, երբ զգաք, որ դժվար պահ եք ապրում:

Չարգալից կերպով հաղորդակցեք ձեր ցանկություններն ու կարիքները

Ամբողջ աշխարհի երիտասարդ փաստաբանների արձագանքներում ի հայտ է գալիս ընդհանուր թեմա: Երբեմն դժվար է լինում ասել «ոչ» կամ խնդրել այն, ինչ ձեզ անհրաժեշտ է: Իրականում, վճռական լինելը ձեռք բերված հմտություն է, և ինչպես ցանկացած հմտություն, դուք ավելի լավ եք դառնում դրանում՝ վարժվելով: Որպես երիտասարդ ակտիվիստ և փաստաբան, դուք զուցե լավ եք հաղորդակցում ձեր մտքերը և պաշտպանում ուրիշներին: Ինչպե՞ս կարող եք կիրառել այդ նույն հմտությունները՝ հաղորդակցվելու և պաշտպանելու ձեր սեփական կարիքները: Ահա մի քանի խորհուրդներ.

- Ժամանակ հատկացրեք մտածելու, թե ինչ եք ուզում և ինչի կարիք ունեք, ի տարբերություն միայն այն բանի, թե ինչ են ուրիշները ուզում և ինչի կարիք ունեն ձեզանից:
- Օգտագործեք «Ես» արտահայտությունները: Խնդրեք այն, ինչ ուզում եք կամ կարիք ունեք՝ սկսելով «Ես» կամ «Իմ» բառերով.
 - Իմ մտահոգությունն այն է, որ...
 - Ես կարծում եմ, որ ես...
 - Ես զգում եմ, որ ես...
 - Երբ ես...
 - Ես պետք է...
 - Ես կցանկանայի...
 - Ես հուսով եմ, որ...

- Ասեք՝ ոչ: Սովորեք երբ և ինչպես ասել ոչ, կարևոր միջոց է ինքներդ ձեր մասին հոգ տանելու համար: «Ոչ» ասելը կարող է դժվար լինել:

Ահա մի քանի մտքեր և արտահայտություններ, որոնք կարող են օգնել:

- Թույլ տվեք ուրիշներին իմանալ, որ նրանք կարևոր են, բայց դուք՝ ոչ պակաս:
- Ես գնահատում եմ դա, բայց ոչ, շնորհակալություն:
- Ես հոգ եմ տանում ձեր մասին, բայց չեմ կարող:
- Ես հասկանում եմ, թե ինչու դա կարող է ձեզ հարմար լինել, բայց ինձ համար այնքան էլ լավ չի աշխատում:

Առաջարկեք այլընտրանք, բայց համոզվեք, որ այն ձեզ համար հարմար է.

- Այսօր ես ժամանակ չունեմ, բայց գուցե մի քանի շաբաթ անց:
- Սա ինձ համար այնքան էլ իրատեսական չէ, գուցե՞ խնդրեք այլ մարդու:
- Ես չեմ ուզում X-ը անել հիմա, բայց ի՞նչ կասեք, եթե մենք փոխարենը Y-ը անենք:

Այս արտահայտությունները կարող են օգնել ձեզ ավելի վստահ և հարգալից կերպով հաղորդակցել ձեր սահմանները՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ուրիշների զգացմունքները: Հիշեք, որ վարժվելով դուք կդառնաք ավելի հմուտ այս տեսակի հաղորդակցության մեջ:

ՍԹՐԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Շատ փորձառություններ կամ իրադարձություններ կարող են առօրյա կյանքում սթրես առաջացնել, իսկ որոշ ավելի մեծ իրադարձություններ կարող են ավելի մեծ լարվածություն պատճառել: Դուք միայնակ չեք: Յուրաքանչյուր ոք իր կյանքի որոշակի պահին սթրես է ապրում, և տարբեր տեխնիկաներ կիրառելով՝ կարող եք օգնել ձեզ դրականորեն հաղթահարել այն: Ինքնեդ ձեզ ստուգելը, ինչպես նշվեց վերևում, լավ սկիզբ է: Պարզապես դադար առեք մտածելու և խորհրդածելու համար: Որո՞նք են այս շաբաթ ձեզ սթրես պատճառած երեք հիմնական բաները: Որո՞նք են այս շաբաթ ձեր սթրեսը նվազեցնելու օգնած երեք հիմնական բաները: Դուք չեք կարող խուսափել սթրեսից, բայց կարող եք ձգտել պահպանել հավասարակշռություն ձեր կյանքում:

Կարող է նաև օգտակար լինել հասկանալ, թե ինչպես է սթրեսն ազդում ձեր մարմնի և մտքի վրա:

- Հուզական ախտանշանները կարող են ներառել տխրություն կամ մեկուսացում զգալը կամ հանկարծակի ճնշող վախ, ուժեղ անհանգստություն կամ խիստ տրամադրության տատանումներ ապրելը:
- Ֆիզիկական ախտանշանները կարող են ներառել սրտի արագ զարկեր, արագ շնչառություն, քրտնել, գլխացավեր, սրտխառնոց կամ փսխում, ախորժակի կորուստ կամ կտրուկ քաշի փոփոխություններ:
- Վարքային ախտանշանները կարող են ներառել վեճերի մեջ ներգրավվելը կամ զայրույթի հանկարծակի պոռթկումները, ինքնավնասումը, թմրանյութերի կամ ալկոհոլի օգտագործման կամ ծխելու ավելացումը կամ անսովոր դառնալը, ընկերներից կամ ընտանիքից հեռանալը, քնի օրինաչափության փոփոխությունները կամ անձի կտրուկ փոփոխությունները:
- Ճանաչողական ախտանշանները կարող են ներառել՝ արագ մտքեր, կենտրոնանալու անկարողություն կամ մշուշոտ մտածողություն:

Հանգստացնող վարժություններ

Դանդաղ, խորը շնչառությունը ամենապարզ և արագ միջոցներից մեկն է մարմինը հանգստացնելու համար, երբ դուք չափազանց սթրեսված եք զգում կամ ուժեղ դժվար զգացմունքներ եք ապրում: Ահա հղում շնչառական վարժության տեսանյութի, որը կուղղորդի ձեզ:

Պահեք այս հնարքը ձեր հետևի գրպանում ճնշող պահերի համար: Այս կարճ տեսանյութը Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից նույնպես տրամադրում է հիմնավորման տեխնիկա, որը կարող է օգնել.

- Փակեք ձեր աչքերը և հարմար նստեք:
- Նկատեք, թե ինչպես եք զգում և ինչի մասին եք մտածում:
- Դանդաղեցրեք և կապվեք ձեր մարմնի հետ՝ երեք դանդաղ և խորը շունչ քաշելով:
- Վերակենտրոնացեք ձեր շրջապատի վրա՝ ներգրավելով ձեր տարբեր զգայարանները. ի՞նչ եք տեսնում, ի՞նչ եք լսում, ի՞նչ հոտ եք առնում, ի՞նչ եք համտեսում և ի՞նչ եք զգում: (Եթե որևէ պահի անհարմար եք զգում, ազատ եք դադար առնելու կամ կանգ առնելու: Կարող է մի փոքր ճիգ պահանջվել, որպեսզի ճիշտ անեք և լիարժեք օգուտներ ստանաք, բայց շարունակեք):

Սթրեսի հաղթահարման գործնական հմտությունների մասին կարող ես ծանոթանալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) «Անել այն, ինչ կարևոր է սթրեսի ժամանակ. պատկերազարդ ուղեցույցում»: Օրական մի քանի րոպեն բավարար է ուղեցույցում քննարկված ինքնօգնության տեխնիկաները գործնականում կիրառելու համար, որոնք կարող են օգտագործվել առանձին կամ ուղեկցող աուդիո վարժությունների հետ միասին:

Որոշել, թե երբ եք օգնության կարիք ունենում

Կարող է վախեցնող թվալ ընդունել, որ աջակցության կարիք ունեք, սակայն դա քաջության և ուժի նշան է:



Remember: You don't need to reach a breaking point before you ask for help.

Ահա ութ նշան, որ կարող եմ ցույց տալ, որ ձեզ աջակցություն է հարկավոր ձեր զգացմունքները կառավարելու կամ հոգեկան առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու հարցում.

- Անկողնուց դուրս գալու դժվարություն կամ մշտական հոգնածության զգացում
- Հեռանալ և խուսափել ընկերներից կամ անհրաժեշտ առաջադրանքներից
- Սովորական գործողությունների հանդեպ հետաքրքրության կորուստ
- Կենտրոնանալու դժվարություն
- Գրգռվածություն
- Տխրության զգացում օրվա մեծ մասը, գրեթե ամեն օր
- Ինքնավաստման մտքեր կամ զգացումներ, կամ կյանքի իմաստի բացակայության զգացում
- Վերոնշյալներից որևէ մեկի առկայությունն երկու շաբաթից ավելի:

Օգնություն գտնելը

Առողջ միտք և մարմին պահպանելը նշանակում է մշտապես փնտրել տարբեր գործողություններ, որոնք կարող եք ձեռնարկել, և մեթոդներ, որոնք կարող եք օգտագործել ձեր ճանապարհին աջակցելու համար: Հավասարապես կարևոր է իմանալ, թե որտեղից կարող եք տեղեկություններ և աջակցություն ստանալ, երբ դրանց կարիքն ունեք: Դուք երբեք մենակ չեք: Ձեր պաշտպանության ճանապարհի տարբեր փուլերում ձեզ հասանելի են աջակցության տարբեր կառուցվածքներ և մեթոդներ: Աջակցող ռեսուրսներով լի հզոր գործիքակազմի ստեղծումը կարող է օգնել դժվար ժամանակներում: Դուք արդեն ունեք որոշ գործիքներ, որոնք սովորեցրել են ձեզ, թե ինչպես շնչել, խորհել իրավիճակի կամ զգացմունքների մասին և մեղմորեն հաղթահարել դժվարությունները: Եթե որևէ պահի զգում եք, որ իսկական հոգեկան առողջության ճգնաժամ եք ապրում, զանգահարեք ձեր տեղական շտապ օգնության համարին կամ ձեր բժշկական կոնսուլտներին՝ ուղեգրերի համար: Սակայն եթե արտակարգ իրավիճակի առջև չեք կանգնած, կարող եք աջակցություն գտնել ձեր ընկերների և գործընկերների մոտ:

Երբ ձեզ անհրաժեշտ է . . .

- սփոփանք, խոսեք վստահելի ընկերոջ հետ:
- ուղղորդում, դիմեք վստահելի մեծահասակի:
- աջակցություն, խոսեք համայնքի առաջնորդի կամ ձեզ աջակցող համայնքի անդամի հետ:
- հեռանկար, շփվեք և ներգրավվեք նմանատիպ իրավիճակներում գտնվող այլ երիտասարդների հետ:
- թեև օգնություն խնդրելը կարող է վախեցնող թվալ, այլ մարդկանց օգնությունը կարող է դրականորեն փոխել ձեր կյանքը: Եթե դժվարանում եք և չգիտեք, թե ինչ ասել կամ ինչպես արտահայտել, որ օգնության կարիք ունեք, փորձեք այս օրինակներից մի քանիսը.

Պատերազմից տուժած համատեքստում երիտասարդների շահերի պաշտպանություն և պատերազմից տուժած երիտասարդների մասնակցություն

- Երբ չգիտեք, թե ինչի կարիք ունեք. «Ես զգում եմ. . . : Վստահ չեմ, թե ինչ խնդրեմ, բայց կարծում եմ, որ աջակցության կարիք ունեմ: Ազա՞տ եք խոսելու համար (օր/ժամ)»:
- Երբ անելանելի վիճակում եք գգում. «Ես դժվարանում եմ: Կարո՞ղ եմք (հանդիպել և այլն) (ամսաթիվ): Կուզեի ձեր օգնությունը որոշ գաղափարներ մտածելու և ծրագիր կազմելու հարցում»:
- Երբ չեք ուզում խոսել դրա մասին. «Ես վատ վիճակում եմ, բայց դեռ պատրաստ չեմ խոսել դրա մասին: Կուզենայի գրուցել/միասին գործունեություն անել, որ շեղվեմ»:
- Երբ կապի մեջ մնալու զգացողության կարիք ունեք. «Կարո՞ղ եք ստուգել ինձ (ամսաթիվ/ամեն օր)՝ համոզվելու, որ լավ եմ»:
- «Վերջերս լավ չեմ զգացել: Կարո՞ղ եք ամեն առավոտ ինձ հաղորդագրություն ուղարկել՝ բարև ասելու: Դա իսկապես կօգնի ինձ»:
- «Ողջույն, ընկեր: Վերջերս տխուր եմ: Ուզո՞ւմ ես Սնեփչաթով (Snapchat) սելֆիներ ուղարկենք միմյանց քնելուց առաջ ամեն երեկո, պարզապես կապի մեջ մնալու համար»:
- «Ընկճված եմ զգում: Ի՞նչ կասես ինքնախնամքի ընկերներ լինելու մասին: Կարող եմք օրը մեկ հաղորդագրություն ուղարկել միմյանց՝ նշելով, թե ինչ եմք արել մեզ ինամելու համար, և կուզենայի լսել քո գաղափարները»:
- «Վերջերս ինքնամեկուսացել եմ: Ի՞նչ կասես շաբաթը մի քանի անգամ իրար հետ կապ հաստատելու մասին: Կուզենայի ավելի հաճախակի կապի մեջ լինե՞նք»:
- Կարո՞ղ եք կիսվել սիրելի հիշողությամբ կամ հիշեցնել մեր միասին անցկացրած լավ պահերից:

Ձեր անձնական ռեսուրսների ցանկը

Ձեր գործիքակազմը լիարժեք չէ առանց լրացուցիչ ռեսուրսների: Ժամանակ հատկացրեք ձեր համայնքներում աջակցող կազմակերպություններ և խմբեր գտնելու համար (նախքան դրանց կարիքն ունենալը):

Որոշ օրինակներ ներառում են.

- օգնության գծեր. գտեք տեղական, մարզային, ազգային և միջազգային օգնության գծերի հեռախոսահամարները կամ վեբ հասցեները, որոնք աջակցում են հոգեկան և ֆիզիկական առողջությանը:
- աջակցության խմբեր. փնտրեք կոնտակտային տվյալներ տարբեր խմբերի համար, որոնք առաջարկում են հասակակիցների աջակցություն՝ առցանց կամ անձամբ:
- վեբկայքեր. պահպանեք հոգեկան առողջությանն ու բարեկեցությանն ուղղված կազմակերպությունների ցանկը՝ իրենց վեբկայքերի տեղեկատվությամբ:
- սոցիալական մեդիա. հետևեք Էջերի, որոնք ամենօրյա մոտիվացիա են տրամադրում, ինչպես նաև հոգեկան առողջության և բարեկեցության վրա կենտրոնացած կազմակերպությունների Էջերին:
- մասնագիտական խմբեր. միացեք նմանատիպ հետաքրքրություններ ունեցող մարդկանց խմբերին՝ աջակցելու ձեր գործին և ճանապարհորդությանը: Դրանք կարող են նաև օգնել, երբ ճնշված եք զգում:
- մասնագիտական. դիմեք հոգեկան առողջության մասնագետի դժվար ժամանակներում:

Անելանելի զգալը

Պաշտպանության գործընթացի տարբեր փուլերում դուք կարող եք անելանելի, շփոթված կամ դեմոտիվացված զգալ: Մի՛ հուսահատվեք: Սա գործընթացի նորմալ մասն է, և հաճախ այս պահերին դուք կքաղեք լավագույն կյանքի դասը:

Ստացեք աջակցություն

Փորձեք գտնել մեկին, ում հետ կարող եք խոսել և կիսվել գաղափարներով՝ ընկեր, ինսամակալ, ծնող, ուսուցիչ կամ գործընկեր: Անձնական աջակցությունն ու խրախուսանքը կարևոր են, այնպես որ փորձեք գտնել մեկին, ում հետ կապ կհաստատեք:

Յիշեք, որ դուք մենակ չեք:

Երբեմն դուք կլինեք առաջին մարդը, ով ուղի կբացի, որին կարող են հետևել ուրիշները, և սա կարող է միայնակ փորձառություն լինել: Յիշեք, որ աշխարհի տարբեր երկրների երիտասարդներ ձեռնարկել են նմանատիպ առաջադրանքներ և բախվել նմանատիպ մարտահրավերների հետ: Կարդացեք այլ մարդկանց պատմությունները, փնտրեք ձերին նման օրինակներ և տեսեք, թե ինչպես են այլ մարդիկ վարվել իրենց իրավիճակներում: Կապ հաստատեք երիտասարդների հետ տարբեր հարթակներում՝ ձեր տեղական համայնքում կամ առցանց խմբում՝ գաղափարներ փոխանակելու համար: Այս ամենն անելով՝ դուք կսկսեք մշակել ստեղծագործական կամ նորարարական լուծումներ:

Մի փորձեք ամեն ինչ անել ինքնուրույն:

Դուք կարող եք լինել որևէ գործի հիմնական շարժիչ ուժը, բայց դուք գերբնական ուժով օժտված չեք և չեք կարող ամեն ինչ անել միայնակ: Յեշտ է չափից շատ բան վերցնել ձեզ վրա և արագ հոգնել, այնպես որ համոզվեք, որ հոգ եք տանում ինչպես ձեր, այնպես էլ ձեր գործի մասին: Սկսեք ձևավորել մարդկանց թիմ, ովքեր կարող են օգնել ձեզ հասնել ձեր նպատակներին: Յիշեք, յուրաքանչյուր ոք ունի հմտությունների և կարողությունների տարբեր հավաքածու, և թիմի հետ աշխատելով դուք կարող եք սկսել բաշխել աշխատանքային ծանրաբեռնվածությունը և ավելի արդյունավետ ներգրավվել պաշտպանության գործընթացում:

Դիմեք առկա ռեսուրսներին և մարդկանց:

Գոյություն ունեն բազմաթիվ ռեսուրսներ, որոնք կաշակցեն ձեզ ձեր պաշտպանության ճանապարհորդության ընթացքում: Նայեք երիտասարդների ձայները (Voices of Youth), Համացանցը Լավ Բաների համար (Internet of Good Things) և այլ հարթակներ՝ ոգեշնչման և ուղղորդման համար: Փնտրեք կազմակերպություններ, որոնք աշխատում են ձեզ հետաքրքրող ոլորտում՝ աջակցության և այլ երիտասարդների հետ հնարավոր համագործակցության համար: (Յունիսեֆի երիտասարդների պաշտպանության ուղեցույց):

Եթիկական շահերի պաշտպանության. մի վնասիր երիտասարդների շահերի պաշտպանությանը

- Խուսափել երիտասարդների և նրանց նպատակների գործիքայնացումից
- Երիտասարդների պաշտպանության գործում կարևոր է պաշտպանել երիտասարդներին և նրանց նպատակները այլ նպատակներով օգտագործվելուց, հատկապես այն վայրերում, որտեղ ուժերի անհավասարակշռությունը կարող է շահագործել նրանց ոգևորությունն ու իդեալիզմը: Այս վտանգը հատկապես բարձր է հակամարտություններից տուժած տարածքներում, որտեղ տարբեր խմբեր կարող են փորձել օգտագործել երիտասարդական շարժումները քաղաքական նպատակներով կամ բռնությունը շարունակելու համար:
- Այս ռիսկը նվազեցնելու համար պաշտպանները պետք է կենտրոնանան երիտասարդների իսկական հզորացման վրա: Դա նշանակում է՝ համոզվել, որ նրանց կարծիքները ոչ միայն լսվում են, այլև լրջորեն ընդունվում և դրանց հիման վրա գործողություններ են ձեռնարկվում: Դա անելու որոշ եղանակներ են՝ խրախուսել երիտասարդներին ստանձնել առաջնորդի դերեր, սովորեցնել նրանց քննադատաբար մտածել և պաշտպանել իրենց, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացները դարձնել ավելի թափանցիկ և հաշվետու:
- Խորապես բաժանված հասարակություններում խաղաղության պաշտպանությունը պահանջում է նավարկել բարդ սոցիալական, քաղաքական և պատմական դիմադրական: Հակամարտության տարածքներում համայնքները կարող են բևեռացված լինել Էթնիկ, կրոնական կամ գաղափարական գծերով, ինչը դժվարացնում է միասնության և հաշտեցման խթանումը:
- Արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է կամուրջներ կառուցել բաժանարար գծերի միջև, խթանել երկխոսությունն ու փոխըմբռնումը և անդրադառնալ հակամարտության արմատական պատճառներին: Կարևոր է ներգրավվել տարբեր համայնքների հետ հարգալից և ներառական կերպով՝ ընդունելով նրանց տեսակետներն ու փորձը:

Պատերազմից տուժած համատեքստում երիտասարդների շահերի պաշտպանություն պատերազմից տուժած երիտասարդների մասնակցությամբ

Հակամարտությունների նկատմամբ զգայուն մոտեցումները, ինչպիսիք են հակամարտությունների վերլուծությունն և խաղաղության կրթությունը, կարող են օգնել պաշտպաններին նավարկել զգայուն հարցերը և վստահություն ձևավորել շահագրգիռ կողմերի միջև: Տեղական հասարակական կազմակերպությունների և համայնքի առաջնորդների հետ համագործակցությունը նույնպես կարևոր է պաշտպանության ջանքերի արդիականությունն ու օրինականությունն ապահովելու համար:

Խաղաղության քարոզչությունը հակամարտության տարածքներում

Հակամարտության տարածքներում խաղաղության պաշտպանությունը և քարոզչությունը կրում է ներհատուկ ռիսկեր՝ պայմանավորված անկայուն և հաճախ թշնամական միջավայրով: Չինված խմբավորումների և արմատացած իշխանական կառուցվածքների կողմից դիմադրության բախվելուց բացի, խաղաղության պաշտպանները կարող են նաև հանդիպել դիմադրության բնակչության այն հատվածների կողմից, որոնք օգուտ են քաղում ստեղծված իրավիճակից կամ խաղաղության ջանքերը ընկալում են որպես սպառնալիք իրենց շահերին:

Պաշտպանների ռիսկերը ներառում են անձնական անվտանգության սպառնալիքներ, ահաբեկում, ոտնձգություններ և նույնիսկ բռնություն: Հակամարտությունից տուժած տարածաշրջաններում խաղաղության պաշտպանությունը կարող է ընկալվել որպես գոյություն ունեցող ուժային դինամիկայի և ամրապնդված շահերի մարտահրավեր, ինչը պաշտպաններին խոցելի է դարձնում հակազդեցությունների նկատմամբ:

Չնայած այս ռիսկերին, խաղաղության քարոզչությունը կարևոր է բռնության շրջափուլը կտրելու և կայուն խաղաղություն կառուցելու համար: Պաշտպանները պետք է առաջնահերթություն տան իրենց և իրենց համայնքների անվտանգությանն ու ապահովությանը՝ միաժամանակ փնտրելով տեղական և միջազգային դաշնակիցների աջակցությունը՝ իրենց ձայնը բարձրացնելու և իրենց իրավունքները պաշտպանելու համար:

Ռիսկերի մեղմացումը և դիմակայունության ձևավորումը

Ռիսկերը մեղմելու և դիմակայունություն ձևավորելու համար հակամարտության տարածքներում խաղաղության պաշտպանները պետք է իրականացնեն ռիսկերի մանրակրկիտ գնահատում, բացահայտեն հնարավոր սպառնալիքները և մշակեն արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների ծրագրեր: Սա կարող է ներառել հաղորդակցության ցանցերի, ապահով տարածքների և վտանգի դեպքում տարիանման ուղիների ստեղծում:

Զաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մարդու իրավունքների պաշտպանների և խաղաղաշինության միջազգային նախաձեռնությունների հետ դաշինքների ստեղծումը կարող է տրամադրել լրացուցիչ աջակցություն և համերաշխություն: Իրավապաշտպանները պետք է նաև պաշտպանեն մարդու իրավունքների պաշտպանների իրավական պաշտպանությունը և բռնության ու ահաբեկման կատարողների պատասխանատվության մեխանիզմները:

Առաջնահերթություն տալով անվտանգությանն ու բարեկեցությանը՝ միաժամանակ անսասան մնալով խաղաղության հանդեպ իրենց նվիրվածության մեջ, պաշտպանները պետք է նաև պահանջեն օրենքներ, որոնք կպաշտպանեն մարդու իրավունքների պաշտպաններին և կպատժեն նրանց, ովքեր բռնություն կամ ահաբեկում են կիրառում:

:

Եզրակացություն

Շարունակելով ձեր ճանապարհը որպես պաշտպան՝ հիշեք, որ ձեր հուզական բարեկեցության մասին հոգ տանելը նույնքան կարևոր է, որքան ձեր գործի համար պայքարելը: Հուզական կարգավորում կիրառելով՝ պարբերաբար ինքներդ ձեզ ստուգելով և բացասական մտածողությունը վերաձևակերպելով՝ դուք կարող եք մշակել դիմակայունություն և պահպանել ամուր հիմք ձեր պաշտպանության ջանքերի համար:

Կարևոր է ընդունել, որ պաշտպանության աշխատանքը կարող է հուզականորեն մարտահրավեր լինել, և նորմալ է աջակցություն փնտրել, երբ դրա կարիքը կա: Անկախ նրանից, թե դա վստահելի ընկերոջ հետ զրուցելն է, մասնագիտական օգնություն փնտրելը, թե ինքնախնամքով զբաղվելը՝ առաջնահերթություն տվեք ձեր հոգեկան առողջությանը, մինչ աշխատում եք աշխարհում դրական փոփոխություններ ստեղծելու ուղղությամբ:

Թեև պաշտպանության աշխատանքը կարող է չափազանց պարզևատրող լինել, կարևոր է մոտենալ դրան զգուշությամբ և ուշադրությամբ: Չգուշացեք գերհոգնածությունից (burnout)՝ սահմաններ դնելով, ձեր տեմպը պահպանելով և ձեր կյանքում հավասարակշռություն փնտրելով: Հիշեք, որ ձեր բարեկեցությունը առաջնային է, և ինքներդ ձեզ հոգ տանելով՝ դուք կարող եք շարունակել նշանակալի ազդեցություն ունենալ ձեր համայնքում և դրանից դուրս:

Չգուշացում

Պաշտպանության աշխատանքը ներառում է ներհատուկ ռիսկեր, այդ թվում՝ հուզական լարվածություն և գերհոգնածություն: Կարևոր է առաջնահերթություն տալ ինքնախնամքին և աջակցություն փնտրել, երբ դրա կարիքը կա: Բացի այդ, ուշադիր եղեք ձեր սահմանափակումների և սահմանների նկատմամբ և հիշեք, որ նորմալ է ընդմիջումներ վերցնել և օգնություն խնդրել: Ձեր մասին հոգ տանելով՝ դուք կարող եք պահպանել ձեր պաշտպանության ջանքերը և շարունակել փոփոխություններ մտցնել աշխարհում:

Հիշեք, նույնիսկ սուպերհերոսները քնում են: Հոգ տարեք ինքներդ ձեր մասին, որովհետև աշխարհին անհրաժեշտ են ձեր ուժերը, բայց նաև անհրաժեշտ է, որ դուք վերալիցքավորեք ձեր մարտկոցները:

Աղբյուրներ.

“Advocacy handbook.” European Youth Forum, <https://www.youthforum.org/topics/advocacy-handbook>. Accessed 27 April 2024.

“UNICEF youth advocacy guide.” UNICEF, 29 July 2022, <https://www.unicef.org/lac/en/reports/unicef-youth-advocacy-guide>. Accessed 27 April 2024.

Strengthening the role of young people in the prevention and resolution of conflicts, Report1 Committee on Culture, Science, Education and Media Parliamentary Assembly, Council of Europe, Rapporteur: Ms Inka HOPUSU, Finland, Socialists, Democrats and Greens Group GUIDING PRINCIPLES ON YOUNG PEOPLE’S PARTICIPATION IN PEACEBUILDING, Interagency Network on Youth Development, United Nations,

Ոչ բռնի բանավեճը որպես երիտասարդների մասնակցության գործիք և երիտասարդների բևեռացման ու ծայրահեղականացման դեմ պայքարի միջոց
Սեռենո Ռեջիս ուսումնական կենտրոն (Centro Studi Sereno Regis)

Ոչ-բռնի բանավեճի մոտեցումը, որը մշակվել է Սեռենո Ռեջիս ուսումնական կենտրոնի կողմից 2020-2024 թվականների ընթացքում, հիմնված է հիմնական սյուների վրա, որոնք միտված են արդյունավետ և իմաստալից երկխոսություն կառուցելուն:

- Ապահով տարածքի ստեղծում, որտեղ յուրաքանչյուր ձայն կարող է ազատ արտահայտվել և հարգանքով լսվել:
- Ակտիվ ունկնդրման խթանում՝ ըստ Մարիանելլա Սկլավիի մոդելի, որը շեշտադրում է ուրիշների տեսակետները իսկապես լսելու և հասկանալու կարևորությունը:
- Կենտրոնանում է անձնական երկընտրանքների և ներքին ու սոցիալական հակասությունների գիտակցման վրա՝ ներշնչված Բեցավայի մոտեցումից: Սա ներառում է դիրքորոշումների, շահերի և կարիքների տարբերակումը, որը կարևոր է բանավեճի դինամիկան հասկանալու համար:

Մոտեցումն անդրադառնում է բռնության սաստկացմանը և դրա հիմքերի գիտակցմանը՝ հետևելով Պատ Պատֆորթի ուսմունքներին: Այն շեշտադրում է հիմնարար սկզբունքներով հաղորդակցվելու կարևորությունը: Մոտեցումը նաև ուսումնասիրում է տարբեր ֆասիլիտացիոն հմտություններ՝ քննարկումները արդյունավետ ուղղորդելու համար: Դրանք ապահովում են, որ յուրաքանչյուր քննարկում լինի՝

1. Կառուցողական
2. Ներառական
3. Փոխակերպող

Ոչ-բռնի բանավեճը կարող է լինել լավ պրակտիկա և հետաքրքիր մոտեցում՝ զարգացնելու Եական հմտություններ՝ աջակցելու քաղաքացիական մասնակցությանը պատերազմական կամ հետկոնֆլիկտային համատեքստերում, աջակցելու սոցիալական հյուսվածքի դիմացկունությանը և հակազդելու երիտասարդ բնակչության շրջանում բևեռացման և ռադիկալացման երևույթներին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Մասնակիցները զույգեր են կազմում և քննարկում են իրենց սպասելիքների ու վախերի մասին սկսվող դասընթացի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում են իրենց առաջարկները: Այնուհետև զույգերը խմբավորվում են ավելի մեծ թիմերի մեջ, և յուրաքանչյուր թիմին հանձնարարվում է ամփոփել իր խմբի ասելիքը:

Ամփոփում ընդհանուր նիստում գործընթացի վերաբերյալ (խոսք, առաջնորդություն, իշխանություն).

- Ինչպե՞ս էր կազմակերպված, որ բոլորը խոսեն:
- Կարծում եք՝ խոսքի հավասար օգտագործում էր:
- Ինչ-որ մեկը ստանձնե՞ց առաջնորդություն: Ինչո՞ւ: Ինչպե՞ս:

Մասնակիցները զույգեր են կազմում և քննարկում ի՞նչ է իրենց հարկավոր խմբից՝ սկսվող դասընթացի համար ապահով տարածք ստեղծելուն: Այնուհետև զույգերը խմբավորվում են ավելի մեծ թիմերի մեջ, և յուրաքանչյուր թիմին հանձնարարվում է միավորել իր կազմի զույգերի կողմից առաջ բերված բովանդակությունը: Հարստացնել այլ մարդկանց բովանդակությամբ և կարիքներով:

Ամփոփում ընդհանուր նիստում գործընթացի վերաբերյալ (խոսք, առաջնորդություն, իշխանություն).

- Ինչպե՞ս էր կազմակերպված, որ բոլորը խոսեն:
- Կարծում եք՝ խոսքի հավասար օգտագործում էր:
- Ինչ-որ մեկը ստանձնե՞ց առաջնորդություն: Ինչո՞ւ: Ինչպե՞ս:
- Արդյո՞ք այս վարժությունը տարբերում էր նախորդից:

ԹԻՄԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

Ձևավորել խմբեր: Յուրաքանչյուր խմբի առաջադրանքն է կառուցել աշտարակ՝ օգտագործելով միայն թղթի թերթեր: Կառույցը պետք է համապատասխանի կայունության և բարձրության չափանիշներին և պետք է ինքնուրույն կանգնի մեկ րոպե: Թիմերին տրվում է հատուկ ժամանակ՝ քննարկելու և սահմանելու կառուցման ռազմավարությունը. մտածել ստեղծագործաբար, փոխանակել գաղափարներ և մշակել լավ մտածված պլան, որն օգտագործում է իրենց հավաքական ունակությունները և ուժեղ կողմերը: Հստակ պլանով զինված՝ թիմերը սկսում են մարտահրավերի կառուցման փուլը: Դասընթացավարները և մասնակիցները չափում են յուրաքանչյուր աշտարակ՝ հաշվելով ժամանակը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Արդյոք կային մարտահրավերներ կամ խոչընդոտներ, որոնց հանդիպեցիք աշտարակի կառուցման ընթացքում: Ինչպե՞ս հաղթահարեցիք դրանք:
Արդյո՞ք ձեր թիմը տարածայնություններ կամ հակամարտություններ ունեցավ գործընթացի ընթացքում: Ինչպե՞ս լուծվեցին դրանք:
Արդյո՞ք ձեր թիմի սկզբնական պլանը կամ ռազմավարությունը փոխվեց կառույցը կառուցելիս: Եթե այո, ի՞նչը հանգեցրեց այդ փոփոխություններին:
Անդրադառնալով որոշումների կայացման գործընթացին՝ ինչպե՞ս էր ձեր թիմը ընտրություններ կատարում և առաջնահերթություն տալիս որոշակի գաղափարների կամ մոտեցումների:
Արդյո՞ք ձեր թիմը անսպասելի հայտնագործություններ ունեցավ գործընթացի ընթացքում: Եթե այո, ինչպե՞ս հարմարվեցիք:
Հետադարձ հայացք գցելով՝ ի՞նչ կանեիք այլ կերպ, եթե նորից բախվեիք մարտահրավերին:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Բաժանվեք զույգերի: Յուրաքանչյուր զույգ ունի միայն մեկ թերթ և մեկ մարկեր: Առաջադրանքն է նկարել «հավասարություն» բառը նույն թերթի վրա՝ առանց խոսելու: Քննարկում և ամփոփում.
արդյո՞ք հավասար էր տրված հնարավորությունը նպատակին հասնելու համար: Ի՞նչ կասեք առօրյա կյանքում հավասարության և արդարության մասին:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Դասընթացավարը կանգնած է սենյակի կենտրոնում և տալիս է հարցը.
•Որքա՞ն կարևոր է ազատությունը ձեզ համար:
Մասնակիցներին հրավիրում են շարք կազմել (դիրքավորվել դասընթացավարի մոտ կամ հեռու՝ կախված իրենց անձնական պատասխանից):
Մասնակիցները բաժանվում են խմբերի և գրում են ազատության հավաքական սահմանումը:

Համեմատություն լիագումար նիստում

Բավարարվա՞ծ էիք ձեր գրած սահմանումով: Արդյո՞ք ազատ էիք զգում սահմանման գործընթացում:

20 րոպե ընդմիջում, որի ընթացքում մասնակիցները կլինեն թելով կապված իրենց խմբերին: Ամփոփում լիագումար նիստում ընդմիջումից հետո:

ԻՆՉՊԵՍ ԵՔ ՁԵՉ ՉԳՈՒՄ:

Արդյո՞ք սահմանումը դիմացավ սահմանափակման փորձությանը:
Արդյո՞ք պահպանեցիք ազատության սկզբունքները, երբ ազատությունը սահմանափակ
էր:
Ինչպե՞ս են իմ անձնական արժեքները կապվում հասարակական հարաբերությունների
հետ: Որքա՞ն ժողովրդավար եք:
Ինչո՞ւ է այս կարծիքը ձեզ դուր գալիս:

Իմբավարը բարձրաձայն կարդում է հակասական հայտարարություններ:
Մասնակիցները կանգնում են պատկերացրած գծի վրա՝ 0%-ից (չեմ համաձայնում)
մինչև 100% (լիովին համաձայն եմ): Կարելի է նաև մասնակիցներին խնդրել գրել իրենց
կարծիքով հակասական թեմաները: Ամենահակասականները կքննարկվեն զույգերով
զբոսանքի ընթացքում: Նպատակն է խորանալ հետևյալ հարցերում.

Ինչո՞ւ է այս կարծիքը ձեզ դուր գալիս:
Ինչպե՞ս եմ ես հանգել այս կարծիքին:
Ո՞վ կամ ի՞նչն է ազդել իմ կյանքի վրա, որ ձևավորվի այս կարծիքը:

ՈՐՈՇՈՒՄ Ե ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր մասնակից մտածում է հետևյալ հարցերի մասին՝ գրելով այո կամ ոչ,
հետո քննարկում զույգերով: Մեծամասնությունը պետք է որոշի՝

1. Արդյո՞ք կարելի է ծխել հանրային վայրերում:
2. Արդյո՞ք դպրոցներում կրոնական խորհրդանիշներ թույլատրվեն:
3. Արդյո՞ք օդանավակայան կառուցվի իմ թաղամասում:
4. Արդյո՞ք կրճատել հասարակական կազմակերպությունների ֆինանսավորումը:
5. Արդյո՞ք արգելել պլաստիկ տոպրակները:
6. Արդյո՞ք հղիության ընդհատումը պետք է օրինական լինի:
7. Արդյո՞ք Եվթանազիան պետք է օրինական լինի:
8. Արդյո՞ք թույլատրել ներգաղթյալների մուտքը մեր երկիր:
9. Արդյո՞ք միասեռ զույգերի կողմից երեխա որդեգրելը պետք է օրինական լինի:

ԴԻՄԱԿՆԵՐ

Ամեն մասնակից պատրաստում է դիմակ: Դիմակը ցույց է տալիս, թե ինչպես են իրենց
պահում քննարկումների ժամանակ: Մտածեք հետևյալի հարցերի շուրջ. .

- Արդյո՞ք դիմակ եմ կրում որոշ թեմաների մասին խոսելիս:
 - Ցանկանո՞ւմ եմ դիմակ կրել, որպեսզի համաձայնվեմ ընդունված կարծիքի հետ:
- Ինչո՞ւ . . .

- Անհարմարությունից խուսափելը՞ն համար:
 - Մերժվելու վախի՞ց:
 - Վեճից խուսափելը՞ն համար:
- Մտածո՞ւմ եմ, որ ունեմ, գաղափար ունեմ թեմայից, բայց իրականում չունեմ:
Հետո բոլորը ցույց են տալիս իրենց դիմակները: Վերջում զույգերով փոխանակում են
իրենց մտքերը:

Լսելու արվեստի 7 կանոնները

1. Մասնակիցներին տրվում են տարբեր առաջադրանքներ:
2. Ամեն առաջադրանք կապված է լսելու արվեստի մի կանոնի հետ:
3. Սկզբում մասնակիցները կատարում են առաջադրանքը:
4. Հետո միայն կարդում են կանոնը:
5. Սա օգնում է, որ մասնակիցները ինքնուրույն հասկանալ կանոնը:
6. Կանոնները վերցված են Մարիանելլա Սկլավիի աշխատանքից:




Կետեր

1. Ամեն մասնակցի տրվում է թուղթ:
2. Թղթի վրա պետք է նկարել 9 կետ՝ դասավորված ինչպես նկարում:
3. Նպատակն է միացնել 9 կետերը 4 ուղիղ գծով:

Կանոնները.

- Մատիտը չբարձրացնել թղթից
- Որտեղ վերջանում է մի գիծը, այնտեղից պետք է սկսվի հաջորդը:
- Մասնակիցները պետք է արագ փորձեն 3 անգամ:
- Բոլոր նկարելու փորձերը պետք է ավարտել, նույնիսկ եթե սխալ են:



Ինչպես երևում է նկար 2-ում, շատերը կետերը տեսնելիս պատկերացնում են շրջանակ: Քանի դեռ մտում են այս «երևակայական շրջանակի» մեջ, հնարավոր չէ լուծել խնդիրը:

Քննարկման ամփոփում

Այս վարժության նպատակն է հասցնել մասնակիցներին այն գիտակցման, որ **ինչ տեսնում ես, կախված է քո տեսակետից: Քո տեսակետը ավելիս հստակ տեսնելու համար պետք է փոխես դիրքը: Հաճախորդ/Ադմինիստրատոր.** Խումբը դասավորվում է շրջանով: Մասնակիցներից մեկին ընտրում են որպես ադմինիստրատոր, մյուսին՝ որպես հյուրանոցի հաճախորդ: Կարևոր է, որ երկուսն էլ խոսեն տարբեր լեզուներով, որը մյուսը չի հասկանում: Ադմինիստրատորը դուրս է գալիս սենյակից, մինչ հաճախորդը, մնացած խմբի օգնությամբ, հորինում է մի անհեթեթ իրավիճակ կամ խնդիր ադմինիստրատորին հաղորդելու համար:

Երբ ադմինիստրատորը վերադառնում է սենյակ, քննարկումը սկսվում է հաճախորդը նկարագրում է իրավիճակը, իսկ ադմինիստրատորը փորձում է հասկանալ և օգնել լուծելու խնդիրը: Երկուսն էլ կարող են խոսել միայն այն լեզվով, որը մյուսը չի հասկանում: Մնացած խումբը դիտում է: Մի քանի րոպե անց քննարկումն ընդհատվում է:

Քննարկման ամփոփում

Այս վարժության հետ կապված կանոնն է. **Եթե ուզում ես հասկանալ, թե ինչ է ասում մեկ ուրիշը, պետք է պատրաստ լինես հավատալ, որ նա ճիշտ է, և խնդրես նրան օգնել քեզ հասկանալու, թե ինչու է այդպես մտածում:**

Տեսամարկետինգ (Video Marketing). մասնակիցները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խումբ ունի մեկ առարկա (ցանկացած առարկա) և պետք է բեմադրի տեսամարկետինգի ներկայացում՝ ներկայացնելով այդ առարկան որպես անհրաժեշտ մի բան անմարդաբնակ կղզում գոյատևելու համար: Նրանց տրվում է 20 րոպե պատրաստվելու համար: Յուրաքանչյուր խումբ պետք է ունենա ելույթ:

Քննարկման ամփոփում

Այս վարժության հետ կապված կանոնն է. **լսելու արվեստում փորձագետ դառնալու համար պետք է օգտագործել հումորային մոտեցում, բայց երբ սովորում ես լսել, հումորն ինքնաբերաբար է գալիս:**

Լոբիներ. մասնակիցները բաժանվում են շրջանաձև խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում է հատիկ լոբիներ, որոնք երկուսով ավել են խմբի անդամների թվից: Լոբիները դրվում են շրջանի կենտրոնում: Ամեն մասնակից կարող է վերցնել ցանկացած քանակի լոբի՝ նպատակ ունենալով հասնել նախապես որոշված ընդհանուր թվին (այս թիվը որոշվում է ըստ սկզբնական բաշխման): Խաղն անցկացվում է փուլերով: Ամեն փուլի վերջում վարողը կրկնապատկում է շրջանի կենտրոնում մնացած լոբիները: Խմբի նպատակն է **արդյունավետ ռազմավարություն մշակել**, որպեսզի մեկ անդամ կուտակի հաղթելու համար անհրաժեշտ լոբիների քանակը:

Այս վարժության սկզբունքն է՝ լավ ունկնդիրը հետազոտում է **հնարավորի սահմանները**: Ամենակարևոր ազդանշաններն այն են, որոնք թվում են աննշան և անհանգստացնող, եզրային և գրգռող, հատկապես երբ դրանք մարտահրավեր են նետում հաստատված համոզմունքներին:

10 ՔԱՅԼ

Մասնակիցները պատահականության սկզբունքով դասավորվում են սենյակում: Նրանք սկսում են ազատ քայլել՝ հետևելով վարողի հրահանգներին՝

1. Տասը քայլ անել բաց աչքերով:
2. Ութ քայլ բաց աչքերով, երկու քայլ՝ փակ աչքերով:
3. Վեց քայլ բաց աչքերով, չորս քայլ՝ փակ աչքերով:
4. Չորս քայլ բաց աչքերով, վեց քայլ՝ փակ աչքերով:
5. Երկու քայլ բաց աչքերով, ութ քայլ՝ փակ աչքերով:
6. Տասը քայլ անել փակ աչքերով:

Փակ աչքերով մասնակիցները զույգեր են կազմում: Չույգերն իրար մեջքով են կանգնում և սկսում են պարել երաժշտության տակ:

Խմբային քննարկում.

Կանոն. **զգացմունքները հիմնական ճանաչողական գործիքներն են, եթե կարողանաս հասկանալ դրանց լեզուն: Դրանք քեզ չեն տեղեկացնում, թե ինչ են տեսնում, այլ՝ ինչպես են նայում: Դրանց կողք հարաբերական է և համեմատական»:**

ԱԹՈՒՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄ

1. Մասնակիցները շրջան են կազմում:
2. Յուրաքանչյուրին տրվում է գաղտնի առաջադրանք:
3. Կան երեք առաջադրանքներ.
 - Դասավորել աթոռները շրջանով
 - Նստեցնել բոլորին աթոռներին
 - Դասավորել աթոռները սյան շուրջ

Խմբային քննարկում

Կանոնը. **լավ ունկնդիրը չի խուսափում հակասություններից, այլ մոտենում է դրանց որպես հնարավորություն՝ վարժվելու մի ոլորտում, որի հանդեպ նա եռանդ ունի: Սա կոչվում է ստեղծագործական հակամարտությունների կառավարում:**

Մնացած կանոններ

Եթե ուզում ես հասկանալ, թե ինչ է ասում մեկ ուրիշը, պետք է պատրաստ լինես հավատալ, որ նա ճիշտ է, և խնդրես նրան օգնել քեզ հասկանալու, թե ինչու է այդպես մտածում:

Ինչ տեսնում ես, կախված է քո տեսակետից: Քո տեսակետը տեսնելու համար պետք է փոխես քո հեռանկարը:

Տեսական մասեր...

Չիմքեր. դրանք տեսակետների հիմքն են: Դրանք պատճառն են, թե ինչու գոյություն ունի տեսակետը՝ կարիքներ, զգացմունքներ, նպատակներ, հետաքրքրություններ, արժեքներ, սովորույթներ:

Չիմքերն արտահայտելու կանոններ.

- Ամեն հիմք պետք է պատասխանի «ինչո՞ւ» հարցին:
- Ամեն հիմք պետք է սկսվի "ես" բառով:
- Խուսափել հետևյալ արտահայտություններից՝ «Ես ուզում եմ», «Ես գիտեմ», «Ես կարծում եմ, որ դու...»:
- Օգտագործել զգացմունքներ արտահայտող բայեր:

Ուշադրություն.

- Չվերածել մեր հիմքերը դրական փաստարկների:
- Չվերածել մեր հիմքերը բացասական փաստարկների ուրիշի տեսակետի դեմ:
- Չվերածել մեր հիմքերը բացասական փաստարկների ուրիշի դեմ:

Բռնություն. Արմատը և մեխանիզմները

Բռնության հիմնական մոդելը Մեծ (Մ) - փոքր (փ) մոդելն է: Այս մոդելում երկու հակամարտող կողմերը անհավասար դիրքում են, ինչը հանգեցնում է մեկի գերիշխանությանը և մյուսի ենթարկմանը: Ոչ-բռնության մոդելը, մյուս կողմից, հավասարության մոդելն է (Հ - Հ), որտեղ երկու կողմերը հավասար դիրքում են, և նպատակն է լուծել հակամարտությունն այնպես, որ բավարարի երկուսին էլ:

Թե՛ բռնի արձագանքը (ագրեսիա), թե՛ ոչ-բռնի արձագանքը (ոչ-բռնի դիմադրություն) հիմնված են ինքնապահպանման բնագրի վրա: Բռնության մեխանիզմում ագրեսիան կարող է դրսևորվել բռնության էսկալացիայի ձևով (Մ-ն հարձակվում է փ-ի վրա, ով իր հերթին հարձակվում է Մ-ի վրա), բռնության շղթայի ձևով (Մ-ն հարձակվում է փ-ի վրա, ով արձագանքում է՝ երրորդ կողմին դնելով փ-ի դիրքում), և բռնության ներքնայնացման ձևով (Մ-ն հարձակվում է փ-ի վրա, ով չի արձագանքում հարձակվելով Մ-ի վրա կամ երրորդ կողմին փ-ի դիրքում դնելով՝ այլ բռնությունը թափում է իր վրա):

Բեցավտա մեթոդ

Բեցավտան եբրայերեն բառ է, նշանակում է «միասին»: Այս ժողովրդավարություն սովորելու մեթոդը մշակվել է Իսրայելի Ադամ ինստիտուտի կողմից: Բեցավտա մեթոդը նպատակ ունի բացահայտել երկրնտրանքներն ու հակամարտությունները թե՛ հասարակության մեջ, թե՛ անձի ներսում: Հաճախ հակամարտության մեջ յուրաքանչյուր կողմ հավատում է, որ ինքն է «ճիշտ»: Երկրնտրանքը թույլ է տալիս զգալ երկու կողմերին էլ՝ անցնելով ճիշտ լինելու կամ մյուսին սխալ ապացուցելու անհրաժեշտությունից: Երկրնտրանքի բացահայտումը մարդկանց տալիս է իրենց մասին ավելի խորը պատկերացում: Մասնակիցները գիտակցում են բաներ, որոնք կարող էին ակնհայտ լինել ուրիշների համար, բայց թաքնված՝ իրենց տեսադաշտից (օրինակ՝ «Ես հավասարություն եմ ուզում, բայց իրականում հավասարություն չեմ ուզում»):

Խորհուրդներ ոչ-բռնի բանավեճի նախագծման և վարման համար

1. Շեշտադրեք չդատելու կողմը: Ստեղծեք ոչ մրցակցային մթնոլորտ հետազոտման համար:
2. Տարածք տվեք անձնական համոզմունքների և արժեքների վերաբերյալ խորհրդածելու համար:
3. Անցեք խմբայինից միջանձնային հարաբերությունների:
4. Առաջարկեք հարցեր, որոնք խախտում են հաստատունները՝ վերակառուցելու համար երկխոսությունը ուրիշների հետ:
5. Մի՛ միջնորդեք, այլ օգնեք մարդկանց մնալ գործընթացի մեջ:
6. Մի՛ նպատակադրվեք նախապես սահմանված ուսումնական արդյունքը ունենալուն. մի՛ փնտրեք լուծումներ: Կենտրոնացեք գործընթացի վրա:
7. Ողջունեք չիմանալու խոցելիությունը. մի՛ ստիպեք ինքներդ ձեզ կարծիք ունենալ:
8. Դանդաղեցրեք քննարկումը:

Խորհուրդներ խոսելու իշխանության ժողովրդավարական բաշխման համար

1. Վարողները պետք է տեղյակ լինեն համատեքստից, խմբի դինամիկայից: Խուսափեք առանձին քննարկումներից:
2. Օգտագործեք ներառական լեզու:
3. Պահպանեք բարդությունը և չափից ավելի մի պարզեցրեք:

Խորհուրդներ հարցեր պատրաստելու համար. պարզ և հստակ, խթանող, պետք է էներգիա բերեն, հրավիրեն ավելի խորը հետազոտության և ուսումնասիրության, տեսանելի դարձնեն ոչ բացահայտը, և բացեն դատողության նոր հնարավորություններ:

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Այս գլխում մենք ուսումնասիրելու ենք «Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» նախագծում ներգրավված գործընկեր կազմակերպությունների ազդեցիկ ջանքերը: Այս տեղական գործողությունները տեղի են ունեցել 2023 թվականի հունվարի 5-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ը՝ ինը գործընկեր երկրներում: Վերապատրաստված երիտասարդական աշխատողները առաջնորդել են նախաձեռնություններ՝ աջակցելու պատերազմի ազդեցությունը կրած 14-30 տարեկան երիտասարդներին:

Ձգտելով ազդեցության՝ յուրաքանչյուր սեմինար կառուցվել է երեք մոդուլների շուրջ՝ «Ճանաչիր և հասկացիր ինքդ քեզ», «Ճանաչիր և հասկացիր ուրիշներին» և «Ճանաչիր և հասկացիր հասարակությանը»: Միջոցառումներն ընդգրկել են այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են առողջությունը, ինքնախնամքը, ինքնությունը, արժեքները և սոցիալական ներգրավվածությունը:

Բացի այդ, գործընկեր կազմակերպություններն ստանձնել են չափելու նախագծի ազդեցությունն և արդյունքները հետևյալ միջոցներով.

- Յուրաքանչյուր գործընկեր ֆոկուս խմբային քննարկում է անցկացրել երիտասարդական աշխատողների հետ:

- Ուսումնասիրել են նախապատրաստությունը, իրականացումը և ապահով տարածքների ստեղծումը:

- Գնահատել են սոցիալականացմանը և ինտեգրմանն աջակցելու արդյունավետությունը:

- Գնահատել են ազդեցությունը երիտասարդ մասնակիցների վարքի, վերաբերմունքի և մտքերի դիտարկված փոփոխությունների միջոցով:

Մտադրությունն էր գնահատել յուրաքանչյուր կիրառած մեթոդաբանությունը, հասկանալ դրա ներուժն ու թույլ կողմերը, ինչպես նաև բացահայտել դասընթացավարների լավագույն փորձը պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանք իրականացնելիս՝ մեր հմտությունները բարելավելու գործիքակազմ մշակելու նպատակով:

Այս գլուխն ընդգրկում է ինը գործընկեր կազմակերպությունների ջանքերը հետևյալ երկրներում՝

- Եվրոպական նախաձեռնությունների կենտրոն (Ուկրաինա)
- Երիտասարդ խաղաղության դեսպանների ցանց (Ֆրանսիա)
- Խաղաղություն (Գերմանիա)
- Սիերիայի ազատ մտածողների ասոցացիա (Իսպանիա)
- Տեղական խաղաղություն (Կոսովո)
- Առողջ բանականություն 34 (Ադրբեջան)
- Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն (Հայաստան)
- Օգնության հիմնադրամ. լեհական 34 (Լեհաստան)

Յուրաքանչյուր կազմակերպություն վճռորոշ դեր է խաղացել տեղական դասընթացները կյանքի կոչելով՝ շեշտելով երիտասարդների կողմից առաջնորդվող նախաձեռնությունների ներուժը՝ զինված հակամարտություններից տուժած համայնքներում դիմակայունություն, հույս և ապաքինում խթանելու համար:

Կարևոր է նշել, որ երիտասարդական աշխատանքի միջոցառումներն իրականացվել են մասնագիտացված վերապատրաստում անցած երիտասարդական աշխատողների կողմից: Վերապատրաստումների ընթացքում ձեռք բերված գիտելիքների շնորհիվ՝ այս դասընթացավարները մշակել են ուսումնական ծրագրեր, որոնք բաղկացած են եղել առնվազն հինգ 90-րոպեանոց դասընթացներից՝ հարմարեցված այն համայնքների կոնկրետ կարիքներին, որտեղ իրականացվել են այդ միջոցառումները: Միջոցառումներն ունեին երկու նպատակ՝

1. Օգնել նրանց, ովքեր ստիպված էին տեղափոխվել:
2. Օգնել նրանց, ովքեր մնացել էին իրենց համայնքներում:

ՖՐԱՆՍԻԱ

Գործողության անվանում՝ Պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների վերականգնմանն ուղղված երիտասարդական աշխատանք՝ պարի միջոցով

Իրականացնող կազմակերպություն՝ «Երիտասարդ խաղաղության դեսպաններ ցարք. Ֆրանսիա» (YPAN France)

Վայր՝ Թոնոն-լե-Բեն

Ամփոփում

Թոնոն-լե-Բենը՝ Օվերն-Ռոն-Ալպ տարածաշրջանում գտնվող քաղաք է: Ինչպես Ֆրանսիայի շատ քաղաքներ, բախվում է մի շարք սոցիալական այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են գործազրկության հետ կապված մտահոգություններ, հատկապես երիտասարդների շրջանում, և ներգաղթյալների, օրինակ՝ ուկրաինացի փախստականների ինտեգրումը, ովքեր կարող են դժվարանալ հարմարվել նոր մշակութային և սոցիալական միջավայրին:

YPAN Ֆրանսիայի Նախաձեռնությունն անդրադառնում է պատերազմից տուժած երիտասարդների՝ մասնավորապես ուկրաինացի փախստականների վերականգնմանը՝ նորարարական պարի և շարժման սեմինարների շարքի միջոցով՝ որպես բուժման և ինտեգրման գործիքներ:

Նախաձեռնության հիմնական նպատակն էր պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդներին տրամադրել թերապևտիկ և արտահայտչական ելք պարի և շարժման միջոցով՝ թույլ տալով նրանց ստեղծագործ և ոչ խոսքային եղանակով մշակել իրենց տրավման և զգացմունքները:

Նպատակները ներառում են ֆիզիկական և հոգեկան բարեկեցության բարելավումը, հզորացման և ինքնավստահության խթանումը, միջմշակութային փոխըմբռնման խրախուսումը և հուզական ու սոցիալական բարեկեցության վրա վերականգնողական ծրագրերի ազդեցության չափումը:



Անցկացված սեմինարներ

Նախաձեռնությունը մեկնարկեց Վավենկո Նատալիայի ղեկավարությամբ անցկացված սեմինարների շարքով: Յուրաքանչյուր սեմինարը տևել է երեք ժամ և կենտրոնացել է պարային թերապիայի տարբեր ասպեկտների վրա:

-Իմպրովիզացիայի սեմինար (5 հոկտեմբերի, 2023թ.). շեշտը դրվեց զգացմունքների արտահայտման, մարմնի ընկալման և մասնակիցների միջև փոխազդեցության վրա:

-Զգման վարժությունների (stretching) սեմինար (12 հոկտեմբերի, 2023թ.). ձգումն օգտագործվեց որպես թուլացման և ընդհանուր բարեկեցության գործիք:

-Ժամանակակից պարի սեմինար (22 հոկտեմբերի, 2023թ.). թիրախավորվեցին ժամանակակից պարի թերապևտիկ ասպեկտները հետտրավմատիկ ախտանիշների թերթևացման համար:

Ծրագիրն օգտագործեց հասանելի վայրեր՝ ներառյալ կազմակերպության գրասենյակը և հանրային տարածքները: Յուրաքանչյուր հանդիպմանը մասնակցեցին թվով 10 մարդ:

Մասնակիցների նախկին հուզական բեռի հստակ ցուցիչ էր այն, որ որոշ մասնակիցներ տատանվում էին գրանցվել կամ լուսանկարվել, ինչը արտացոլում էր վախի բարձր մակարդակը և համայնքում անվտանգության զգացողության պակասը: Կազմակերպիչները լուծեցին այս հարցը՝ հավաստիացնելով մասնակիցներին, որ նրանք կարող են մասնակցել առանց գրանցման ցուցակում ստորագրելու կամ լուսանկարներում երևալու: Նախաձեռնությունը նաև ցանկություն հայտնեց հասնել ավելի լայն լսարանի՝ շեշտելով թեմայի համընդհանուր կարևորությունը թիրախային խմբից դուրս:

Մասնակիցները ստացած փորձառությունը համարեցին փոխակերպող, որը տրամադրեց թերապևտիկ և ստեղծագործական ելք տրավման և զգացմունքները մշակելու համար: Նախաձեռնությունը հաջողությամբ բարելավեց ֆիզիկական և հոգեկան բարեկեցությունը, բարձրացրեց ինքնավստահությունը և նպաստեց սոցիալական ինտեգրմանն ու միջմշակութային փոխըմբռնմանը: Այս առումով մասնակիցներից մեկը նշեց. .

- Պարի միջոցով մշակութային փոխանակումը աչքերս բացեց: Դա միայն շարժման մասին չէ. դա միմյանց պատմությունները հասկանալու և փոխադարձ հարգանք գտնելու մասին է: Ես այստեղ կյանքի ընկերներ եմ ձեռք բերել, և ես երախտապարտ եմ դրա համար:

Նախաձեռնությունը նպատակ ունի շարունակել ապահով և ներառական միջավայրի ստեղծումը՝ միաժամանակ ներառելով հետադարձ կապը բարելավման համար: Մշակութային զգայունությունը մտնում է առաջնահերթություն, և ծրագրերը ներառում են համայնքի ներգրավումը, ավելի շատ ռեսուրսների ապահովումը և շարունակական հետազոտությունների անցկացումը՝ ավելի լավ արդյունքների հասնելու համար: Վերջնական նպատակն է ավելի մեծ ազդեցություն ունենալ պատերազմից և զինված հակամարտություններից տուժածների վերականգնման և ինտեգրման վրա:

Գործողության անվանում Խաղաղության կամուրջների կառուցում. ձևափոխող ճամփորդություն ՅելենեՔեմփում

Իրականացնող կազմակերպություն՝ «Խաղաղություն» ՀԿ

Վայր՝ Բրանդենբուրգ, Ֆրանկֆուրտ

Ամփոփում

Ֆրանկֆուրտ (Օդեր) քաղաքում գտնվող Փիվոբ (Pewobe gGmbH) գործընկեր կազմակերպության հետ համագործակցությամբ, «Անցյալ և ապագա. եկեք կառուցենք խաղաղության կամուրջը» նախաձեռնությունն իրականացվեց ՅելենեՔեմփի հանգիստ միջավայրում, որը գտնվում է Բրանդենբուրգ նահանգում՝ Ֆրանկֆուրտ Օդեր քաղաքի մոտակայքում: Այս ծրագիրն անցկացվեց Քույր քաղաքների ամենամյա ամառային ճամբարի շրջանակներում, որը տեղի է ունենում Յելենե լճի մոտ:

Ծրագրի նպատակն էր խթանել միջմշակութային փոխըմբռնումը, հոգեկան առողջության մասին իրազեկվածությունը և խաղաղության ու հաշտեցման գագացումը 60 երիտասարդ մասնակիցների միջև, ովքեր ժամանել էին Լեհաստանից, Գերմանիայից, Բուլղարիայից, Ուկրաինայից, Ֆրանսիայից և Իսրայելից:

Այս հեռավոր վայրը գերազանց միջավայր էր անձնական աճի, թիմային աշխատանքի և ամբողջական փորձառության համար: Մասնակիցների բազմազան խումբը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր սեփական մարտահրավերները, միավորվեց խաղաղության գաղափարը հետազոտելու և իրենց յուրահատուկ ծագումների միջև կապեր հաստատելու նպատակով:

Նախաձեռնությունը բաղկացած էր վեց մոդուլներից, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված էր հասցեագրելու կոնկրետ նպատակներ և նպաստելու ծրագրի ընդհանուր նպատակներին:

- **Օր 1/17 հուլիսի, 2023թ.** - Ծանոթություն: Խաղաղության ուղերձ. կենտրոնացած էր համայնքի կառուցման, խաղաղության ընդհանուր ուղերձի ստեղծման և մասնակիցներին խաղաղությանն առնչվող ծրագրեր նախաձեռնելու կամ դրանցում ներգրավվելու ոգևորման վրա:


- **Օր 2/30 հուլիսի, 2023թ.** - Ծանոթություն: Անհատական և խմբային ինքնության բացահայտում: Կարծրատիպեր – Նախապաշարմունք – Խտրականություն. խորանալով կարծրատիպերի, նախապաշարմունքների և Խտրականության ազդեցության մեջ՝ խթանել քննադատական մտածողությունը, ինքնաքննադատությունը, ապրումնակցումը և հանդուրժողականությունը:

- **Օր 3/31 հուլիսի, 2023թ.** - Եվրոպական երիտասարդական նպատակներ. ծանոթացրեց մասնակիցներին Եվրոպական երիտասարդական նպատակներին՝ խթանելով քննարկումներ երիտասարդության դերի մասին ավելի լավ ապագա կերտելու գործում և ուսումնասիրելով այս նպատակների և խաղաղության միջև կապը:

- **Օր 4/1 օգոստոսի, 2023թ.** - Իմ ներքին խաղաղությունը: Հոգեկան առողջություն. ի՞նչն է ազդում մեր հոգեկան առողջության վրա: Ուսումնասիրե՞ինք ինքնաճանաչումը, հոգեկան առողջության վրա ազդող գործոնները և հոգեկան բարեկեցության ռազմավարությունները՝ ներառելով մտածողության պրակտիկաներ:

- **Օր 5/2 օգոստոսի, 2023թ.** - Հակամարտություններ: Խաղաղության ընկալումը տարբեր երկրներում. խթանվեց խաղաղության տեսանկյունների ըմբռնումը, քաջալերվեց երկխոսությունը, քննադատական մտածողությունը, ապրումնակցումը և համագործակցությունը գլոբալ մարտահրավերների լուծման գործում:

- **Օր 6/3 օգոստոսի, 2023թ.** - Հիշողություն և հաշտեցում. նպաստեց պատմական հիշողության, հաշտեցման վերաբերյալ քննարկումներին և նախապատրաստեց մասնակիցներին Չաքսենհաուզենի հուշահամալիր և թանգարան այցելության համար:



Խաղաղության հեռանկարների վերաբերյալ քննարկումների ժամանակ անսպասելի մարտահրավեր առաջացավ տարբեր երկրներում մասնավորապես կապված իսրայելցի մասնակիցների՝ անբավարար ներկայացված լինելու զգացողության հետ: Սա հանգեցրեց հատուկ նախագծված սեսիայի և փոքր խմբերով քննարկումների, ինչը նպաստեց ավելի ներառական միջավայրի ստեղծմանը:

Նախաձեռնությունը տվեց շոշափելի արդյունքներ, այդ թվում՝ լուսանկարչական ցուցահանդես, հոդված, փողքաստ, տեսանյութ և նկարներ, որոնք ցուցադրում էին մասնակիցների տեսակետները խաղաղության վերաբերյալ և նրանց այցը Չաքսենհաուզենի հուշահամալիր և թանգարան: Բացի այդ, Ֆրանկֆուրտ Օդերում Երեխաների միջազգային օրվա առթիվ ցուցադրվեցին խաղաղության 49 ուղերձներ:

Նախաձեռնությունը դրական ազդեցություն ունեցավ մասնակիցների վրա՝ խթանելով մշակութային փոխըմբռնումը, նվազեցնելով նախապաշարմունքները, բարձրացնելով հոգեկան առողջության մասին իրազեկվածությունը և ուժեղացնելով երիտասարդների դերը համայնքի դրական ներգրավման գործում: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները կտարածվեն նրանց համապատասխան համայնքներում՝ բարելավելով սոցիալական համախմբվածությունը, հոգեկան առողջության աջակցությունը, երիտասարդների ներգրավվածությունը, հակամարտությունների լուծումը և գլոբալ քաղաքացիության խթանումը:

Մասնակցի վկայություն.

-«Ինչո՞ւ եմ մարդիկ դեռևս հակամարտություններ և պատերազմներ ունենում: Գուցե պատճառը միմյանց հետ շփվելու հնարավորություն չունենալն է: Այսպիսով, կիսվեք, բացատրեք, ապացուցեք, քննարկեք և փորձեք հասկանալ» - Լիզա, Գերմանիա, 15 տ.:

Եզրակացություն

«Անցյալ և ապագա. եկեք կառուցենք խաղաղության կամուրջը» նախաձեռնությունը հաջողությամբ կամրջեց տարբեր ծագումներ՝ խթանելով փոխըմբռնումը, ապրումակցումը և խաղաղությունը: Բազմաթիվ մոդերատորների ներգրավումը և մոդուլների մտածված նախագծումն ապահովեցին խմբային դինամիկայի արդյունավետ դյուրացումը՝ այս նախաձեռնությունը դարձնելով միջմշակութային երկխոսության և անձնական աճի մոդել:

Գործողության անվանում՝ Երիտասարդ փախստականների պատկանելության և ինքնության զգացումի սերմանում մշակութային փոխանակման միջոցով (CivicoZero Torino):

Իրականացնող կազմակերպություն՝ Սեռենո Ռեջիս ուսումնական կենտրոն **Վայր՝** Տորինո, Իտալիա

Ամփոփում

Պատկանելության և ինքնության զգացումի վերակառուցում՝ անվտանգ միջավայրի ստեղծման, խաղի և զվարճանքի չափանիշի վերականգնման և գեղագիտորեն հուզիչ տարածքների առաջարկման միջոցով՝ միտված գեղեցկությունը զգալուն և գնահատելուն::

ՍիվիկոՉերոյի (CivicoZero) հետ համագործակցությամբ, Սեռենո Ռեջիս ուսումնական կենտրոնը (Centro Studi Sereno Regis) Տորինոյում նախաձեռնեց փոխակերպող մի ծրագիր, որը կենտրոնացած էր պատերազմից և զինված հակամարտություններից տուժած երիտասարդների վերականգնմանը: Այս երիտասարդական աշխատանքի նախաձեռնության թիրախային խումբը հատկապես առանց ուղեկցության անչափահասներն և 14-19 տարեկան երիտասարդ միգրանտներն էին, ովքեր վերջերս էին ժամանել հյուրընկալող երկիր՝ Իտալիա: Այս անչափահասները բախվում էին լեզվի յուրացման մարտահրավերներին և մարզինալացման վտանգի տակ էին՝ քաղաքական բևեռացման և այս կոնկրետ խմբին թիրախավորող ապատեղեկատվության ու մեդիա արշավների առկայության պայմաններում:

Ծրագիրն իրականացվել է Տորինոյի տարբեր վայրերում, այդ թվում՝ ՍիվիկոՉերոյի կենտրոնական գրասենյակում, Բաց շուկայում, Սեռենո Ռեջիս ուսումնական կենտրոնի գրադարանում և Կաֆֆե Սան Կարլոյում՝ նպատակ ունենալով հասցեագրել այս երիտասարդների կարիքները: Մասնակիցները հավաքագրվել են իտալերենի մասնագիտացված ակադեմիայի միջոցով և իրենց կարիքները բացահայտել են ուսուցչի հետ միասին: Դրանք ներառում էին ապահով տարածքի ստեղծում, վստահության կառուցում, մանկության զգացողության վերականգնում և պատկանելության ու ինքնության զգացումի վերագտնում ու վերակառուցում:

Գլխավոր նպատակն էր վերագտնել պատկանելության և ինքնության զգացումը, որը կորսվել էր ծագման երկրից բաժանման պատճառով՝ ընդգծելով նրանց ծագման մշակույթը այնպիսի միջոցառումների միջոցով, ինչպիսիք են տիպիկ խաղերը և սննդի բաղադրատոմսերը: Կոնկրետ նպատակները ներառում էին անվտանգ միջավայրի ստեղծում, խաղի և զվարճանքի չափանիշի վերականգնում և գեղագիտորեն հուզիչ տարածքների առաջարկում գեղեցկությունը զգալու համար:

Նախաձեռնությունը բաղկացած էր չորս հանդիպումներից, որոնցից յուրաքանչյուրն օգտագործում էր ոչ ֆորմալ կրթությունը՝ ոչ բռնի մեթոդաբանությամբ.

- Cortile del Maglio, 11/08/23 - Ներածական միջոցառումներ՝ ինքնաքննություն և հարաբերությունների կառուցում խթանելու համար (90 րոպե):
- Centro Studi Sereno Regis (CSSR), 18/08 - Միջոցառումներ՝ վստահությունը և պատկանելության զգացումն ամրապնդելու համար՝ բացահայտելով ընդհանուր հետաքրքրությունները (90 րոպե):
- CSSR, 24/08. - Արտահայտում՝ մանկության խաղերի կիսման և հարգալից փոխազդեցության միջոցով (90 րոպե):
- Porta Palazzo Market, CSSR, Caffè San Carlo, 28/08 - Ծանոթ միջավայրի վերստեղծում տիպիկ ուտեստներ պատրաստելով և կիսվելով (ամբողջ օրը):

Յուրաքանչյուր հանդիպմանը մասնակցում էր 15-20 մասնակից, որոնց ղեկավարում էր 1 փորձառու դասընթացավար և 4 օգնականներ, 2-3 լեզվական միջնորդներ և 1 լեզվի ուսուցիչ:

Երիտասարդների հզորացման և վերականգման
համապարփակ ուղեցույց



Հաշվի առնելով, որ մասնակիցները վերջերս էին ժամանել Իտալիա, նրանք բոլորը սովորում էին տեղական լեզուն: Նախաձեռնությունը հաջողությամբ հաղթահարեց լեզվական խոչընդոտները՝ շնորհիվ հմուտ տարբեր լեզուների տիրապետող դասընթացավարների: Լրացուցիչ մարտահրավեր, որը ներառում էր հնարավոր մեկուսացումը տեղական սրճարանի այցելության ժամանակ, նախապես կառավարվեց՝ անձնակազմի հետ հաղորդակցություն հաստատելով:

Սկզբնապես այլ մշակույթների նկատմամբ անվստահ դեռահասները ցուցաբերեցին հետաքրքրասիրություն և աստիճանաբար ձևավորեցին ընկերական կապեր: Հանդիպումները դարձան սպասված պարբերական ժամադրություններ, ինչը հանգեցրեց դրական վերաբերմունքի աճի և մասնակիցների միջև կոնտակտային տվյալների փոխանակման: Մասնակիցների արձագանքը շեշտեց մշակութային փոխանակման պահերի հաճույքը, որոնք ներառում էին խաղեր և ուտեստներ: Ընդգծվեց լեզվական միջնորդների կարևորությունը, իսկ ապագա ծրագրերը ներառում են ուսուցիչներին պլանավորված միջոցառումների մասին տեղեկացնելը և ավելի երկարատև կրթական ուղիներ նախագծելը՝ ավելի նշանակալի ազդեցություն ունենալու համար:

Մշակութային փոխանակման, վստահության կառուցման և հաճելի միջոցառումների միջոցով նախաձեռնությունը դրական ազդեցություն է թողել այս երիտասարդների կյանքի վրա՝ ապահովելով նրանց աջակցող համայնքով, մինչ նրանք հաղթահարում են իրենց նոր իրականության մարտահրավերները:

Գործողության անվանում՝ Տիկնիկային թատրոն հանուն խաղաղության. ուկրաինացի երիտասարդները զորացնում են բռնի տեղահանված երեխաներին
Իրականացնող կազմակերպություն՝ Եվրոպական Նախաձեռնությունների կենտրոն
Վայր՝ Սումի, Ուկրաինա

Ամփոփում

Տիկնիկային թատրոն՝ Սումիում ներքին տեղահանված երեխաներին ստեղծագործական ինքնարտահայտման և խաղաղության պահեր ապահովելու համար;

«Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» վերապատրաստման ծրագրին մասնակցելուց հետո, ուկրաինական «Եվրոպական Նախաձեռնությունների կենտրոն» ՀԼ-ի թիմը Նախաձեռնեց մի Նշանակալի ծրագիր՝ նպատակ ունենալով ներգրավել երիտասարդներին խաղաղությանն առնչվող գործունեության մեջ: Հաշվի առնելով Ուկրաինայում շարունակվող պատերազմի պատճառով երեխաների առջև ծառայած մարտահրավերները՝ ուշադրությունը կենտրոնացվեց Սումիում ներքին տեղահանված երեխաների համար տիկնիկային թատրոն ստեղծելու վրա՝ նրանց ստեղծագործական ինքնարտահայտման և խաղաղության պահեր ապահովելու նպատակով:

Տիկնիկային թատրոնի ընտրությունը միտումնավոր էր՝ հաշվի առնելով դրա կլանող և երևակայական բնույթը, որը թույլ է տալիս երեխաներին փախչել պատերազմի դաժան իրականությունից՝ միաժամանակ խթանելով ստեղծագործակ միտքը, հաղորդակցությունը և ինքնարտահայտումը: Թիրախավորելով 14-19 տարեկան դեռահասներին՝ թիմը սոցիալական մեդիա հարթակների և «Եվրոպական Նախաձեռնության կենտրոնի» միջոցով հավաքագրեց 17 ոգևորված մասնակից:

Ծրագիրն իրականացվեց մի քանի հանդիպումների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը նվիրված էր տիկնիկային ներկայացման ստեղծման տարբեր նրբություններին.

- Օր 1 - Ծանոթացում: Խաղաղության և խաղաղաշինության տեսական հիմքեր, (15.06.2023)
- Օր 2 - Ապագա տիկնիկային ներկայացման սցենարի համար պատմությունների գրում, (20.06.2023)
- Օր 3 - Գեղարվեստական աշխատարան՝ ապագա տիկնիկային ներկայացմանը պատրաստվելու համար, (22.06.2023)
- Օր 4 - Աշխատանք Էկրանի հետ, (27.06.2023)
- Օր 5 - Ինչպե՞ս աշխատել տիկնիկների և հանդիսատեսի հետ, (29.06.2023)
- Օր 6 - Դերային խաղ, աշխատանք հանդիսատեսի հետ, բոլոր տարրերի համադրում տիկնիկներ, երաժշտություն, լույս, աշխատանք հանդիսատեսի հետ, (30.06.2023)
- Օր 7 - Գլխավոր փորձ, (06.07.2023):



Բոլոր օրերի միջոցառումներն անցկացվել են առավոտյան ժամից մինչև կեսօր Սումիի տեղական երիտասարդական կենտրոնում:

Ուկրաինական թիմի տիկնիկային թատրոնի ծրագիրը վկայում է երիտասարդների կողմից առաջնորդվող նախաձեռնությունների փոխակերպող ուժի մասին: Ներքին տեղահանված երիտասարդներին ներգրավելով՝ ծրագիրը ոչ միայն խաղաղության պահեր ապահովեց, այլև զորացրեց և մասնակիցներին, և՛ հանդիսատեսին: Նախաձեռնության հաջողությունը ընդգծում է արվեստի և ստեղծագործականության ներուժը՝ մխիթարություն և ուրախություն բերելու հակամարտությունից տուժածներին: Թիմի նվիրվածությունը և մասնակիցների ու հանդիսատեսի վրա դրական ազդեցությունը շեշտում են նման ծրագրերի կարևորությունը՝ դժվարությունների առջև կանգնած համայնքներում դիմակայունություն և հույս խթանելու գործում:

Այս ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես կարող են երիտասարդները նշանակալի դեր խաղալ իրենց համայնքների վերականգնման գործում, նույնիսկ բարդ պայմաններում: Տիկնիկային թատրոնի ընտրությունը հատկապես հաջող էր, քանի որ այն թույլ է տալիս մասնակիցներին արտահայտել իրենց զգացմունքները և մտքերը ոչ սպառնալիչ միջավայրում՝ միաժամանակ ստեղծելով ուրախության և երևակայության տարածք երեխաների համար, ովքեր տեղահանվել են պատերազմի պատճառով:

Ծրագրի կառուցվածքը, որը ներառում էր տեսական հիմքերից մինչև գործնական հմտությունների զարգացում և վերջնական ներկայացում, ապահովեց մասնակիցների համապարփակ ուսուցում և զարգացում: Այս փորձը, հավանաբար, ոչ միայն օգնեց նրանց ստեղծել տիկնիկային ներկայացում, այլև զարգացրեց նրանց թիմային աշխատանքի, հաղորդակցության և ստեղծագործական հմտությունները:

Ընդհանուր առմամբ, այս նախաձեռնությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող են փոքր, տեղական ծրագրերը նշանակալի ազդեցություն ունենալ համայնքների վրա՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում: Այն նաև ընդգծում է երիտասարդական աշխատանքի և ստեղծագործական մոտեցումների կարևորությունը հակամարտությունից տուժած բնակչության հետ աշխատելիս:

ԿՈՍՈՎՈ

Գործողության անվանում՝ Արվեստի փառատոն Միտրովիցայում. բուժման, երկխոսության և հմտությունների զարգացման խթանում

Գործողությունների տևողությունը՝ 3 օր

Իրականացնող կազմակերպություն՝ «Տեղական խաղաղություն» ՀԿ

Վայր՝ Հարավային Միտրովիցա

Ամփոփում

Երկհամայնքային համագործակցություն արվեստի փառատոնում՝ երկխոսության և մարդու իրավունքների համար

«Արվեստի փառատոնը» Կոսովոյի Միտրովիցա քաղաքում, որը կազմակերպել էր «Տեղական խաղաղություն» ՀԿ-ն «Սոցիալական տարածք ապակառուցման համար» (Social Space for Deconstruction) ՀԿ-ի հետ համատեղ, դարձավ փոխակերպող իրադարձություն, որն անդրադարձավ հետպատերազմյան տրավմային, էթնիկ լարվածությանը և երիտասարդների շրջանում հմտությունների զարգացմանը: Միտրովիցայի յուրահատուկ պատմական համատեքստը, որը բնութագրվում է էթնիկ բաժանումներով, հիմք հանդիսացավ եռօրյա իմերսիվ փորձառության համար, որի նպատակն էր ներգրավել և վերականգնել հակամարտությունից տուժած երիտասարդությանը:

Միտրովիցան քաղաք է, որը բաժանված է Իբար գետով. հյուսիսային կողմը բնակեցված է Կոսովոյի սերբերով, իսկ հարավային կողմը՝ Կոսովոյի ալբանացիներով: Երկու համայնքների միջև լարվածությունը տեսանելի է և շատ ակնհայտ, իսկ ամեն տարի տեղի են ունենում մի քանի սրացման դեպքեր: «Արվեստի փառատոն» ծրագրի թիրախային խումբը ներառում էր երիտասարդներ տարբեր համայնքներից, և եռօրյա միջոցառումն անդրադարձավ հետպատերազմյան տրավմայի, էթնիկ լարվածության և հմտությունների զարգացման հետ կապված խնդիրներին՝ արձագանքելով առցանց հետազոտությունների և համայնքի ներգրավման միջոցով նախապես բացահայտված կարիքներին: Օգտագործելով տարածքներ Հարավային Միտրովիցայում՝ ծրագիրն օգտվեց «Սոցիալական տարածք ապակառուցման համար» ՀԿ-ի կողմից տրամադրված բաց այգուց և խուլ ու համերի առցանցիայի փակ տարածքներից:

«Արվեստի փառատոնի» հիմնական նպատակն էր ներգրավել և վերականգնել հակամարտությունից տուժած երիտասարդներին: Նպատակները ներառում էին արվեստի միջոցով ինքնարտահայտման խթանումը, մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, միջհամայնքային երկխոսության խթանումը և գործնական հմտությունների զարգացման հնարավորությունների տրամադրումը:

Ծրագրի ամփոփում

- Օր 1 / 28.07.2023. սկսվեց խմբային գրելու աշխատարանով, որը խրախուսում էր մասնակիցներին արվեստի միջոցով անանուն կերպով արտահայտել իրենց հիշողություններն ու տրավմաները: Ավարտվեց «Յոգատարության գրառում» ցուցահանդեսով, որը խթանում էր խորհրդածությունն ու երկխոսությունը:

- Օր 2 / 29.07.2023. ներառում էր «Բաց արվեստի կայան», դեմքի նկարչություն և մարդու իրավունքների քննարկումներ: Ավարտվեց ներառական լեզվի և հաղորդակցման աշխատանոցով՝ միջհամայնքային փոխըմբռնումը բարելավելու նպատակով:

- Օր 3 / 30.07.2023. ներառում էր ևս մեկ «Բաց արվեստի կայան», խաղաղության խորության վերաբերյալ սեսիա և խաղաղաշինության աշխատարան՝ ոգեշնչելով մասնակիցներին ակտիվորեն մասնակցել խաղաղության ջանքերին:

Չգայուն խնդիրներին անդրադառնալը և հետպատերազմյան տրավմայի ու էթնիկ լարվածության հետ աշխատելը պահանջում էր զգույշ վարում՝ ապահովելու համար, որ մասնակիցները իրենց ապահով և աջակցված զգան: Միևնույն ժամանակ, լեզվական տարբեր հենքերը մարտահրավերներ էին ստեղծում հաղորդակցության մեջ, ինչը պահանջում էր, որ վարողները գտնեն արդյունավետ միջոցներ՝ հստակ փոխըմբռնում ապահովելու համար: Լոգիստիկ մակարդակում տարբեր վայրերի օգտագործման համակարգումը մարտահրավերներ էր ներկայացնում՝ պահանջելով մանրակրկիտ պլանավորում և համակարգում:

Այս ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է արվեստը և ստեղծարար միջոցառումները օգտագործել՝ բարդ սոցիալական և պատմական համատեքստերում երկխոսություն և փոխըմբռնում խթանելու համար: Այն նաև ընդգծում է զգայուն թեմաների շուրջ աշխատելիս ճկուն և համապարփակ մոտեցման կարևորությունը՝ հաշվի առնելով մասնակիցների տարբեր կարիքներն և փորձառությունները:



Ամփոփում

- Գերմանիայից, Ֆրանսիայից և Շվեյցարիայից երիտասարդ աշխատողների ներգրավում
- Տեղական կազմակերպությունների մասնակցություն (օր.՝ Bone Vet Mitrovica՝ անվճար 3D տպագրության դասընթացներով)
- Արվեստի և գրավոր աշխատանքների ցուցահանդեսներ
- Մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում
- Համայնքների միջև հարաբերությունների բարելավում
- Գործնական հմտությունների զարգացում (կար և 3D տպագրություն)

Առաջարկություններ

- Տեղական գործընկերների ակտիվ ներգրավում
- Գործողությունների հարմարեցում թիրախային լսարանին
- Ավելի լայն համայնքային ներգրավման հնարավորությունների որոնում
- Լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների հետազոտում:

Ընդհանուր առմամբ, այս նախաձեռնությունը ծառայում է որպես օրինակ, թե ինչպես կարելի է արվեստը, տեխնոլոգիան և մշակութային փոխանակումը օգտագործել՝ հետևյալ փյուփյուտային իրավիճակներում երիտասարդների միջև կամուրջներ կառուցելու և նրանց զարգացմանը նպաստելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆ

Գործողությունների անվանումը՝

- Անձնական զարգացում. ինքնաճանաչում, ինքնագնահատական և ինքնակրթություն:
- Հասկանալ հակամարտության և բռնության միջև տարբերությունները:
- Կիրառել արդյունավետ հաղորդակցության և հակամարտությունների կառավարման տեխնիկա:
- Սովորել սթրեսի կառավարման ռազմավարություններ և բացահայտել մեր արժեքները:

Գործողությունների տևողությունը՝ 9 օր

Իրականացնող կազմակերպություն՝ «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ (ԵՆԿ)

Վայր՝ Գյումրի, Արմավիր և Գավառ, Հայաստան

Ամփոփում

Երիտասարդների անձնական աճի խթանում՝ ինքնաճանաչման, ինքնագնահատականի, ինքնակրթության, հակամարտությունների լուծման, արդյունավետ հաղորդակցության, սթրեսի կառավարման և արժեքների բացահայտման ուսումնասիրության միջոցով:

«Երիտասարդական աշխատանք պատերազմից և հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» ծրագրի վերապատրաստման դասընթացներին մասնակցելուց հետո, ԵՆԿ ՀԿ-ի երիտասարդական աշխատողները իրականացրեցին 9 (ինը) տարբեր դասընթացներ Գյումրի, Արմավիր և Գավառ համայնքների «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում՝ նպատակ ունենալով խթանել 13-18 տարեկան երիտասարդների անձնական աճը՝ ինքնաճանաչման, ինքնագնահատականի, ինքնակրթության, հակամարտությունների լուծման, արդյունավետ հաղորդակցության, սթրեսի կառավարման և արժեքների բացահայտման ուսումնասիրության միջոցով:

Միջոցառումների ընթացքում երիտասարդները ուսումնասիրեցին անձնական և միջանձնային աճի համար կարևոր հիմնական տարրերը, խորացան ինքնաճանաչման, ինքնագնահատականի և ինքնակրթության կարևորության մեջ՝ ճանաչելով դրանց առանցքային դերը անհատների ձևավորման գործում: Բացի այդ, դասընթացների ընթացքում ուսումնասիրվեց հակամարտության և բռնության միջև տարբերությունները՝ շեշտադրելով կառուցողական հակամարտությունների լուծման կարևորությունը, քննարկվեց արդյունավետ հաղորդակցության և հակամարտությունների կառավարման ռազմավարությունները, որոնք կարևոր հմտություններ են առողջ հարաբերություններ ձևավորելու համար: Ավելին, մենք ուսումնասիրեցինք սթրեսի կառավարման տեխնիկաներ՝ բարեկեցությունը խթանելու համար և բացահայտեցինք մեր արժեքները հայտնաբերելու ու դրանց հետ համապատասխանեցնելու կարևորությունը:

Այս թեմաներին անդրադառնալով՝ մենք նպատակ ունեինք զորացնել երիտասարդներին որպես անհատների՝ կյանքի մարտահրավերները դիմակայունությամբ և որոշակի պատրաստվածությամբ հաղթահարելու համար:



Գործողության անվանում Խորհրդանշական կարիքները հակամարտության փոխակերպման մեջ. ազգային ինքնություն և հավաքական հիշողություն
Գործողությունների տևողություն՝ Երկօրյա դասընթացներ
Իրականացնող կազմակերպություն՝ «Առողջ բանականություն» ՀԿ
Վայր՝ Սումգայիթ, Ադրբեջան

Ամփոփում

Չինված հակամարտության պայմաններում ներքին տեղահանված երիտասարդների համար ինքնության և ազգայնականության թեմայով երկօրյա դասընթացներ:

Սումգայիթ և Բարդա քաղաքներում, որոնք գտնվում են Բաքվի մոտակայքում, որտեղ Ղարաբաղյան պատերազմի արձագանքները դեռ լսելի են, «Առողջ բանականություն» երիտասարդական կազմակերպությունն իրականացրեց հակամարտության փոխակերպման ձևափոխիչ նախաձեռնություն՝ նպատակ ունենալով ավելի լավ հասկանալ պատերազմի խորհրդանշականությունը՝ կենտրոնանալով ազգային ինքնության և հավաքական հիշողության վրա:

Տարածաշրջանում 90-ականների՝ Հայաստանի հետ պատերազմից ի վեր բնակեցվել է փախստականների զգալի թիվ, այդ պատճառով այն համապատասխան հիմք է տրամադրել այս ուսումնասիրության համար: Այս գործունեության թիրախային խումբը կազմված էր 15-25 տարեկան երիտասարդներից, հիմնականում հակամարտությունից տուժած Աբշերոնի տարածաշրջանից: Շատ մասնակիցներ ունեին պատերազմի ուղղակի կամ անուղղակի փորձառություններ, իսկ նշանակալի մասը նախկինում մասնակցել էր խաղաղաշինական գործունեությանը՝ ցուցաբերելով հակամարտությունների լուծման հանդեպ մեծ հետաքրքրություն:

Մասնակիցների կարիքները հասկանալու համար ընտրվել էր դինամիկ մոտեցում. նախապես սահմանված կարիքների գնահատման սխեմայի փոխարեն, մասնակիցներին հրավիրեցին վերապատրաստման սեսիայի սկզբում կիսվել իրենց տեսակետներով հակամարտությունների, բռնության կանխարգելման, խաղաղաշինության և վերահիստեգրման վերաբերյալ: Կազմակերպությունն ապահովված էր անհրաժեշտ ռեսուրսներով՝ ներառյալ տարածքով, տեխնիկական աջակցությամբ և կամավորներներով, և իրականացրեց ծրագիր, որի նպատակն էր ուսումնասիրել խորհրդանշական կարիքների դերը հակամարտությունների լուծման գործում:



Գործունեության համառոտ ակնարկ

Գործունեություն 1-ը տևեց կես օր (8.8.2023) 11:00-ից 15:00-ն Բարդայում: Մասնակցեց 16 մարդ: Դասընթացավար՝ Վաֆա Ֆարաջի

Գործունեություն 2-ը տևեց կես օր (17.09) 11:00-15:00-ն Սոււզայիթի Երիտասարդական տանը: Ներկա էին 8 մասնակից: Դասընթացավար՝ Նիգար Սուլզաֆֆարովա

- Ներածություն և թեմայի ներկայացում (11:00 - 11:15)
- Գործողություն - «Դա ես եմ» (11:15 - 11:45)
- Հակամարտությունների ծագման մասին կարճ ֆիլմի ցուցադրություն և քննարկում (11:45 - 12:15)
- Ազգային ինքնություն և դրա դերը հակամարտություններում (12:15 - 13:00)
- Ճաշի և թեյի ընդմիջում (13:00 - 13:45)
- Հավաքական հիշողությունը որպես խորհրդանշական կարիք հակամարտության փոխակերպման մեջ (13:45 - 14:15)
- Գործունեություն (14:15 - 14:45)
- Եզրափակիչ դիտողություններ, սեսիայի փակում և անդրադարձ (14:45-15:00):

Հիմնական մարտահրավերը երիտասարդների ցածր ներկայացվածությունն էր՝ պայմանավորված հասարակության կողմից խաղաղաշինության և հակամարտությունների փոխակերպման թեմաների թերագնահատմամբ: Չնայած սոցիալական մեդիայում ակտիվ խթանմանը, ակնկալվող մասնակիցների միայն մեկ երրորդն էր ներկայացել: Մարտահրավերը պահպանվեց մինչև իրականացման վերջին պահը: Այնուամենայնիվ, փոքր խմբի ակտիվ ներգրավվածությունը փոխհատուցեց սահմանափակ թվերը՝ դրական նպաստելով վերապատրաստման որակին:

Գործունեության օրինակ - «Ինքնության շրջանակ՝ ես կամ ոչ ես»

Սենյակում դրեք երկու քարտ, մեկը «ես» բառով, մյուսը՝ «ոչ ես»: Կարդացեք հարցերը և թույլ տվեք մասնակիցներին ընտրել քարտը և զբաղեցնել իրենց դիրքը: Դիրքը զբաղեցնելուց հետո կարճ դադար արեք, և մասնակիցները կարող են նայել շուրջը և հարցնել իրար:

ո՞ւմ հետ եմ ես կանգնած: Ես պատկանո՞ւմ եմ մեծամասնությանը, թե՞ փոքրամասնությանը: Ինչպե՞ս եմ ինձ զգում ընտրված դիրքում: Մեկնաբանություններ չեն թույլատրվում: Յուրաքանչյուր ոք կարող է ինքնուրույն որոշել՝ ցանկանում է բարձրաձայն պատասխանել հարցին, թե ոչ:

Հարցերի օրինակներ

- Ո՞վ դեռ ապրում է այն տարածքում, որտեղ ծնվել է:
- Ձեզանից ո՞վ է աղջիկ/կին:
- Ձեզանից ո՞վ է տղա/տղամարդ:
- Ձեզանից ո՞վ է ծախիլի:
- Ձեզանից ո՞վ է այսօր դպրոց եկել մեքենայով:
- Ձեզանից ո՞վ է մեծացել երեխա ժամանակ հոր և մոր հետ:
- Ձեզանից ո՞վ ունի երկուսից ավելի քույր/եղբայր:
- Ձեզանից ո՞վ կարող է խոսել երկուսից ավելի լեզուներով:
- Ո՞վ է կանոնավոր կերպով սպորտով զբաղվում:
- Ո՞վ է նվագում որևէ գործիք:
- Ձեզանից ո՞վ արդեն ունի սեփական երեխաներ:

Ամփոփիչ հարցեր

- Ինչպե՞ս էիք ձեզ զգում:
- Ի՞նչ նկատեցիք:
- Ո՞ր հարցերն առաջացրին ամենաուժեղ արձագանքները:
- Ամենահաճախ ո՞ր խմբում (մեծամասնություն/փոքրամասնություն) էի ես ինձ գտնում: Ի՞նչ զգացմունքներ էր սա առաջացնում:

Անսպասելի դրական տարր էր դարձնականների մասնակցությունը, որը նոր հեռանկարներ և կենսունակություն ներարկեց քննարկումներին: Այս չնախատեսված ներդրումը բարձրացրեց սեսիաների ընդհանուր որակն ու հետաքրքրությունը: Չնայած սկզբնական ցածր իրազեկվածությանը, ավելի երիտասարդ մասնակիցների ներգրավվածությունը ընդգծեց Սուվգայիթում երիտասարդության շրջանում նման թեմաների քննարկման կարևորությունը:

Սեսիայի վերջում մասնակիցների արձագանքը արտացոլում էր վերապատրաստման համապատասխանությունը իրենց ուսումնական կարիքներին: Բոլոր մասնակիցները ընդունեցին ինքնության հետ կապված պատումների կարևորությունը հակամարտությունների փոխակերպման մեջ: Երկու մասնակից նշեցին իրենց տեսակետների լիարժեք փոփոխություն, մինչդեռ չորսը մասնակիորեն համաձայնեցին, որ վերապատրաստումը դրական ազդեցություն է ունեցել հակամարտության համատեքստում ազգայնականության և ինքնության վերաբերյալ իրենց տեսակետների վրա:

Ազդեցությունն ուժեղացնելու համար կազմակերպությունը գիտակցում է ավելի երկար և համապարփակ վերապատրաստման ծրագրերի անհրաժեշտությունը՝ շեշտադրելով բազմապատկման էֆեկտը: Մեկօրյա սեսիաները, թեև ազդեցիկ են, կարող են բավարար չլինել ավելի մեծ խմբերի շրջանում իրազեկվածություն ստեղծելու համար: Ինքնության ձևավորման տարբեր ասպեկտներին, դրա ազդեցությանը հակամարտության վրա և ավելի լայն սոցիալ-քաղաքական մարտահրավերներին անդրադարձող համապարփակ, երկարաժամկետ ծրագիրը համարվում է Եսկան՝ համայնքում տևական ազդեցություն ստեղծելու համար:

ԼԵՅԱՍԱՆ

Գործողության անվանում՝ Պատերազմից տուժած երիտասարդների և տեղական համայնքի միջև կամուրջների կառուցում

Տեղական համայնք՝ Երիտասարդների հզորացում տեղական գործողությունների միջոցով

Գործողությունների տևողությունը՝ 4 սեմինար

Իրականացնող կազմակերպություն՝ «Օգնության հիմնադրամ. լեհական ՅԿ»

Վայր՝ Գդանսկ, Գդինիա

Ամփոփում

Գործողություն 1. Տրավմայի մասին իրազեկված երիտասարդական աշխատանք

Համագործակցելով «Լեհաստանի խաղաղության դեսպաններ» (Peace Ambassadors Poland) ՅԿ-ի հետ՝ «Օգնության հիմնադրամ. լեհական ՅԿ»-ն անցկացրեց տրավմայի մասին իրազեկված երիտասարդական աշխատանքի սեմինար՝ «Ուկրաինայում պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանք» վերնագրով: Միջոցառումը տեղի ունեցավ Գդանսկի Սոցիալական գոտում՝ ՅԿ-ների տոնակատարությունների հայտնի վայրում: Այս հավաքը ներգրավեց 150 ՅԿ-ներ, քաղաքացիական շարժումներ և խմբեր ողջ Լեհաստանից:

Թիրախային խումբը ներառում էր Լեհաստանում և Ուկրաինայում երիտասարդների հետ աշխատող ՅԿ-ների ներկայացուցիչներ, երիտասարդական աշխատողներ և պատերազմից տուժած երիտասարդներ: Սեմինարի նպատակն էր անդրադառնալ պատերազմից տուժած երիտասարդների հոգեկան առողջության մարտահրավերներին, կրթական խաթարումներին և տնտեսական դժվարություններին: «Լեհաստանի խաղաղության դեսպաններ» ՅԿ-ի հետ համագործակցությամբ տարածվեց միջոցառման գովազդը սոցիալական մեդիայի ալիքներով:

Սեմինարն անցկացվեց երկվեզու՝ լեհերեն և ուկրաիներեն, և տևեց 90 րոպե: Այն ընդգրկեց տրավմայի վիճակագրություն, տրավմայի մասին իրազեկված երիտասարդական աշխատանքի սկզբունքներ և «4 Ոգիներ» մեթոդը: Չնայած ժամանակի և աղմկոտ վայրի հետ կապված մտահոգություններին, միջոցառումը հաջողությամբ վերապատրաստեց պատերազմից տուժած երիտասարդների հետ աշխատանքով հետաքրքրված 12 անձի: Մասնակիցների խանդավառությունը և սովորելու ցանկությունը նշանակալի դրական արդյունքներ էին:

Ապագա միջոցառումների համար կարևոր քաղած դաս է հանդիսանում ավելի փակ միջավայրի դիտարկումը՝ մասնակիցների ուշադրությունը բարելավելու համար:

Գործողություն 2. Հակամարտությունների վերլուծություն ու լուծում

Համագործակցելով «Լեհաստանի խաղաղության դեսպաններ» (Peace Ambassadors Poland) ՅԿ-ի հետ՝ «Օգնության հիմնադրամ. լեհական ՅԿ»-ն Գդինիայի Լեհական ծովային ակադեմիայում կազմակերպեց երկու սեմինար՝ «Կամուրջների կառուցում հակամարտող համայնքների միջև» վերնագրով: Վայրի սոցիալական դինամիկան, որը պայմանավորված էր ծովային մշակույթով և ազգայնականությամբ, յուրահատուկ ֆոն ապահովեց:

Թիրախային խումբը ներառում էր Լեհական ծովային ակադեմիայի ուսանողներ, ովքեր ուսումնասիրում էին միջազգային հարաբերություններ և մանկավարժություն, պոստենցիալ երիտասարդական աշխատողներ և ապագա որոշում կայացնողներ: Սեմինարի նպատակն էր խթանել հակամարտությունների դինամիկայի համապարփակ ըմբռնումը և անդրադառնալ հակամարտություններին ու ծայրահեղականացմանը:

Միջոցառումը տեղի ունեցավ Լեհական ծովային ակադեմիայի գրադարանի կոնֆերանս դահլիճում, որը հազեցած էր այնպիսի ռեսուրսներով, ինչպիսիք են ֆիլպչարտեր, մարկետներ, նստատեղեր և ջուր: Սեմինարը ներառում էր երկու 90-րոպեանոց սեսիաներ, որոնք ընդգրկում էին խմբային քննարկումներ, կարիքների քարտեզագրում, գործոնների բացահայտում և ամփոփ անդրադարձ:

Չնայած բռնի հաղորդակցության և ժամանակի սահմանափակումների հետ կապված մարտահրավերներին, միջոցառումը հաջողությամբ վերապատրաստեց պատերազմից տուժած մարդկանց հետ աշխատանքով հետաքրքրված 10 անձի:

Մասնակիցների խանդավառությունը և սովորելու հանդեպ մեծ հետաքրքրությունը դրական անակնկալներ էին: Ապագա միջոցառումների համար առաջարկությունները ներառում են ավելի երկար սեսիաների դիտարկումը և հետագա գործողությունների կազմակերպումը:

Գործողություն 3. Ատելության խոսքի դեմ պայքար

Համագործակցելով «Լեհաստանի խաղաղության դեսպաններ» (Peace Ambassadors Poland) ՀԿ-հետ՝ «Օգնության հիմնադրամ. լեհական ՀԿ»-ն անցկացրեց «Ատելության խոսքի դեմ պայքար և փոխգործակցություն պատերազմի և զինված հակամարտությունների փորձ ունեցող մարդկանց հետ» թեմայով սեմինար Գդինիայի Լեհական ծովային ակադեմիայում:

Նախորդ միջոցառման նման, թիրախային խումբը բաղկացած էր Լեհական ծովային ակադեմիայի ուսանողներից, ովքեր ուսումնասիրում էին միջազգային հարաբերություններ և մանկավարժություն, պոստենցիալ երիտասարդական աշխատողներից և ապագա որոշում կայացնողներից: Սեմինարի նպատակն էր մասնակիցներին զինել գիտելիքներով և հմտություններով՝ ատելության խոսքի դեմ պայքարելու և պատերազմ տեսած անհատների հետ զգայուն փոխգործակցության համար:

Միջոցառումը տեղի ունեցավ Լեհական ծովային ակադեմիայի գրադարանի կոնֆերանս դահլիճում, նման ռեսուրսներով և նստատեղերի դասավորությամբ: Երկու 90-րոպեանոց նիստերը ներառում էին ատելության խոսքի սահմանում, հետևանքների վերլուծություն, պատերազմից տուժած անհատների հետ փոխգործակցություն և վերջնական անդրադարձ: Հաղթահարելով բռնի հաղորդակցության և ցածր մասնակցության հետ կապված մարտահրավերները՝ սեմինարը հաջողությամբ վերապատրաստեց պատերազմից տուժած մարդկանց հետ աշխատանքով հետաքրքրված 15 անձի:

Մասնակիցների խանդավառությունը և սովորելու հանդեպ մեծ հետաքրքրությունը դրական անակնկալներ էին: Ապագա միջոցառումների համար առաջարկությունները ներառում են ավելի երկար սեսիաների դիտարկումը և հետագա գործողությունների կազմակերպումը:

ԻՍՊԱՆԻԱ

Գործողության անվանում՝ Տեղական համատեքստի ուսումնասիրությունն բնությունը Սերսեդիլայում և մեր՝ որպես քաղաքացիների հնարավորությունների բացահայտում
Իրականացնող կազմակերպություն՝ «Սիերիայի ազատ մտածողների ասոցացիա»
Վայր՝ Սերսեդիլա, Մադրիդի հյուսիս-արևմտյան մաս

Ամփոփում

Սերսեդիլյան Մադրիդի հյուսիս-արևմտյան մասում գտնվող գյուղական բնակավայր է, ունի մի շարք սոցիալական խնդիրներ, հատկապես զինված հակամարտությունների գոտիներից փախստականների և ինտեգրման ու աջակցության կարիք ունեցող երիտասարդների շրջանում: «Սիերիայի ազատ մտածողների ասոցացիան» համագործակցելով Դիակոնյայի (Diaconia) հետ՝ կազմակերպել է միջոցառումներ՝ ուղղված մշակութային փոխանակման խթանմանը և տեղական հնարավորությունների առաջարկմանը 14-ից 35 տարեկան երիտասարդ անհատներին, ովքեր տուժել են իրենց երկրներում բռնի համատեքստերից:

Նախաձեռնության հիմնական նպատակն էր ստեղծել մի տարածք, որտեղ երիտասարդ փախստականները և տեղացիները կարող էին հանդիպել, փոխանակել մշակութային գիտելիքներ և բացահայտել Իսպանիայում իրենց հասանելի հնարավորությունները: Նպատակները ներառում էին Էրազմուս+-ի և տեղական հնարավորությունների մասին իրազեկության տարածումը, ընկերությունների խթանումը և տեղացիների ու միգրանտների կայուն ցանցի ստեղծումը:

Սեմինարներ

Նախաձեռնությունը սկսվեց 2024 թվականի փետրվարի 2-ին մի շարք սեմինարներով, որոնք վարում էին երկու դասընթացավարներ և որոնց մասնակցում էին 9 մասնակից: Միջոցառումներն անցկացվեցին ողջ օրվա ընթացքում Դիակոնյայի կողմից Սերսեդիլայում ղեկավարվող ապաստարանում:

Ներածություն և Էներգիայի հաղորդում. սկսվեց «Սիերիայի ազատ մտածողների ասոցացիայի» մասին համառոտ ներկայացումից, որին հաջորդեց Էներգիայի հաղորդման սեսիան՝ լարվածությունը թթափելու և հանգիստ մթնոլորտ ստեղծելու համար:

Հնարավորությունների ուսումնասիրություն. Իսպանիայում մասնակիցների համար հասանելի հնարավորությունների բացատրություն՝ հարմարեցված նրանց կոնկրետ իրավիճակներին:

Մտքերի փոխանակման սեսիա. քննարկում այն մասին, թե ինչ էր պակասում մասնակիցների ներկայիս կյանքում, որը հանգեցրեց հնարավոր լուծումների շուրջ մտքերի փոխանակման:

Հետաքրքրությունների բացահայտում. բացահայտվեցին մասնակիցների հետաքրքրությունները նկարչության, երաժշտության և գրելու մեջ, և ստեղծվեց տեղական ռեսուրսների, մարդկանց և ասոցիացիաների ցանկ՝ այս հետաքրքրություններին աջակցելու համար:

Վերապատրաստման հրավերներ. մասնակիցներին տեղեկացրեցին վերապատրաստման դասընթացների մասին և անձամբ հրավիրեցին մասնակցելու:

Հիմնական մարտահրավերը մասնակիցների շրջանում սկզբնական անհարմարությունը և բաց շփվելու դժվարությունն էր, որը հաղթահարվեց սառույցկտորուկ վարժությունների և հանգիստ մթնոլորտի ստեղծման միջոցով: Լեզվական խոչընդոտները հաղթահարվեցին դասընթացավարների թարգմանչական հմտությունների և Գուգլ Թարգմանիչի (Google Translate) օգնությամբ: Բացի այդ, մասնակիցներն, ովքեր տիրապետում էին երկու լեզուներին, ևս օգնեցին թարգմանել նրանց համար, ովքեր խոսում էին միայն իրենց մայրենի լեզվով:

Հետաքրքրասիրությունը նշանակալի դեր խաղաց, երբ վստահություն հաստատվեց: Մասնակիցների գոհունակությունն ու բավականությունը ստանալը հանգեցրեց ավելի ամուր կապերի և ավելի ներգրավող փորձառության՝ մեծացնելով գործողությունների ազդեցությունը: Այս բավականությունը և կապերի ամրապնդումը նպաստեցին համայնքի զգացողության և փոխադարձ աջակցության ձևավորմանը:

Տեղական գործողության արդյունքներ

- Ստեղծվեց աջակցության կայուն խումբ:
- Բարձրացավ տեղական և Եվրոպական հնարավորությունների մասին իրազեկվածությունը:
- Խթանվեցին նոր հարաբերություններ և նոր ծրագրերի մշակում տեղական և միգրանտ համայնքների միջև:
- Մասնակցի մեջբերում, որը ցույց է տալիս ինտեգրման բացակայության դաժան իրականությունը.
- Իմ ժամանումից ի վեր ոչ ոք երբեք ինձ չէր հրավիրել որևէ միջոցառման:



Երիտասարդների հզորացման և վերականգման
համապարփակ ուղեցույց

Երիտասարդական աշխատանք հակամարտությունների պայմաններում

Երիտասարդների հզորացման և վերականգման համապարփակ ուղեցույց

Սույն ուղեցույցը մշակվել է «Երիտասարդական
աշխատանք պատերազմից և
հակամարտություններից տուժած երիտասարդների
հետ» ծրագրի շրջանակներում

Նախագծված և խմբագրված է
Արտուրո Օնգիլ Ռոդրիգեսի կողմից



Co-funded by
the European Union

**Ծրագիրը
համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից
համագործակցությամբ՝**



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ուղեցույցը մշակվել է «Երիտասարդական աշխատանք և սպորտ» ծրագրի հակամարտություններից տուժած երիտասարդների հետ» ծրագրի շրջանակներում



**Երիտասարդների հզորացման և
վերականգնման
համապարփակ ուղեցույց**



Co-funded by
the European Union